ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-1940 թթ.



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРМЕНАК МАНУКЯН

ПОЛИТИЧЕСКАЯ ЖИЗНЬ В АРМЕНИИ

1920-1940 гг.

Издательство "Гитутюн" НАН РА
ЕРЕВАН-2002

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
1920-1940 թթ.

A II 86886

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ-2002

94(7).925„1920/1940„

ՀՏԴ 941 (479.35)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Մ 283

Նվիրում եմ ծնողներիս՝ բանասիրության
դոկտոր Սարիբեկ Արմենակի Մանուկյանի
և Ռոզա Խոսրովի Խանամիրյանի
անմոռաց հիշատակին

Հեղինակ

Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վ. Ն. Ղազախեցյան
Գրախոսներ՝
պատմական գիտությունների թեկնածու Ա. Ս. Վիրաբյան
պատմական գիտությունների թեկնածու է. Գ. Գևորգյան

Մ 283 Մանուկյան Ա.Ս.
Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ.- Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2002, 192 էջ:

Աշխատությունը նվիրված է 1920-1940 թթ. Հայաստանի քաղաքական կյանքին, մասնավորապես, մենատիրության հաստատման գործընթացներին, դրանց զուգահեռ ընթացող քաղաքական բռնաճնշումների ընդհանուր պատկերին: Առանձնացված են իշխող կուսակցության մեջ ընթացող քաղաքական գործընթացները, վերջինիս վերաբերմունքը դեպի այլ գաղափարական ուղղվածությամբ հոսանքները և կազմակերպությունները, եկեղեցին, ուշադրություն է դարձվել բռնաճնշումների իրագործման գործիք դարձած իրավապահ մարմինների գործունեությանը և դերին:
Ուսումնասիրությունը գրված է նորահայտ արխիվային նյութերի և գրականության հիմքի վրա, նախատեսվում է պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

Ս $\frac{0503020913}{703(02)-2002}$ 2002 ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 5-8080-0016-5
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2002

© Մանուկյան Ա.Ս.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր օրերում ժամանակի պահանջ է դարձել Հայաստանի խորհրդային շրջանի պատմության որոշ խնդիրների նորովի ուսումնասիրությունը: Այն, բնականաբար, պետք է լրջորեն հաշվի առնի այդ տարիների պատմագիտության ստեղծած արժեքները, միաժամանակ, հասկանալի պատճառներով, հատկապես քաղաքական կյանքի հարցերին նրա կողմից ցույց տրված միակողմանի մոտեցումները:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանի պատմությունը, իր մասնակի յուրահատկություններով հանդերձ, դառնում է ԽՍՀՄ պատմության անքակտելի մասը և, բնականորեն, կրում այդ հզոր տերության բոլոր վերելքներն ու վայրէջքները: Անկասկած, Հայաստանը մեր ուսումնասիրության շրջանում աննախադեպ վերելք ապրեց կյանքի բոլոր բնագավառներում, զարգացան տնտեսության բազմաթիվ ճյուղեր, ստեղծվեցին գիտական և կրթական խոշոր կենտրոններ, վերելք ապրեցին գրականությունն ու արվեստը, ծավալվեց խոշոր շինարարություն և այլն: Սակայն Հայաստանը զերծ չմնաց և չէր էլ կարող մնալ 1920-1930-ական թթ. ԽՍՀՄ-ում ձևավորվող մենատիրության բացասական դրսևորումներից, ինչը, ցավոք, դարձավ այդ տարիների ԽՍՀՄ քաղաքական կյանքի որոշիչ գործոններից մեկը: Այդ դրսևորումներից, թերևս, հարկ է առանձնացնել քաղաքական բռնաճնշումները, որը երբևիցե չի կարելի ներկայացնել որպես զուտ սոցիալիստական հասարակարգին հատուկ երևույթ (այդ երևույթները տեղի են ունեցել և ֆեոդալական, և՝ կապիտալիստական հասարակարգերում): Սակայն այն այնպիսի բացասական ազդեցություն թողեց, որ հետևանքները զգացվում են անգամ մեր օրերում:

Ներկայումս հասանելի դարձած նոր արխիվային նյութերն ու հրապարակումները հնարավորություն են ընձեռել առավել անաչառորեն ուսումնասիրել այդ խնդիրը: Իսկ որ կա դրա անհրաժեշ-

տությունը անվիճելի է, քանի որ այն ունի համամարդկային նշանակություն և այժմեական հնչեղություն:

Բնականաբար, մեր ուսումնասիրությունը չի ներառնում 1920-1940 թթ. Հայաստանի քաղաքական կյանքի բոլոր ոլորտները, այլ փորձ է նորահայտ արխիվային նյութերի և գրականության հիմքի վրա ներկայացնել քաղաքական իրադրությունը, մասնավորապես, մենատիրության հաստատման գործընթացները, դրանց զուգահեռ ընթացող քաղաքական բռնաճնշումների ընդհանուր պատկերը, առանձնացնելով իշխող կուսակցության մեջ ընթացող զարգացումները, վերջինիս վերաբերմունքը դեպի այլ գաղափարական ուղղվածության հոսանքները և կազմակերպությունները, ուշադրություն է դարձվել բռնաճնշումների իրագործման գործիք դարձած իրավապահ մարմինների գործունեությանը և դերին:

Մեր ուսումնասիրության հիմնահարցի, մասնավորապես, քաղաքական բռնաճնշումների վերաբերյալ, ըստ էության, ամբողջական գրականություն չկա, բացառությամբ մեր «Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ.» (Եր., 1999 թ.) գրքի, որն ուսումնասիրված նոր արխիվային փաստաթղթերի և այլ աշխատությունների հիման վրա բազմակողմանիորեն լրացվել և ճշտվել է սույն աշխատության մեջ: Հասկանալի պատճառներով այդ հարցին մասնակիորեն անդրադարձած խորհրդային շրջանի գրականության մեջ հիմնականում ներկայացվում էր անհատի պաշտամունքի քննադատությունը և ընդհանուր գծերով տրվում էր բռնաճնշումների պատկերը[1]: Բնականաբար, նույն մոտեցումն էր ԽՍՀՄ պատմության այդ խնդիրներին առնչվող գրականության մեջ:

Միայն 1980-ական թվականների վերջերին ԽՍՀՄ-ում, ապա ԱՊՀ երկրներում հնարավոր դարձավ փաստաթղթերի հիման վրա ուսումնասիրել մեր ժողովրդի կյանքում խոր բացասական հետք թողած բռնաճնշումների իրական պատմությունը: Հատկապես Ռու-

---

[1] Տես Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Եր., 1967, Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Եր., 1967, Հայ ժողովրդի պատմություն, Եր., 1972 և այլն

սաստանում փորձեր կատարվեցին ուսումնասիրելու և նորովի ներկայացնելու ստալինյան բռնաճնշումներն ամբողջությամբ[2], ինչն, այսպես թե այնպես, օժանդակում է հայ ժողովրդի պատմության այդ խնդիրն ավելի խորությամբ հետազոտելուն:

Սակայն ԽՍՀՄ-ում տեղի ունեցած այդ երևույթն այնքան ծավալուն է, իսկ դրա ուսումնասիրությունն այնքան աշխատատար, որ դեռևս վաղ է կարծել, թե այն լիովին հետազոտվել է: Ավելին, եթե Դ. Վոլկոգոնովի աշխատանքներն աչքի են ընկնում հարուստ նոր արխիվային փաստական տվյալներով, այդ առումով շահեկանորեն նկատելի են նաև Օ. Սուվենիրովի ուսումնասիրությունները բռնադատված զինվորականների հարցերով և Ն. Բուգայի ու Ա. Գոնովի աշխատությունը նվիրված կովկասյան ժողովուրդներին, ապա մյուս աշխատությունները չունեն այն հիմքը, որով կարելի է ամփոփումներ կատարել տվյալ խնդրի մասին: Անգամ այդ հարցի խորագիտակ և ճանաչված մասնագետ Ռ. Մեդվեդևը խոստովանում է, որ իր ուսումնասիրությունները կատարելիս չի օգտվել հիմնական սկզբնաղբյուրներից[3]: Նույնիսկ, համեմատաբար վերջերս հրապարակված Կ. Զալենսկու հանրագիտարանային բնույթի «Ստալինի կայսրությունը» անունը կրող գրքում նկատվում են որոշակի վրիպումներ և սխալներ հատկապես հայազգի գործիչներին ներկայացնելիս: Այսպես, Ա. Խանջյանի մասին նշում է, թե վերջինիս 1936 թ. ձերբակալել են, ապա սպանել, կամ Ս. Տեր-Գաբրիելյանը ձերբակալվել է 1937թ., դատապարտվել մահապատժի և գնդակահարվել և այլն, ինչը չի համապատասխանում իրականությանը[4]:

Որոշ հեղինակների մոտ, չնայած շատ կարևոր նոր փաստաթղ-

---

[2] Տես Д. Волкогонов, Триумф и трагедия: В. И. Сталин, политический портрет, кн. 1, 2, М., 1989, Р. Медведев, О Сталине и сталинизме, М., 1990, В. Жуков, Власть и оппозиция: Российский политический портрет 20 столетия, М., 1994, Они не молчали: о сопротивлении в годы культа Сталина, М., 1991, Суровая драма народа, Ученые и публицисты о природе сталинизма, М., 1989, Э. Радзинский, Сталин, М., 1997, "Урок дает история (под общ. ред. В. Афанасьева, Т. Смирнова, М., 1989, "Историки спорят" М., 1988, Страницы истории КПСС факты-проблемы, сост. В. К. Горов и др., М., 1988, Страницы истории советского общуства, факты, проблемы, люди, под общ. ред. А. Т. Кинкулькина, М., 1989, Реабилитирован посмертно, М.,1988, вып. 1, Уроки горькие, но необходимые, М., 1988, О. Волобуев, С. Кулишев, Очищение, История и перестройка, М., 1989 և ուրիշներ

[3] Տես Р. Медведев, նշված աշխատությունը, էջ 12

[4] К. А. Заленский, Империя Сталина, Биографический энциклопедический словарь, М., 2000, էջ, էջ 438, 468

թերի առկայությանը, նկատելի է խորհրդային շրջանը և նրա ղեկավարներին զուտ սև ակնոցներով ներկայացնելու միտումը: Դրանք առավելապես շեշտադրելով զուտ մարդկային գծերն ու փոխհարաբերությունները անտեսում են կոնկրետ հասարակական, սոցիալական, քաղաքական և տնտեսական իրավիճակը և տուրք են տալիս հրապարակախոսությանը[5]:

Անդրադառնալով Դ. Վոլկոգոնովի և Ռ. Մեդվեդևի աշխատություններին կարծում ենք, որ առաջինի մոտ ևս նկատելի է որոշակի սուբյեկտիվ, զգացմունքային մոտեցումը հարցին, իսկ երկրորդն, արդեն հիշատակած պատճառներով, մասնավորապես Հայաստանի իրադարձություններին առնչվող հարցերում, երբեմն թույլ է տվել անճշտություններ[6]:

Այդ առումով, հասկանալի պատճառներով (հնարավորություն չեն ունեցել օգտվելու արխիվային փաստաթղթերից) բացառություն չեն կազմում նաև արտասահմանում հրապարակված, տվյալ թեմային նվիրված բազմաթիվ աշխատություններն ու հրապարակումները, որոնք, ըստ Ռ. Մեդվեդևի և Դ. Վոլկոգոնովի, հենվում են հիմնականում հուշերի և կողմնակի փաստարկների վրա[7]: Ավելացնենք նաև նրանց գաղափարախոսական ուղղվածությունը, որը խանգարում էր օբյեկտիվ գնահատել իրադարձությունները նախկին ԽՍՀՄ-ում: Թերևս, այդ առումով բացառություն է կազմում Ֆրանսիայի գիտնական Ն. Վերտի աշխատությունը[8]: Արմատներով ռուսաստանցի գիտնականին, որն օգտվել է արդեն բացված արխիվներից, օգնել են մի շարք ճանաչված ռուս պատմաբաններ:

Ճիշտ է, բնականորեն, նա պատմությունը շարադրում է առավելապես Ֆրանսիա-Ռուսաստան հարաբերությունների գերակայությամբ, սակայն բավականին անաչառ է ներկայացնում մեզ հետաքրքրող պատմական իրադարձությունները, բացի անձնական հատկություններից և հարաբերություններից՝ հաշվի է առնում սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը:

---

[5] Տես, օրինակ Э. Радзинский, Сталин, М., 1997, А. Яковлев, Крестосев, М., 2000 և այլն

[6] Տես Р. Медведев, նշված աշխատությունը, էջ, էջ 262, 397, 404

[7] Տես Суровая драма народа, Ученые и публицисты о природе сталинизма, М, 1989, Л.Белади, Т. Краус, Сталин, М., 1989, Р. Такер, Сталин, Путь к власти, М., 1990 և այլն

[8] Н. Верт, История Советского государства, 1900-1991, М., 1999

Ի տարբերություն այլ արտասահմանյան հեղինակների, Ն. Վերտը, օրինակ, միանշանակ չի ընդունում այն վարկածը, թե Ս. Կիրովի սպանությունը կազմակերպվել է Ի. Ստալինի կողմից: Բռնաճնշումների մասին գրելիս ընդհանուր գծերով հիշատակում է նաև Հայաստանը և Ա. Խանջյանին: Բնականաբար, այդ բացը չեն կարող լրացնել տվյալ թեմաներով գրված Սոլժենիցինի, Ռիբակովի և մյուսների գեղարվեստական ստեղծագործությունները:

Ուսումնասիրվող խնդիրը, համեմատաբար ամբողջական և փաստերով հիմնավորված են ներկայացված վերջին տարիներին Ռուսաստանում հրատարակված մի շարք բուհական ու դպրոցական դասագրքերի համապատասխան հատվածներում[9]:

Հայաստանում ևս սանձազերծված ստալինյան բռնաճնշումների ուսումնասիրությունը փաստորեն սկսվել է 1980-ականների վերջերին և 1990-ականների սկզբներին, երբ բացվեցին ՀՀ ԱԱՆ արխիվի նյութերը և գաղտնազերծվեցին ՀՀ մյուս արխիվների համապատասխան ֆոնդերը:

Այդ տարիներին, հիմնականում մամուլում և այլ պարբերականներում հրապարակվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնք, որպես կանոն, նվիրված էին բռնությունների ենթարկված առանձին անհատների ճակատագրերին, որոշակի խավերի և խմբերի ներկայացուցիչներին և չէին ընդգրկում երևույթն ամբողջությամբ[10]:

Նրանցից, անշուշտ, հարկ է առանձնացնել Հր. Ավետիսյանի, Վ. Ղազախեցյանի, Ս. Վիրաբյանի, Ս. Ամիրյանի հոդվածները, որոնք ունեն պատմագիտական արժեք և առավել հիմնավոր ու փաստացի են ներկայացնում հոդվածներում արծարծված հարցերը:

Այսպես, ակադեմիկոս Հր. Ավետիսյանն առաջին անգամ անդ-

---

[9] Տե՛ս В. П. Дмитриенко и др., история Отечества, М., 1995, М. Горинов и др., История России, т. 2, М, 1995, Ш. М. Мунчаев, В. М. Устинов, История России, М., 1997, История России, под редакцией М. М. Шумилова, С. П. Рябкина, С-Петербург, 1997, И. А. Исаев, История государства и права России, М., 1996 և այլն

[10] Տե՛ս Հր. Ավետիսյանի, Վ. Ղազախեցյանի, Ա. Վիրաբյանի, Ա. Սաքանյանի, Ա. Հովհաննիսյանի, Կ. Խալատովայի, Ստ. Ղարիբջանյանի, Դ. Գասպարյանի և ուր. հոդվածները «Լենինյան ուղիով», թ.թ. 5, 6, 1990, «Երեկոյան Երևան» 20 հունիսի 1988, «Հայություն» 20-31 մարտի 1993, 30 ապրիլի 1993 և այլն, «Գոլոս Արմենիի» 12 հուլիսի 1991, 11 հունվարի 1992 և այլն, «Երկրապահ» 18-25 հունիսի 1998, 6 դեկտեմբերի 1998 և այլն, «Հայաստանի Հանրապետություն», 30 ապրիլի 1991, 24 փետրվարի 1999, 30 մարտի 1999, «Հայացք», թ 11, 1990 և այլն, "Республика Армения" 1 мая 1992, 26 июня 1992 և այլն

բադարձավ 1934 թ. ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարին մասնակցած հայերի ճակատագրին, որից առանձնապես կարևորվում է Հայաստանից դուրս գտնվող հայ քաղաքական, հասարակական և պետական գործիչներին վերաբերող հատվածը:

Վ. Ղազախեցյանն առաջինն անդրադարձավ 1921 թ. հայ զինվորականների զանգվածային արտաքսման խնդրին:

Մեր ուսումնասիրության առումով կարևորվում է նաև Հր. Ավետիսյանի, Կ.Հարությունյանի և Ա. Վիրաբյանի հեղինակությամբ վերջերս լույս տեսած Գ. Հարությունյանին նվիրված գիրքը, ինչպես նաև Ա.Վիրաբյանի 1945-1957 թթ. Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի մասին աշխատությունը, որոնցում կան այդ երևույթի նորովի գնահատականներ, բավականին ընդարձակ փաստացի նյութ է տրված Վրաստանում բռնաճնշված հայ քաղաքական, պետական գործիչների, ինչպես նաև 1949 թ. իրադարձությունների մասին[11]:

Հարկ է նշել, որ տվյալ խնդրին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև մի շարք այլ գիտնականներ, սակայն դրանք ևս վերաբերում են հասարակության այս կամ այն խավերին (հայ առաքելական եկեղեցուն, գրականության և գիտության որոշ գործիչներին, ՀԽՍՀ ՀՕԿ-ի ղեկավարներին) և, բնականաբար, չեն ընդգրկում երևույթն ամբողջությամբ[12]: Իսկ Ֆ. Սողոմոնյանի Սևանի ու շրջակա տարածքից բռնադատվածներին նվիրված գրքում, սկզբնաղբյուրների տեղի նշման հարցում, ցավոք, տեղ են գտել լուրջ սխալներ: Նշված բոլոր աշխատություններում, որոշակի բացառությամբ, թերևս, Դ. Գասպարյանի գրքի, չկան այդ երևույթի պատճառների և ընթացքի մասին հիմնավոր վերլուծություններ և եզրակացություններ:

Այդ բացը փորձել ենք լրացնել մեր «Քաղաքական բռնաճն-

---

[11] Գրիգոր Հարությունյան, կյանքը և գործունեությունը, կազմ. Ն. Միկոյան, Հր. Ավետիսյան, Եր., 2000, Ա.Վիրաբյան, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Եր., 2001

[12] Տես Դ. Գասպարյան, Փակ դռների գաղտնիքը, Եր., 1994, Ս.Ստեփանյանց, Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Եր., 1994, էդ. Լ. Մելքոնյան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937թթ., Եր., 1999, Ֆ. Սողոմոնյան, Ո՞ր մեղքի համար..., Բռնադատվածներ Սևանից ու շրջակա բնակավայրերից 1930-1949 թվականներին, Եր., 2001

շումները Հայաստանում 1920-1953 թթ.» աշխատության մեջ, որտեղ առաջին անգամ ներկայացվել է Հայաստանում տեղ գտած քաղաքական բռնաճնշումների պատմությունը 1920-1953 թթ. ամբողջությամբ[13]:

Առավել խոր է ուսումնասիրված տվյալ ժամանակաշրջանին վերաբերող բազում գրականությունը, որն օգնում է համակողմանի ծանոթանալու տվյալ տարիների պատմական իրադարձություններին: Խիստ դժվար է առանձնացնել դրանցից որևէ մեկը, քանի որ բոլորն էլ, այս կամ այն չափով, նպաստում են խորանալու տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների մեջ: Թերևս առանձնացնենք «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության 7-8-րդ հատորները, «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերը», ինչպես նաև Վ. Ղազախեցյանի «Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը 1929-1937», Հ. Կարապետյանի «Սովետական բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը», Գ. Գեղամյանի «Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին», Կ. Խուդավերդյանի «Կուլտուրական հեղափոխությունը խորհրդային Հայաստանում» ու նրա խմբագրությամբ հրատարակված «Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը զարգացած սոցիալիզմի ժամանակ», Կ. Հարությունյանի «Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին (1939-1945 թթ.), Ս. Խարմանդարյանի «Լենինը և Անդրկովկասյան Ֆեդերացիայի կայացումը», Ն. Ափիյանի «Խորհրդային Հայաստանի անվտանգության մարմինները սոցիալիզմի կառուցման շրջանում» և շատ ուրիշ աշխատություններ, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի ճանաչված կուսակցական, պետական գործիչների՝ Ս. Շահումյան, Գ. Օրջոնիկիձե, Ալ. Մյասնիկյան, Շ. Ամիրխանյան և ուրիշների գործերը և նրանց մասին գրված աշխատությունները: Օգտագործվել են Կ. Մարքսի, Վ. Լենինի և սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության աչքի ընկնող գործիչների (Կաուցկի, Ռենան և այլն) աշխատությունները:

Իհարկե, խորհրդային շրջանում լույս տեսած աշխատություններն ունեն հասկանալի գաղափարական ուղղվածություն: Հատ-

---

[13] Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ., Եր., 1999

կապես դա նկատելի է մեր ուսումնասիրության առարկան լուսաբանելիս: Նույնիսկ խրուշչովյան «հալոցքի» տարիներին չի հաջողվել ձերբազատվել որոշակի մոտեցումներից և խնդիրը անաչառ ու ամբողջական ուսումնասիրության առարկա չի դարձել:

Ուշադրության է արժանի այն, որ խորհրդային շրջանում լույս տեսած աշխատություններում խուսափում էին ներկայացնելու անգամ 1949թ. հունիսին Հայաստանում իրականացված զանգվածային աքսորումների փաստը[14]:

Հայաստանում 1920-1953 թթ. քաղաքական բռնաճնշումների պատմության վերաբերող խորհրդային շրջանի գրականության մեջ հասկանալիորեն միակողմանի լուսաբանման, այլ գրականության գրեթե բացակայության պատճառով, առաջին անգամ ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել ենք ՀՀ ազգային անվտանգության նախարարության արխիվի այդ խնդրին առնչվող մեծաթիվ փաստաթղթերը (ՀՀ ԱԱՆԱ, կարճված գործերի ֆոնդ (ԿԳՖ) և պատմական ֆոնդ), ՀՀ ներքին գործերի նախարարության ինֆորմացիոն կենտրոնի օպերատիվ տեղեկատու և հատուկ ֆոնդերի բաժնի արխիվի նյութերը (ՀՀ ՆԳՆ ԻԿՕՏՀՖԲԱ, ֆոնդ Ռ), ինչպես նաև ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ֆ. 4, ֆ. 5, ֆ. 6, ֆ. 91, ֆ. 4033, ֆ. 4041, ֆ. 4045, ֆ. 4047), ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ֆ. 200, ֆ. 409), ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 112, ֆ. 113, ֆ. 114, ֆ. 116, ֆ. 571), Մայր Աթոռ Դիվանի (ՄԱԴ) փաստաթղթերը (ՀՀ ԱԱՆ-ից էջմիածին փոխանցված փաստաթղթեր են, որոնք այնուհետև տեղափոխվել են ՀՀ ՊԿՊԱ, սակայն ուսումնասիրության ժամանակ դեռևս համարագրված չէին, ուստի օգտագործվում են ՄԱԴ-ում գրանցված համարներով):

Օգտագործվել են նաև Ռուսաստանի Դաշնության տարբեր արխիվներից ստացված փաստաթղթերը (ՌԴ Յարոսլավի մարզի պետական արխիվ, ֆ. 3698 և այլն):

Օգտագործվել են մեր ուսումնասիրության համար աղբյուրագիտական առումով խիստ արժեքավոր պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյանի կազմած և խմբագրած «Հ. Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշ-

---

[14] Տես, օրինակ, Հայ ժողովրդի պատմություն, հ. 8, Եր., 1970, Հայ ժողովրդի պատմություն, Եր., 1972 և այլն

խանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու) Եր., 1999, Ս. Բեհբուդյանի կազմած «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» (1921-1938), Եր., 1994, «Վավերագրեր Հայ եկեղեցու», գիրք բ., Եր., 1996, «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», գիրք գ., Եր., 1997, փաստաթղթերի ժողովածուները, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու», պատ. խմբ. Գ. Գալոյան, Վ. Ղազախեցյան, Եր., 2000: «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», 2-րդ - 3-րդ մասերը, Եր., 1955 (նաև ռուսերեն հրապարակումները), «Լենինիզմ, Քրեստոմատիա», 2 պրակ, Եր., 1935, «ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պր. 1, էջմ., 1921, «Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխությունը և խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում», Եր., 1957 (ռուսերեն), «ՀԱՀ պատմությունից 1917-1921», Եր., 1958 (ռուսերեն), ինչպես նաև Դ. Գասպարյանի կազմած «Ալեքսանդր (Ակսել) Բակունց, մեղադրական գործ, հ. 4133», Եր., 1999, Հ. Բախչինյանի կազմած «Չարենցապատում ըստ անտիպ վավերագրերի», Եր., 1997 գրքերը:

Համակողմանի օգտվել ենք ԽՍՀՄ և ՀԽՍՀ այդ տարիներին հրապարակված մամուլից, մասնավորապես, «Պրավդա», «Խորհրդային Հայաստան», «Կոմունիստ», «Բանվոր», «Նոր ուղի», «Անաստված» և այլ հրապարակումներից, ինչպես նաև արտասահմանում լույս տեսնող «ՎԷՄ», «Ազդակ», «Արմենիա» պարբերականներից և այլն:

Օգտագործվել են նաև ՀՀ «Հուշամատյան» պատմալուսավորչական ընկերության արխիվի նյութերը, որոնց որոշ մասը հրապարակվել է մեր «Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ.», Եր., 1999 աշխատության մեջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՆԷՊ-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ *(1921-1929 թթ.)*

ա. ԽՍՀՄ-ում ընթացող հասարակական-քաղաքական գործընթացները, միակուսակցական համակարգի հաստատումը, զանգվածային բռնաճնշումների առաջին դրսևորումները Հայաստանում

Իշխանության մարմինների կողմից քաղաքական բռնաճնշումները, այսինքն քաղաքական այլ հայացքներին հարող մարդկանց հետապնդումները, ուղեկցել են մարդկության պատմությունը հին ժամանակներից: Դա արտահայտվում էր տարբեր ճանապարհներով իշխանություն ձեռք բերած անձանց կողմից դրսևորած հետապնդումներով իրենց իշխանությանը հավակնող մարդկանց նկատմամբ: Բնական է, որ հին ժամանակաշրջանում քաղաքականությունը հիմնականում արտահայտվում էր իշխանությանը հավակնող կամ դրան ուղղակի կամ անուղղակի վտանգ սպառնացող մարդկանց խմբերի ձևով և չէր կրում արդեն նոր պատմության ժամանակաշրջանին հատուկ քաղաքականացված, կուսակցական բնույթ: Հիշենք քաղաքական ահաբեկչության օրինակները Հին Հռոմի տիրակալների ժամանակաշրջանում, միջնադարյան Եվրոպայում մոլեգնած ինկվիզիցիայի տարիները, Ֆրանսիայում հուգենոտների անմարդկային հետապնդումները, Ռուսաստանում Իվան Ահեղի սանձազերծած «օպրիչնինայի» դժնի տարիները, Հայաստանի պատմությունից հայտնի պավլիկյան և թոնդրակյան շարժման մասնակիցների հետապնդումները, Անգլիական և Ֆրանսիական հեղափոխություններին հետևած զանգվածային բռնաճնշումները... 20-րդ դարի նոր մարդակուլների, դրանք անհամեմատելիորեն գերազանցող, քաղաքական հետապնդումները՝ հանձինս Ստա-

լինի՝ ԽՍՀՄ-ում, Հիտլերի՝ Գերմանիայում, Մաո Ցզեդունի՝ Չինաստանում, Պինոչետի՝ Չիլիում, Պոլ-Պոտի՝ Կամբոջայում և այլն:

Եթե առաջներում քաղաքական զոհերի քանակը հաշվվում էր տասնյակ և հարյուր հազարներով, ապա վերջիններիս զոհերի թիվն արդեն հաշվվում էր միլիոնավոր մարդկանց կյանքով:

1920-ականների երկրորդ կեսին, 1930-ականներին և 1949 թվականին ԽՍՀՄ-ում ալիք առ ալիք բարձրացած ստալինյան բռնաճնշումները ցնցեցին աշխարհի մեկ վեցերորդը կազմող երկիրը, որի մասն էր կազմում Հայաստանը:

Ինչպես հայտնի է, Ռուսաստանում 1917-ից սկսած դաժան քաղաքական հակամարտությունը, որն արտահայտվեց քաղաքացիական կռիվների ձևով մինչև 1922 թ., խեղեց միլիոնավոր մարդկանց կյանքը: Այդ տարիներին խորհրդային իշխանությունների կողմից կիրառված տնտեսական քայլերը, մասնավորապես ռազմական կոմունիզմի իրականացման փուլը, իրեն չարդարացրեց և երկրի ղեկավար Վ. Լենինի նախաձեռնությամբ որոշակի դրական տեղաշարժեր սկսվեցին ՆԷՊ-ի իրագործման տարիներին, որը, սակայն, չհասավ իր տրամաբանական ավարտին: Այդ ամենին ուղեկցում էր քաղաքական կոշտ պայքարը, որի ընթացքում բոլշևիկյան կուսակցությունը քաղաքական ասպարեզից հանեց նախ բոլոր իրեն ընդդիմադիր կուսակցություններին, ապա նաև կարճ ժամանակահատվածում իշխանությանը մասնակից էսէռների (սոցիալիստ-հեղափոխականների) կուսակցությունը:

Հայտնի է, որ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայ իրականության մեջ ակտիվ հասարակական-քաղաքական դրսևորումներ եղան Ռուսաստանի կայսրության մեջ ընդգրկված հայ գործիչների կողմից, որոնք մասնակցում էին կայսրությունում տեղի ունեցող բուռն հեղափոխական իրադարձություններին՝ հարելով տարբեր համառուսաստանյան կուսակցություններին, ինչպես նաև ձևավորվել էին զուտ հայկական կուսակցություններ, որոնցից առավել աչքի էին ընկնում «Հնչակյան», «Դաշնակցություն» և «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն» (սպեցիֆիկները)[15]:

---

[15] Տե՛ս Հ. Գ. Վարդանյան, Հայ բուրժուական-ազգայնական կուսակցությունների դիրքավորումը ռուսական առաջին հեղափոխության տարիներին, Եր., 1975, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Եր., 1967 և այլն

1917 թ. փետրվարյան իրադարձությունների արդյունքում Ռուսաստանում տապալվեց կայսրությունը, իսկ 1917 թ. հոկտեմբերի 25-ին խորհրդային իշխանություն հռչակվեց:

1918 թ. մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը և երկար ժամանակահատվածում պետականությունը կորցրած հայ ժողովուրդը անկախանալով՝ փորձեց կերտել իր պետականությունը:

Ռուսաստանի բոլշևիկներն, իհարկե, երազում էին համաշխարհային հեղափոխության մասին, սակայն, լինելով իրատես, հասկանում էին, որ հեղափոխության հաղթանակի առաջին տարիներին կենսական խնդիրը՝ ձեռք բերված իշխանությունը ամրապնդելու հարցն էր: Դա պարտադրում էր նրանց արտաքին հարաբերություններում ավելի զգույշ քաղաքականություն վարել և ամեն կերպ ցուցադրել, թե իրենք չեն միջամտում անկախացած պետությունների ներքին կյանքին: Դա նկատելի է անգամ 1918-20 թթ. Հայաստանի հետ հարաբերությունները վերլուծելիս: Անգամ 1920 թ. հոկտեմբերի 28-ին, Խորհրդային Ռուսաստանի անմիջական օգնությամբ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց մեկ ամիս առաջ ՌԽՖՍՀ-ի ներկայացուցիչ Լեգրանը Հայաստանի Հանրապետության հետ նախնական հաշտության պայմանագրի նախագիծ էր ստորագրում, որտեղ ՌԽՖՍՀ-ն ընդունում էր Հայաստանի ինքնուրույնությունն ու անկախությունը և պարտավորվում էր որևէ տեսակի միջամտություն չիրագործել նրա ներքին գործերի մեջ[16]: Սակայն իր կարճատև գոյությունից հետո՝ Հայաստանի առաջին հանրապետության ղեկավարները ստիպված էին տեղի տալ օբյեկտիվորեն հասունացած իրողությանը և 1920 թվականի դեկտեմբերի 2-ին իշխանությունը տվեցին հայ բոլշևիկներին, որը ամրագրվեց ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեգրանի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչներ Դրոյի ու Տերտերյանի միջև Երևանում կնքված համաձայնագրով[17]:

Թվում էր՝ այս ամենից հետո տարածքային ու մարդկային մեծ կորուստներ կրած ազգը հնարավորություն կստանար փոքր-ինչ շունչ առնելու, սակայն 1920-ական թվականներին սկսված և 30-ա-

---

[16] Տես Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (Քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 316

[17] Տես նույն տեղը, էջ 383-384

կան թվականներին կոմունիստական ամբողջատիրական համակարգի ձևավորման շրջանում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրադարձությունները ԽՍՀՄ-ում՝ նոր խնդիրների առաջ կանգնեցրին հայ ժողովրդին:

Քաղաքական սուր հակամարտությունները, քաղաքացիական կռիվները իրենց կնիքը թողեցին խորհրդային երկրի հետագա կյանքի վրա: Այն Հայաստանում առավել սուր արտահայտվեց Առաջին հանրապետության տարիներին, որն իր ցայտուն դրսևորումն ունեցավ բոլշևիկների կողմից կազմակերպված մայիսյան ապստամբության օրերին: Հայտնի է, որ այն ճնշվեց Հայաստանի իշխանությունների կողմից, որի ղեկին էին դաշնակցականները: Չխորանալով 1918-1920 թթ. իշխանությունների, այսինքն դաշնակցականների և բոլշևիկների, որոնց օժանդակում էր բոլշևիկյան Ռուսաստանը, անհաշտ հակամարտության մանրամասների մեջ փաստենք 1920 թ. դեկտեմբերի առկա իրողությունը՝ փոխադարձ անվստահությունը նշված կուսակցությունների մեջ: Դա իր արտահայտությունը գտավ նաև վերոհիշյալ համաձայնագրում, որի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում մասնավորապես նշված էր, որ Հայկական բանակի հրամանատարական կազմը որևէ պատասխանատվություն չի կրում նախախորհրդային Հայաստանի բանակի շարքերում կատարած գործողությունների համար: Դաշնակցություն կուսակցության և հայկական մյուս սոցիալիստական կուսակցությունների անդամները չեն ենթարկվելու որևէ բռնության կուսակցական պատկանելիության համար և, որ Ռազմահեղափոխական կոմիտեի կազմում մտնելու են 5 անդամ կոմունիստական կուսակցության նշանակումով և 2 անդամ ձախ դաշնակցականների խմբից, կոմունիստական կուսակցության հետ համաձայնեցնելով[18]:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, դաշնակցականների կողմից ցուցաբերած զգուշավորությունն ավելորդ չէր: Ուշադրություն դարձնենք նաև այն իրողությանը, որ նոր ձևավորվող իշխանության մեջ, որոշ պայմանով, տեղ էր տրվելու նաև ձախ դաշնակցականներին, ինչը հիշեցնում է Ռուսաստանում ձախ էսէռներին (սոցիալիստ-հեղափոխականներ) ցույց տրված վերաբերմունքին բոլշևիկյան իշխանության առաջին շրջանում: Հայտնի

[18] Տես Великая Октябрьская Социалистическая революция и победа Советской власти в Армении (сборник документов) Ер., 1957, էջ 441

Ա 30886

է, որ հայ բոլշևիկները Հայաստանում իշխանության հասան բոլշևիկյան Ռուսաստանի անմիջական օգնությամբ և պետք է հաշվի առնեին վերջիններիս այդ երկրի խորհրդային իշխանություններ ձևավորելու փորձը: Նախ, այդ տրամաբանությունից ելնելով ստեղծվեցին Հեղկոմը, որը ղեկավարում էր հայտնի կուսակցական գործիչ Ս. Կասյանը, ապա՝ կառավարման այլ օղակները, որոնցից կարելի է առանձնացնել ՀԽՍՀ Արտակարգ Հանձնաժողովի (ԱՀ) ստեղծումը[19], որն իր նախադեպն ու գործունեության փորձն ուներ հանձինս Համառուսաստանյան Արտակարգ Հանձնաժողովի (ՀԱՀ):

Այն դարձավ պետական համակարգի այն օղակը, որը գլխավոր դերերից մեկը խաղաց հետագա տարիների քաղաքական բռնաճնշումների իրագործման մեջ: Հարկ է նշել, որ Երևան գալուց հետո Հեղկոմը նպատակահարմար չգտավ իր կազմի մեջ մտցնել ձախ դաշնակցականների ներկայացուցիչներին: Դրոն, որը նշանակվել էր բանակի հրամանատար, շուտով հանվում է այդ պաշտոնից[20]:

Հայաստանում, ըստ էության, զանգվածային քաղաքական հետապնդումներն սկսվեցին խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ ամիսներին:

Ինչպես արդեն նշել ենք, հայ բոլշևիկներն իրենց աչքի առաջ ունեին Ռուսաստանի օրինակը, որտեղ 1917 թվականից սկսած քաղաքացիական պատերազմի փորձը ցույց էր տալիս, որ ընդդիմադիր կողմում առանձնապես ակտիվ դերակատարում ունեին ցարական բանակի նախկին սպաները և նախկինում հակաբոլշևիկյան դրսևորումներ ունեցած կուսակցություններն ու կազմակերպությունները[21]: Ակնհայտ է նաև այն իրողությունը, որ Հայաստանի իշխանություններն առաջին իսկ օրերից ստանում էին բոլշևիկյան Ռուսաստանի իշխանությունների խորհրդատվական և այլ բնույթի օժանդակությունը, այսինքն, նրանց գործողություններն, այս կամ այն ձևով, ուղղորդվում էին Ռուսաստանից, մասնավորապես, քաղաքական որոշումներ կայացնող մարմինը Վ. Լենինի առաջնորդությամբ իշխող բոլշևիկյան կուսակցությունն էր:

Այստեղից հասկանալի է դառնում այն վերաբերմունքը, որը խորհրդային իշխանություն հաստատելու առաջին իսկ օրերից

[19] ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու. պր.1. էջմ..1921. էջ 121

[20] Տես Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Եր., 1967, էջ 121

[21] Տես Д. Л. Голинков, Крушение антисоветского подполья в СССР, М., 1986, кн. 1, 2, Красная книга ВЧК, М., 1989, т.1, 2 և ուր.

դրսևորվեց ցարական և Հայաստանի առաջին Հանրապետության բանակներում ծառայած նախկին սպաների նկատմամբ:

Հայաստանում տեղի ունեցած քաղաքական զանգվածային հետապնդումների առաջին փաստը, չնայած վերոհիշյալ համաձայնագրին, արձանագրվեց նախկին 1400 սպաների Ռուսաստանի Ռյազան քաղաք արտաքսումով: Այդ գործողություններն ամբողջովին ներկայացնելու համար Հայաստանի արխիվներում համապատասխան փաստաթղթեր չեն գտնվել: ՀՀ ԱԱՆ արխիվում պահպանված բռնաճնշումների ենթարկված սպաների գործերից (Արարատով, Սիլիկով և ուրիշներ) կարելի է քաղել որոշ պատառիկներ այդ երևույթի մասին: Այդ խնդրին առաջինն անդրադարձել է պրոֆ. Վ. Ղազախեցյանը իր հոդվածներում[22]: Հարցը ինչ-որ չափով լրացնում են ՌԴ Ռյազանի արխիվում ուսումնասիրություններ կատարած քաղաքագետ Գ. Մարտիրոսյանի հոդվածները, որոնցում, մասնավորապես, հիշատակվում է, թե այդ զանգվածային արտաքսումների ենթարկված սպաների թվում էին 13 գեներալ, 15 գնդապետ և այլն[23]: Նրանց մեջ էին Հայաստանի առաջին Հանրապետության զինված ուժերի գլխավոր հրամանատար Նազարբեկյանը, գեներալ-լեյտենանտ Գամազովը, գեներալներ Բեյ-Մամիկոնյանը, Անդրինսկին, Խորմանսկին, Բազամովը, գնդապետներ Մելիք-Աղամալովը, Բաբաջանով եղբայրները, Մելիք-Շահնազարովը և ուրիշներ:

Հայ սպաներին աքսորում էին ոչ միայն Հայաստանից, այլև Վրաստանից ու Ադրբեջանից: Այսպես, Վրաստանում 1921թ. փետրվարի 27-ից հետո, 10-15 օրում ձերբակալվեցին 219 սպաներ, որոնք նույնպես ուղարկվեցին Ռյազան:

«Հայկական բանակի ձերբակալված սպաների գործից» նկատելի է, թե ինչպիսի հապճեպությամբ էին որոշումներ կայացրել 11-րդ Կարմիր բանակի հատուկ բաժնի աշխատակիցները, որոնք 1 օրում հարցաքննում էին 50 մարդ: Դրանից լիովին ճիշտ եզրակացություն է կատարել Գ. Մարտիրոսյանը, թե ամենայն հավանականությամբ հարցը նախօրոք էր լուծված, և դատավճիռը պատրաստ էր:

---

[22] Տես «Հայացք», թ. 11, 1990, էջ 73-79. «Հայաստանի Հանրապետություն». 30 ապրիլի 1991

[23] Տե՛ս «Հայություն», նոյեմբեր 1992, մայիս 1994, «Հայ զինվոր», թ.թ. 4,5,6, 1993, «Երկիր» 7 հուլիսի 1998

Ակնհայտ է, որ զանգվածային այդ արտաքսումների կապակցությամբ Հայաստանի քաղաքական ղեկավարությունը որոշում էր կայացրել, ինչի մասին վկայում է հայ բոլշևիկյան շարժման աչքի ընկնող գործիչներից մեկի, 1921 թ. հունվարից ՀԽՍՀ ԱՀ-ի նախագահ Շ. Ամիրխանյանի խոստովանությունը: Նա 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառները վերլուծելիս, մասնավորապես, գրում է, թե բոլշևիկների համար մեծ դրական, իսկ դաշնակցականների համար բացասական դեր խաղաց նախկին սպաների արտաքսումը Հայաստանից, որի պատճառով ապստամբները զրկվեցին փորձված զինվորականներին օգտագործելու հնարավորությունից: Դրա մասին է վկայում նաև այն, որ ապստամբների շտաբի պետ Սարգիսբեկյանը 1921թ. մարտին գրում էր Լեռնահայաստանում գտնվող խմբապետ Յապոնին (Արմենակ Պարոնյան), թե «Սպաների սարսափելի կարիք ենք զգում: Լավերին խաբեությամբ տեղափոխեցին Բաքու, իսկ մնացածների մեջ միայն 5 տոկոսն է պիտանի»[24]:

Հայաստանի քաղաքական հետագա զարգացումների համար էական դեր խաղաց 1921 թ. փետրվարին բռնկված ապստամբությունը: Ըստ այդ տարիներին Հայաստանում իշխող կուսակցության ղեկավար հատվածի ճնշող մեծամասնության կարծիքի՝ դա դաշնակցականների կողմից նախապատրաստված արկածախնդրություն էր. ինչը ներկայացնելու համար հրապարակվել են բազում հոդվածներ և գրքեր: Մյուս կողմը դաշնակցությունը ծայրահեղ հակառակն է փորձում ապացուցել, թե դա ժողովրդական զանգվածների մեջ ծագած դժգոհության դրսևորումն էր, որի գլուխ անցան իրենք: Իրականում փետրվարյան ապստամբության պատճառները այդ երկուսի հանրագումարն էր: Փաստ է, որ նորաստեղծ խորհրդային իշխանությունը պարենային դժվարին կացությունից դուրս գալու նպատակով երկրում մտցրեց պարենմասնատումը (ռազմական կոմունիզմի քաղաքականություն), ինչը լուրջ դժգոհություններ առաջացրեց ժողովրդի՝ հատկապես գյուղացիության մեջ: Դրան զուգահեռ տեղի էին ունենում որոշակի ձերբակալություններ, երբեմն անհարկի և անտեղի, ինչի մասին խոստովանել էին իրենք՝ բոլշևիկները:

---

[24] Ш. М. Амирханян, Из истории борьбы за советскую власть в Армении, Ер., 1967, էջ 124

Այսպես, օրինակ, 1921 թ. փետրվարի 1-ին ՀԽՍՀ Հեղկոմի նախագահը գրություն է հղում ՀԽՍՀ ԱՀ նախագահին, որտեղ գրված էր. «Հավաստի աղբյուրներից տեղեկանում ենք, որ Ղարաքիլիսայի Քաղ. Բյուրոն (ԱՀ տեղական մարմինը - Ա.Մ.) մասսայական բանտարկություններ է կատարել և դեռ շարունակում է: Բանտարկված են նույնիսկ տեղական ժող. տնտես. խորհրդի աշխատակիցները: Առաջարկում ենք անմիջապես պարզել այդ բանտարկությունների պատճառները և հայտնել Հայհեղկոմի նախագահությանը: Առհասարակ պետք է կարգի հրավիրել այդ Քաղբյուրոն...»[25]:

Նույն ժամանակահատվածում բազում բողոքներ էին ուղարկվում ՀԽՍՀ Հեղկոմի նախագահին նկարագրելով թե ԱՀ աշխատակիցները առանց բացատրությունների մտնում են առանձին մարդկանց տները, վերցնում թանկարժեք իրեր, շորեր և այլն[26]:

Տեղին է հիշատակել նաև այն իրողությունը, որ 1922 թ. հունվարին ՀԿ(բ)Կ առաջին համագումարի քաղաքական հաշվետվության մեջ անգամ նշվում է, թե ծայրահեղություններ են եղել հին բանակի սպայության արտաքսման գործում[27]:

Այդ իրադրությունում հակառակորդ կողմը փորձում էր սրել վիճակը, ուռճացնելով իշխանությունների կատարած վերոհիշյալ և այլ գործողությունները, որի արձագանքն էր 1921 թ. ապրիլի 6-ի ՀԽՍՀ ԱՀ հ. 1 հրամանի բովանդակությունը, որտեղ կտրուկ հերքվում էին դաշնակցականների կողմից տարածվող այն լուրերը, թե ԱՀ «... իբր կացիններով է կտրատում հարյուրավոր և հազարավոր անմեղ մարդկանց: ...Որին ընդունակ են միայն իրենք, դաշնակցականների խմբապետները և մաուզերիստները»: Ապա հայտարարվում է, որ ԱՀ-ը և Հատուկ բաժինը իրենց ամբողջ գոյության ընթացքում գնդակահարել է «միմիայն 29 հոգի, ակտիվ սրիկաների»[28]:

Իրադրությունը Հայաստանում իսկապես լարվում էր և 1921 թ. փետրվարի 7-ին ՀԿ(բ)Կ ԿԿ քննարկում է դաշնակցականների նկատմամբ վերաբերմունքի հարցը և հակահեղափոխության դեմ պայքարելու համար որոշում է մեկուսացնել Երևանի ու մի քանի այլ կենտրոնական շրջանների դաշնակցականների ղեկավար կազ-

---

[25] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.113, ց. 3, գ. 24, թ. 2

[26] Տես նույն տեղը, թ.թ. 36, 38 և այլն

[27] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Եր., 1967, էջ 340

[28] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.113, ց. 3, գ. 19, թ. 68

մը: Այդ նիստին մասնակցել է Ռուսաստանից օգնության ուղարկված Համառուսաստանյան ԱՀ-ի փորձված աշխատակից Գ. Աթարբեկյանը:

Վերոհիշյալ նիստը, հավանաբար, դաշնակցականներին ստիպել է արագացնել հասունացող ապստամբությունը[29]:

Մյուս կողմից Լեռնահայաստանում դեռ տնօրինություն էր անում Գ. Նժդեհը և Հայաստանում մնացած դաշնակցության ղեկավարները որոշակի հույսեր կապելով նրա հետ՝ թերևս, ցանկություն ունեին ետ վերցնել իշխանությունը, ուստի որոշակի ընդհատակյա գործունեություն էին ծավալել: Իրադարձությունների ընթացքը ևս ցույց է տալիս, որ նրանք, հատկապես Դարալագյազի, Բաշ Գառնիի և մի քանի այլ շրջաններում բավականին նախապատրաստվել էին այդ իրադարձություններին: Դրա վկայությունը կարելի է համարել ապստամբությունից մի քանի օր առաջ Դրոյի հետ Կարմիր բանակ մտած Ս. Թարխանյանի (Կուռո) փախուստը և վերջինիս կողմից ապստամբների զինված ուժերի ռազմական գործողությունների ղեկավարումը: Հայաստանում մնացած նախկին վարչապետ Ս. Վրացյանի գլխավորությամբ ստեղծվում է «Հայրենիքի փրկության կոմիտե», որը ղեկավարում է ապստամբությունը:

Ռուսական զորքերի օգնությամբ 1921 թ. ապրիլին ապստամբությունը ճնշվում է և նրա ղեկավարներն ու մասնակիցների որոշ մասը Լեռնահայաստանի ճանապարհով փախչում են Իրան:

Հարկ է նշել, որ խորհրդային իշխանությունները հասկանալով իրադրության լրջությունը 1921 թ. ապրիլի 10-ին հրապարակում են Հեղկոմի «Ներման մասին» դեկրետը, որտեղ հայտարարվում է, որ շինարար աշխատանքին լծվելու են հրավիրում ոչ միայն նրանց, ովքեր կռվել են հեղափոխության հաղթանակի համար, այլև նրանց, որոնց նետել էին իրենց դեմ մղվող ակտիվ կռվի մեջ: Կառավարությունը մեծահոգություն է դրսևորում բոլոր «մոլորյալների» նկատմամբ, ովքեր ենթարկվել են «հանցավոր ագիտացիայի,վախի և փոքրոգության» և մոռացության է տալիս բոլոր նրանց հանցանքները, ովքեր հանրապետության «աշխատավորության հավիտենական թշնամիների ոճրագործ միտումների զոհն են եղել»[30]:

---

[29] Տես Ш. М. Амирханян, Из истории борьбы за советскую власть в Армении, Ер., 1967, էջ 101-102

[30] Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Եր., 1967, էջ 155-166

1921 թ. մայիսի սկզբներին ՌԿ(բ)Կ ԿԿ որոշմամբ Ռուսաստանից և այլ խորհրդային հանրապետություններից Հայաստան են ուղարկվում մի շարք ղեկավար գործիչներ, որոնց թվում Ալ. Մյասնիկյանը, որը դառնում է Հայաստանի Հեղկոմի նախագահ, ապա մայիսի 21-ից ստեղծված ՀԽՍՀ ԺԿԽ նախագահ և ռազմական գործերի կոմիսար:

1921 թ. հուլիսին Գ. Նժդեհը հաջողությամբ կատարելով իր պատմական առաքելությունը Զանգեզուրը հանձնելով ՀԽՍՀ-ին, որի ընթացքում իր բավականին ներդրումն ունեցավ նաև Ալ. Մյասնիկյանը, հեռացավ Հայաստանից, որով վերջացան կռիվները Հայաստանում[31]:

Մեր հետազոտության նպատակների մեջ չի մտնում Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմի նկարագրությունն ու խորը վերլուծությունը. այլ դրա հետևանքների ուսումնասիրությունը: Կարելի է միանշանակ նշել, որ այդ իրադարձությունները, բնականաբար, առավել կարծրացրեցին հայ բոլշևիկների ու դաշնակցականների պայքարը, որը մինչ1930 թվականն ընթանում էր նաև ՀԽՍՀ-ի տարածքում: Այստեղից էլ բխում է Հայաստանի խորհրդային իշխանությունների կողմից կիրառվող բռնաճնշումների մեջ առանձնահատուկ վերաբերմունքը դեպի դաշնակցությունը:

Այսպիսով, խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո Հայաստանում, փաստորեն, ձևավորվեց միակուսակցական ղեկավարման համակարգ, որը որոշակի բացասական ազդեցությունն ունեցավ հետագայում տեղի ունեցած քաղաքական բռնաճնշումների վրա: Այդ առումով հարկ է կանգ առնել բոլշևիկյան կուսակցության մեջ գործադրվող՝ իրենց շարքերը զտելու պրակտիկայի վրա: Կուսակցության շարքերի զտումը, մաքրումը, կուսակցական փաստաթղթերի ստուգումները ևս առիթ էին քաղաքական բռնաճնշումների համար:

Հայաստանում բոլշևիկյան կուսակցության շարքերի վերացուցակագրություն, ապա ստուգման ու զտման առաջին կամպանիան տեղի ունեցավ 1921 թվականին: Ինչպես նշված է ՀԿ(բ)Կ ԿԿ օրգան

---

[31] Գ. Նժդեհ, Խորհրդածություններ, Եր., 1999, Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, Պայքար, թ.թ. 2,3, 1997, Վ.Ղազախեցյան, Նժդեհը Զանգեզուրում. 1920թ. վերջ-1921թ. հուլիս, Եր., 2001

հանդիսացող «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագրականում, 1921 թ. մայիսի 29-ին սկսվել է Հայաստանի կոմկուսի բոլոր անդամների վերացուցակագրությունը, որը նպատակ ուներ պարզել կուսակցության սոցիալական պատկերը, մաքրել նրա շարքերը անհարազատ տարրերից[32]:

Մի քանի ամիս անց, հուլիսի 19-ին վերացուցակագրությունն ավարտվել էր և կուսակցության 3601 անդամներից մնացել էին 2492-ը, 4250 թեկնածուներից՝ 3227-ը[33]:

Արդեն 1921թ. դեկտեմբերին Հայկոմկուսն անցկացրեց իր շարքերի ստուգումն ու զտումը, որի ընթացքում կուսակցության շարքերից վտարվեցին 2262 մարդ (27,5 տոկոսը)[34]:

Առաջին հայացքից բնական է դիտվում, որ կոմկուսը աշխատում էր մաքրել իր շարքերը գաղափարապես խորթ և այլ կարգի՝ իրենց պատշաճ չդրսևորող (դիրքը չարաշահողներ, խուլիգաններ և այլն) մարդկանցից: Սակայն այդ միջոցառումների ընթացքում հենց կոմկուսի շարքերում և հասարակության մեջ մուտք է գործում, այս կամ այն դրդապատճառներով մատնագրեր, հերյուրանքներ գրելու սովորույթը, որը, ցավոք, իր «կատարելությանն» է հասնում 1930-ական թվականներին և դառնում բազմաթիվ մարդկանց բռնաճնշումների ենթարկելու միջոց:

Արդեն 1921 թվականին նկատելի էին նման օրինակներ, որոնցից ներկայացնենք այդ տարիներին ՀԽՍՀ ԱՀ-ի քարտուղար, 1920 թ. մայիսյան ապստամբությանը Ալեքսանդրապոլում (Գյումրի) մասնակցած և բանտ ընկած, հետագայում խորհրդային փայլուն հետախույզներից մեկի՝ Հայկ Հովակիմյանի նկատմամբ տեղի ունեցած փաստը:

Վերոհիշյալ ստուգումների ժամանակ ոմն կուսանդամ Բանանիայան դիմում է գրում, թե ինքը հանդիպել է Հ. Հովակիմյանին Արմավիրում, որ վերջինս խորհրդային իշխանության անհաշտ թշնամի է, համոզված կոռնիլովական և իբր կամավոր մտել է սպիտակ բանակի շարքերը: Ինչպես գրված է դիմումում. «Ես վկա չեմ եղել

---

[32] «Խորհրդային Հայաստան», 29 մայիսի 1921

[33] Նույն տեղում, 21 հուլիսի 1921 (Հարկ է նշել, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերում՝ էջ 333) այդ թվերը մի փոքր ուրիշ են կուսակցության շարքերում մնացել են 2519, թեկնածուներից 3241 մարդ):

[34] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Եր., 1967, էջ 333-334

անձամբ, բայց հաստատ գիտեմ, որ նա սպա է եղել սպիտակների մոտ»[35]: Դա բավարար է եղել, որպեսզի սկսվեին ստուգումները և քաշքշուկները: Բարեբախտաբար, այս անգամ Հայչեկայի 5 աշխատակիցներ հանդես եկան իրենց գործընկերոջ պաշտպանությամբ, դիմումի հեղինակին մեղադրելով դեմագոգիայի և անձնական հաշիվներ մաքրելու փորձ անելու մեջ: Ասենք, որ ստուգման ընթացքում Հ. Հովակիմյանին հեռացրին կուսակցությունից, ապա՝ վերականգնեցին, վերջում նա դուրս մնաց ՀԽՍՀ ԱՀ-ից և հեռացավ Հայաստանից:

Հարկ է նշել, որ կուսակցության զտումները կատարվում էին ոչ միայն հրապարակային միջոցառումների միջոցով, այլև պարբերաբար:

Այսպես, ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1922 թ. օգոստոսի փակ նամակի «Կուսակցական դրությունը» ենթավերնագրի տակ առաջադրանք է դրվում շարունակել կուսակցական շարքերի զտումը[36]:

Մոտ երկու տարի հարաբերական անկախ գոյատևությունից հետո՝ 1922 թ. մարտին կազմավորվում է Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Ֆեդերատիվ Միությունը (ԱՍԽՀՖՄ), որի կենտրոնն է դառնում Թբիլիսին, այնուհետև այն վերանվանվեց Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ԱՍՖԽՀ)[37]: Նույն տարվա դեկտեմբերին ստեղծվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ), որի կազմում ընդգրկվում է ԱՍՖԽՀ-ն: Եթե մինչ այդ ձևականորեն անուղղակի էր Մոսկվայի կողմից հանրապետության ղեկավարումը, ապա ԽՍՀՄ-ի կազմավորումից հետո ստեղծվում են համամիութենական և Անդրֆեդերացիայի (ԱՍՖԽՀ) կուսակցական ու կառավարման մարմինները և Հայաստանը մյուս հանրապետությունների հետ դառնում է միասնական կենտրոնից ղեկավարվող հանրապետություն: Ավելին, այդ իմաստով բավականին ծանր պայմաններ են ստեղծվում Հայաստանի ղեկավարության համար, որը, փաստորեն, գտնվում էր երկակի իշխանության և հետևաբար՝ հսկողության տակ: Քաղաքական և տնտեսական հիմնական որոշումները կայացվում էին Մոսկվայում

---

[35] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4, ց. 3, գ. 791, թ. 17

[36] Նույն տեղում, ֆ.1, ց. 2, գ. 48, թ. 8

[37] Մանրամասն տե՛ս С.В. Харамандарян, Ленин и становление Закавказской федерации, 1921-1923, Ер., 1969

և դրանք իրագործելիս Հայաստանի ղեկավարները շատ փոքր հնարավորություն ունեին ինքնուրույն քայլեր կատարելու: Ուստի Հայաստանի քաղաքական և տնտեսական զարգացումները առավելապես կախված էին կենտրոնական մարմիններում ընդունված որոշումներից և, բնականաբար, բոլոր այն քաղաքական գործընթացները, որ տեղի էին ունենում, առաջին հերթին, ՀամԿ(բ)Կ Կենտկոմում և ԽՍՀՄ ղեկավարման մյուս օղակներում՝ իրենց արտացոլումն էին գտնում բոլոր հանրապետություններում. այդ թվում և Հայաստանում:

Բնութագրական է այդ առումով ՀԿ(բ)Կ Կենտկոմի վերոհիշյալ 1922 թ. փակ նամակում արտահայտված հետևյալ միտքը, որ Հայաստանի մասնավոր դրությունը օղակվում է և համառուսական ընդհանուր կացության հետ Անդրֆեդերացիայի և կուսկազմակերպության Անդրկովկասյան Շրջանային կոմիտեի միջոցով վերջիններիս վիճակն ու ուղեգիծն է, որն անմիջապես անդրադառնում է Հայաստանի վրա և հրահանգող նշանակություն է ստանում նրա համար[38]:

– 1924 թ. հունվարի 21-ին վախճանվեց բոլշևիկյան առաջնորդ Վ. Լենինը և կոմունիստական կուսակցության ղեկավարության մեջ աննախադեպ պայքար սկսվեց առաջնորդի տեղի համար, որի հիմնական հավակնորդները սկզբնական շրջանում Լ. Տրոցկին և Ի. Ստալինն էին: Հայաստանում ևս քննարկվում էր այն հարցը, թե ո՞վ է փոխարինելու Վ. Լենինին: 1924 թ. փետրվարի 22-ին ՀԽՍՀ ԱՀ-ի գրություններից մեկում, որը վերաբերում էր իրադրությանը կապված Վ. Լենինի մահվան հետ կարդում ենք, որ Լենինականի (Գյումրի) կայազորի կարմիր բանակայինները «հետաքրքրվում էին այն հարցով, թե ով պետք է փոխարինի ընկ. Լենինին, իսկ մի քանիսը իրար մեջ զրուցելիս ասում էին, թե Լենինին հավանաբար կփոխարինի Տրոցկին և նշում էին, որ գյուղացիների համար վատ կլինի, քանի որ Լենինը պաշտպանում էր գյուղացիներին, իսկ Տրոցկին պաշտպանում է բանվորներին»[39]:

Պայքարն ավարտվեց կուսակցական ապարատի լծակներն իր ձեռքը հավաքած Ի. Ստալինի հաղթանակով, որը սկզբում գաղափարական բանավեճի հրավիրեց Լ. Տրոցկուն և վերջինիս գաղա-

---

[38] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ.1, ց. 2, 48, թ.12

[39] Նույն տեղում, ֆ.1, ց. 4, գ.70, թ. 66

փարախոսությունը՝ «տրոցկիզմը» թշնամական հայտարարելով՝ նրան 1929 թվականին վտարեց ԽՍՀՄ-ից: Սակայն Լ. Տրոցկին շարունակում էր իր պայքարը Ի.Ստալինի դեմ և, ըստ էության իսկապես դարձել էր իր երկրի ամենավտանգավոր հակառակորդներից մեկը: Վերջերս հրապարակված փաստագրական նյութերը հաստատեցին, որ Ի. Ստալինի կարգադրությամբ, 1940 թվականի օգոստոսին, ԽՍՀՄ ՆԳԺԿ մարմիններն ահաբեկման միջոցով Լ.Տրոցկուն սպանեցին հեռավոր Մեքսիկայում[40]:

Հարկ է հիշատակել, թե ինչ սկզբունքային հարցերի շուրջն էին տեղի ունենում բանավեճերն այդ տարիներին և դրան հաջորդող ժամանակաշրջանում օպոզիցիա, հետո նաև թշնամիներ հռչակված ընդդիմության և Ի. Ստալինի շուրջ հավաքված կոմունիստ-կամակատարների միջև: Դրանք արհեստականորեն սրված և որոշակի նպատակներ հետապնդող մեկ երկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման, միջակ գյուղացիության հետ բանվոր դասակարգի դաշինքի հաստատման, հեղափոխության սոցիալական բնույթի, գաղութային երկրների հեղափոխություններին օժանդակելու համաշխարհային բանվորական շարժման միասնական ճակատի տակտիկայի հարցերն էին[41]:

1920-ական թվականներին ՀամԿ(բ)Կ-ի, այսինքն միակ իշխող կուսակցության ուշադրությունը քաղաքական դաշտում բևեռված էր ներկուսակցական պայքարին: Ժամանակագրական առումով համառոտ ներկայացնենք այդ պայքարի հիմնական փուլերը, քանի որ դա, այսպես թե այնպես, իր արձագանքն էր ունենում Հայաստանում և, որ առավել կարևոր է, ներկուսակցական այդ հակամարտությունը հող էր նախապատրաստում քաղաքական բռնաճնշումների իրագործման համար:

Այսպես, եթե 1922 թ. օգոստոսին՝ Համառուսաստանյան Կ(բ)Կ 12-րդ կոնֆերանսում ՆԷՊ-ի առաջին տարվա արդյունքները վերլուծելիս հիմնականում դեռ խոսքը գնում էր էսեռների և մենշևիկների, մասամբ անկուսակցական բուրժուական մտավորականության վերնախավի դեմ պայքարելու մասին, որտեղ այդ տարիների ոգով նշված էր, թե չի կարելի հրաժարվել բռնաճնշումներ կատարելուց,

---

[40] Տե՛ս Вопросы разведки и контрразведки, р.19, 1997

[41] Տե՛ս Լենինիզմ, քրեստոմատիա, պր. 2, եր., 1935, էջ 353-360

ապա 1923 թ. ապրիլին կայացած ՌԿ(բ)Կ 12-րդ համագումարում արդեն խոսվում է Վրաստանում, Ադրբեջանում, Բուխարայում և Խորեզմում դրսևորված ազգային շեղումների մասին[42]: Ուշադրություն դարձնենք այն իրողությանը. որ Ռուսաստանի կոմկուսը իր որոշման մեջ անդրադարձել էր անկախ հռչակված Վրաստանի և Ադրբեջանի հանրապետություններին: Ի միջիայլոց, այնտեղ որևէ ձևով Հայաստանը հիշատակված չէ: Դա պատահական չէ, քանի որ անգամ այդ տարիների Անդրկովկասի բոլշևիկյան ճանաչված առաջնորդ և գործիչ .Օրջոնիկիձեն, 1923 թ. նշում էր. թե Հայաստանում ներկուսակցական դրության տեսակետից մենք ունեցել ենք և ունենք բավականին լավ վիճակ[43]:

1923 թ. հոկտեմբերի 15-ին մի շարք հին բոլշևիկներ հանդես եկան «46-ի պլատֆորմով» (Պրեոբրաժենսկի, Սերեբրյակով, Բուբնով, Սապրոնով, Պյատակով և ուր.) մեղադրելով Քաղբյուրոյին և մեծամասնության ֆրակցիային սուր տնտեսական ճգնաժամի, վերևների և ներքևների միջև կապի խզման համար և այլն: Նրանց միացան տրոցկիստները, դեցիստները, «ձախ կոմունիստները» և «բանվորական օպոզիցիայի» նախկին անդամները:

1923 թ. դեկտեմբերի 11-ին Լ. Տրոցկին հանդես եկավ «Նոր Կուրս» վերնագրով հոդվածով, որտեղ նշում էր, թե վերևից ոչ մի ժողովրդավարություն չի կարող լինել, որ կուսակցությունը պետք է ապարատը վերցնի իր հսկողության տակ և, որ կուսակցական ապարատը չպետք է խառնվի տնտեսական հարցերին:

1924 թ. հունվարին ՌԿ(բ)Կ 13-րդ կոնֆերանսում, որին հիվանդության պատճառով չէր մասնակցում Լ. Տրոցկին (դա նրա տակտիկական կոպիտ սխալներից էր իշխանության համար պայքարում), վերջինիս մեղադրեցին «հակաբոլշևիկյան ռևիզիոնիզմի և հակալենինյան թեքման մեջ» տրոցկիստական օպոզիցիան որակվեց որպես մանրբուրժուական թեքում[44]:

Այնուհետև Ստալին, Զինովև, Կամենև եռյակը լայնամասշտաբ հարձակում սկսեց Տրոցկու դեմ, 1925 թ. ՀամԿ(բ)Կ ԿԿ հունվարյան պլենումից հետո նրան հանեցին ԽՍՀՄ ռազմական ժողկոմի պաշտոնից: Ուշագրավ է այն, որ Ի. Ստալինի պնդմամբ Լ. Տրոցկին

---

[42] КПСС в резолюциях и решениях, М., 1954, ч. 1, էջ, էջ 674, 717

[43] Г. К. Орджоникидзе, Статьи и речи, т. 1, М., 1956, էջ 348

[44] Տես ՍՄԿՊ-ն բանաձևերում և որոշումներում, մաս 1, Եր., 1954,էջ 999

դեռևս մնում էր Քաղբյուրոյի կազմում, երբ նրա վերոհիշյալ «դաշնակիցները» պնդում էին, որ վերջինիս վտարեն կուսակցությունից: Դա ևս իշխանության ձգտող Ի. Ստալինի իրեն արդարացնող տակտիկական քայլերից էր, որից հետո քայքայվեց այդ «դաշինքը»:

1925 թ. Լենինգրադում սկսեց ձևավորվել «նոր օպոզիցիա» Զինովևի և Կամենևի գլխավորությամբ, որոնց դեմ, այս անգամ, Ի. Ստալինը հաջողությամբ օգտագործեց Բուխարինին: Այդ շրջանում բանավեճ էր գնում Զինովևի և Բուխարինի միջ և, վերջինիս «հարստացեք» լոզունգի դեմ: 1925 թ. աշնանը նոր ընդդիմությունը հանդես է գալիս «4-ի պլատֆորմով» (Զինովև, Կամենև, Սոկոլնիկով, Կրուպսկայա: Վերջինս հետագայում անցնում է Ստալինի կողմնակիցների շարքը) և փորձում նոր ներկուսակցական բանավեճ բացել: Սակայն դրա դեմ հանդես են գալիս բոլշևիկյան կուսակցության 9-ը ճանաչված գործիչներ (Ստալին, Ռիկով, Բուխարին, Տոմսկի և ուր.)[45]:

1927 թ. դեկտեմբերին կայացած ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարից հետո, որտեղ լենինգրադյան օպոզիցիայի 69 անդամներ դեմ քվեարկեցին հաշվետու զեկուցմանը, ՀամԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի որոշմամբ Մոլոտովը «կարգի հրավիրեց» Լենինգրադյան կազմակերպությանը: Մեկ ամսվա ընթացքում Զինովևին հանեցին մարզկոմի քարտուղարի պաշտոնից և նրան փոխարինեց Ի. Ստալինին նվիրված Ս. Կիրովը:

1926 թ. ապրիլին կազմավորվեց նոր «Միացյալ օպոզիցիա», որի մեջ մտան Ի. Ստալինի գրեթե բոլոր ընդդիմախոսները՝ Տրոցկին, Զինովևը, Կամենևը, Ռադեկը, Պյատակովը, «բանվորական օպոզիցիայի» ակտիվիստները (Շլյապնիկով և ուր.), «դեմոկրատական ցենտրալիստները» (Սապրոնով և ուր.): Սակայն այս դաշինքը խիստ անկայուն էր, քանի որ ստեղծվել էր ոչ թե գաղափարի շուրջ, այլ անձի՝ Ի. Ստալինի դեմ: Վերջինս օգտագործելով նաև այդ հանգամանքը, հաջողությամբ ջախջախեց իր մենատիրական իշխանության հասնելու ճանապարհի այս արգելքը: Բացահայտելով նրանց կողմից ընդհատակյա խմբեր ստեղծելու փորձերը, Զինովևին հանելով ՀամԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի կազմից, նա հասավ նրան, որ 1926 թ. հոկտեմբերի 16-ին ընդդիմության 6 պարագլուխները հանդես եկան մեղայականով՝ ընդունեցին ֆրակցիոն պայքա-

[45] Տե՛ս ՀՀ ՀՔԿՓՊԿԱ, ֆ.1, ց.5, գ.17, թ.1

րի անթույլատրելիությունը և պարտավորվեցին առաջիկայում խստորեն պահպանել կուսակցական կարգապահությունը:

1926 թ. հոկտեմբերին կայացած ՀամԿ(բ)Կ ԿԿ պլենումում օգտագործելով այդ հայտարարությունը Ստալինը կարողացավ իր գլխավոր ախոյաններից երկուսին Տրոցկուն և Կամենևին ևս հանել Քաղբյուրոյի կազմից: Ուշագրավ է անձամբ Ի.Ստալինի գնահատականներից մեկը, որ նա տվել է ընդդիմությանը 1926 թ. դեկտեմբերին: Նա նոր ընդդիմության յուրահատկություններն է համարում այն, որ դա միացյալ է և ոչ թե սովորական, որ քողարկվում է ձախ ֆրազներով և նրա անդամներն անընդհատ բողոքում են, թե իրենց չեն հասկանում[46]: Ընդդիմության համար հատկապես ջախջախիչ էր այն, որ Կրուպսկայան, գտնելով թե ընդդիմությունը շատ հեռու է գնացել կուսապարատի և զանգվածների մեջ ծեղքման գործում, անցավ Ի. Ստալինի կողմնակիցների շարքը:

1927թ. մայիսի 25-ին պատրվակ բռնելով Շանհայի (Չինաստան) կոմունիստների տապալումը 48 ընդդիմախոսներ հանդես եկան հայտարարությամբ մեղադրելով կառավարությանը անշնորհքության և ոչ պրոլետարական բնույթի համար:

1927 թվականի սեպտեմբերին ընդդիմությունը կրկին փորձեց վերցնել նախաձեռնությունը և հանդես եկան «83-ի պլատֆորմով», որտեղ առաջարկում էին բարեփոխումների իրենց ծրագիրը[47]: Այնտեղ ընդդիմախոսները պահանջում էին, որ 15-րդ համագումարից երեք ամիս առաջ Կենտկոմի պլենում հրավիրվի համագումարի բոլոր հարցերի նախնական քննարկման, միասնական որոշումներ մշակելու, ներքին պայքարը վերացնելու նպատակով: Նշենք, որ «83-ի պլատֆորմը» ստորագրողներից էր նաև Վ. Տեր-Վահանյանը:

1927 թ. դեկտեմբերին ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարում «Նոր օպոզիցիայի» դաշինքը վերջնականապես ջախջախվեց[48]:

Մասնավորապես, ընդդիմախոսները փորձում էին հասնել նրան, որ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի անդամների ընտրությունը կախված չլինի ապարատից, այլ դրանում ընդգրկվեն կուսակցական լայն զանգվածներ:

Այդ ծրագիրը գաղտնի տպագրեցին և տարածեցին, որը պա-

---

[46] "Правда" 2 ноября 1926

[47] Տես ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ.1, ց.7, գ. 79, թ. 53-58

[48] Տես КПСС в резолюциях и решениях, ч. 2, М., 1954, էջ 440-441, История КПСС, М., 1982, էջ 395

տեի հնարավորություն ընձեռնեց Ի.Ստալինին 1928 թ. ՀամԿ(բ)Կ հոկտեմբերյան պլենումի ժամանակ Տրոցկուն և Զինովևին հանելու Կենտկոմի կազմից, ապա հետևեց նրանց վտարումը կուսակցությունից և Կամենևի դուրս բերումը Կենտկոմի կազմից: Ինչպես նշվում էր այդ ժամանակաշրջանի կուսակցական փաստաթղթերում՝ ընդդիմության ներկայացուցիչները համապատասխան հետևություններ չէին արել ՀամԿ(բ)Կ ԿԿ 1927 թ. օգոստոսի պլենումից հետո: Ավելին, չնայած խոստացել էին դադարեցնել ֆրակցիոն գործունեությունը, հակառակ դրան՝ ստեղծել էին ընդհատակյա տրոցկիստական տպարան, որտեղ «բուրժուական մտավորականների հետ տպագրում էին հակակուսակցական գրականություն»[49]:

Ուշագրավ է այն փաստը, որ ամեն անգամ պարտությունից հետո, նկատվում է օպոզիցիայի ներկայացուցիչների մեղայականով հանդես գալը: Օրինակ, Զինովևը 1927-1928 թթ. նման բովանդակությամբ նամակներ հղեց ՀամԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյին և այլն[50]:

Ըստ էության, 1920-ական թվականների վերջին իշխանության համար Ի.Ստալինի միակ իրական հնարավոր հակառակորդն էր մնացել Բուխարինը: 1928 թ. սեպտեմբերին ՀամԿ(բ)Կ ԿԿ օրգան «Պրավդայի» խմբագիր Բուխարինը թերթում տպագրում է իր «Տնտեսագետի նոթերը» հոդվածը, որտեղ շարադրում է ընդդիմության տնտեսական ծրագիրը և նշում, թե տնտեսական ճգնաժամը տեղի է ունենում պլանավորման, գնագոյացման սխալների, արդյունաբերական ապրանքների պակասի, գյուղատնտեսական կոոպերացիային ոչ արդյունավետ օգնություն ցույց տալու պատճառով: Ըստ էության Բուխարինը փորձում էր վերականգնել ՆԷՊ-ի սկզբունքները: Դա որակվեց աջ թեքում, որը խիստ քննադատվեց Ստալինի կողմից 1928 թ. ՀամԿ(բ)Կ ԿԿ նոյեմբերյան պլենումում: Չնայած կուսակցության միասնությունը չվտանգելու համար այդ պլենումում Բուխարինը, Ռիկովը և Տոմսկին հրաժարվեցին իրենց դիրքորոշումից, սակայն դա արդեն պարտություն էր: 1929 թ. ապրիլին Բուխարինը մեղադրվեց իր «հին ու նոր սխալների համար» և հանվեց «Պրավդայի» խմբագրի, Կոմինտերնում ԽՍՀՄ պատվիրակության ղեկավարի պաշտոններից և ՀամԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամությունից: Նույն ժամանակ Ռիկովը հանվեց ԽՍՀՄ ժողկոմխորհրդի նախագահի պաշտոնից:

[49] Տես ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 7, գ. 27, թ. 90

[50] Տես նույն տեղը ֆ. 91, ց. 5, գ. 3, գ. 12

Քաղաքական կյանքում սկսված այդ երևույթները, բնականաբար, իրենց անմիջական ազդեցությունն ունեցան այդ կուսակցության բազմաթիվ անդամների վրա: Միայն 1929 թ. անցկացրած կուսակցական զտումների միջոցառման հետևանքով ՀամԿ(բ)Կ շարքերից դուրս մնացին 170 հազար բոլշևիկներ:

Քաղաքական այդ գործընթացներին զուգահեռ ԽՍՀՄ-ի կյանքում սկսվում են զանգվածային բռնաճնշումների առաջին դրսևորումները: 1928 թ. սկզբին տեղի է ունենում Դոնբասի մասնագետների առաջին ցուցադրական դատավարությունը, որով դատապարտվում են 53 մարդ, մեղադրվելով վնասարարության մեջ: Դրան հետևում են զանգվածային ձերբակալությունները, որոնց մեջ էին «մոտ երեք հարյուր նախկին խոշոր կապիտալիստներ ու ազնվականներ»[51]: Այսպիսով, քաղաքական բռնաճնշումների մեքենան արդեն ձևավորվել էր և սկսել էր իր սև գործը, որն առավել ցայտուն դրսևորվեց 1920-ական թվականների վերջերին սկսված համատարած կոլեկտիվացման տարիներին. ապա սարսափազդու՝ 1937-1938 թթ.:

Վերոնկարագրած քաղաքական-հասարակական գործընթացներն իրենց անմիջական արտահայտություններն էին ունենում ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում: Ներկուսակցական անզիջում պայքարը, որն իրականում պայքար էր իշխանության լծակներին տիրելու համար, ձնագնդիի նման իջնում էր տեղական կազմակերպությունների վրա, որտեղ, տեղական որոշակի, մասնակի երանգավորումներով՝ տեղի էին ունենում նույնատիպ գործընթացներ:

Հայաստանի բոլշևիկյան կուսակցությունը, բնականաբար առաջնորդվում էր ՀամԿ(բ)Կ-ից իջնող հրահանգներով: Անկախ տեղում եղած իրական և ոչ իրական, վտանգավոր կամ ոչ վտանգավոր հակառակորդների գործունեությունից, ՀամԿ(բ)Կ Անդրկովկասյան կազմակերպության մաս կազմող Հայաստանի Կ(բ)Կ-ն պետք է ցուցաբերեր իր կենտրոնի որոշումներին հլու վարքագիծը: Դա արտահայտվում էր Հայաստանում, ճիշտ է, անհամեմատ թույլ ձևով իրենց դրսևորած, ներկուսակցական ընդդիմության դեմ պայքարով, իսկ առավել ցայտուն դաշնակցության, սպեցիֆիկների, մասամբ է-սէռների ու հնչակների դեմ կատարած քայլերով:

---

[51] ՍՍԿՊ պատմություն, Եր., 1959, էջ 498

1925 թ. մարտին ինքնաթիռի վթարի պատճառով վախճանվեց Խորհրդային Հայաստանի պատմության մեջ իրավամբ խոշոր դրական դեր կատարած Ալ.Մյասնիկյանը: Վերջինս մեծ հեղինակություն էր վայելում նաև Մոսկվայում և կարողանում էր դա հնարավորինս օգտագործել ի շահ հայ ժողովրդի: Նրա ողբերգական մահը, լուրջ հարված էր Հայաստանի իրադարձությունների հետագա ընթացքին:

Ի միջայլոց նշենք, որ 30-ական թվականների զանգվածային բռնաճնշումների ժամանակ «չէին մոռացել» նաև Ալ. Մյասնիկյանին, որին մեղադրում էին ազգայնամոլության և նախկինում «սպեցիֆիկ» լինելու մեջ:

Մինչև առավել մանրամասն վերոհիշյալ կուսակցությունների նկատմամբ Հայաստանում տեղի ունեցող քաղաքական գործընթացները ներկայացնելը, անդրադառնանք ՀԿ(բ)Կ ներկուսակցական գործընթացներին, որոնք, այլ գործոնների հետ, անկախ կատարողների կամքից, նախադրյալներ էին ստեղծում հետագա քաղաքական բռնաճնշումներն իրականացնելու համար:

ՀամԿ(բ)Կ-ում, մասնավորապես նրա ղեկավար օղակներում ընթացող գործընթացներին մասնակից էր նաև ՀԿ(բ)Կ ղեկավարությունը, որտեղ ունեին ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և այլ ղեկավար օղակների անդամներ և թեկնածուներ: Բացի անմիջական մասնակցությունից, ՀԿ(բ)Կ-ն, իրագործելու համար պարբերաբար ստանում էր վերադասի որոշումներն ու հրահանգները, որոնք հրապարակվում էին կուսակցական մամուլում և հայտնի դառնում լայն հասարակությանը, իհարկե, ՀամԿ(բ)Կ ապարատի ուղղորդված և ցանկալի մեկնաբանություններով:

Նկատելի է, որ Հայաստանում ներկուսակցական ընդդիմության մասին առաջին հրապարակումները հանդիպում են 1927 թվականին: Մինչ այդ նկատվում է զուտ կենտրոնում տեղի ունեցող իրադարձությունների արձագանքները:

Այսպես, 1926 թ. ՀԿ(բ)Կ Երևանի, Լենինականի (Գյումրի), Ղարաքիլիսայի (Վանաձոր), Ալավերդու, Կապանի և Էջմիածնի կուսկազմակերպությունների ժողովներում քննարկվում են ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի հուլիսյան պլենումի արդյունքները, ամբողջովին մի-

անում են այդ որոշումներին և դատապարտում տրոցկիստական-զինովևական բլոկի գործունեությունը[52]:

1927թ. հունվարին ևս նկատվում է նման ժողովների անցկացման փաստը: Այսպես, ընդդիմության մասին ՀԿ(բ)Կ Լոռի-Փամբակի գավկոմի և Ղարաքիլիսայի կուսակտիվի ժողովում ընդունված բանաձևում պահանջ է դրվում, որ ընդդիմությունը հրաժարվի իր սխալներից, հակառակ դեպքում ամենավճռական միջոցներ ձեռք կառնվեն նրա դեմ[53]: Մի քանի օր անց ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեի պլենումը դատապարտում է Կոմինտերնի գործոմի 7-րդ պլենումում ընդդիմության ելույթը և անհրաժեշտ համարում «վճռական միջոցներ ձեռք առնել վերջնականապես լիկվիդացնելու օպոզիցիոն բլոկի պառակտող գործունեությունը»: Նույն տեղում հրապարակված է նույն ոգով ընդունված ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի պլենումի բանաձևը[54]: Մայիսին նման բանաձև է ընդունում ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Երևանի կոմիտեի նախագահությունը, իսկ էջմիածնի գավկոմը որոշում է կայացնում «Զինովևի հակակուսակցական ելույթի առիթով» և այլն[55]:

Ուշագրավ է 1927թ. ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Մ. Օրախելաշվիլու նամակի բովանդակությունը Անդրկովկասի հանրապետությունների Կ(բ)Կ առաջին քարտուղարներին, որտեղ նա պատմում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի փետրվարյան պլենումի ընթացքի մասին (հասկանալի է, որ առաջին քարտուղարները չեն մասնակցել այդ պլենումին): Նա մանրամասն նկարագրում է պլենումում տեղի ունեցած ելույթները, մասնավորապես հիշատակում է. «...ելույթ ունեցավ և ընկ. Տրոցկին (նրա տեսքն ընկ. Զինովևի հետ ամբողջապես անուրախ էր)..., նոր գունավոր արտահայտություններով նա, ըստ էության, կրկնեց իր կատեխիզիսը...»: Այնուհետև ելույթ են ունենում կենտկոմականները՝ Ռուծուտակը, Բուխարինը, Ռիկովը և եզրափակիչ խոսքով՝ Միկոյանը, որոնք ջախջախում են Տրոցկու և Զինովևի սխալ հայացքները, իսկ վերջում, Ստալինն ուղղակի հայտնում է, թե Բուխարինի ու Ռիկովի ելույթներից հետո ընդ-

---

[52] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմություն, ուրվագծեր, Եր., 1967, էջ 377

[53] «Խորհրդային Հայաստան», 4 հունվարի 1927

[54] «Խորհրդային Հայաստան», 18 հունվարի 1927

[55] Նույն տեղում, 20 մայիսի 1927, 28 մայիսի 1927

դիմությունը ջախջախված է, ուստի ինքը հրաժարվում է հարվածել ընկածներին և ելույթ չի ունենա[56]:

Միաժամանակ Հայաստանում ևս հանդես են գալիս Տրոցկու գաղափարներն ընդունող կուսակցականներ:

1927թ. հուլիսին տեղի է ունենում ՀԿ(բ)Կ կենտկոմի պլենում, որտեղ տեղական տրոցկիստների ղեկավար եռյակը (Ռ. Սաֆրազբեկյան, Գ. Փիրգուլյան և Պ. Ղազարյան) հանդես եկան հայտարարությամբ՝ դեմ կանգնելով զեկուցող Ս. Համբարձումյանի դրույթներին և դրա առթիվ ընդունված բանաձևին, ինչը մերժվեց պլենումի մասնակիցների կողմից: Հայաստանի տրոցկիստների հայտարարությունը տպագրվեց 1927 թ. հուլիսի 20-ին «Խորհրդային Հայաստան» թերթում և բանավեճ սկսվեց, սակայն այն ընդունելություն չգտավ լայն զանգվածների մեջ, իսկ հեղինակները խստորեն դատապարտվեցին:

1927 թ. օգոստոսի 6-ի և սեպտեմբերի 16-ի ՀԿ(բ)Կ ԿՀՎ-ի որոշումները, որոնցում նշված է, որ Ղարաքիլիսայի մի քանի կուսակցականներ ստորագրություններ են հավաքել «83-ի հայտարարության» տակ, ուստի քննարկելով 15 կուսակցականների հարցը՝ 2-ին հեռացրել են կուսակցությունից, իսկ մյուսները ստացել են տարբեր կուսակցական տույժեր[57]:

Փաստորեն, Հայաստանում 1927 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին ընթանում էր ներկուսակցական բանավեճը, որի արդյունքում ընդդիմությունը շատ քիչ ձայներ էր ստանում:

Այդ բանավեճի գագաթը կարելի է համարել 1927 թ. հոկտեմբերի սկզբներին Ղարաքիլիսայի (Վանաձոր) կուսակցության կազմակերպության 12 անդամների (Ս.Բեջանյան, Ռ. Գևորգյան, Ն. Ստեփանյան. Ռ. Մալումյան և ուր.) դիմումը ուղղված ՀԿ(բ)Կ ԿԿ-ին և ԿՎՀ-ին, որտեղ նշում են, որ կուսակցությունում խստորեն պատժվում են ազատ խոսքը, քննարկումը, իրական պայքար չի մղվում բյուրոկրատիզմի դեմ և այլն: Ապա հիշատակվում է, որ արդեն մեկ տարի է ինչ Կենտկոմում գոյություն են ունեցել 4 խմբեր՝ 1. ղեկավարություն, 2. Շահսուվարյանի խումբը, 3. «հին բոլշևիկների» և 4. «վազողների»: Քարտուղարներից առաջինը հանվեց Երեմիա Բակունցը, որից հետո հարձակումներ սկսվեցին «գլխավոր քարտուղար» Ա. Հովհաննիսյա-

---

[56] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 7, գ. 78, թ. 1-2

[57] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 7, գ. 79, թ. 9-145, ց. 7, գ. 80, ֆ. 91, ց. 5, գ. 9, թ. 1-3

նի վրա, որը ստիպված դիմում գրեց, ապա հեռացավ երրորդ քարտուղար Ա. Շահգելդյանը, իսկ վերջին պլենումում հեռացվեց նաև վերջին քարտուղարը Ա. Շահսուվարյանը: Սակայն դրանով ոչինչ չփոխվեց, քանի որ նորերը շարունակում են աշխատել «ճնշման մեթոդներով» և թույլ չեն տալիս արտահայտվելու ընդդիմության ներկայացուցիչներին ու նրանց, ովքեր համաձայն չեն լինում զեկուցողների հետ: Նրանք զարմանք են հայտնում, որ մոտակա համագումարը նախատեսվել է նոյեմբերի 10-ին, իսկ բանավեճի սկիզբը՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի որոշմամբ սկսվելու է նոյեմբերի 1-ից, որով անհնար է դառնում որևէ հարց հստակեցնել այդ 10 օրերի ընթացքում, իսկ դրան զուգահեռ, խմբերով հեռացվում են ընդդիմախոսները:

Նրանք հիմնավորված չեն համարում Լենինականում բացահայտված ընդդիմության մեղադրանքները և փաստեր բերում, որ դրանք կազմակերպվել են ՊՔՎ-ի, մասնավորապես, Լենինականի այդ մարմնի ղեկավար Գ. Ծատուրովի կողմից: Անընդունելի են համարում նաև այն, որ համագումարից առաջ ընդդիմությունը ներկայացնող ԿԿ-ի անդամներ Գ. Փիրգուլյանին և Ռ. Սաֆրազբեկյանին հանել են աշխատանքից և ուղարկել ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի տրամադրության տակ, այսինքն զրկել համագումարում իրենց կարծիքն արտահայտելու հնարավորությունից: Ուստի առաջարկում են անհապաղ սկսել բանավեճ, թույլատրելով տպագրել հոդվածներ, չեղյալ հայտարարել կատարած վերընտրությունները, որն իրականացնել բանավեճից հետո, դադարեցնել ընդդիմության նկատմամբ կիրառվող բռնաճնշումները և վերականգնել ընդդիմության մեջ մեղադրված կուսակցությունից վտարվածներին, երաշխավորել կուսակցության, հատկապես ընդդիմության դիրքերում գտնվող կենտկոմի անդամներին, պաշտպանելու իրենց տեսակետները և այլն:

Նման բովանդակությամբ նամակ են հղում նաև Երևանի կազմակերպության 6 անդամներ:

Այս կապակցությամբ ուշադրություն դարձնենք մի ուշագրավ փաստի վրա. վերոհիշյալ 12 հոգին, արդեն հոկտեմբերի վերջին ՀԿ(բ)Կ Կենտկոմ են դիմում լիովին հրաժարվելով իրենց դիրքորոշումներից՝ բանադրելով «տրոցկիստական ընդդիմության քայքայիչ և ֆրակցիոն աշխատանքը»[58]:

---

[58] Տես ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 7, գ. 81, թ.թ. 6-10, 12

Նույն ժամանակահատվածում համակուսակցական բանավեճում, ինչպես արդեն անդրադարձել ենք, ընդդիմությունը պարտություն էր կրել: Այն նկատվում է նաև կոմունիստների երիտասարդական կազմակերպությունում: Երևանում, տրոցկիստական կազմակերպության մեջ տրոցկիստների մի մասը, Աչոյանի գլխավորությամբ, փորձում է անգամ ձևավորել տրոցկիստական երիտասարդական միություն:

Բանավեճի ընթացքում ակտիվ տրոցկիստների մեծ մասը հեռացվեց կոմերիտմիությունից, շարքային տրոցկիստները գրեթե ամբողջովին հեռացան ընդդիմությունից[59]: Ներկուսակցական բանավեճի արդյունքներն ամփոփվեցին ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարում. որը տեղի ունեցավ 1927 թվականի նոյեմբերին, որտեղ ելույթ ունեցավ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Մ. Օրախելաշվիլին դատապարտելով տրոցկիզմը և նրա առաջնորդների ելույթները ՀամԿ(բ)Կ ԿԿ և ԿՎՀ 1927թ. հոկտեմբերյան պլենումում:

ՀԿ(բ)Կ 5-րդ համագումարը որոշեց կուսակցության շարքերից հեռացնել անուղղելի ընդդիմախոսներին և վերջ տալ նրանց հետագա գործունեությունը, «կուսակցությունից դուրս շպրտելով նրանց, ովքեր կշարունակեն իրենց ֆրակցիոն պայքարը»: Հայաստանի կոմկուսն իր համագումարում ընդունված բանաձևում, ժամանակի ոգով նշում էր, թե ամբողջովին միանում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումին, որը Կենտկոմից վտարել է Տրոցկուն և Զինովևին և անընդունելի համարեց ԽՍՀՄ-ում երկրորդ կուսակցություն ստեղծելու ուղղությամբ տրոցկիստական ֆրակցիայի փորձերն ու «83-ի պլատֆորմում» արծարծած հայացքները:

Միաժամանակ խմբակային պայքար էր ընթանում կուսակցության ներսում, որն արտահայտվում էր դիմումների հղումով ՀամԿ(բ)Կ-ի ղեկավարությանը: Դրանցում, բնականաբար, «սկզբունքային կուսակցական դիրքերից» քննադատում էին Հայաստանի կոմկուսի ղեկավարության «թույլ աշխատանքը» գաղափարախոսական ճակատում և այլն:

Օրինակ, 1927թ. դեկտեմբերին ՀԿ(բ)Կ ԿԿ նախկին անդամ Ա. Եսայանը և թեկնածու Հ.Բաննահյանը վերոհիշյալ վերադաս օղակին 15 էջանոց զեկուցագիր են հղում Հայաստանի ներքաղաքա-

---

[59] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Եր., 1967, էջ 384

կան վիճակի մասին, որտեղ ղեկավարության ուշադրությունն են հրավիրում հանրապետության կուսակազմակերպությունում տեղ գտած «բոլշևիկյան ճիշտ գծից որոշ շեղումների», «գաղափարական ճակատում խոշոր սխալների» վրա[60]: Նրանք, հատկապես շեշտադրում են սխալները ազգայնամոլության և տրոցկիզմի դեմ պայքարում, քանի որ «Հայաստանում մնացած ազգայնամոլական մտավորականության վերնախավը, կազմված գլխավորապես սպեցիֆիկներից, դաշնակցականներից և մենշևիկներից, ձևականորեն պայքար չմղելով խորհրդային իշխանության դեմ... իրականում կազմակերպորեն ձևավորվել են որպես ակտիվ հակախորհրդային ուժ»[61]: Գրության հեղինակները ՀԿ(բ)Կ ԿԿ-ին մեղադրում են այդ մտավորականության գործունեությանը նպաստելու, նրանց մամուլ և տարբեր ամբիոններ տրամադրելու մեջ: Որպես օրինակ են բերում ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ա. Հովհաննիսյանի գլխավորությամբ էջմիածնում գիտական ինստիտուտ հիմնադրելու փաստը, որի հետ համագործակցում են էջմիածնի վանքի հոգևորականները և քողարկվելով գիտական շղարշով, գովերգում են հայ-գրիգորյանական եկեղեցին: Այնուհետև հիշատակում են համալսարանում բացահայտված երիտասարդական «մարքսիստական» խմբի, սպեցիֆիկ Դ. Անանունու գործունեության մասին, ինչպես նաև «հակահեղափոխական դաշնակցական և այլ կուսակցությունների դեմ ճիշտ և հետևողական պայքարի բացակայությունը»: Նրանք չեն մոռանում նաև ռամկավար կուսակցությանը, որոնք «թաքնվելով «Հայաստանի օգնության կոմիտեի» տակ՝ Հայաստանի իշխանություններին ստիպում են խնդրողի դերում հանդես գալ, փոխանակ պայքարելու նրանց կադետական գաղափարախոսության դեմ: Բնականաբար, մեղադրանքներ են հնչում նաև տրոցկիզմի դեմ անհետևողական պայքար մղելու մեջ, նշելով, որ անգամ կուսակցական օրգանում «ընդամենը երկու հոդված են» գրել նրանց դեմ, և, որ ղեկավարությունում ընդամենը հետևում են Կենտկոմում ընթացող ներկուսակցական թեժ պայքարին: Կարծում ենք, որ վերոհիշյալ գրությունը մեկնաբանությունների կարիք չունի: Այստեղ, կարևորը ոչ թե կուսակցական վեհ գաղափարներն էին, այլ խմբակային, աթոռի համար կռիվը, որն արտահայտվում է Հայաստանի

---

[60] ՀՀ ՀՔՓԿՊԿԱ, ֆ. 1, ց. 7, գ. 77, թ. 37

[61] Նույն տեղում, թ. 38

այդ տարիների ղեկավարների «սև անցյալը» ներկայացնելով: Այսպես, «ՀԿԿ գլխավոր քարտուղար» Աշոտ Հովհաննիսյանը նախկին սպեցիֆիկ է, 1914-1916 թթ. աշխատել է էջմիածնի վանքում, որից երես են թեքել անգամ դաշնակցականները, ԿԿ քարտուղար Երեմիա Բակունցը 1919-1920 թթ. եղել է Լեռնահայաստանի կառավարության անդամ (ճիշտ չէ - Ա.Մ.), իսկ Ժողկոմխորհի նախագահ Սաքո (Սարգիս - Ա. Մ.) Համբարձումյանը ռեակցիայի տարիներին բժիշկ է աշխատել Շուշիում, եղել «պատվավոր քաղաքացի» և ոչ մի կուսակցական աշխատանք չի վարել: Չեն մոռացել նշելու նաև «նախկին սպեցիֆիկների դիրքերն ամրապնդելու գործի ղեկավար և ոգեշնչող Ս. Լուկաշինին և այլն:

Ուշադրություն դարձնենք, որ նրանք, ինչպես նաև հետագայում Ա. Խանջյանին մեղադրողները՝ հատուկ ընդգծում էին, թե Հայաստանի ղեկավարները Թբիլիսիի կադրերի դեմ են հանդես եկել: Հասկանալի է, որ դա արվում էր ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի կողմից իրենց ներիշխանական գզվռտոցների ժամանակ թիկունք ստանալու նպատակով: Դրան հետևում էր առաջարկ «արմատապես փոխել կուսակցական ղեկավարությանը և դրանով առողջացնել կուսկազմակերպությունը»[62]:

Այս դիմումն, իհարկե, 1926-1927թթ. Հայաստանում տեղի ունեցած ներկուսակցական հակամարտության արդյունքների ամփոփում կարելի է համարել, որովհետև նույն մարդիկ սուր հակամարտության մեջ էին եղել ՀԿ(բ)Կ ԿԿ ղեկավարության, հատկապես առաջին քարտուղար Ա. Հովհաննիսյանի հետ, ինչի արդյունքում իրենք էլ դուրս են բերվել Հայաստանից: Օրինակ, Ա. Եսայանը 1927 թ. ապրիլի 23-ին դիմել էր ՀԿ(բ)Կ ԿՎՀ-ին, որտեղ իր բուռն բողոքն էր արտահայտել ապրիլի 22-ին Երևանի կուսակտիվում Ա.Հովհաննիսյանի ելույթի կապակցությամբ, որտեղ քննադատվել էր նաև իր անձը՝ հակաբոլշևիկյան ու հակահեղափոխական թեքումների համար և հարց է բարձրացնում նրան պաշտոնից հանելու մասին[63]:

Ներկուսակցական պայքարի դրսևորումներից էր նաև այն, որ 1927 թ. մարտի 6-ին ՀԿ(բ)Կ ԿԿ նախագահությունը հատուկ որոշում է կայացնում Արամայիս Երզնկյանի ելույթի կապակցությամբ, որը մեղադրել էր ղեկավարությանը սպեցիֆիկ Ալ.Ռուբենի արձանը

---

[62] Նույն տեղում, թ.թ. 44-45, 50-51

[63] Նույն տեղում, ֆ. 1, ց. 7, գ. 77, թ. 1-3

կանգնեցնելու. այսինքն սպեցիֆիզմի մեջ, որն այդ որոշման մեջ գնահատվում է «բացարձակ անհիմն» և Անդրերկրկոմի ղեկավարությանը խնդրում են թույլ տալ հրապարակային բացատրական աշխատանքներ կատարել այդ հարցի շուրջ և այլն:

Ա. Երզնկյանը ևս բողոք է հղել ՀԿ(բ)Կ ԿԿ նախագահությանը Ա.Հովհաննիսյանի Երևանի կուսակտիվի վերոնշված ելույթի առնչությամբ, այն անվանելով «ֆրակցիոն բնույթի», «հակակուսակցական» և պահանջում նրան պատասխանատվության ենթարկել:

Այդ կապակցությամբ Ա.Հովհաննիսյանն իր բացատրությունները է ներկայացնում ՀԿ(բ)Կ Կենտկոմին և ԿՎՀ-ին, որտեղ հատուկ ուշադրություն է դարձնում, որ ինքն անձնապես ոչ մեկին չի քննադատել, այլ քննադատել է Կենտկոմի ղեկավարությանը իր գլխավորությամբ: Այնուհետև նա պնդում է, որ Ա. Երզնկյանի հին ելույթները կրում են «մեր ղեկավարությանը աջից քննադատողների «սկզբունքային դիրքի տեսակետից...»: Նա հիմնավորապես անդրադառնում է նաև Ա. Եսայանի ու Հ. Բանահյանի բողոքներին նրանց գործունեությունը գնահատելով որպես «ներկուսակցական սկլոկա Կ.Կ. ղեկավարության դեմ»[64]: Ինչպես դժվար չէ եզրակացնել, այդ տարիներին ղեկավարության մեջ առկա էր խմբակային պայքարը, որի հետևանքով, Հայաստանի կոմկուսի ղեկավարությունից. փաստորեն, հեռացվեցին վերոհիշյալ բոլոր անձինք:

Նույն ՀամԿ(բ)Կ վերնախավում կատարվող գործընթացների ոգով էին զարգանում ներկուսակցական իրադարձությունները նաև 1928-1929 թվականներին:

Այսպես, օրինակ 1928 թ. հունիսին ՀԿ(բ)Կ ԿԿ պլենումի առաջին իսկ օրը, նրանց կուսակցական օրգանն արդեն իսկ ուղղորդում էր աշխատանքները՝ նշելով, որ «պրոլետարիատին խորթ իդեոլոգիան (գաղափարախոսությունը - Ա.Մ.) փորձեր է անում ներս սողոսկել երբեմն նույնիսկ մեր կուսակցության շարքերը, և ապացույց մեր տնաբույս տրոցկիզմի հետևորդները և սպեցիֆիզմի ռեցիդիվի փորձերը»[65]:

1928 թ. ամռանը աջ օպորտունիստական կոպիտ սխալների համար Ստեփանավանի, Վորոնցովկայի և մի քանի այլ շրջանների մի շարք ղեկավարներ հեռացվեցին աշխատանքից[66]:

---

[64] Նույն տեղում, g. 7, գ. 27, թ. 33, գ. 77, թ. 6, թ. 17-21

[65] «Խորհրդային Հայաստան» 30 հունիսի 1928թ.

[66] Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր, Եր., 1967, էջ 395

1928 թ. հոկտեմբերին ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը դիմում է հղում ԱԽՖՍՀ բոլոր կազմակերպություններին վերընտրությունների կապակցությամբ, որտեղ բոլորի ուշադրությունը հրավիրում է ամեն տեսակի թեքումների, հատկապես աջ թեքման և օպոզիցիոն մնացուկների դեմ պայքարն ուժեղացնելու վրա[67]: Դրա հաջորդ օրը հետևում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի դիմումը «Հայաստանի կուսակցական կազմակերպություններին, կուսակցական բոլոր ընկերներին», որտեղ նույն առիթով համահաունչ կոչ է արվում «պայքարելու ամեն տեսակի թեքումների ու տատանումների և, առաջին հերթին, ընդդեմ օպորտունիստական տենդենցների[68]:

Ընդդիմության դեմ պայքարի մանրամասները հստակ ուրվագծվում են ՀԽՍՀ ՊՔՎ-ի ղեկավար Ս. Մելիք-Օսիպովի զեկուցումից հետո ՀԿ(բ)Կ ԿԿ նախագահության կողմից ընդունված «Հայաստանում նախկին ընդդիմախոսների աշխատանքների մասին որոշման նախագծում», որտեղ նշվում է, թե նկատվել է որոշակի աշխուժացում ընդդիմախոսների կողմից: Դա արտահայտվել է իրենց նյութերի և գրականության տարածմամբ և համախոհներ հավաքագրելու մեջ[69]:

1927 թ. ՀԿ(բ)Կ կուսեռակի կողմից կազմված Երևանի տրոցկիստների ցուցակում ընդգրկված էին 143 մարդ[70], իսկ կոմերիտմիության մեջ՝ 103-ը[71]:

1929 թ. մարտի 1-ին ՀԿ(բ)Կ Երևանի գավառային պլենումը քննարկում է աջ թեքման դեմ պայքարի, կոլեկտիվ պայմանագրերի վերականգնման կամպանիայի արդյունքները և այլ հարցեր, որտեղ ընդունված բանաձևում կրկին կոչ էր արվում «ավելի լայնորեն պայքար ծավալել աջ թեքման դեմ»: Թերթի նույն համարում տպագրված էր Մոլոտովի ընդարձակ զեկուցումը ՀամԿ(բ(Կ Մոսկվայի նահանգային կուսկոնֆերանսում, որտեղ նա նշում էր, թե սրվել է դասակարգային պայքարը, որը տնտեսական ճակատում վախեցրել է թուլամորթներին, աջերը նահանջում են կուլակի առաջ[72]:

---

[67] «Խորհրդային Հայաստան», 24 հոկտեմբերի 1928
[68] Նույն տեղում, 25 հոկտեմբերի 1928
[69] Տե՛ս ՀՀ ՀՔԿՓԿՊԿԱ, ֆ. 1, ց. 8, գ. 65, թ. 14
[70] Նույն տեղում, ֆ. 91, ց. 5, գ. 67, թ. 1-8
[71] Նույն տեղում, ֆ. 91, ց. 5, գ. 69, թ. 1-5
[72] «Խորհրդային Հայաստան», 3 մարտի 1929

Ներկուսակցական պայքարի արտացոլման առումով խոսուն են անգամ ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրված հոդվածների վերնագրերը: Բերենք մի քանի, ոչ հատուկ ընտրված, օրինակներ: 1929թ. մարտի 8-ին այդ թերթում կարդում ենք. «Ուժեղացնենք պայքարն ընդդեմ անտնտեսվարության, քաշքշուկի և կոպիտ վերաբերմունքի», 1929 թ. մարտի 10-ին՝ «Ծավալենք զտման նախապատրաստական աշխատանքները», «Ո՞ւմ պետք է զտել և ինչպես», «Անխնա կերպով մաքրենք կուսակցության շարքերը», 1929 թ. մարտի 27-ին՝ «Երիտասարդությունը դատապարտում է Տրոցկուն»:

1929 թ. մարտին տեղի են ունենում ՀԿ(բ)Կ Լենինականի գավառային կազմակերպության ակտիվի ժողովները. որոնցում վճռականորեն դատապարտում են աջերի և հաշտվողականների նկատմամբ զիջողականություն վարելու ուղին[73], մայիսին Երևանի քաղաքային կուսակտիվը իր ընդունած բանաձևում ուշադրություն է հրավիրում «հակալենինյան աջ և տրոցկիստական թեքումների դեմ պայքար մղելու անհրաժեշտության վրա[74]: Նույն ոգով որոշումներ էին կայացվում նշված կազմակերպությունների պլենումներում և ժողովներում 1929 թ. հունիսին և դեկտեմբերին:

Ուշադրություն դարձնենք ԽՍՀՄ-ի կյանքում կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններից մեկին, որը 1920-ականների վերջին հիմք դարձավ լայնածավալ համատարած կոլեկտիվացման շարժման համար: Դա 1927 թ. դեկտեմբերին կայացած ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարն էր, որն անվանվում է նաև կոլեկտիվացման համագումար: Այնտեղ որոշում կայացվեց նախապատրաստել կոլտնտեսային շինարարությունը, ինչն իրագործելիս ԽՍՀՄ-ում կիրառվեցին առաջին զանգվածային բռնաճնշումները գյուղում:

Հայաստանում 1929 թ. հունվարին կայացած ՀԿ(բ)Կ 6-րդ համագումարը կրկին պահանջեց ուժեղացնել պայքարը տրոցկիզմի, աջ թեքման ու նացիոնալիզմի դրսևորումների դեմ, ինչպես նաև խնդիր դրեց ավելի լայն ծավալ տալ կոլեկտիվացմանը և այլն: Այսինքն, Հայաստանը ևս ընդգրկված էր համամիութենական այդ շարժման մեջ, իսկ այն հարցին, թե ինչպես էր այն ընթանում և ինչ հետևանքներ ունեցավ, կանդրադառնանք ստորև:

---

[73] Տես ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 1346, թ.թ. 1,6

[74] «Խորհրդային Հայաստան», 21 մայիսի 1929

ՀամԿ(բ)Կ 16-րդ կոնֆերանսի որոշումներին համաձայն 1929 թ. հունիսին տեղի ունեցավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ միացյալ պլենումը, որը քննության առավ կուսակցության շարքերի ստուգման և զտման հարցը: Կոմկուսի շարքերում պարբերաբար անցկացվող ստուգումներն ու զտումները առաջին հայացքից անհրաժեշտ միջոցառումներ էին: Սակայն, սուր ներքաղաքական պայքարի պայմաններում այն դառնում էր նաև քաղաքական հետապնդումների գործիք, ծառայեցվում բռնաճնշումների իրագործմանը:

1929-1931 թթ. Հայաստանում անցկացված զտումների և ստուգումների մասին ՀԿ(բ)Կ-ում կազմված զեկուցագրում նշված է, որ 1929 թ. հիմնականում հաջողվել է կուսակցության շարքերը մաքրել քաղաքականապես և գաղափարապես ոչ պիտանի և դասակարգային խորթ տարրերից[75]:

Այժմ տեսնենք, թե ինչ տարրերից է ազատվել ՀԿ(բ)Կ-ն այդ տարիներին: Ըստ 1929 թ. դեկտեմբերի 10-ի ՀԽՍՀ ՊՔՎ-ի կազմած ցուցակների այդ ժամանակաշրջանում ձերբակալված 79 տրոցկիստներ և դեցիստներ հայտարարություն են տվել իրենց հայացքներից հրաժարվելու մասին: Աքսորվել են կամ աքսորում են գտնվել 17 տրոցկիստներ (Ռուբեն Սաֆրազբեկյանը, Գայանե Արեշյանը, Հարություն Հասրաթյանը, Սեթ Նազարյանը և ուր.): Ապա ներկայացվել են 1928-1929 թթ. ակտիվ աշխատած և ձերբակալված 6 տրոցկիստների ցուցակը (Աբրահամ Միչիկյան, Սարգիս Սարգսյան, Մակար Ալեքսանյան և ուր.)[76]:

Այդ կամպանիան 1930-31 թթ. առավել ուղղվածություն է ունենում դեպի գյուղը, որտեղ անց էր կացվում համատարած կոլեկտիվացումը, որի ժամանակ կուսակցության շարքերից վտարվում են 1272 մարդ: Դրա ընթացքում նկատելի են հետևյալ հիմնավորումները՝ «կուլակ», «կոլտնտեսության մեջ մտնելուց հրաժարում» և այլն:

Բնականաբար, նման միջոցառումներ էին անցկացվում նաև կոմերիտմիության շարքերում և նույն ժամանակահատվածում նրանց շարքերից հեռացվում են 296 հոգի[77]:

20-ականներին տրոցկիզմի դրսևորումներ են նկատվել նաև

---

[75] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 11, գ. 71, թ.1

[76] Տե՛ս նույն տեղը, ֆ. 91, ց. 5, գ. 54, թ. 2-5

[77] Նույն տեղում, ֆ. 1, ց. 11, գ. 71, թ.թ. 1,6

Հայաստանի կոմերիտմիության շարքերում: Տրոցկիստների ղեկավարն էր համարվում Աչոյանը: 1926թ. կոմերիտական գործիչ Գումեդինը գրում է «Տրոցկիզմից դեպի մենշևիզմ» գիրքը, որտեղ քննադատվել է նաև Աչոյանի գործունեությունը[78]: 1927թ. ՀԼԿԵՄ հայաստանյան 2-րդ կոնֆերանսի ժամանակ կոմերիտականներ Հ. Հովհաննիսյանը և Ն. Դաբաղյանը բուռն բողոք են արտահայտում իրենց տրոցկիստ անվանելու համար և համապատասխան գրությամբ դիմում ՀԿ(բ)Կ ԿԿ[79]:

Ըստ 1927 թ. նոյեմբերին ՀԿ(բ)Կ ԿՎՀ-ին ներկայացրած գրության՝ այդ ժամանակ Երևանի կոմերիտական կազմակերպության մեջ կային 29 ընդդիմադիրներ, որի ղեկավարներից էին Ա. Շահբազյանը և Ա. Վարդանյանը, որոնք համագործակցել են քաղաքում գործող նախկին «Օրթոդոքսալ մարքսիստների» և «Երիտասարդ տրոցկիստական միության» հետ, որի ղեկավարն էր Աչոյանը[80]: Լենինականում ընդդիմության մեջ են եղել 6 կոմերիտական Ս. Խանոյանի գլխավորությամբ, որոնք բոլորը վտարվել են, էջմիածնում 29 հոգի էին և այլն[81]: Տրոցկիզմի առումով ակտիվություն է նկատվել նաև Կոտայքի շրջանի Ճաթղռանի կոմերիտական բջիջում, որի հարցը դարձել է լուրջ քննարկման առարկա: Մասնավորապես, Հոկտեմբերյան հեղափոխության 10-ամյակի կապակցությամբ այդ գյուղի պատերին նրանք փակցրել էին հետևյալ կոչերը. «Կեցցե առողջ քննադատողները», «Կորչի ՆԷՊման կուլակը», «Թող կորչեն լենինիզմ աղավաղողները», «Կորչեն կոպիտ ղեկավարները», իսկ Ճաթղռանի բջիջում անցկացված զրույցի ժամանակ ընդդիմության մասին դրված հարցացուցակում նշված էին հետևյալ հարցերը. «Անունի դերը կուսակցության մեջ, օրինակ Ստալինը», «Սոցիալիզմը մի երկրում կառուցել հնարավոր չէ», «Դաշնակների, մենշևիկների և այլ կուսակցությունների ձգտումը դեպի սոցիալիզմ և նրանց մեջ ի՞նչ տարբերություն կա համեմատած կոմկուսի հետ. չէ որ նրանք էլ են ձգտում սոցիալիզմին» և այլն[82]:

Այսպիսով, 1920-1930 թթ. Հայաստանում ևս նկատելի է ներկուսակցական անհաշտ պայքարը, որը, բնականաբար, համապա-

---

[78] Տես նույն տեղը, ֆ. 1, ց. 8, գ. 66
[79] Նույն տեղում, ֆ. 1, ց. 7, գ. 77, թ. 16
[80] Նույն տեղում, գ. 27, թ. 2
[81] Նույն տեղում, ֆ. 1, ց. 7, գ. 79, թ. 6-8
[82] Նույն տեղում, ֆ. 1, ց. 5, գ. 22, թ. 3-4

տասխան բարոյա-հոգեբանական մթնոլորտ էր ձևավորում առավել խիստ պատժիչ միջոցներին անցնելու համար: Ուշադրություն դարձնենք այն «սկզբունքային» դիրքորոշումներին, որ ցույց էին տալիս հակամարտող կողմերը, հատկապես իշխանության լծակներին տիրապետողներն իրենց ընդդիմախոսներին: Այն է, որ չէին ընդունում ոչ մի շեղում գլխավոր հայտարարված գծից: Առավել վտանգավոր էր այն, որ քաղաքացիական կռիվներով անցած մարդիկ զարմանալի հեշտությամբ ամենախիստ պատիժներ էին պահանջում և իրականացնում իրենց հակառակորդների նկատմամբ: Այն, սկզբում դրսևորվում էր կուսակցության շարքերից վտարումով, ապա աքսորումներով ու բանտարկությամբ, այնուհետև՝ ֆիզիկական ոչնչացմամբ:

բ. Ոչ կոմունիստական կուսակցությունների վերացումը

Հայաստանում ընթացող ներկուսակցական պայքարն ամբողջովին չի արտահայտում այդ տարիներին հանրապետությունում ընթացող քաղաքական գործընթացները: Տրոցկիզմի և աջ թեքումների դեմ պայքարն իհարկե արտացոլում էր միութենական գործընթացները, սակայն դրանք չէին կարող էական նշանակություն ունենալ Հայաստանի կյանքում, քանի որ գլխավոր գործողությունները կատարվում էին Մոսկվայում և, մասամբ, Լենինգրադում (Ս.Պետերբուրգ):

Թերևս, Հայաստանի քաղաքական կյանքում բռնաճնշումների ուղղվածությունն ըմբռնելու առումով կարևորվում են ոչ միայն ներկուսակցական խնդիրները, այլև կոմկուսի վերաբերմունքը դաշնակցականների, «սպեցիֆիկների», մասամբ հնչակյանների ու էսէռների նկատմամբ, ինչն իր արտացոլումն ու հետևանքներն է ունենում բուն հանրապետությունում: 1930-ականներին ծավալված քաղաքական զանգվածային բռնաճնշումների ժամանակ, բացի տրոցկիզմից, աջ թեքումից, մեղադրանքներում հիշվում էին այս կամ այն անձի նախկինում վերոհիշյալ չորս կուսակցություններին (երբեմն նաև ռամկավարներին) պատկանելը կամ հարելը: Ինչպես նկատելի է, Հայաստանում իրապես տրոցկիստական և աջ թեքումներ որակված ուղղությունների իրական հարողների թվաքանակն

այնքան էլ մեծ չէր և չէր կարող էական ազդեցություն թողնել քաղաքական կյանքի վրա, առավել ևս անցկացված կամպանիաներից հետո որևէ լուրջ վտանգ չէր ներկայացնում: Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանի նոր իշխանությունների համար առաջին իրական քաղաքական հակառակորդն էր դարձել «Դաշնակցություն» կուսակցությունը, որը հակամարտության մեջ էր մտել ոչ միայն գաղափարական, այլև գործնական դաշտում:

Ինչպես հայտնի է «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը հիմնադրվել է 1890 թ. Թբիլիսիում և անցել էր հեղափոխական պայքարի դժվարին ուղի, մասնակցելով նաև Ռուսաստանի կայսրությունում ծավալված բուռն հեղափոխական գործընթացներին: Իր բնույթով լինելով սոցիալիստական-ազգայնական, դաշնակցությունը ակտիվ մասնակից էր սոցիալիստական շարժումներին, 2-րդ ինտերնացիոնալի մեջ էր: Դաշնակցությունը մեծ դերակատարում ունեցավ Հայաստանի կյանքում 1917-1920 թթ., փաստորեն ղեկավարելով Հայաստանի անկախացման գործընթացը, ապա, ստիպված զիջելով իր տեղը, բոլշևիկյան Ռուսաստանի օժանդակությամբ և օբյեկտիվ պայմաններից բխած ուժ հավաքած, հայ բոլշևիկներին: 1921 թ. փետրվարյան ապստամբությունից և Լեռնահայաստանի անկումից հետո դաշնակցությունը շարունակում էր իր պայքարը Հայաստանում իշխանությունը ետ բերելու ուղղությամբ: Փաստորեն անզիջում պայքարը հայ բոլշևիկների ու դաշնակցության միջև դարձել էր 1920-ական թվականների Հայաստանի քաղաքական կյանքի գլխավոր երևույթներից մեկը, ինչն արտահայտվում էր իշխող կուսակցության որդեգրած անհանդուրժողականությամբ, հալածանքներով: Դա դրսևորվում է Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու առաջին ամիսներին:

Այսպես, 1920 թ. դեկտեմբերի 23-ին Ալեքսանդրապոլի (Գյումրի) գավառի պատասխանատու կուսակցական աշխատողների ընդհանուր ժողովը, Հեղկոմի, տեղական և գավառային կոմիտեների հետ ընդունում է մի բանաձև, որտեղ ասվում էր.

«Նկատի ունենալով, որ Դաշնակցություն կուսակցությունը, ի դեմս իր ընդհատակյա կազմակերպությունների, որոնք, ըստ մեր տեղեկությունների խիստ ցանցով փռված են ամբողջ Հայաստանում, և որոնք այժմ խորհրդային իշխանության դեմ մղում են դավադրական հակահեղափոխական աշխատանք, և նկատի ունենա-

լով Ալեքսանդրապոլի դաշնակների հակահեղափոխությունը, որն այնքան է ուժեղացել ու ամրապնդվել, որ ակտիվ ելույթներ է կազմակերպում Ալեքպոլի Հեղկոմի դեմ, որի հետևանքով գնդակահարվել են Հեղկոմի անդամների դեմ տեռոր կազմակերպած երկու դաշնակ ահաբեկիչներ, համոզված լինելով, որ Երևանի դաշնակցական հակահեղափոխությունը սնում է Ալեքպոլի հակահեղափոխությունը, մենք գտնում ենք անհրաժեշտ նշել Հայ Հեղկոմին, որ անմիջապես, առանց հապաղելու խստագույն միջոցներով ճնշի մեր դիկտատուրայի դեմ նախապատրաստվող ելույթը Երևանի կենտկոմում և օգնի մեզ դժվարին գործում՝ հաստատելու և ամրապնդելու բանվորագյուղացիական իշխանությունը և կանխելու հակահեղափոխությունը»[83]:

1921 թ. հունվարի 24-ին Հայաստանի Հեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանը Ադրբեջանում ՀԿ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչ Սարգսի հետ հեռախոսազրույցում, կարծես, արդարանալով ասում էր, որ. «Դաշնակցականների կուսակցությունը բոլորովին սնանկացել է: Առանձին մտավորականների և այդ կուսակցության վերնախավի մանկլավիկների դեմ մենք անխնա պայքար ենք մղում, մեկուսացնելով նրանց արտաքսումով և ձերբակալելով բանտերում: ... Մենք արդեն զինաթափել և տրիբունալի դատի ենք տվել այդ տարրերից շատերին:

Մենք ձեռնարկում ենք ամենաեռանդագին միջոցներ նաև այլ կուսակցությունների նկատմամբ, ինչպես մենշևիկները և էսեռներն են: Մեզ մոտ, ինչպես և ձեզ մոտ այլ վերաբերմունք լինել չի կարող, քան պայքարը նրանց դեմ: ... Ամբողջ Հայաստանում կատարվում են մաուզերիստների ուժեղ ձերբակալություններ: Կառավարության հին անդամներին մենք ձերբակալել ենք Երևան ժամանելու առաջին իսկ օրերին...»[84]:

Հարկ է նշել, որ հայ բոլշևիկների, մասնավորապես Հեղկոմի անդամների մոտ միանշանակ վերաբերմունք չկար դաշնակցականների նկատմամբ կիրառվող խիստ քաղաքականության ասպա-

---

[83] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, ց. 2, գ. 19, թ. 3, Դաշնակցությանը վերաբերող այդ շրջանի մասին փաստաթղթերը հրապարակվել են Վ. Ն. Ղազախեցյանի կողմից խմբագրված և կազմված «Հ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., 1999թ. գրքում

[84] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 35, թ. 13

ռեզում: Այսպես, 1921 թ. հունվարի 21-ի ՀԿԿ Կենտկոմի՝ ՌԿԿ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյին ուղղված նամակում կարդում ենք, որ որոշում է կայացվել անողոք պայքար մղել դաշնակցության դեմ որպես կուսակցության, վերանայել նրա կազմակերպման բոլոր հնարավորությունները:

Այդ նպատակներով պետք է բանտարկեին և մեկուսացնեին նրանց բոլոր ղեկավարներին, նախկին կառավարության բոլոր անդամներին, դատախազության աշխատողներին և պահեստի միլիցիայի անդամներին: Այդ կամպանիայի իրագործումը դրվում էր ՌՍՖԽՀ ՀԱՀ-ի լիազոր Գ. Աթարբեկյանի վրա: Սակայն Հեղկոմի անդամներ Ս.Կասյանը և Ա. Մռավյանը կտրականապես հրաժարվում են անցկացնել այդ բռվանդակության բանաձևը՝ հայտարարելով, թե իրենք հեռանում են Հեղկոմից և զբաղեցրած պաշտոններից, քանի որ ավելի մեղմ քաղաքականություն վարելու կողմնակիցներ էին: Նրանց հրաժարականը չի ընդունվում, իսկ հարցը փոխադրվում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրո՝ վերջնական որոշում ընդունելու համար[85]:

Այսպիսով, ՀԿ(բ)Կ-ն խնդիր էր դրել կազմակերպորեն վերացնելու դաշնակցությունն, ընդ որում ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանում: Ճիշտ է նկատել պրոֆ. Վ.Ղազախեցյանը, որ դյուրին չէր դրված նպատակի իրագործումը, քանի որ Դաշնակցությունը ամենաազդեցիկ քաղաքական ուժը և ամենաբազմանդամ կուսակցությունն էր հայ իրականության մեջ[86]: Ավելացնենք, որ դաշնակցությունն ուներ ընդհատակյա գործունեության մեծ փորձ և փետրվարյան ապստամբությունից հետո Հայաստանում վերջնականապես պարտված կուսակցությունը 1920-ական թվականներին արտասահմանից դեռևս շարունակում էր գործնական պայքարը խորհրդային իշխանության դեմ, և այդ ժամանակաշրջանում ՀԽՍՀ ՊՔՎ-ի կողմից, իրոք, բացահայտվում էին նրանց գործողությունները հանրապետության տարածքում:

Դրա մասին վկայություն է տալիս նաև 1929 թվականին արտասահման փախած, նախկինում Իրանում, ապա Թուրքիայում ԽՍՀՄ

---

[85] Տես Ս.Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Եր., 1966, էջ 299-300

[86] «Հ.Յ. դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածո), Պատ. խմբ. և կազմող Վ.Ն. Ղազախեցյան, Եր., 1999, էջ 6

ՄՊՔՎ հետախուզության ռեզիդենտ Գ. Աղաբեկովը[87]: ՀՀ ԱԱՆ արխիվի գործերի ուսումնասիրությունից կարելի է անել հետևյալ հաստատուն եզրակացությունները, որ 1920-ական թվականներին կազմված գործերը, գրեթե առանց բացառության, հավաստի տվյալների հիման վրա են, ինչը չի կարելի ասել 1930-ականների հատկապես երկրորդ կեսի գործերի մասին, որտեղ գերակայում են. մեղմ արտահայտված, ոչ հավաստի տվյալներով իրացված գործերը:

1923թ. ՀԿ(բ)Կ ղեկավարությունը սկսում է Դաշնակցության կուսակցության կազմալուծման գործընթացը և այդ կապակցությամբ հունիս-հուլիս ամիսներին համապատասխան որոշումներ են կայացվում և հրահանգներ ուղարկվում բոլոր գավառային կոմիտեների քարտուղարներին[88]:

Այսպես, դրանցից մեկում նշված է, որ այդ բնագավառում գործունեության պատասխանատվությունը և աշխատանքն ընկած է բացառապես Չեկայի մարմինների վրա, որը պետք է հսկողություն սահմանի այդ գործընթացների վրա, հաշվառի հեղինակություն վայելող դաշնակցականներին, ի հայտ բերի այն դաշնակցականներին, ովքեր կարող են օգտակար լինել այդ աշխատանքներում և դա կատարել այնպես, որ տվյալ գործում չերևա Չեկայի անունը[89]:

Այսպիսով, գործունեություն էր ծավալվել Դաշնակցությունը նաև ներսից քայքայելու ուղղությամբ:

Արդեն 1923 թ. հոկտեմբերի 9-ին ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը որոշում է կայացնում Դաշնակցության ինքնալիկվիդացման համագումար կազմակերպելու համար ՀԿ(բ)Կ-ին միջոցներ բաց թողնելու մասին[90]:

Հարկ է հիշատակել, որ 1921 թ. ընթացքում բանակցությունների փորձ է արվում ՌԿ(բ)Կ-ի և դաշնակցության գերագույն մարմնի միջև այդ կուսակցությունների փոխհարաբերությունները կարգավորելու և հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցի շուրջ, որին բնականաբար ակտիվ մասնակցում էր ՀԿ(բ)Կ-ն. անգամ Ռիգայում տեղի են ունենում ոչ պաշտոնական հանդիպումներ: Սակայն 1921 թ. հուլիսի 16-ին ՀԿ(բ)Կ-ի կենտկոմը հեռագիր է հղում ՌԿ(բ)Կ

---

[87] Տե՛ս Г. Агабеков, ГПУ - Записки чекиста, Берлин, 1930

[88] Տե՛ս ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, g. 3, գ. 5, թ. 8, գ. 14, թ. 34-35

[89] Նույն տեղում, ֆ. 1, g. 3, գ. 14ա, թ. 5

[90] Նույն տեղում, ֆ.1, g. 3, գ. 11, թ. 86

Կենտկոմին հայտնելով, որ Զանգեզուրում հասել են պատերազմի դադարի, ուստի նպատակահարմար չեն համարում շարունակել բանակցությունները Դաշնակցության հետ: Նման որոշում է կայացնում նաև ՌԿ(բ)Կ ԿԿ Կովկասյան բյուրոն[91]:

1922 թ. մայիսին ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմը թույլ է տալիս օրինականացնելու դաշնակցության կուսակցության «Աշխատավորական սեկցիան» (ձախ դաշնակցականներ, որոնք գործում էին 1918թ.) Անդրկովկասում, որոնք համապատասխան հայտարարություն էին արել ընդունելով իրողությունները:

Սակայն խնդիր էր դրված լիկվիդացնելու այդ կուսակցության գործունեությունը, ուստի, 1923 թ. հասունանում է Դաշնակցությունը կազմացրող համագումար անցկացնելու գաղափարը, որի մեջ ներգրավում են նախկին դաշնակցականներին: Այդ նպատակով ՀԿ(բ)Կ-ն 1923 թ. հոկտեմբերի 2-ին հանձնաժողով է ստեղծում, որի մեջ մտնում են ԱՀ նախագահ Շ.Ամիրխանյանը, Կենտգործկոմի նախագահի տեղակալ Ա.Կարինյանը, Կենտկոմի քարտուղար Ա.Շահսուվարյանը[92]: ՀԿ(բ)Կ ԿԿ կից դաշնակցականների կազմալուծման գծով եռյակը քննարկում է այդ աշխատանքները կատարելու մանրամասները և ուշագրավ է այն, որ իրենք են որոշում դաշնակցական կազմալուծման բյուրոյի կազմը և ներգրավում են Ա. Բակունցին, Կրմենանցին, Դանիելյանին, Տոնյանին, Եպիսկոպոսյանին, Տեր-Մարտիրոսյանին, ինչպես նաեւ նրա նախագահությունը, որի մեջ մտնում են Ալեքսանդր Բակունցը, Նիկոլայ Կրմենանցը և Ռուբեն Տոնյանը:

Ի կատարումն իրենց որոշման շրջաններ էին ուղարկում քարոզիչների, որոնք նախապատրաստում էին ինքնալիկվիդացման համագումարը: Այդ նպատակով ստեղծված բյուրոն 1923 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ակտիվ նիստեր է անցկացում և վերջապես նոյեմբերի 20-24-ին տեղի է ունենում Հայաստանի Դաշնակցության ինքնավերացման համագումարը, որին մասնակցում են 4032 շարքային դաշնակցականներից ընտրված 247 պատգամավորներ: Նոյեմբերի 25-ին ՀԿ(բ)Կ ԿԿ օրգան «Խորհրդային Հայաստանը» հաղթանականորեն գրում է, որ համագումարը ժխտեց Դաշնակցություն կուսակցության գոյության իմաստը և հայտարարեց նրա ինք-

---

[91] Տես նույն տեղում, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 30, ֆ. 4033, ց. 2, գ. 1187, թ. 14

[92] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 48

նալիկվիդացիան, որ «Հայաստանի խորհրդային հեղափոխության երրորդ տարեդարձին հոյակապ նվեր է Դաշնակցության լիկվիդացիան հանրապետության սահմաններում»[93]:

Այս ամբողջ կամպանիայում հարկ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ դա ՀԿ(բ)Կ Կենտկոմի հանձնարարությամբ կազմակերպվում էր ՀԽՍՀ ԱՀ-ի կողմից, որոնք կազմում էին բոլոր շրջաններում բացահայտվող դաշնակցականների ցուցակները, որոնց թիվը 4032 մարդ էր:

Այդ ժամանակահատվածում նույնիսկ ազատ էին արձակվում բանտում գտնվող նախկին դաշնակցականները, որոնք համապատասխան հայտարարություն էին տալիս[94]: Նման ցուցակների կազմումը վերաբերվում էր նաև ինքնավերացման գնացող Հնչակյան կուսակցությանը, ինչպես նաև սպեցիֆիկներին: Հետագայում դրանք դարձան այն հիմքը, որով կատարվում էին զանգվածային բռնաճնշումները Հայաստանում:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել նաև այն, որ Դաշնակցությունը պաշտոնապես ինքնավերացված հայտարարվեց Հայաստանում, որն ավելի շատ քարոզչական քայլ էր, իսկ իրականում նրա ղեկավարությունը գտնվում էր արտասահմանում և նրանք միայն 30-ականի սկզբներին որոշեցին դադարեցնել գործունեությունը Հայաստանի տարածքում: Մինչ այդ հանրապետությունում գործել է բավականին լայն տարածում ունեցող ընդհատակյա կազմակերպություն, որի երևանյան կազմակերպությունը կրում էր «Մրգաստան», Լենինականինը՝ «Քար» անունները: Նման կազմակերպություններ էին հայտնաբերվել նաև Զանգեզուրում, Էջմիածնում, Դարալագյազում, Դիլիջանում[95]: ՀԽՍՀ ՊՔՎ-ն բավականին իրազեկ էր և ակտիվորեն հետապնդում էր դաշնակցության գործունեությանն արտասահմանում և երկրի ներսում: Նրանք, անգամ տեղյակ էին, որ 1924 թ. նոյեմբերից 1925 թ. հունվար ամիսներին տեղի ունեցած դաշնակցականների 10-րդ համագումարին Հայաստանից մասնակցել են 4 մարդ, որ 1925 թ. Խարկովում, ԽՍՀՄ-ում ընդհատակյա պայքար մղելու նպատակով, ստեղծվել է «Արևմտյան Բյուրո», որ 1925 թ. նոյեմբերին Երևանում գումարվել է ընդհատակյա կոնֆե-

---

[93] «Խորհրդային Հայաստան» 25 նոյեմբերի 1923

[94] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 213, թ. 2

[95] Տե՛ս ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ.13129

ռանս և այլն[96]: Այդ տարիներին ՊՔՎ մարմինները տեղյակ էին, որ դաշնակցականներն են կազմակերպել գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի ահաբեկչությունը, մահափորձեր են կատարել նախկին խմբապետ Քուրդ-Ղազոյի և դաշնակցականների ինքնալիկվիդացման ակտիվ մասնակից Նիկոլայ Կրմենանցի նկատմամբ: Նշենք, որ Մ. Խուշոյանի ահաբեկչության կապակցությամբ ՀԿ(բ)Կ ԿԿ նախագահությունը հատուկ քննարկում էր անցկացրել և որոշել հասարակական դատավարություն վարել՝ դաշնակցությանը վարկաբեկելու նպատակով[97]:

Ավելին, արդեն 1925 թվականին ՀԿ(բ)Կ-ն քննարկում և հարց է բարձրացնում Վրաստանում և Հյուսիսային Կովկասում բնակվող դաշնակցականների գործունեությունը քայքայելու մասին[98]:

1926 թ. հոկտեմբերի 8-19-ը տեղի է ունենում գյուղխորհրդի քարտուղար Մանուկ Խուշոյանի ահաբեկչության գործի դատավարությունը, որտեղ մեղադրվում են Դաշնակցության կուսակցության Հայաստանի գաղտնի կազմակերպության անդամներ Պ. Սինոյանը, Հ. Մովսեսյանը, Ա. Ստեփանյանը և 8-ը այլ անձինք: Դատավարության ամբողջ ընթացքը միտված էր դաշնակցության վարկաբեկմանը՝ ինչի վրա ապարդյուն փորձում է ուշադրություն գրավել դատապաշտպան Տ. Հախումյանը[99]:

1927 թվականի մայիսին Նախիջևանից Երևան մեկնող գնացքում ձերբակալվում է Երևանի պետհամալսարանի ուսանող Ալեքսանդր Եսայանը, որի մոտ հայտնաբերել են նամակներ, այսինքն նա դաշնակցական կազմակերպության սուրհանդակն էր[100] և այլն:

1920-ական թվականներին ՀԿ(բ)Կ-ն իր միանձնյա իշխանությունն ամրապնդելու նպատակով որոշակի գործունեություն ծավալեց նաև Հայաստանում պահպանված այլ կուսակցությունների ներկայացուցիչների նկատմամբ: Դրանցից էր 1903 թ. Ժնևում, երիտասարդ դաշնակցական մտավորականների կողմից հիմնադրված «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությու-

---

[96] Տես նույն տեղում, թ. 26-28

[97] Տես ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 571, ց. 1, գ. 12, թ. 5

[98] Տես ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 11

[99] Մանրամասն տես Հ.Յ. դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը ((փաստաթղթերի և նյութերի ժողովածու). Պատ. խմբագիր և կազմ. պրոֆ. Վ. Ն. Ղազախեցյան, Եր., 1999, էջ 198-208

[100] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 11160

նը» (ՍԴԲՀԿ), որի հիմնադիրները, դժգոհ լինելով այդ տարիներին դաշնակցության վարած քաղաքականությունից, անջատվեցին նրանցից: Հետագայում իրենց գործունեությունը ծավալել են Բաքվում: Դա, ըստ էության, մանր-բուրժուական, մտավորական, ազգային կուսակցություն էր[101]: Նրա ղեկավարներն (Ն. Տեր-Ղազարյան, Ալ. Ծատուրյան (Ռուբենի), Գ. Կոզիկյան (Եսալեմ), Պ. Փիլոյան, Բ. Իշխանյան) այնքան էին կենտրոնացել հայ իրականության և հայ բանվորների «սպեցիֆիկ» (յուրահատուկ) պայմաններն ու առանձնահատկությունները ցուցադրելու վրա, որ, ինչպես գրել է հայ բոլշևիկների առաջնորդներից մեկը՝ Ստ. Շահումյանը, նրանց սկսեցին անվանել «սպեցիֆիկներ»[102]: Այդ անվանումով էլ նրանք հիշատակվում են Հայաստանում 1920-ականներին:

Ժամանակին այդ կուսակցության գործուն անդամներն են եղել նաև Ալ. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը (Սրապիոնյան), Աշ. Հովհաննիսյանը, Արտ. Կարինյանը, Ալ. Ռուբենին, որոնք քաղաքական պայքարի ընթացքում հեռացան նրանից և դարձան բոլշևիկյան կուսակցության անդամներ: ՍԴԲՀԿ-ն ընդունում էր գիտական սոցիալիզմն այնպես, ինչպես Եվրոպայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները և ձգտում էր կազմակերպել հայ բանվորներին Կովկասում՝ իրագործելու սեփական պահանջները:

1920 թ. սկզբին սպեցիֆիկների աչքի ընկնող ղեկավարներ Դավիթ Անանունը (Տեր-Դանիելյան), Ստեփան Զորյանը, Բախշի Իշխանյանը, Ցոլակ Խանզադյանը իրենց մի շարք համախոհների հետ ձեռնամուխ են լինում ստեղծելու Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը և մայիսի 28-30-ին այդ կուսակցության կոնֆերանսում ընդունվում է ծրագրային փաստաթուղթ և ընտրվում է Կենտրոնական կոմիտե: Կուսակցությունը հանդես է գալիս որպես անկախության կողմնակից և բացասական է վերաբերվում Հայաստանում բոլշևիկյան մայիսյան ապստամբությանն ու խորհրդային իշխանության հաստատմանը:

Ինչպե՞ս կարող էին հայ բոլշևիկները վերաբերվել մի կուսակ-

---

[101] Սպեցիֆիկների առաջացման, ծրագրային ու կազմակերպական հայացքների մասին մանրամասն տես Հ.Գ. Վարդանյան, Հայ բուրժուա-ազգայնական կազմակերպությունների դիրքավորումը ռուսական առաջին հեղափոխության տարիներին 1905-1907թթ., Եր., 1975, էջ 160-179

[102] Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Եր., 1976, էջ 320

ցության, որն իր 1920 թ. մայիսին հրապարակված կոչում գրում էր. «...Մի խումբ ստորահոգի բախտախնդիրներ հանդգնեցին բարձրացնել քաղաքացիական կռվի արյունաշաղախ դրոշը. ապստամբել հայ ժողովրդի ինքնորոշված կարգի դեմ»[103]: Կամ. նրանց առաջնորդներից մեկին՝ Դ. Անանունուն, որը մայիսյան ապստամբությունը անվանում է դավադիրների մի աննշան խմբի փորձ՝ իշխանությունը հափշտակելու նպատակով[104]:

Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ սպեցիֆիկների հիմնադիրները անջատվել էին դաշնակցություն կուսակցությունից և անվանում էին սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը. այսինքն բոլշևիկների կողմից ընդունվում էին որպես «հայ սպեցիֆիկ մենշևիկներ»[105]: Նրանց 1920-ական թվականների կեսերին ներկայացնում էին տրոցկիստներին և դաշնակցականներին հավասար շարքում (տրոցկիզմ-մենշևիզմ-դաշնակիզմ կոնցեպցիայի ներկայացուցիչներ):

Այդ ժամանակաշրջանում որպես սպեցիֆիկների ներկայացուցիչներ հիշատակվում են Դավիթ Անանունը. Ցոլակ Խանզադյանը, Թադևոս Ավթալբեգյանը, սակայն առավել ցայտուն է երևում իշխանությունների վերաբերմունքը դեպի այդ կուսակցությունը Դ. Անանունու նկատմամբ կիրառված բռնություններից[106]: Նրան ձերբակալում են 1927 թ. սեպտեմբերին՝ մեղադրելով հակահեղափոխական գործունեության մեջ: 1903 թ. ՍԴԲՀԿ-ի անդամ Դ.Անանունի մեղադրական եզրակացության մեջ, մասնավորապես, նշված է. «Հայ սպեցիֆիկների առաջնորդ Դ. Անանունը Հայաստան է եկել 1919թ., երբ երկրում տիրում էր դաշնակցական ամենաթողությունը» և սկսում է համագործակցել դաշնակցական կառավարության հետ, որպես գրականագետ և հասարակական գործիչ: Հեղինակություն և վստահություն էր վայելում դաշնակցական կառավարության անդամների մոտ, հատկապես բարեկամություն էր անում Ս.Վրացյանի հետ, որի փաստացի խորհրդականն էր 1921 թ. «փետրվարյան դաշարկածախնդրության» ժամանակ: Ապա հիշվում են նրա հակաբոլշևիկ-

---

[103] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4041, ց. 1, գ. 70, թ.1

[104] Նույն տեղում, գ. 96, թ. 56

[105] Տես ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 8, գ. 66, թ. 15

[106] Դ. Անանունու մասին մանրամասն տես «Հայաստան», 20 հունիսի 1991, «Հայոց աշխարհ» 9 ապրիլի 1999

յան հոդվածները: Այնուամենայնիվ, Դ. Անանունը մնում է Հայաստանում և խմբագրում «Վերածնունդ» ամսագիրն ու աշխատում Հայաստանի հեղափոխական թանգարանում: Ըստ այդ փաստաթղթի, նրա ազդեցության տակ երիտասարդությունը 1924 թ. ստեղծել է «Երիտասարդ մենշևիկների» կազմակերպությունը՝ Սուրեն Մխիթարյանի գլխավորությամբ, ինչպես նա «Հայկազունների» խումբը, որոնք «Հայկական ազգային հարցի լուծումը տեսնում էին այնպես. ինչպես Անանունը»: Հիշատակվում է նաև նրա ակտիվ կապերի մասին Երևանում ընդհատակյա գործող դաշնակցության կենտկոմի և Իրանում հաստատված դաշնակցության ղեկավարության հետ:

Հաշվի առնելով վերոշարադրվածը՝ Հայաստանի ՊՔՎ-ն նպատակահարմար չի գտնում Անանունու ազատության մեջ գտնվելը Անդրկովկասում, ուստի 1927 թ. սեպտեմբերին ձերբակալում է, և Անդրֆեդերացիայի ՊՔՎ Հատուկ խորհրդակցությունը նրան աքսորում է Ռուսաստան 3 տարի ժամկետով, որը հաստատվում է ԽՍՀՄ ՄՊՔՎ-ին կից Հատուկ հանձնաժողովի կողմից[107]:

Պատիժը կրելուց հետո նրան արգելվում է բնակվել Անդրկովկասում, ուստի նա սկզբում բնակություն է հաստատում Ուֆայում, ապա Աստրախանում, որտեղ 1943 թ. կնքում է իր մահկանացուն[108]:

1927 թ. մարտին Հայաստանի մենշևիկների կազմակերպության անդամ լինելու մեջ մեղադրանքով դատապարտվում են 15 երիտասարդներ, որոնց ղեկավարն էր Սուրեն Մխիթարյանը: Վերջինս 1922 թվականից գտնվել է ՀԽՍՀ ԱՀ-ՊՔՎ-ի ուշադրության տակ, քանի որ հայտնի դաշնակցական հակահեղափոխական Մխոյի եղբայրն էր: Խորհրդային իշխանության հաստատումից հետո նրա արձագանքը դրական է եղել և, անգամ, փորձել է մտնել կոմերիտմիության շարքերը: Այնուհետև, փետրվարյան ապստամբությունից հետո, դարձել է դաշնակցական երիտասարդական կազմակերպության ակտիվ գործիչ, կենտկոմի անդամ: Նրան, մենշևիկյան գործունեություն կատարելու համար հեռացրել են դաշնակցությունից: 1924 թ. նոյեմբերի 16-ին կազմակերպել է «Երիտասարդ մենշևիկների» կազմակերպությունը, որը ղեկավարել է մինչև իր ձերբակալությունը: Այդ կազմակերպության անդամներից էին Պարգև Ջանոյանը (1918-1920 թթ. եղել է ռամկավարների երիտասարդական միու-

---

[107] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 9373, թ. 89-99

[108] Տես «Հայաստան», 20 հունիսի 1991թ.

թյան անդամ), Աբաս Իսահակյանը (մասնակցել է 1920 թ. բոլշևիկների մայիսյան ապստամբությանը, ապա ծառայել է դաշնակցական բանակի հետախուզությունում, 1922-1923 թթ. եղել դաշնակցական երիտասարդական կազմակերպության անդամ, 1924-ից ղեկավարել երիտասարդ մենշևիկների «Լենինականի խումբ») և այլն: Ուշագրավ է, որ «Երիտասարդ մենշևիկների» և մյուս անդամներից Աշոտ Զուբյանը, Օնիկ Արևշատյանը, Արշակ Խուդավերդյանը, Աղավարդ Գործունյանը, Լյուսի Օհանջանյանը, Նվարդ Խոնդկարյանը, Հայկուշ Արևշատյանը, Հաբեթ Սամվելյանը և Ռուբեն Մոծակյանը նախկինում նույնպես եղել են երիտասարդական դաշնակցություն կուսակցության անդամները և միայն 2 հոգի Արծրուն Գինոսյանը և Գևորգ Մելքոնյանը նման անցյալ չեն ունեցել[109]: Այսինքն, կարելի է վստահորեն նշել, որ, հիմնականում, Երևանի պետհամալսարանում ձևավորված այդ խումբը կազմակերպվել է Դաշնակցության ընդհատակյա կազմակերպության հիմքի վրա և, հավանաբար, դաշնակցության ինքնալիկվիդացման միջոցառումների հետևանքներից էր:

Հարկ է նշել, որ այս նոր կազմակերպության առաջացման պատճառներից մեկը ՊՔՎ-ն բացատրում էր նրանով, որ ակտիվ բնավորությամբ և ուսանողների մեջ հեղինակություն ձեռք բերած Ս. Մխիթարյանին հանել են երիտասարդական դաշնակցականների կազմակերպությունից, որը խորապես ուսումնասիրել էր մարքսիստական գրականությունը (հատկապես Կաուցկի, Պլեխանով) և համաձայն չէր դաշնակների գաղափարախոսության հետ: Նորաստեղծ կազմակերպությունն անվանեցին «Հայաստանի Երիտասարդ Մարքսիստների կազմակերպություն»: Քանի որ նրանք մարքսիստական գաղափարախոսությունն ընդունում էին, ապա հեշտ է դառնում արագ ընդլայնելու իրենց շարքերը և հնարավորություն ունեին ազատ արտահայտել իրենց հայացքները: Ղեկավար մարմինը գաղտնի խորհուրդն էր, որը հետագայում կոչվեց «Կենտրոնական Կոմիտե»: Ընդունել էին սոցիալ-դեմոկրատական պլատֆորմը, ինչպես նաև անհատական տեռորը: Փորձել են կապեր հաստատել ԽՍՀՄ-ում և արտասահմանում գործող իրենց գաղափարակիցների հետ: Դժվարությամբ, հիմնականում օգտագործելով ընդհատակյա դաշնակցական կազմակերպության հնարավորությունները նրանք գրականություն էին ստանում Իրանից, մասնավորա-

---

[109] Տես ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 12336, հ. 1, թ. 204-216

պես 1925 թ. ստանում, թարգմանում և տարածում են «Սոցիալիստիչեսկի վեստնիկի» 35 օրինակ: Ձեռք են բերում նաև տպագրական սարք: Նպատակ էին դրել բացահայտ և գաղտնի միջոցներով պայքարել խորհրդային իշխանությունների և կոմունիստական գաղափարախոսության դեմ: Առավելապես գաղափարական գործունեություն էին ծավալել, սակայն բանվորների մեջ հաջողություն չեն ունեցել:

Ձերբակալված երիտասարդ մենշևիկների կազմակերպության անդամները դատապարտվում են 3 տարվա, 3-ը 2 տարվա աքսորի, իսկ մեկի պատիժը բավարար են համարում նախնական կալանքում գտնվելու ժամկետով:

Այդ որոշումներն այնուհետև հաստատվում են, իսկ ավելի ստույգ, նոր որոշումներ են կայացվում Անդրֆեդերացիայի ՊՔՎ-ի - ԽՍՀՄ ՄՊՔՎ կոլեգիաներին կից Հատուկ հանձնաժողովներում[110]: Այնուհետև, 1929 - 1932 թթ. նրանց աքսորման ժամկետները կրկին ավելացվել են 3-ական տարով: Արդարացվել են 1991 թ. հոկտեմբերին արտադատարանական մարմնի կողմից դատապարտված լինելու և նրանց գործունեության մեջ պետական կառավարման և տնտեսության հիմքերի դեմ հասարակական վտանգավոր գործողությունների բացակայության հիմնավորումով[111]:

Թե ինչպե՞ս էին գնահատում սպեցիֆիկներին և ո՞ւմ էին համարում նրանց ղեկավարներ 1920-ականի և հետագա տարիներին, կարելի է եզրակացնել նաև Խ. Մուղդուսու հարցաքննություններից, որը 1921 թվականից, մի փոքր ընդհատումով, մինչև 1937 թ. աշխատում էր ՀՀ ԱՀ-ՊՔՎ-ՆԳԺԿ մարմիններում, իսկ 1934 թ. ղեկավարում էր այն: Այստեղ կարևորում ենք ոչ թե այն, թե ինչքանով է համապատասխանում նրա պատմածը իրականությանը, այլ կոնկրետ գնահատականները, որոնք հիմք էին դարձել հետապնդելու մարդկանց: Այսպես, Խ.Մուղդուսու հարցաքննություններից մեկում կարդում ենք.

«Եթե հետևենք Հայաստանում խորհրդային կարգերի ողջ պատմությանը և վերլուծենք այստեղ կուսակցական և խորհրդային ղեկավար մարմինների գործունեությունը, ապա դժվար չի լինի հասկանալ, որ այդ ղեկավար մարմիններ են սիստեմատիկաբար

---

[110] Տես ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 12336, հ. 2, թ.թ. 219, 247

[111] Նույն տեղում, հ. 2, թ. 276-278

ներթափանցել և ակտիվորեն անցկացրել իրենց գիծը (ես նկատի ունեմ իհարկե խորհրդային ժամանակաշրջանը) թունդ ազգայնամոլները: Ազգայնամոլությանը Հայաստանի խորհրդայնացման ամենասկզբում հավատարմորեն ծառայել են հայկական «սպեցիֆիկները», որոնց պետք է համարել ՀամԿ(բ)Կ, խորհրդային իշխանությունների դեմ կազմակերպված պայքարի սկզբնավորողներ և, որոնք իրենց բնույթով նույն դաշնակցականներն էին: Այդ պայքարը, բարդ ազգային զուգակցումների պայմաններում, ունեցավ մի շարք շրջաններ:

Սկսած 1921 թ. մինչև 1927 թ. Հայաստանի կուսակցական-խորհրդային ղեկավարությունը գտնվում էր «սպեցիֆիկների» (Մյասնիկյան, Լուկաշին, Աշոտ Իոնեսյան (Հովհաննիսյան - Ա. Մ.), Համբարձումյան և ուրիշներ) ձեռքին: Նրանց քաղաքական գիծը, գրեթե, չէր տարբերվում դաշնակցականների գծից:

1927 թ. «սպեցիֆիկների» ղեկավարության մեջ գլխավոր դերը խաղում էին ԺԿԽ-ի նախագահ Տեր-Գաբրիելյանը և Կենտկոմի քարտուղար Հայկ Հովսեփյանը: Հատկապես այդ ժամանակ Հայաստանում իրենց գործունեությունը ծավալեցին տրոցկիստները: Այսպիսով 1930-1931 թթ. Հայաստանի ղեկավարության մեջ էին ազգայնամոլ Խանջյանը, տրոցկիստ Վարդանյանը և աջ Տեր-Գաբրիելյանը: Այդ ժամանակահատվածը պետք է համարել ՀամԿ(բ)Կ-ի և խորհրդային իշխանությունների դեմ հետագա ակտիվ պայքարի ծավալման համար կադրերի կազմակերպման և տրոցկիստների, ազգայնամոլների ու աջերի միավորման ժամանակաշրջան...

Այս ամենը պատմեցի, որպեսզի հասկանալի լինի, որ Հայաստանում գոյություն ուներ միասնական հակախորհրդային կազմակերպություն և, որ նրան մասնակցելով տրոցկիստները և աջերը ճնշող մեծամասնությամբ եղել են ազգայնամոլներ, որոնք կանգնած էին Խորհրդային Միությունից Հայաստանի անջատման դիրքերում»[112]:

Հայտնի պայմաններում տրված ցուցմունքները չէին կարող համապատասխանել իրականությանը:

Այսպիսի մեղադրանքները ոչ միայն ետին թվով էին հնչում: Այսպես, 1927 թ. մարտի 24-ի «Վառ կոմունիզմին նվիրված» Հ.Կարոյա-

---

[112] ՀՀ ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 10953, հ. 1, թ. 15-18

նը գրություն էր ուղարկել ՀԿ(բ)Կ պլենումի նախագահություն, որտեղ նշում էր. «... որ ամենագլխավորն է իդեոլոգիական ֆրոնտում, մեր կուսակցական ղեկավար ապարատը՝ Կենտկոմը, ավելի ճիշտ ավագ քարտուղար ընկեր Ա.Հովհաննիսյանը... տանում է դաշնակ-սպեցիֆիկյան գիծ՝ մերթ խեղաթյուրելով դեպքերն ու դեմքերը և մերթ լռելով այնտեղ, ուր չպետք է լռի լավ կոմունիստը»[113]:

Բնական է, որ Հայաստանում երբեք գոյություն չի ունեցել միասնական հակախորհրդային կազմակերպություն, հարցաքննություններում նշված անձանցից և ոչ մեկը չի մտածել, առավել ևս գործել Հայաստանը ԽՍՀՄ-ից դուրս բերելու ուղղությամբ: Սակայն, որ նրանց ճնշող մեծամասնությունը՝ Ալ. Մյասնիկյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Խանջյան, Ս. Տեր-Գաբրիելյան և ուր. եղել են հայրենասեր, ազգասեր և ոչ թե ազգայնամոլ անձնավորություններ՝ փաստ է: Ուշագրավ է այն, որ «սպեցիֆիկների» մեջ թվարկվում են ինչ-որ շրջանում նրանց շարքերում եղած այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Մյասնիկյանը, Լուկաշինը, Աշ.Հովհաննիսյանը և ուր., որոնք վաղուց հեռացել էին նրանցից և իրականում հայ ճանաչված բոլշևիկյան գործիչներ էին: Բնականաբար, իրականությանը չի համապատասխանում այն պնդումը, թե նրանք, որպես սպեցիֆիկներ, կազմակերպված աշխատանքներ էին տանում Հայաստանում: Ընդհանրապես, ՍՊԲՀԿ-ն Խորհրդային Հայաստանում կազմակերպչորեն չի գործել և եղել են զուտ նրա առանձին նախկին անդամներ, որոնք իրականում լոյալ դիրք էին բռնել: Դրանով կարելի է բացատրել այն, որ տվյալ տարիներին ՀԿ(բ)Կ-ն որևէ քայլի չդիմեց որպես կուսակցություն (ինչպես դաշնակցականներին և հնչակներին) վերացնելու կամպանիա անցկացնելու ուղղությամբ: Դա հասկանալի է այնքանով, որ ՍՊԲՀԿ-ն, որպես կազմակերպություն լայն տարածում չի ունեցել Հայաստանում և, հավանաբար, Մոսկվային ցույց տալու համար տեղի պայքարը բազմատեսակ բուրժուական կուսակցությունների դեմ, դաշնակցականների, ապա տրոցկիստների կողքին հիշատակում էին նաև սպեցիֆիկներին: Առավելևս, որ Հայաստանում մենշևիզմը աչքի ընկնող դրսևորում չի ունեցել, իսկ դրա դեմ պայքարը, այդ տարիներին, խիստ արդիական էր Վրաստանի (Անդրֆեդերացիայի կենտրոնը Թբիլիսին էր) և Մոսկվայի համար: Թերևս ժամանակին մենշևիկյան ամենախոշոր հայ գործի-

[113] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 7, գ. 77, թ.5

չը եղել է Արամայիս Երզնկյանը, որը, ՌՍԴԲԿ անդամ էր 1898-ից, իսկ 1903-1920 թթ. կանգնել է մենշևիկյան դիրքերում, մնալով նրա ձախ թևում: 1920-ին Ա. Երզնկյանը որպես մենշևիկ-ինտերնացիոնալիստների խմբի լիազոր-ներկայացուցիչ, բանակցություններ է վարել ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի հետ խումբը կոմունիստական կուսակցությանը ծուլելու համար: Այնուհետև ղեկավար պաշտոններ է վարել: Եղել է ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի տեղակալ, Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ: 1922-ից անընդմեջ ընտրվել Հայաստանի և Անդրֆեդերացիայի կուսակցական և խորհրդային ղեկավար մարմիններում[114]: Նա ակտիվ մասնակցություն է ցույց տվել 1920-1930-ականների առաջին կեսերին Հայաստանում տեղի ունեցող ներկուսակցական, խմբակային դրսևորումներին. սակայն, մինչև իր ձերբակալությունը 1936 թ. նոյեմբերը երբևիցե չի հիշատակվել որպես մենշևիկյան գործունեություն կատարող գործիչ: Դա «հիշեցին» միայն ձերբակալությունից հետո[115]: Նախկինում մենշևիկյան գործիչներ էին եղել նաև հայ իրականության ճանաչված գործիչներ Թադևոս Ավդալբեգյանը և Նշան Մակինցը, որոնց այդ «մեղքը» նույնպես հիշել են միայն նրանց ձերբակալությունից հետո: Պատահական չէ, որ հայ բոլշևիկյան ճանաչված գործիչներից Ս. Շադունցը 1927 թ. ներկուսակցական թեժ պայքարի ժամանակ գրում էր, որ սպեցիֆիկների կազմակերպությունը գոյություն չունի: Նրա լավագույն մասն անցել է կոմկուսի շարքերը, իսկ մյուսները սոցիալ-դեմոկրատ են դարձել: Որպես սպեցիֆիզմի ռեցիդիվ է նշվում 1918 թ-ին Հայկունու կողմից Թբիլիսիում կազմակերպված «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը», որն արագ քայքայվեց: Իհարկե, սպեցիֆիզմի դրսևորումներ (ինչպես նաև հնչակիզմի և մենշևիզմի) եղել են Հայաստանի կոմկուսում, սակայն ոչ երբեք ղեկավարության մեջ: Ապա կոչ է անում պայքարել իրական հակառակորդների աջ թեքման դեմ, որը ոչ թե սպեցիֆիզմն է համարում, այլ տրոցկիզմը[116]:

Հայաստանի միակուսակցական ղեկավարման հաստատման առումով իշխանությունների համար կարևորվում էր նաև հայ իրա-

---

[114] Ա.Երզնկյանի մասին մանրամասն տե՛ս «Ազգ» 5 մարտի 1996, Անմոռաց դեմքեր, Ներսիսյան դպրոցի սաներ, կազմ. Հ.Ազալյան և ուր., Եր., 1965, էջ 51-53

[115] Տես Ա.Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953թթ., Եր., 1999, էջ, էջ 89, 92

[116] Տես ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 7, գ. 79, թ. 1-5

կանության ավանդական կուսակցություններից մյուսին հնչակներին ևս ասպարեզից դուրս բերելու խնդիրը: 1887 թ. ծնունդ կազմակերպված, սոցիալիստական, ազգային գաղափարախոսությունը դավանող Հնչակյան կուսակցությունը բոլշևիկների կողմից ընկալվում էր որպես մանրբուրժուական կուսակցություն: Սակայն վերջինս ուներ բավականին մեծ թվով համակիրներ, ինչը չէր կարող չանհանգստացնել կոմունիստներին: Հարկ է նշել, որ ի տարբերություն Դաշնակցության նկատմամբ կատարվող քայլերի, հնչակների նկատմամբ զգացվում է ավելի մեղմ մոտեցումներ և առավել մեծ ուշադրություն է դարձվում նրանց բոլշևիկյան կուսակցության շարքերն անցնելու վրա: Նկատելի է 1920-ական թվականներին Հայաստանում հնչակների նկատմամբ որևէ բռնաճնշման փաստի բացակայությունը, քանի որ արտասահմանում գործող Հնչակյան կուսակցությունն ընդունել էր խորհրդային կարգերի հաստատման փաստը Հայաստանում և որևէ հակախորհրդային գործունեություն չէր վարում:

Ինչպես և ընդունված էր այդ տարիներին Հնչակյան կուսակցության վերացման մասին որոշումը կայացվում է Մոսկվայում 1923 թ. հունիսի 19-ին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմում, որին հետևում է Անդրերկրկոմի հուլիսի 9-ի որոշումը"[17]: Դրանց համաձայն, կազմվում էին Հնչակյան կուսակցության անդամների անկետային ցուցակները, որոնք ուղարկվում էին ՀԿ(բ)Կ Կենտկոմ:

Արդեն, 1923 թ. հուլիսի 10-ին Թբիլիսիում գտնվող Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը շրջաբերական նամակ է ուղարկում իր վարիչ մարմիններին, գործադիր հանձնախմբերին և մասնաճյուղերին, որոնցից մեկը գործում էր Երևանում, որտեղ հայտնում են, որ մոտ վեց ամիս առաջ իրենք ընդարձակ դեկլարացիա (հայտարարություն) են ուղարկել 3-րդ Ինտերնացիոնալի 4-րդ կոնգրեսին, խնդրելով անդամակցել իրենց, իբրև կոմունիստական աշխարհայացք ունեցող կազմակերպություն: Շրջաբերականում մասնավորապես ասվում է. «... ամեն կերպ պետք է աշխատենք մեր բախտը կապել Կոմինտերնի և Կոմկուսի հետ, մեր պաշտպանած ժողովրդի ու դասակարգի բախտը ևս նույն խորհրդային կառավարության բախտի հետ անպայմանո-

[17] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 289, թ.1

րեն: Ունենք այժմ մեր Խորհրդային Սոցիալիստական Հայաստանը, որը մեր իդեալների իրականացումն է և նա կարող է միայն ամենալայն թափով և փայլուն կերպով իրագործել մեր փայփայած իդեաները»[118]:

Դրան հետևում է 1923 թ. նոյեմբերի շրջաբերական նամակը, որտեղ նշվում է, որ Կոմինտերնի հետ ծուլվելու համար անհրաժեշտ է կազմել կուսակցության անդամների ցուցակները և ուղարկել այդ նպատակով Մոսկվայում ստեղծված հատուկ հանձնաժողովին[119]:

Հայաստանի տարածքում գործող Հնչակյան կուսակցության Երևանի մասնաճյուղը սեպտեմբերի 14-ին անց է կացնում ընդհանուր ժողով, որտեղ միաձայն որոշում է կայացնում լուծված համարել կոմունիստների հետ ծուլվելու խնդիրը և «բոլոր անդամների ուժերը տրամադրել մեր երկրի շինարարությանը և կոմունիզմի հաղթանակին ամբողջ աշխարհում» և նույն ոգով հայտարարություն է ընդունում՝ նշելով «լիկվիդացիայի ենթարկված տեսնել Հնչակյան կուսակցությունը և անցնել Կոմկուսի շարքերը...»[120]:

Այդ գործընթացն իր ավարտին է հասնում 1924 թ. նոյեմբերի 19-ին Թբիլիսիում ԽՍՀՄ Հնչակյան կուսակցության ժամանակավոր գործադիր կոմիտեի տարածած հայտարարությամբ, որը ստորագրել էին նախագահ Մարո Նազարբեկը, անդամներ Դավիդ Ապրեսյանը, Արսեն Տեր-Ավետիսյանը, Մարտիրոս Պետրոսյանը, Սեդրակ Մուրադյանը և քարտուղար Մկրտիչ Տեր-Օգանեզովը:

Հայտարարության մեջ նշված է, որ միայն Կոմինտերնը կարող է լուծել հայ ժողովրդի հարցերը. առաջարկվում էր միավորել բոլոր ուժերը Խորհրդային Հայաստանի և մյուս եղբայրական Խորհրդային հանրապետությունների շուրջ, հնչակյան բոլոր արտասահմանյան կազմակերպություններին կանգնեցնել 3-րդ Ինտերնացիոնալի դրոշի տակ, իսկ ԽՍՀՄ-ի տարածքում՝ համարել կազմալուծված և մտնել կոմունիստական կուսակցության շարքերը[121]:

Չնայած, վերոշարադրած գործընթացին, հետագա տարիներին, հատկապես 30-ականների երկրորդ կեսերին, ԽՍՀՄ-ում տեղի ունեցած քաղաքական բռնաճնշումների իրագործողները, այլ մե-

[118] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 275, թ. 3
[119] Նույն տեղում, թ. 4
[120] Նույն տեղում, գ. 292, թ. 10-17, գ. 290, թ. 2
[121] Նույն տեղում, գ. 297, թ. 5-6

ղադրանքների կողքին չէին մոռանում հիշատակել անցյալում Հնչակյան կուսակցության անդամ լինելը:

ՀՀ ԱԱ նախարարության արխիվում, 1920-ական թվականների գործերում որևէ հիշատակում չենք հանդիպել այդ տարիներին գործող էսէռների (սոցիալիստ-հեղափոխականներ) գործունեության մասին: Հայտնի է, որ այդ կուսակցությունը, որը հիմնականում ներկայացնում էր գյուղացիության շահերը, բավականին ակտիվ, այդ թվում նաև ահաբեկչական, գործունեություն էին ծավալել նախախորհրդային Ռուսաստանում: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աջ էսէռներն անցան հակահեղափոխության ճամբարը, իսկ ձախ էսէռները, որոնց ղեկավարներից էր գրող Պերճ Պռոշյանի որդին՝ Պռոշ Պռոշյանը, որոշ ժամանակ մասնակցեցին իշխանության մարմինների աշխատանքներին, սակայն 1918 թվականի հուլիսյան դեպքերից հետո հակամարտության մեջ մտան խորհրդային իշխանությունների հետ և, ինչպես մյուս կուսակցությունները, վերացվեցին Ռուսաստանի քաղաքական դաշտից:

Հայաստանում երբևիցե չի նկատվել այդ կուսակցության ակտիվ գործունեությունը, չնայած, որ 1922 թ. ամռանը ՀԿ(բ)Կ Կենտկոմի փակ նամակում, որտեղ վերլուծություն է տրվում Հայաստանի իրավիճակի մասին, հավանաբար, տուրք տալով Ռուսաստանի բոլշևիկյան մոտեցումներին, «գյուղացիների դրությունը, էսէռներ,» ենթավերնագրի տակ նշվում է, թե էսէռները կարող են օգտագործել գյուղում եղած որոշ դժվարությունները: Մասնավորապես, գրում են. «Սխալ կլիներ ենթադրել, որ էսէռական վերջին պրոցեսից հետո մահացու հարված հասցվեց այդ կուսակցությանը և, որ էսէռականությունը միանգամայն անվտանգ է դարձել... անհրաժեշտ է դրան զուգընթաց համառուսական մասշտաբով դեռ շարունակել էսէռների դեմ սկսած պայքարը, տարածել հակաէսէռական ագիտացիա գյուղերում, դուրս վռնդել էսէռականներին գյուղական օրգաններից և կոոպերատիվներից»[122]:

1920 թվականի վերջին Հայաստանի սոցիալիստ-հեղափոխական կուսակցության Կենտկոմը, որը անվանվում էր «Հայաստանի կոմիտե», ըստ 1938 թ. Հայաստանի ՆԳԺԿ-ի տվյալների, որոշում է կայացրել անցնել ընդհատակ, իսկ կուսակցության անդամներին առաջարկվել է հասնել պատասխանատու պաշտոնների խորհրդա-

[122] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 48, թ. 7

յին ապարատում, իբր նրա աշխատանքներն ապակայունացնելու համար:

Նույն տվյալներով, իսկ առավել ստույգ 1938 թ. ձերբակալված ՀՍՀԿ Կենտկոմի պատասխանատու քարտուղար Կ. Հովհաննիսյանի հարցաքննության արձանագրության համաձայն, 1921 թ. փետրվարին Հայաստանի էսէռները դաշինքի մեջ են մտնում դաշնակցականների հետ և ակտիվորեն մասնակցում փետրվարյան ապստամբությանը:

Մինչև 1927 թ. նրանք բավականին պասիվ դիրք են բռնել, ապա ընդհատակյա ժողովում ընտրել են 8 անդամից բաղկացած Կենտկոմի կազմ (պատասխանատու քարտուղար Կ. Հովհաննիսյան, անդամներ՝ Գ. Աղամալյան, Գ. Մնացականյան, Ե. Տեր-Մկրտչյան, Ի. Տեր-Ներսիսյան, Տ. Տեր-Սահակյան, Ա. Թունիբեկյան և Վ. Սադոյան)[23]:

1928 թ. վերջին կազմվում են էսէռների բջիջներ Ղամառլուի շրջանում (Արտաշատ) 6 հոգուց կազմված, 1929 թ. փետրվարին Լենինականում (Գյումրի) կոմիտե՝ երկու բջիջներով, 1929 թ. ամռանը Կիրովականում (Վանաձոր) և Նորագավիթ գյուղում:

Ուշադրություն դարձնենք մի կարևոր հանգամանքի վրա, որ Հայաստանի էսէռները գաղտնի տպարան են (ստեկլոգրաֆ) ստեղծել, որտեղ պատրաստում էին հայտարարություններ, թռուցիկներ և այլն: Հայտնի է 1928 թ. նոյեմբերին ՀՍՀԿ կոմիտեի հրապարակած թռուցիկներից մեկի բովանդակությունը, որտեղ ասվում է.

«Խորհրդային Միություն անվանվող բոլշևիկյան պետությունը 150 միլիոնանոց բնակչության համար վերածվել է հսկայական բանտի:

Բոլշևիկները, խոստացված սոցիալիստական դրախտի փոխարեն՝ աշխատավոր զանգվածներին դրել են բոլշևիկյան դժոխքը:

Այսպես շարունակվել չի կարող: Երկիրը դանդաղ և հետևողականորեն կործանման է գնում: Համբերության բաժակը լցվել է:

Իսկական աշխատավորների բանվորա-գյուղացիական կառավարություն ստեղծելու ճանապարհը դա աշխատավորական ժողովրդավարության ճանապարհն է, որին ձգտում է «սոցիալիստ-հեղափոխական» միակ կուսակցությունը:

---

[23] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 26, գ. 34, թ. 9

ՍՀԿ հայաստանյան կազմակերպությունը կոչ է անում բոլոր բանվորներին և գյուղացիներին համախմբվել իր շուրջը և կազմակերպվել հետագա հաղթանակների համար:

Հարկավոր է ճանապարհ հարթել դեպի սոցիալիզմը, իսկ այդ ճանապարհը Խորհրդային իշխանության տապալումով է անցնում:

Կորչեն բոլշևիկները:

Կեցցե սոցիալիզմը:

Կեցցե Հայաստանի բանվորները և գյուղացիները:

Կեցցե Ս-Հ կուսակցությունը»[124]:

Այս փաստաթղթի գոյությունն ասում է այն մասին, որ հնարավոր էր էսէռների գործունեությունը 20-ական թվականներին: Այդ դեպքում հավատ է ներշնչում այն հանգամանքը, որ նրանք իսկապես կարող էին գործել դաշնակցականների հետ, ինչի մասին հիշատակվում է վերոհիշյալ փաստաթղթում, ինչպես նաև՝ նրանք փորձել են կապեր հաստատել Պրահայում գործող Միութենական ՍՀԿ-ի արտասահմանյան պատվիրակության և ՍՀԿ Կենտկոմի հետ և այլն:

1929 թ. այդ կազմակերպության անդամների մի մասը ձերբակալվում է, սակայն, իբր, Կ.Հովհաննիսյանին հաջողվում է քննչական մարմիններին մոլորեցնել և ձերբակալությունից ազատել կոմիտեի պահեստային անդամներին, որոնք շարունակել են իրենց գործունեությունը 1930-ական թվականներին: Որպես ՀամԿ(բ)Կ-ի ներսում քայքայիչ աշխատանքներ կատարելու օրինակ էր քննչական մարմինների համար Երևանի պետհամալսարանի դասախոս, նախկին էսէռ Ս. Մարկոսյանի անդամագրումը ՀԿ(բ)Կ-ին 1930 թվականին:

Նախկինում էսէռ լինելու հանգամանքը դառնում է մեղադրանքներից մեկը հանրապետության այդ տարիների ճանաչված պետական և գիտական գործիչներ Պետիկ Թորոսյանի, Հրանտ Գալիկյանի, Էդուարդ Չոփուրյանի և, հատկապես, այդ կուսակցության նախկին ակտիվ անդամ, հանրաճանաչ իրավաբան Գրիգոր Չուբարի համար՝ իրենց ձերբակալությունից հետո: Սակայն նրանցից և ոչ մեկի գործունեության մեջ իրական փաստեր չեն գտնվել 1920-1930-ական թվականներին որևէ էսէռական աշխատանք տանելու մասին[125]:

---

[124] Նույն տեղում, թ. 10

[125] Տես Ա.Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1933թ.թ., Եր., 1999, էջ. էջ 74, 93, 192, 197-198, Р. Авакян, Памятники армянского права, Ер., 2000, էջ 877-959

Ավելացնենք, որ փաստացի որևէ կոնկրետ գործունեություն չի հիշատակվել նաև նշված ժամանակաշրջանում ռամկավարների կողմից հայաստանում ծավալած «հակախորհրդային, հակահեղափոխական» աշխատանքների վերաբերյալ: Սակայն, արդեն 1930-ականներին ձերբակալված Հովհաննես Հակոբյանի, Եղիազար (Դանչո) Գաբուզյանի, Մելքոն Կարապետյանի և ուրիշների քննությունների ժամանակ չէին մոռացել նրանց նախկինում ռամկավարական կուսակցության անդամ լինելը[126]:

Պատկերն ամբողջացնելու համար նշենք, որ 1922 թ. ինքնալիկվիդացվել էր նաև Անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (ինտերնացիոնալիստներ), որը կազմակերպորեն ձուլվել էր հայկոմկուսին[127]:

Այսպիսով, 1920-ական թվականներին ՀԿ(բ)Կ-ին հաջողվել է քաղաքական ասպարեզից դուրս բերել Հայաստանում գործող իրական և հնարավոր քաղաքական հակառակորդներին: Մասնավորապես, չնայած դիմադրությանը, օգտագործելով իշխանական բոլոր լծակները, վերացվեց դաշնակցականների գործունեությունը Հայաստանում, լիկվիդացվեց և ձուլվեց հնչակյան կուսակցությունը, ամբողջովին ասպարեզից դուրս բերեցին իրական սպեցիֆիկների և էսէռների ոչ մեծաքանակ ներկայացուցիչներին, ինչպես նաև, փաստացի ջախջախեցին ներկուսակցական, թերևս ոչ ուժեղ, սակայն գոյություն ունեցող ընդդիմությունը՝ հանձինս տրոցկիստների և աջ թեքումների ներկայացուցիչների:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ոչ կոմունիստական կուսակցությունները և նրանց անդամները, բացառությամբ ավանդական հնչակյան և ռամկավարական կուսակցությունների, բոլորն էլ, այսպես, թե այնպես, ինչ որ ժամանակահատվածում կապված են եղել հայ իրականության մեջ այդ տարիներին բավականին հեղինակություն վայելող դաշնակցության հետ: Դա իր կնիքն է թողել Խորհրդային իշխանությունների ընդգծված բացասական վերաբերմունքի վրա դեպի այդ կուսակցությունը, որի հետ հակամարտությունը չդադարեց ԽՍՀՄ-ի գոյության բոլոր տարիներին:

20-ական թվականներին ավելի խորացավ խմբավորումների

---

[126] Տես Ա. Մանուկյան, նշված աշխատությունը, էջ, էջ 71, 107, 151

[127] Տես ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 57, թ. 1-2

առաջացումը, մեկը մյուսի դեմ բողոքների հոդումը Անդրերկրկոմ և ՀամԿ(բ)Կ ԿԿ, առիթ տալով, որ առավել լայնածավալ բնույթ ստանան քաղաքական բռնաճնշումները:

գ. Խորհրդային իշխանություն - եկեղեցի հարաբերությունները

Խորհրդային երկրի առաջին դեկրետներից մեկով եկեղեցին անջատվել էր պետությունից, և աթեիստական մոլեռանդությամբ առաջնորդվող տերությունն առանձնապես մտահոգված չէր թաքցնելու իր բացասական վերաբերմունքը դեպի կրոնն ու եկեղեցին: Ճիշտ է՝ հռչակված էր խղճի ազատություն, սակայն պահպանելով արտաքին, ցուցադրական հանդուրժողականությունը, իրականում իշխանություններն անում էին ամեն ինչ կրոնը և նրա սպասավորներին վարկաբեկելու համար:

ԽՍՀՄ-ում իշխանությունների վերաբերմունքը դեպի կրոնն ըմբռնելու համար, մեր կարծիքով, կարևորվում է շատ էական մի հանգամանք: Այն է, որ կոմունիստական գաղափարախոսությունը, որը տեսականորեն ընդգրկում է մարդկության ստեղծած ամենաառաջադեմ հասկացողությունները, այդ թվում կրոնի և հատկապես քրիստոնեության, իր ստեղծման պահից հակադրված էր կրոնին: Կոմունիստական գաղափարախոսության հիմնադիր Կ. Մարքսը ժամանակին գրել է, որ «Կրոնը ժողովրդի ափիոնն է, կրոնի վերացումը, որպես ժողովրդի պատիր երջանկության վերացում, նույն այդ ժողովրդի իրական երջանկության պահանջն է»[128]: Ուստի կոմունիստական գաղափարախոսությունը որդեգրած երկրի առաջնորդները, որոնք բնականաբար չէին հանդուրժում այլ գաղափարախոսական ուղղություններ, առավել ևս անընդունելի էին համարում կրոնական հայացքները:

Ստեղծվել էր մի այնպիսի իրադրություն, երբ, ի տարբերություն քաղաքական հակառակորդների, որոնց համեմատաբար հեշտությամբ էին հաղթում, իշխանությունները ստիպված էին մրցակցել մի գաղափարախոսության հետ, որը խոր արմատներ ուներ ժողովրդի մեջ, և որը, անգամ կտրուկ միջոցներով, չէին կարող արմատախիլ

---

[128] Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Երկեր, հ. 1, Եր., 1985, էջ 456

անել: Այստեղից հասկանալի է դառնում այն երկարատև պայքարը կրոնի դեմ, որ ծավալվեց հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանում, այնուհետև խորհրդային կարգերը հաստատած մյուս հանրապետություններում:

1920 թ. նոյեմբերի 29-ին խորհրդային կարգեր հռչակվեցին Հայաստանում և արդեն դեկտեմբերի 17-ին հրապարակվեց դեկրետ «Հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուրական հիմնարկությունների պետականացման մասին», որով նշված հիմնարկություններն անցան Լուսժողկոմատի տնօրինության տակ[129]: Նույն թվի դեկտեմբերի 31-ին ՀԽՍՀ Լուսժողկոմատի հրամանով արգելվեցին կրոնական առարկաների դասավանդումը և կրոնական ծեսերի կատարումը դպրոցներում[130]: Երկու օր անց բռնագրավվեցին էջմիածնի վանքի շենքերի և ունեցվածքի մի մասը, որոնց թվում ճեմարանի Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի շենքերը և այլն[131]: Իշխանությունների 1921 թ. նոյեմբերի 17-ի որոշմամբ հոգևորականները զրկվեցին ընտրելու և ընտրվելու իրավունքից, իսկ 1922 թ. փետրվարի 2-ին բանվորագյուղացիական պատգամավորների հայաստանյան խորհուրդների 1-ին համագումարում ընդունված սահմանադրության 6-րդ հոդվածով՝ եկեղեցին անջատվեց պետությունից և դպրոցը՝ եկեղեցուց: Դա նշանակում էր, որ եկեղեցին դադարեց իրավական անձի իրավունքից, զրկվեց սեփականություն ձեռք բերելու իրավունքից, որին հետևեցին եկեղեցուն պատկանող շարժական և անշարժ գույքի գրավումներն ու դրանց պետական սեփականություն հռչակելը: Փաստորեն, եկեղեցին կորցրեց իր տնտեսական հիմքը:

1922 թ. սեպտեմբերի 26-ին հրապարակվում է ՀԽՍՀ ԿԳԿ-ի դեկրետը, որով ՆԳԺԿ և Արդարադատության ժողկոմատի կողմից մշակվում ու հրապարակվում է հրահանգ կրոնական համայնքների կազմակերպման ու տոմագրության կարգի մասին, որի աշխատանքների ղեկավարությունը, որպես վարչական ասպարեզի պատկանող ոլորտ՝ տրվում է ՆԳԺԿ-ին[132]: Հարկ է հատուկ ուշադրություն դարձնել այս որոշմանը, քանի որ դրանով Հայաստանում գոր-

---

[129] «Կոմունիստ», 18 դեկտեմբերի 1920թ.
[130] «Կոմունիստ», 4 հունվարի 1921թ. և 6 հունվարի 1921թ.
[131] ՀՀՊԿՊԱ, ֆ. 57, ց. 3, գ. 190, թ. 1 և նույն տեղում գ. 313, թ. 2
[132] «Խորհրդային Հայաստան», 4 հոկտեմբերի 1922 թ.

ծող բոլոր կրոնական կազմակերպությունները, փաստորեն, ընկնում են ՆԳԺԿ-ի հսկողության տակ: Այսինքն, արտաքնապես օրինական տեսք էր տրվում կրոնական միջավայրում այդ հատուկ ծառայության աշխատանքներին:

Այստեղից էլ հասկանալի է դառնում այն, որ իշխանությունների ցանկացած գործողությունները, կապված կրոնական կազմակերպությունների հետ, մինչ1930-ական թվերի վերջերը, կատարվում էին այդ մարմինների անմիջական մասնակցությամբ: Ի նկատի ունենալով, որ տվյալ պետական գերատեսչությունը ուներ աշխատանքի իր հատուկ միջոցները, հարկ է կարևորել այդ մարմնի կողմից կազմված եկեղեցուն առնչվող փաստաթղթերը, հատկապես ընդհանրացնող նյութերը, որոնք բավականին առարկայական են: Առավել արժեք են ներկայացնում այն փաստաթղթերը, որոնք պատրաստվել են մինչև 30-ական թվականները ստալինյան բռնությունների սկիզբը:

Չնայած տվյալ հանգամանքին, կրոնական համայնքների տոմագրության աշխատանքները Հայաստանում դանդաղ էին ընթանում, որի վկայություն է 1926 թ. մարտի 18-ին հրապարակված Արդարադատության և ՆԳԺ կոմիսարիատների «Պաշտպանական հրահանգը» կրոնական համայնքների և նրանց տոմագրության մասին, որով խստացվում էր հսկողությունը այդ գործընթացի վրա և բոլոր կրոնական կազմակերպություններից պահանջվում պաշտոնապես գրանցվել: Այդ հրահանգում, մասնավորապես, նշվում էր, որ «... պաշտամունքի բոլոր շենքերը, այն է եկեղեցիները, տաճարները, մզկիթները, աղոթատները և այլն... համարվում են ժողովրդական (պետական) սեփականություն և միայն տոմագրված կրոնական համայնքները՝ գավգործկոմների հետ հատուկ պայմանագիր կնքելով, կարող են ստանալ իրենց դավանության պաշտամունքի շենքերը...»[133]:

20-ական թվականներին եկեղեցու հանդեպ իշխանությունների վերաբերմունքը առավել ցայտուն էր դրսևորվում Ռուսաստանում, որտեղ ուղղափառ եկեղեցին գտնվում էր անտանելի ճնշման և հալածանքի տակ: Այսպես, միայն 1922 թ. հունվարի 6-ի ՀամԿԳԿ-ի «Եկեղեցական արժեքների առգրավման մասին» դեկրետի հիման վրա, եկեղեցիներից վերցվել էր 18 փթից ավելի ոսկի, 24,7 հազար

[133] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, ց. 1, գ. 2531, թ. 2

փուլ արծաթ, 4 փուլ մարգարիտ, 1 փթից ավելի ադամանդ և ուրիշ թանկարժեք քարեր: Ռուսաստանի ուղղափառ եկեղեցու առաջնորդ պատրիարք Տիխոնը փորձեց բողոքարկել իշխանությունների կողմից տարվող հալածանքների դեմ, սակայն, վերջիններս ավելի սաստկացրին ճնշումը և 1923 թ. մայիսին Համառուսաստանյան եկեղեցական ժողովին ստիպեցին Տիխոնին զրկել պատրիարքի աստիճանից: Այնուհետև նրան ձերբակալեցին:

Նշված տարիներին, բնականաբար, Հայաստանում ևս փակվում էին եկեղեցիները, կողոպտվում էր նրանց գույքը: Հատկապես, նյութական մեծ կորուստներ էր կրում հայ առաքելական եկեղեցին: Այդ մասին է վկայում 1929թ. մարտին ՀԽՍՀ ՆԳԺԿ-ին ուղղված Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի նամակը, որտեղ նա ներկայացրել է Հայաստանի գրեթե բոլոր շրջաններն ընդգրկող բռնագրավված եկեղեցիների մի պատկառելի ցուցակ[134]: Սակայն, այդ ժամանակահատվածում Հայաստանում դեռևս նկատելի չէ ճանաչված հոգևորական գործիչների ֆիզիկական հետապնդում: Հանրապետության իշխանությունների ուշադրությունից չէին վրիպում նաև Հայաստանում գործող մյուս կրոնական հոսանքների ներկայացուցիչները՝ հայ կաթոլիկները, հայ ավետարանականները, ինչպես նաև «7 օրվա ադվենտիստների», մոլոկանների, պրիգունների աղանդների ու մահմեդական կրոնի ներկայացուցիչները:

Առավել ևս, որ այդ ուղղությունների ներկայացուցիչները 20-ական թվականներին բավականին ակտիվ էին: Այսպես, օրինակ, 1924 թ. «Հայ ավետարանականների Արարատյան համայնքը» գյուղացիների մեջ նախաձեռնեց իշխանությունների դեմ բողոքի ելույթներ, որի ժամանակ կոչ էին տարածել, որ հայերի իրական բարեկամները ամերիկացիներն են, ուստի հարկ է ամուր կապեր հաստատել Հայաստանում գործող նրանց ներկայացուցչության՝ Ամերկոմի հետ[135]: Իսկ նույն թվականի հունվարի 12-ին նրանք Ալեքսանդրապոլում կազմակերպեցին «խաչակրաց երթ», որին մասնակցում էին նաև «բանվորների և կարմիր բանակայինների մի քանի անգիտակից տարրեր», ինչպես նաև Ամերկոմի ներկայացուցիչներ[136]:

1925 թ. սկզբին նկատելի է նաև «պրիգունների» աղանդի աշխուժացում գյուղերում: Նրանք բնակչության մեջ քարոզում էին

[134] ՍԱԴ, գ. 25, թ. 1-3
[135] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 220, թ. 31
[136] Նույն տեղում, գ. 152, թ. 58

«Խորհրդային իշխանությունների հակակրոնական և հակաժողովրդական քաղաքականության մասին» և այլն[137]:

Նույն երևույթի մասին են վկայում նաև 1925 թ. աշնանը «Խորհրդային Հայաստան» թերթում տրված հետևյալ գնահատականները, թե հոգևորականությունը գյուղում ունենալով որոշակի հեղինակություն՝ կեղծ լուրեր է տարածում Խորհրդային իշխանությունների, նրա ներքին և արտաքին քաղաքականության մասին և պնդում, որ տնտեսական դժվարություններն անհաղթահարելի են և այլն[138]:

Այդ ժամանակաշրջանում Լենինականի, Ախտայի, Զանգիբասարի և Վեդիբասարի տարածքներում ակտիվացել էին մուսուլմանական կրոնի ներկայացուցիչները, որոնք կապերի մեջ էին Թուրքիայի կրոնական կազմակերպությունների հետ[139]: Նշված շրջաններում հատկապես աչքի է ընկել ոմն մոլլա Սեյիդ, որը զինված պայքարի կոչ էր անում գյուղացիներին[140]:

1927 թ. արխիվային նյութերից մեկում տեղեկություններ կան կրոնական հոսանքների գրանցման մասին: Այսպես, հայ ավետարանական Արարատյան միության հավատի կանոնադրությունը հաստատվել է 1923 թ. դեկտեմբերի 19-ին (նախագահ Միքայելյան). «7-րդ օրվա ադվենտիստներ»-ի համայնքը՝ 1925թ. մայիսի 26-ին (նախագահ Գալաջև), Ազատ եկեղեցական եղբայրության ընկերությունը՝ 1925 թ. դեկտեմբերի 30-ին (նախագահ քահանա Մեսրոբ Մելյան), Հայ ավետարանականց Արարատյան միության Վաղարշապատի համայնք՝ 1926 թ. մայիսի 9-ին (հոգաբարձու Եփրեմ Մկրտչյան), հայկական կաթողիկե համայնքը՝ 1926 թ. հուլիսի 21-ին (նախագահ Բուղանցյան) և այլն[141]:

Ինչպես նկատելի է այդ ցուցակից, 1927 թ. պաշտոնապես դեռ չէր գրանցվել հայ առաքելական եկեղեցին, որը կարելի է բացատրել նաև նրանով, որ վերջինս չէր շտապում մտնել պետական շրջանակների մեջ, իսկ իշխանություններն իրենց հերթին համեմատաբար մեղմ դիրքորոշում էին ցուցաբերում այդ հարցում: Կրոնական

---

[137] Նույն տեղում, գ. 220, թ. 259
[138] «Խորհրդային Հայաստան» 8 սեպտեմբերի 1925թ.
[139] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 85, թ. 379
[140] Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 358, թ. 11
[141] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 7, գ. 229, թ. 19

կազմակերպությունների ընդհանուր վիճակի մասին 1920-ական թվականներին կարելի է պատկերացում կազմել 1925 թ. հունվարի 30-ին ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի «Աղանդավորական շարժման և հակակրոնական պրոպագանդայի մասին» շրջաբերականի կապակցությամբ Հայչեկայի կողմից կազմված ցուցակներից: Ի միջիայլոց, հիշատակենք, որ նշված շրջաբերականում հատուկ շեշտված էր, թե այդ տարիներին, հատկապես գյուղական շրջաններում, աճել էր աղանդավորությունը[142]: Ըստ ՀԽՍՀ ԱՀ-ի կազմած ցուցակների «Հայ գրիգորականները» կազմում էին Հայաստանի բնակչության 35 տոկոսը, նրանց ղեկավարների թիվը 750 էր, ունեին 450 եկեղեցի: «Հայ ավետարանչականներ-բողոքականները» կազմում էին 545 մարդ, ղեկավարները 15, բացի Սամագոր գյուղից, մյուս աղոթավայրերը տներում էին, իսկ համայնքներ ունեին Լենինականի, Երևանի և էջմիածնի գավառներում: «Սուբոտնիկների» թիվը 1097 մարդ, ղեկավարները 10-ը, գործում էին Երևանի, Ն. Բայազետի, ԼոռիՓամբակի և Դիլիջանի գավառներում: «7-րդ օրվա ադվենտիստները» 178 մարդ, ղեկավարները՝ 4, ունեին 2 աղոթավայր և գործում էին Երևանի, էջմիածնի, Դիլիջանի և Զանգեզուրի գավառներում: Մոլոկաններն ու պրիգունները՝ 2752 մարդ, ղեկավարները 39-ը, ունեին 10 աղոթատուն, գործում էին Երևանի, Ն. Բայազետի, Լոռի-Փամբակի և Զանգեզուրի գավառներում: «Ուղղափառ հունական» եկեղեցու հավատացյալների թիվը նշված չէ: Նրանք Լոռի-Փամբակում ունեին 6 հոգևորական և 24 միանձնուհի, 6 եկեղեցի, 2 վանք, Լենինականում՝ 1 հոգևորական և 1 եկեղեցի, Երևանում՝ 2 հոգևորական և 2 եկեղեցի[143]: Սա, իհարկե, այդ տարիներին գործող բոլոր կրոնական հոսանքների մասին ամբողջական տեղեկություն չէ, քանի որ նշված չէ հանրապետության հյուսիսային շրջաններում բավականին ակտիվ գործող հայ կաթոլիկների մասին, սակայն բավականին ստույգ տվյալներ են պարունակում վերը նշված կրոնական ուղղությունների մասին:

Այն, որ կրոնական հարցերը մշտապես գտնվում էին հանրապետության իշխանությունների ուշադրության կենտրոնում նկատելի է նաև 1926 թ. փետրվարի 1-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի գրությունից ՀԿ(բ)Կ ԿԿ-ին, որտեղ նշվում է, որ մի շարք գավառներում Ն. Բայազետ,

---

[142] Նույն տեղում, ֆ. 1, ց. 5, գ. 132, թ. 10

[143] Նույն տեղում, ֆ. 1, ց. 5, գ. 132, թ. 15-21

Դարալագյազ, Լենինական և այլն, լուրջ սխալներ են թույլ տվել կրոնական համայնքների տոմագրության հետ կապված աշխատանքներում, որի հետևանքով «որոշ վայրերում» (Դարալագյազ) չքավոր և միջակ գյուղացիները մեծ մասամբ ցուցակագրվել են համայնքների մեջ և կատարվում են մի շարք առաջարկներ, որոնց թվում նշվում էր, որ տեղական իշխանությունների որոշմամբ և այլ քաղաքական նպատակներով պետք է փակել այն վանքերը և ուխտատեղիները, որոնք կրոնական համայնքների կողմից չեն օգտագործվում և գտնվում են հոգևորականների տրամադրության տակ՝ օգտագործվելով որպես եկամտի աղբյուր: Անխնա պայքարի կոչ է արվում այն կոմերիտականների ու կուսակցականների դեմ, ովքեր ցուցակագրվում են կրոնական համայնքների մեջ և նշվում է, թե նման դեպքեր են եղել Դարալագյազ գավառում:

Այնտեղ կարդում ենք նաև, որ պատասխանատվության պետք է ենթարկվեն Շիրակի թեմի առաջնորդը՝ Արտակ եպիսկոպոս Սմբատյանը, Դիլիջանի գործակալ Գևորգ քահանա Տեր-Գևորգյանը և Նոր Բայազետի վարդապետը, որոնք ապօրինի կարգադրություններ են արել կրոնական համայնքներ կազմակերպելու մասին, ինչպես նաև այն բոլոր քահանաները, որոնք շրջում են գյուղերում ու համայնքներ կազմակերպում, քանի որ նման գործունեությունը և այդ ուղղությամբ ագիտացիան արգելված է: Այնուհետև հիշեցվում է, որ Հայաստանում, ինչպես Ռուսաստանում, բոլոր հոգևորականներն ու հոգևոր մարմինները չպետք է համարվեն որպես կենտրոնական կազմակերպություն, որոնք գլխավորում են ու համախմբում բոլոր կրոնական համայնքները, հավատացյալների խմբերին կամ առանձին հավատացյալներին[144]:

Դարերի պատմություն ունեցող հայ լուսավորչական եկեղեցին, բնականաբար, ամենամեծ ու հեղինակավոր կրոնական ուժն էր Հայաստանում և իշխանություն-կրոն հարաբերություններն առավել արտացոլվում էին այդ եկեղեցու նկատմամբ դրսևորած վերաբերմունքում: 1911 թ. մինչև 1930 թ. հայ առաքելական եկեղեցին գլխավորող Գևորգ Ե կաթողիկոսը միանշանակ չընդունեց խորհրդային իշխանության հաստատումը, որը բացահայտ ժխտողական դիրք էր գրավել դեպի կրոնն ու եկեղեցին: Պատահական չէ, որ 1920 թվականի հայտնի մայիսյան դեպքերի ժամանակ կաթողիկոսը իր մայի-

[144] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 8, գ. 46, թ. 4

սի 14-ի կոնդակում նշում էր, թե անհայտ, անորոշ, մշուշապատ գաղափարներով տարված մարդիկ փոսեր են փորում միացյալ և անկախ հայրենիքին ծանր վտանգներ սպառնող օրերում[145]: Ի պատիվ կաթողիկոսի, չնայած իշխանությունների կողմից տարվող հալածանքներին, հայ առաքելական եկեղեցին մինչև 1930-ական թվականները իր գործուն դերն ուներ հայ իրականության մեջ:

Ռուսաստանում և ԽՍՀՄ-ի մի քանի այլ հանրապետություններում 20-ական թվականներին ընթացող կրոնականների բացահայտ ճնշման գործընթացը ցայտուն դրսևորումներ չունեցավ Հայաստանում: Ճիշտ է, փակվում էին եկեղեցիները, բռնազավթվում նրանց կայքը, հետապնդվում էին առանձին քահանաներ և նույնիսկ բարձրաստիճան հոգևորականներ: Դրա վկայությունն է 1929 թ. մարտի 21-ին Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի ՀԽՍՀ Ներգործժողկոմատին ուղարկված գրությունը, որտեղ նշվում է, որ բռնագրավված են 61 եկեղեցի, Արցախի թեմում 112 եկեղեցուց մնացել է 27-ը, նույն պատկերն է Գանձակի և Նախիջևանի Գողթնյաց շրջաններում[146]: Կամ այն, որ 1929 թ. օգոստոսին դատի է տրվել Սրապիոն եպիսկոպոսը և բազմաթիվ քահանաներ, ծանր հարկերի տակ էին էջմիածնի, Լենինականի եկեղեցիները և այլն[147]:

Հայաստանում ևս փորձում էին տարածել ԽՍՀՄ-ում լայնորեն օգտագործվող անաստվածների շարժումը, որը լինելով ձևականորեն հասարակական, իրականում պետական կազմակերպություն էր, որը ստեղծվել էր 1925 թ. «Բեզբոժնիկ» թերթի ակտիվի շուրջը և կոչվում էր «Մարտնչող անաստվածների միություն»: Ինչպես տեղեկանում ենք Հայաստանում այդ միության խորհրդի հաշվետվությունից, 1929 թ. դեկտեմբերի 1-ից մինչև 1930 թ. հունվարի 1-ը հանրապետությունում գործող նրա 20 հազար անդամներին գումարվել է ևս 23 հազարը, հրապարակվել է 5-6 բրոշյուր և այլն[148]:

Դեռ 1922 թ. մայիսից Ռուսաստանում ուղղափառ եկեղեցու ներսում առաջ էր եկել «նորարարների» կամ «կենդանի եկեղեցու» շարժումը, որն իր մեջ ընդգրկել էր կրոնական գործիչների ու հավատացյալների մի փոքր խմբին: Խորհրդային երկրի համար բնորոշ տրամաբանությամբ, այդ շարժումն իր դրսևորումներն ունեցավ

[145] Վ. Պարսամյան. էջմիածինն ու դաշնակցությունը, Եր., 1931թ., էջ 17
[146] ՄԱԴ, գ. 25, թ. 1-3
[147] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 409, g. 1, գ. 656, թ. 7
[148] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ.1, g. 10, գ.183, թ. 29

բոլոր հանրապետություններում և, իհարկե, ոչ առանց պետության աջակցության: Այդ շարժումն այնքանով էր շահեկան իշխանություններին, որքանով որ հարվածում էր ավանդական եկեղեցիների հիմքին: Ստեղծվում էր ներեկեղեցական ընդդիմություն, որն իր հայտարարություններով կոչ էր անում համակերպվել խորհրդային իշխանության գոյության հետ, գնալ եկեղեցին թուլացնող ներքին բարեփոխությունների՝ թուլացնելով եկեղեցական վերնախավի վիճակը:

Հասկանալի է, որ նման «նախաձեռնություն» չէր կարող չառաջանալ առաքելական եկեղեցու ներսում և հավատացյալների մեջ: Այդ առումով բնորոշ է 1926 թ. ապրիլի 10-ի ՀԿ(բ)Կ էջմիածնի գավառային կոմիտեին հասցեագրված պետքաղվարչության լիազորի գրությունը՝ «1926 թ. ապրիլի 10-ի դրությամբ քաղաքական վիճակի մասին զեկուցումը», որտեղ, մասնավորապես, նշվում է, որ Հայչեկան և ՀԿ(բ)Կ Կենտկոմը «Կենդանի եկեղեցու» գաղափարները տարածելու համար մի շարք միջոցառումներ են ձեռնարկել: Հոգևորականության և գավառներում զանգվածների մեջ աշխատելու համար հոգևորականներից ու աշխարհիկ անձերից կազմված նախաձեռնող խմբեր են ստեղծվել, որոնց պարգևատրում են այդ գործողության համար: Այնուհետև ասվում է, որ մարտի 15-ին հոգևորականներից կազմված նախաձեռնող մի եռյակ, որը դեռևս զբաղված է միայն «ժիվայա ցերկով» ամսագրի տարածումով և գյուղական հոգևորականների մեջ գաղտնի քարոզչությամբ, որի նպատակն է վերջիններիս ներգրավել իրենց շարժման մեջ: Սակայն նշվում է, որ այդ գործողությունը ցանկալի արդյունք չի տվել և Կենտրոնից բազմաբնույթ օգնություն են խնդրում[149]:

Այն, որ իշխանության մարմինների ջանքերը չէին տալիս սպասվող արդյունքները՝ վկայում է 1928 թ. դեկտեմբերի 6-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմին ուղղված Անաստվածների միության Կենտրոնական խորհրդի նախագահ Մ.Սարգսյանի գրությունը, որտեղ նշված է, թե «գաղափարական պայքարը հակակրոնական ֆրոնտում մեր թշնամիների դեմ՝ կրոնական պաշտամունքների, եկեղեցական, վանական ազդեցության և այլն, դեռ թույլ է տարվում, դեռ

[149] Նույն տեղում, ֆ. 6, ց. 1, գ. 277, թ. 66-69

խորացված և ծրագրված չի տարվում, մինչդեռ մեր հակառակորդները հանգիստ նստած չեն, նրանք ոչ միայն դժվար մոմենտներին, այլև անընդհատ տանում են իրենց աշխատանքները մեր դեմ, երբեմն բացահայտ, երբեմն զգույշ և ընդհատակյա և այլն»[150]:

Կրկին անդրադառնալով «Ազատ եկեղեցական եղբայրություն» անունը կրող ներեկեղեցական ընդդիմությանը, հարկ է փաստել, որ նրանք նպատակ էին դրել հայ լուսավորչական եկեղեցին մոտեցնել առաքելական դարերի պարզությանը, մաքրել քրիստոնյա եկեղեցին օտարամուտ սովորություններից, վերականգնել հայերենը և մտցնել կենդանի ժողովրդի կենդանի լեզուն աշխարհաբարը, ազատել եկեղեցին կուսակրոն վեղարավոր վանականներից և դնել հավատացյալների իրավասության տակ, զորացնել եկեղեցու խորհրդային համագումարական վարչաձևը և գործերը վարել դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով, եկեղեցու բարեփոխման գործը թողնել տեղական համայնքներին և այլն: Հայաստանում եկեղեցու բարեփոխման խնդիրը բարձրացրեցին հոգևորականներ Աշոտ եպիսկոպոսը, Բենիկ վարդապետը, քահանաներ Սերոբ Մելյանը, Տեր-Հարությունյանը, Տեր-Պետրոսյանը, Խոյեցյանը և ուրիշներ[151]: Նրանք հրապարակում էին «Ազատ եկեղեցի» ամսագիրը, որտեղ քննադատում էին հայ առաքելական եկեղեցում տիրող վիճակը, փորձում իրենց հայացքները հաստատել նոր հասարակարգի պայմաններում: Սակայն, նրանց ջանքերն ապարդյուն էին: Իշխանությունները օգտագործելով այդ շարժումը նրանց ևս չէին վստահում, քանի որ «իրական կյանքում նրանք այնքան հեռու են, որքան հները», կարդում ենք 1929 թ. ՀԿ(բ)Կ Կենտկոմում կազմված մի փաստաթղթում[152]:

Այդ շարժման ղեկավարներից Աշոտ եպիսկոպոսը, որը վախճանվել է 1927 թվին, իր մահից առաջ նամակ էր հղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե-ին, որտեղ խոստովանում էր իր կատարած քայլի սխալականությունը. «Ազգընտիր Ամենայն Հայոց Հայրապետիդ հանդեպ իմ հանդուգն վերաբերմունքը զգում եմ, որ արտասովոր էր և Հայոց եկեղեցու տարեգրությունների մեջ հազվադեպ: Բայց լիահույս եմ, որ Ձերդ Սրբությունը, Քրիստոսի եկեղեցու Հով-

[150] Նույն տեղում, ֆ. 5, ց. 2, գ. 1238, թ. 80
[151] Նույն տեղում, ֆ. 1, ց. 9, գ. 192, թ. 75
[152] Նույն տեղում, ֆ. 1, ց. 9, գ. 192, թ. 78

վապետին հատուկ, ամենից մեծագույն արժանիքը եղող ներողամտական ոգով, ներողամտություն տալով իմ ծայրահեղ հանդգնությունը և ըմբոստությունը Ձերդ Սրբության հանդեպ, կփութացնե կոչումս վերադարձնելու կարևոր կարգադրությունը...»[153]:

Ուշագրավ է 1925 թ. հունվարին ՀԽՍՀ Արտակարգ Հանձնաժողովի նախագահ Մելիք-Հովսեփյանի, գաղտնի բաժնի պետ Մուղդուսու և լիազոր Ծատուրյանի ստորագրություններով նամակը՝ ուղղված ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարին, որտեղ, մասնավորապես, գրված է. «Ունեցած տեղեկությունների համաձայն ժողովրդի լայն մասսան, հեռու գտնվելով կենտրոնից, չունի ոչ մի հասկացողություն հայ եկեղեցու ներկա քայքայման և եկեղեցական հոսանքների մասին: Այս բացատրվում է նրանով, որ, և նախ նրանց չեն հասնում հրատարակած բրոշյուրները և «Ազատ եկեղեցին» շաբաթաթերթը, երկրորդ և վերջինների կողմից չի տարվում բանավոր դասախոսություն, երրորդ և բոլորովին բացակայում է կազմակերպչական որոշ սիստեմի աշխատանքը, որի հետևանքով ստացվում է տպավորություն, որ այս ամբողջ շարժման ղեկավարն է հանդիսանում քահանա ՄԵԼՅԱՆԸ, որ չունի ոչ կողմնակիցներ և ոչ էլ համակրողներ...»[154]:

Ինչպես արդեն հիշատակվեց, իշխանությունները չէին մոռանում նաև մյուս կրոնական ուղղություններին: Հայ կաթոլիկները հիմնականում գործում էին Հայաստանի հյուսիսային շրջաններում և մինչև 1928 թ. երկու-երեք կետեր են ունեցել Երևանի գավառում: Առավել ակտիվ էր այդ տարիներին բողոքականների հայ ավետարանական համայնքը, որում 1929 թ. հաշվվում էր 5 հազար մարդ, Երևանում՝ 800[155]:

1925 թ. Անդրկովկասում ավետարանական-քրիստոնեական համագումարից հետո, որը տեղի էր ունեցել Թբիլիսիում, Լենինականի համայնքի մի մասը անջատվեց Արարատյան համայնքից և դարձավ ինքնուրույն, որպես կենտրոն ընդունելով Անդրկովկասյան համայնքը: Լենինականի ավետարանական համայնքի նախկին վարդապետ, ժամանակի կրթված անձնավորություններից մեկը, Գերմանիայի համալսարանում ուսանած Ռափայել Մելիք-Ադամյա-

[153] Նույն տեղում, ֆ. 1, ց. 5, գ. 26, թ. 16
[154] Նույն տեղում, ֆ. 1, ց. 5, գ. 26, թ. 3
[155] Նույն տեղում, ֆ. 1, ց. 5, գ. 192, թ. 73

նը Գերմանիայի միսիոներական կազմակերպության առաջարկով սկսում է ղեկավարել Լենինականի համայնքը: Նա և Միհրան Կոտիկյանը կապի մեջ էին այդ երկրի կազմակերպության միսիոներ, հայազգի Արմենակ Պարոնիկյանի հետ, որից պարբերաբար նյութական օժանդակություն էին ստանում: Դա արդեն բավարար էր, որ Մելիք-Ադամյանը 1928 թ. ձերբակալվեր և դատապարտվեր 3 տարվա ազատազրկման՝ մեղադրվելով լրտեսության մեջ[156]:

Այդ տարիներին Լենինականի, Ամասիայի, Արթիկի, Թալինի և Ստեփանավանի շրջաններում իրենց գործունեությունն էին ծավալել հայ կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչներ Տեր-Ալեքսան Հակոբյանը, Տեր-Հակոբ Անտոնյանը և ուրիշներ, որոնք անմիջական կապի մեջ էին և ղեկավարվում էին Կրասնոդարում հաստատված Առաքելական կառավարիչ՝ Ամենայն կաթողիկե հայոց Ռուսիո և համայն Կովկասի Կարապետ Դերլուկյանի կողմից: 20-ական թվերի վերջին Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, խնդիր է բարձրանում հեռացնելու Դերլուկյանին, նոր ղեկավար ընտրել և նստավայրը տեղափոխել Անդրկովկաս: Այդ նպատակով 1928 թ. հունիսի 17-ին Լենինականում տեղի ունեցավ գավառի կաթոլիկ հոգևորականների առաջին խորհրդակցությունը, որտեղ ավտոկեֆալ (ինքնուրույն) դառնալու որոշում կայացվեց[157]:

Այդ տարիներին Հայաստանում գործում էին նաև մուսուլմանական կրոնի հոգևորականները, որոնք, ճիշտ է, մեծ թիվ չէին կազմում, սակայն գտնվում էին Հայաստանի ԱՀ-ՊՔՎ-ի ուշադրության կենտրոնում:

Այսպես, վերոհիշյալ մարմինը, որը պարբերաբար տեղեկություններ էր հաղորդում ՀԿ(բ)Կ ղեկավարությանը հոգևորականների մեջ կատարած իր աշխատանքների մասին, գրություններից մեկում նշում է. «Քանի որ փոքրաքանակ են սունիները և սունիական հոգևորականությունը Հայաստանում, ապա նպատակահարմար չենք գտնում առանձին հատուկ հաղորդագրություն պատրաստել նրանց մասին»[158]:

Ուշագրավ է այն, որ 1920-ական թվականներին ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀԽՍՀ կառավարությանն ուղարկվող իր բազմաթիվ գրություններում ԱՀ-ՊՔՎ մարմինները, երբ ներկայացնում էին հակա-

[156] ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գ. 4194, թ. 33
[157] Նույն տեղում, ԿԳՖ, գ. 9333, թ. 47-48
[158] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 7, գ. 136, թ. 84

խորհրդային գործունեությունը հանրապետությունում, ապա պարտադիր հատված է նվիրված լինում հոգևորականությանը և կրոնին, այսինքն վերջիններիս գործունեությունը միանշանակ համարվում էր հակախորհրդային[159]:

Այսպիսով 20-ական թվերի վերջին Հայաստանում գործում էին մի քանի կրոնական ուղղություններ, սակայն այնուամենայնիվ, հիմնականը մնում էր հայ առաքելական եկեղեցին և իշխանություն-կրոն հարաբերությունները առավել ցայտուն էին երևում հենց այդ եկեղեցու նկատմամբ վարվող քաղաքականության մեջ: Չնայած իշխանությունների հիշատակած կրոնամերժ դիրքորոշմանը, Հայաստանում նկատելի էր որոշակի ոչ ծայրահեղական վերաբերմունքը դեպի էջմիածինը: Դա ավելի ակնառու է համեմատության մեջ, օրինակ, ռուս ուղղափառ եկեղեցու և նրա ղեկավար պատրիարք Տիխոնի նկատմամբ կիրառված բացահայտ բռնությունների լույսի ներքո[160]:

Պատճառները տարբեր են: Նախ, առաջին՝ դարեր շարունակ պետականությունից զրկված հայ հասարակական կյանքի կարգավորողի դերը մեծ հեղինակություն էր ստեղծել Հայոց եկեղեցու համար: Երկրորդ՝ հայերը ունեին բավականին տարածված սփյուռք, որտեղ անչափ կարևորվել էր եկեղեցու դերը, և էջմիածինը, որպես հայ եկեղեցու կենտրոն, վայելում էր մեծ հեղինակություն: Երրորդ՝ չնայած հալածանքներին, հայ առաքելական եկեղեցին զգալի ազդեցություն ուներ հանրապետությունում: Անգամ բռնի միջոցները ի վիճակի չէին ժողովրդին ստիպել երես թեքելու էջմիածնից: Հայաստանի կուսակցական ղեկավարները, մասնավորապես 1930-1936 թվականների ՀԿ(բ)Կ ԿԿ քարտուղար (էջմիածնի հոգևոր ճեմարանի նախկին սան) Ա. Խանջյանը, շատ լավ հասկանում էին հայ եկեղեցու ազգապահպան նշանակությունը, և, չնայած, պաշտոնական փաստաթղթերի ծայրահեղ հակակրոնական ֆրազաբանությանը, աշխատում էին հնարավորության չափ մեղմացնել էջմիածնի դեմ ուղղված հարվածները: Այդ մասին են վկայում դեռևս առաջին աշխարհամարտից առաջ ընտրված կաթողիկոս Գևորգ Ե-ի գործունեությունը, չնայած, նրա հայտնի դաշնակցամետությանը, ինչպես

---

[159] Տե՛ս ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց.3 , գ. 121, գ. 179, գ. 357 և այլն, ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 5, գ. 44, գ. 53, գ. 68, գ. 111-122 և այլն

[160] В. П. Дмитриенко и др., История Отечества, 20в, М., 1995, էջ 168-169

նաև 1932-ին անցկացված կաթողիկոսական ընտրությունների փաստը (Խորեն Ա-ի ընտրության հետ հաշտվելը):

Էջմիածնի հետ պետության ներկայացուցիչների նամակագրությունից և նրանց հանդիպումներից ակնհայտ է իշխանությունների ձգտումը իրենց ձեռքն առնելու Հայոց կրոնական կենտրոնի անուղղակի կառավարումը: Սակայն շնորհիվ կաթողիկոսի ճկուն դիվանագիտության և արտաքնապես հարմարվողական թվացող դիրքին, հայ առաքելական եկեղեցին շարունակում էր կատարել հիմնական առաքելությունը և ամեն հնարավոր միջոցներով տանում էր իր գործը: Այդ առումով, հատկանշական է Ատրպատականի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի շուրջը երկար տարիներ ընթացող պատմությունները: Նրան, սկսած 1922 թվից, ցանկանում էին հանել թեմի առաջնորդի պաշտոնից, որպես խորհրդային իշխանություններին թշնամորեն տրամադրված դաշնակցականի[161]: Այս պատմությունը ձգվում է մինչև 30-ական թվականները: Նրա հետ սոսկ ծանոթությունը դառնում էր բազմաթիվ հոգևորականների բռնադատման առիթ[162]: Խորհրդային իշխանությունների համառ ճնշման տակ Գերագույն Հոգևոր Խորհուրդը, վերջ ի վերջո, ստիպված որոշում է կայացնում Մելիք-Թանգյանին թեմի առաջնորդի պարտականություններից ազատելու մասին, սակայն Իրանի կրոնական համայնքը չի համաձայնվում այդ որոշման հետ և Մելիք-Թանգյանը շարունակում է կրոնական գործունեությունը մինչև իր մահը՝ 1948 թիվը[163]:

Այն մասին, որ խորհրդային իշխանությունները մտադիր էին Թավրիզի թեմի առաջնորդին փոխարինել իրենց նվիրված հոգևորականով, հիշատակվում է նաև ԽՍՀՄ ՄՊՔՎ նախկին ռեզիդենտ Գ. Աղաբեկովի կողմից, որը 1930 թվին փախել էր արտասահման[164]:

Իսկ այն, որ դաշնակցականները Հայաստանում օգտագործում էին նաև եկեղեցական ուղիները, վկայում է Ռ. Մարտիրոսյանը: Նա հայտնում է, որ Իրան-Հայաստան սահմանամերձ գոտում գտնվող Դարաշամբ գյուղի եկեղեցին դարձել էր նրանց հենակետը[165]:

---

[161] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 4, գ. 41, թ. 7

[162] ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գ. 46, 56, 9668, 4226, 9670 և այլն

[163] Մանրամասն տես «Իրան-Նամե», թ. 22-23, 1996-97, էջ 7-8

[164] Г.С. Агабеков, ГПУ-Записки чекиста, Берлин, 1930, էջ 188

[165] Ռ. Մարտիրոսյան, Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Եր., 1986, էջ 16

Եթե սրան ավելացնենք, որ այդ ժամանակների հայ առաքելական եկեղեցու հեղինակավոր ղեկավարներից Խորեն արքեպիսկոպոսը, որը 1930-ին արդեն գլխավորում էր այն, հայտնի էր իր սերտ կապերով Հայաստանի առաջին հանրապետության դաշնակցական ղեկավարության հետ, մտերմական հարաբերություններ ուներ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հետ, ապա այնքան էլ անհիմն չի կարելի համարել ՊՔՎ-ի կասկածները նման համագործակցության նկատմամբ:

Ուշադրություն դարձնենք նաև այն հանգամանքին, որ խորհրդային իշխանությունները, մասնավորապես ՄՊՔՎ-ն, հասնելով Գերագույն Հոգևոր Խորհրդի հիշատակած որոշմանը Մելիք-Թանգյանի մասին, ուրիշ, ավելի «եռանդուն» քայլեր չձեռնարկեց ըմբոստ հոգևորականներին ասպարեզից հանելու համար, որն ավելի բնութագրական կլիներ այդ գերատեսչության համար:

Եվ, վերջապես, չպետք է թերագնահատել այն փաստը, որ անկախ Հայաստանի ղեկավարության պաշտոնական դիրքորոշումից դեպի եկեղեցին և միջազգային հասարակական կարծիքը անտեսող խորհրդային իշխանության այդ ժամանակաշրջանի վարքագծից, 1932 թ. Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսի ընտրությունների թույլտվության և Խորեն Ա-ի ընտրվելու գործում անշուշտ իր նպաստավոր դերն է խաղացել Հայաստանի ղեկավարությունը[166]:

դ. ՀԽՍՀ ԱՀ - ՊՔՎ բռնաճնշումների իրագործման միջոց

Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, չնայած քաղաքական ծանր կացությանը, նախկին կայսրության բոլոր շրջանները, այդ թվում և Անդրկովկասը գտնվում էին իշխանության անցած բոլշևիկյան կուսակցության ուշադրության կենտրոնում: 1920-1921 թթ. սկզբներին Ռուսաստանի իշխանությունների անթաքույց օգնությամբ խորհրդային կարգեր հաստատվեցին նաև Անդրկովկասյան երեք հանրապետություններում, որոնք 1922 թ.

---

[166] Մանրամասն այդ ընտրությունների մասին տես Ս.Ստեփանյանց. Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Եր., 1994, էջ 73-80, էջ 90-97, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. Բ, Եր., 1996

վերջերին միավորվեցին ԱՍԽՖՀ-ի, ապա ԽՍՀՄ-ի մեջ՝ դառնալով հզոր երկրի մասը:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանը իր բոլոր հիմնական գործառնություններում առաջնորդվում և ղեկավարվում էր սկզբում ՌԽՖՍՀ-ի, ապա ԽՍՀՄ-ի (միաժամանակ ԱՍԽՖՀ-ի) կենտրոնական կուսակցության և կառավարման մարմինների որոշումներով և անմիջական ղեկավարությամբ: Բնական է, որ դա առավել ցայտուն նկատվում է ՀԽՍՀ-ի հատուկ ծառայություններից մեկի Արտակարգ Հանձնաժողովի ստեղծումով և գործունեությամբ, որը, փաստորեն, իր հիմնադրման պահից գործում էր որպես մի ընդհանուր կազմակերպության տեղական գերատեսչություն: Ավելին, 1922-1936 թթ., այսինքն Անդրֆեդերացիայի գոյության շրջանում, ինչպես ՀԽՍՀ-ի իշխանության բոլոր օղակների այնպես էլ ԱՀ-ի համար առաջացել էր կրկնակի ենթակայություն, քանի որ վերոհիշյալ ֆեդերացիայի կենտրոնական մարմինները գտնվում էին Թբիլիսիում: Այդ կրկնակի ենթակայությունն առավել շոշափելի էր հատուկ ծառայությունների գործունեության ասպարեզում:

Նկատի ունենալով վերոշարադրյալը, համառոտ անդրադառնանք Ռուսաստանի, հետագայում ԽՍՀՄ-ի հատուկ ծառայության ստեղծմանը, որն իր սկզբնավորման շրջանում կրում էր Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողով (ՀԱՀ - ռուսերեն հապավումը հնչում է ՎՉԿ) անունը:

Մինչ այդ հանձնաժողովի կազմակերպումը, հիմնականում հակահեղափոխական տարրերի դեմ պայքարելու խնդիրներով զբաղվում էր Ռազմահեղափոխական կոմիտեն:

1917 թ. դեկտեմբերի 20-ին Ռուսաստանի ժողկոմխորհրդի նիստում որոշում է կայացվում ՀԱՀ-ի ստեղծման մասին, որի նախագահ է նշանակվում և մինչև իր մահը 1926 թ. ղեկավարում կոմունիստական շարժման ճանաչված գործիչ Ֆ. Ձերժինսկին: Անհրաժեշտ է նկատի ունենալ այն իրողությունը, որ տվյալ մարմնի ստեղծումը, առաջին հերթին, քաղաքական որոշման արդյունք էր և ինչպես նկատելի է նրա առաջ դրված խնդիրներից՝ իր հիմնադրման պահից պետք է քաղաքական խնդիրներ լուծեր:

Այսպես, ՀԱՀ-ին խնդիր էր առաջադրվում 1. հետապնդել և վերացնել Ռուսաստանում հակահեղափոխության և սաբոտաժի բո-

լոր փորձերն ու գործողությունները. ում կողմից էլ որ դրանք կատարվեն, 2. հեղափոխական տրիբունալի դատին հանձնել բոլոր սաբոտաժնիկներին ու հակահեղափոխականներին և նրանց դեմ պայքարի միջոցներ մշակել, 3. հանձնաժողովը կատարում է միայն նախնական քննություն, որքանով այդ անհրաժեշտ է կանխման համար և այլն[167]: Նոր կառույցը պաշտոնապես կոչվեց Հակահեղափոխության և սաբոտաժի դեմ պայքարող համառուսաստանյան արտակարգ հանձնաժողով և նրա առաջին կոլեգիայի մեջ մտան ժամանակի ճանաչված բոլշևիկները. որոնց թվում էր նաև հայազգի Վառլամ Ավանեսովը:

Այստեղ, ՀԱՀ-ի ստեղծման և գործունեության պատմությունը ներկայացնելու խնդիր չունենալով կրկին նշենք, որ այնուամենայնիվ, այդ հարցը էական նշանակություն ունի Հայաստանի հատուկ ծառայության ստեղծման, ձևավորման և աշխատանքների ուսումնասիրման համար, քանի որ վերջինս կատարվում էր նույն սկզբունքներով և Ռուսաստանի համապատասխան մարմինների սկզբում խորհուրդներով, ապա և ղեկավարությամբ: Օրինակ, այդ մարմնի աշխատանքները կազմակերպելու համար արդեն իսկ 1921թ. հունվարին Հայաստան էր գործուղվել ՀԱՀ-ի ճանաչված ղեկավար աշխատակից. Աթարբեկյանը: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ կապված հեղափոխական բուռն տարիների պահանջների հետ, հատուկ ծառայության հիմնական խնդիրներում նույնիսկ բացակայում էին նման գերատեսչությունների աշխատանքի գլխավոր ուղղությունները՝ հետախուզությունը ու հակահետախուզությունը, որոնք, որոշ կարճ ժամանակ անց, բնականաբար, մտան այդ համակարգի գործառնության մեջ:

Ինչպես արդեն նշել ենք, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց մի քանի օր անց՝ 1920 թ. դեկտեմբերի 6-ին, հանրապետության Հեղկոմի դեկրետով ստեղծվեց ՀԽՍՀ Արտակարգ Հանձնաժողովը, որը կազմավորվում էր պայքարելու «հակահեղափոխության, սպեկուլյացիայի և պաշտոնական հանցագործությունների դեմ»[168]:

1921 թ. հունիսին այն կոչվում էր ՀԽՍՀ Հակահեղափոխության,

---

[167] Из истории Всероссийской Чрезвычайной Комиссии, 1917-1921, Сб.документов, Сост. А.К. Гончаров и др, М., 1958, էջ 79

[168] Տե՛ս Н.А.Апиян, Органы Государственной безопастности Советской Армении в период строительства социализма, Ер., 1980, էջ 15

զեղծումների, չարաշահության և լրտեսության դեմ պայքարող Արտակարգ Հանձնաժողով[169]:

ՀԽՍՀ ԱՀ առաջին նախագահ է նշանակվում Այվազյանը, տեղակալ Ամատունին (այլ տվյալներ ԱՀ առաջին նախագահի մասին դեռևս գտնված չեն), 1921 թ. հունվարին այն արդեն ղեկավարում էր ճանաչված հայ բոլշևիկ Շավարշ Ամիրխանյանը (մինչև 1924 թվականը). որի տեղակալն էր Սերգեյ Մելիք-Օսիպովը (1924-1929 թթ. ղեկավարել է այդ համակարգը):

Արդեն 1922 թ. հունիսի 27-ին ՀԽՍՀ ԿԳԿ-ն հաստատում է ԱՀ-ի կանոնադրությունը, որտեղ որպես գլխավոր նպատակներ են դրվում պայքարը հակահեղափոխության և պաշտոնական հանցագործության դեմ, ինչպես նաև լրտեսության բոլոր դրսևորումների (տեղեկատվական, քաղաքական, զինվորական, տնտեսական և այլն), երկաթուղու և սահմանի պաշտպանությունը, նաև պայքարը քաղաքական ու տնտեսական մաքսանենգության դեմ և այլն:

Ուշադրության է արժանի այն, որ 1922 թ. Համառուսաստանյան ԱՀ-ն վերանվանվում է Պետական քաղաքական վարչության (ՊՔՎ), ապա 1923-ին ԺԿԽ-ին կից Միացյալ պետական վարչության (ՄՊՔՎ), սակայն Անդրկովկասում, մասնավորապես Հայաստանում, այն անվանափոխվեց միայն 1926 թ. սեպտեմբերի 3-ին:

Դա պայմանավորված էր նրանով, որ, ի տարբերություն ԽՍՀՄ-ի մյուս հիմնական տարածքների, մինչև 1920-ական թվականների երկրորդ կեսը Անդրկովկասում իշխանությունների համար խիստ արդիական է մնացել պայքարը «հակահեղափոխական տարրերի» և բանդիտիզմի դեմ, որն, ըստ նրանց, պահանջում էր արտակարգ քայլեր, ուստի և Արտակարգ հանձնաժողովը, թե անվանապես, թե իր առանձնահատուկ գործառնությամբ պահպանվեց ավելի երկար ժամանակահատվածում:

Բերենք թեկուզ մեկ օրինակ: 1924 թ. ՀԽՍՀ ԱՀ աշխատակիցների կողմից կազմակերպվեցին և ոչնչացվեցին Բորչալուի, Ղազախի, Դիլիջանի և Լոռու շրջաններում գործող, համագործակցող Հասան Աղայի և գնդապետ Եդիգարյանի «քաղաքական բանդաները»:

Միայն 1924 թ. Հայաստանում տեղի է ունեցել 10-ը հակախորհրդային ելույթ[170]: Դրա հետ էր կապված նաև 1925թ. ՀԽՍՀ ԿԿ-ի

---

[169] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 19, թ. 90

[170] Տես ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 116, ց. 3, գ. 337, թ. 6-16

այն որոշումը, որով ստեղծվեցին ԱՀ Հատուկ Խորհրդակցությունները: Դրանք բաղկացած էին 3 մարդուց, որոնց նշանակում էր ՀԽՍՀ ԿԳԿ-ի նախագահությունը:

Այդ Խորհրդակցություններին իրավունք էր տրվել ՀԽՍՀ-ից մինչև 3 տարի ժամկետով վտարել այն մարդկանց, որոնց նրանք վտանգավոր էին համարում պետության անվտանգության համար:

Ավելորդ չենք համարում ներկայացնել, թե ում կարող էր աքսորել հատուկ խորհրդակցությունը:

Այսպես.

- Բանդիտական հարձակումների, թալանի, ավազակային հարձակումների մեջ կասկածվողներին, ինչպես նաև նրանց օգնողներին այն դեպքում, երբ բացակայում էին բավարար տվյալները նրանց գործերը դատական մարմիններ ուղարկելու համար:
- Որոշակի զբաղմունք չունեցող և աշխատանքով չզբաղվողներին, այսինքն մրցումների, ձիարշավների և խաղատների պրոֆեսիոնալ խաղացողներին, շուլերներին և խարդախներին:
- Ամեն տեսակի որջեր և պոռնկատներ պահողներին:
- Առանց թույլտվության կոկաին, մորֆի, սպիրտ, տնաթոր օղի և այլ կարգի սպիրտ պարունակող նյութեր վաճառողներին:
- Սև շուկայի այն սպեկուլյանտներին, որոնց մասին տեղեկություններ կան, թե սերտ կապի մեջ են սոցիալապես հանցագործ միջավայրի ներկայացուցիչների հետ:
- Նախկինում երկուսից ոչ պակաս մեղադրական դատավճիռ ունեցողներին, այսինքն՝ անցյալում սոցիալական-վտանգավոր գործունեություն վարած անձանց[171]:

Դժվար չէ կռահել, որ Հատուկ խորհրդակցությունները դարձան 1930-ական թվականների վերջերին սահմռկեցուցիչ գործունեություն ծավալած ՆԳԺԿ եռյակի նախակարապետները:

1926 թվականին, երբ ԽՍՀՄ-ում ՊՔՎ-ն անվանափոխվում էր ՄՊՔՎ-ի, այդ ժամանակ էլ անվանափոխվում էր ՀԽՍՀ ԱՀ-ը՝ ՊՔՎ-ի:

1929 թ. մարտից մինչև 1930 թ. հոկտեմբերը ՀԽՍՀ ՊՔՎ-ում ղեկավարների արագ փոփոխություններ են տեղի ունենում: Մեկը մյուսին փոխարինեցին Սեդրակ Մարգարյանը, Հայկ Պետրոսյանը, Սեդրակ Օթյանը, որոնք, ի միջի այլոց, ինչպես և իրենց նախորդած

[171] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 275, թ. 166

Սերգեյ Մելիք-Օսիպովը 1937-1938 թթ. ենթարկվեցին ստալինյան բռնաճնշումներին:

Ինչպես արդեն նշել ենք ՀԽՍՀ ԱՀ-ՊՔՎ-ն առաջնորդվում էր Կենտրոնից և Թբիլիսիից եկած հրահանգներով ու այն օրենսդրական դաշտում, որը ստեղծվել էր ԽՍՀՄ-ում տվյալ մարմինների համար: Ուստի ավելորդ չէր լինի ներկայացնել ընդհանուր բնույթ կրող մի քանի օրենսդրական իրավունքներ ևս, որոնք տրված էին այդ մարմիններին 20-ական թվականների երկրորդ կեսից: Այսպես, 1927 թ. հունիսի 9-ին ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահությունը իրավունք վերապահեց Միացյալ Պետքաղվարչությանը արտադատարանական կարգով քննել սպիտակ գվարդիականների, լրտեսների և բանդիտների գործերը ընդհուպ նրանց նկատմամբ պատժի առավելագույն չափի (գնդակահարություն) կիրառումը: Բանդաների գործողությունների շրջանները հայտարարվում էին հատուկ դրության մեջ և այնտեղ էին ուղարկվում ԿԳԿ հատուկ ներկայացուցիչներ, որոնց իրավունք էր վերապահվում հանրապետությունների դատախազության հետ կազմել եռյակներ և քննել բանդիտների գործերը: Մինչև 20-ական թվականների վերջերն այդպիսի տարածաշրջաններից էր համարվում նաև Անդրկովկասը:

Հատուկ հանձնաժողովների և եռյակների գործունեությունն արդեն հնարավորություն էր ստեղծում քաղաքական բռնաճնշումներ իրականացնելու համար: Դրան նպաստում էին նաև ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում, այդ թվում ՀԽՍՀ-ում իրագործվող քրեական օրենսդրության համապատասխան հոդվածները:

Հատուկ հանձնաժողովները և եռյակները իրենց որոշումները նույնպես կատարում էին հենվելով քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների վրա: Հիմնական մեղադրանքներն ընկնում էին ՀԽՍՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի գլուխ առաջինի «Կոնտրռևոլյուցիոն (հակահեղափոխական - Ա.Մ.) հանցագործություններ» հատվածի տակ (հոդվածներ 58, 58ա, 59, 61, 62, 60, ինչպես նաև 67, 68, 70):

Ինչպես նշված էր Քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածում. «Կոնտրռևոլյուցիոն է համարվում ամեն մի գործողություն, որի նպատակն է տապալել, քայքայել կամ թուլացնել բանվորա-գյուղացիական Սովետների և ՍՍՌ Միության Կոնստիտուցիայի և միութենական կոնստիտուցիաների հիման վրա այդ սովետների կողմից

ընտրված բանվորա-գյուղացիական կառավարությունների իշխանությունը...»:

Ուշադրություն դարձնենք հատկապես հոդված 70-ին. «Ցարական ռեժիմի օրոք կամ կոնտրռևոլյուցիոն կառավարությունների մոտ քաղաքացիական պատերազմի շրջանում վարած պատասխանատու կամ գաղտնի (գործակալական) պաշտոններում բանվոր դասակարգի և ռևոլյուցիոն շարժման դեմ կատարած ակտիվ գործողությունների կամ մղած ակտիվ պայքարի համար»:

Բնականաբար օգտագործում էին նաև հետևյալ հոդվածները 58ա (հայրենիքի դավաճանություն, լրտեսություն), 71 (կոնտրռևոլյուցիոն սաբոտաժ), 74 (բանդիտիզմ), 78 (ազգային կամ կրոնական թշնամություն կամ պառակտում առաջ բերելու նպատակով պրոպագանդա կամ ագիտացիա) և ավելի քիչ նաև այլ հոդվածներ[172]:

Մենք արդեն մասնակիորեն անդրադարձել ենք այն իրողությանը, որ խորհրդային կարգերի հաստատման առաջին օրից քաղաքական որոշումները կայացնում էր իշխանության լծակները վերցրած բոլշևիկյան կուսակցությունը: Բացի քաղաքական ու տնտեսական բնույթի ընդհանուր որոշումներ կայացնելուց, կոմունիստական կուսակցության ղեկավարությունը բազմաթիվ որոշումներ էր կայացնում ամենաբազմազան, ավելի երկրորդական թվացող հարցերով: Անգամ, դեռ մինչև ԽՍՀՄ-ի կազմավորումը, փաստորեն ՌԿ(բ)Կ-ի ղեկավարության որոշումներով էին առաջնորդվում անկախ հռչակված հանրապետությունները: Նման փաստերը շատ են, սակայն հիշենք օրինակ Դաշնակցության և Հնչակների լիկվիդացիայի մասին որոշումները, որոնք կայացրել էին ՌԿ(բ)Կ Կենտկոմում և իրագործվում էին Հայաստանում ու Վրաստանում: Այդ կապակցությամբ, մեր կարծիքով, բավարար է անգամ նշել այն փաստը, որ վերից եկած որոշումը նման տեսք ստանալով ՀԿ(բ)Կ-ում, վերջիններիս կողմից այն կիրառելու հանձնարարությունը դրվում է ՀԽՍՀ ԱՀ-ի վրա: Այդ պրակտիկան շարունակվում է փաստորեն ԽՍՀՄ-ի գոյության ողջ ժամանակահատվածում: Միաժամանակ, լինելով կուսակցության որոշումները կենսագործող իրավապահ մարմին, ՀԽՍՀ ԱՀ-ՊՔՎ-ն անմիջականորեն ղեկավարվում և հսկվում է նաև իր վերադասի՝ ԽՍՀՄ և Անդրֆեդերացիայի համապատասխան մարմինների կողմից: Բերենք թեկուզ մեկ փաստ: Անգամ Դաշնակ-

[172] Տե՛ս Հայկական ՍՍՌ քրեական օրենսգիրք, Եր., 1951

ցականների դեմ պայքարելու թեժ ժամանակահատվածում ՀԽՍՀ-ն առաջարկ է անում այդ գործը Միութենական և Անդրֆեդերացիայի իրավասություններից հանձնել իրենց, քանի որ իրենք առավել լավ են ճանաչում այդ կուսակցությունը ու ավելի լավ կարող են կազմակերպել պայքարը նրանց դեմ: Սակայն ձևավորված հիերարխիան արդեն հաղթահարելն անհնար էր և ԽՍՀՄ-ում գործի դրված մեխանիզմը նման «տեղական» բնույթի հարցերին չէր արձագանքում:

ՀԽՍՀ ԱՀ-ՊՔՎ-ն փաստորեն պարբերաբար տեղեկություններ էր տալիս ՀԿ(բ)Կ-ին իր գործունեության մասին, որն արտահայտվում էր հանրապետության ներքաղաքական իրավիճակի մասին տրվող ամենամսյա տեղեկատվությամբ, այս կամ այն խնդիրներին վերաբերող զեկուցումներով:

ՀԿ(բ)Կ-ի անմիջական հանձնարարությամբ այդ մարմինն աշխատում էր նաև եկեղեցուն առնչվող հարցերով և այլն:

Կուսակցական անմիջական ղեկավարության արտահայտությունն էր նաև այն, որ ԱՀ-ՊՔՎ-ի ղեկավարները մինչև 1930-ական թվականները նշանակվում էին հայ բոլշևիկյան կուսակցության ճանաչված, փորձված անդամներ, որոնք համապատասխան դիրք ունեին նաև Կենտկոմի ու ավելի վերին օղակներում:

Այսպիսով, 1920-ական թվականներին ԽՍՀՄ-ում, բնականաբար և ՀԽՍՀ-ում,ձևավորվում է կոմունիստական կուսակցությանն ամբողջովին ենթարկվող, նրա որոշումներով և հրահանգներով շարժվող պետական բազմաթիվ օղակներից մեկը՝ ՊՔՎ-ՄՊՔՎ-ՆԳԺԿ-ն, որն իր գործառնական պարտականություններից ելնելով՝ որոշիչ դերակատարում ուներ ՀԽՍՀ-ում այդ տարիներին սկսված, հետագայում զանգվածային չափերի հասած, քաղաքական բռնաճնշումների իրագործման մեջ:

Քաղաքական մարմինների որոշումներով գործող ճնշման այդ մեքենան իր կողմից նախաձեռնություն էր ցուցաբերում՝ ցույց տալու իր նվիրվածությունն ու վստահելիությունը: Օգտվելով օրենսդրական դաշտի տրված հնարավորություններից, ինչպես նաև կուսակցական որոշումներով ստեղծված ոչ դատարանական մարմիններին տրված իր արտոնություններից, իրավապահպանության համար ստեղծված այդ մարմինն այնպիսի, բացասական առումով, եռանդ ցուցաբերեց քաղաքական բռնաճնշումներն իրագործելիս, որ նույնիսկ նրա գործունեությունից 60 և ավելի տարիներ անց ժո-

ղովրդի հիշողության մեջ մնացել է որպես տվյալ հանցագործությունների կազմակերպիչ և իրագործող:

Իսկ անօրինական ձերբակալություններ 20-ական թվականներին թույլ էին տալիս ոչ միայն այդ մարմինները: Օրինակ, 1924 թվականին ՀԽՍՀ արդարադատության ժողկոմը գրում էր Կենտգործկոմ, որ Մեղրիի շրջգործկոմի նախագահ Լ. Թովմասյանի կարգադրությամբ, առանց տեղական իշխանության գիտության գաղտնի ժողով գումարելու համար ձերբակալվել են մեղրեցիներ Ա. Ազատյանը, Մ. Մարտիրոսյանը և Ա. Մելիք-Ասլանյանը, որոնց շրջգործկոմի որոշումով ենթարկում են 20 օրվա ազատազրկման, ինչը չի մտնում իրենց իրավասությունների մեջ[173]:

Ըստ ՀՀ ԱԱՆ արխիվի մեր ուսումնասիրությունների հիման վրա արած հաշվարկների՝ 1920-1930 թթ. ԱՀ-ՊՔՎ-ի կողմից քաղաքական դրդապատճառներով դատապարտվել է 1246 մարդ: 1 տարի ազատազրկվել է 52, 2 տարի 98, 3 տարի՝ 545. 5 տարի՝ 87, 10 տարի՝ 14, 15 տարի՝ 1, գնդակահարվել է 44, տարբեր պատճառներով ազատ է արձակվել 301 մարդ և այլն:

Ինչպես նկատելի է վերոհիշյալ արխիվի մեր ուսումնասիրություններից, դատապարտվածների հիմնական մասը գյուղացիներ էին: Այդ համայնապատկերի վրա նկատելի է 51 զինվորականների, 33 ծառայողների, 27 մանկավարժների, 12 հոգևորականների դատապարտումը: Նրանց կարելի է ավելացնել մտավորականությունը ներկայացնող 2 գրողների, 1 գրականագետի, 2 բժիշկների, 1 շրջկոմի քարտուղարի, 1 գյուղխորհրդի նախագահի, 3 սովորողների և այլն:

Ըստ շրջանների դատապարտվածների պատկերը հետևյալն է.

Երևանից՝ 297 մարդ, Գյումրիից՝ 227, էջմիածնից՝ 89, Եղեգնաձորից՝ 58, Գավառից՝ 41, Գորիսից՝ 38, Աշտարակից՝ 33, Դիլիջանից՝ 33, Գառնիից՝ 41, Կապանից՝ 21, Արտաշատից՝ 19, Հոկտեմբերյանից (Արմավիր)՝ 14, Մեղրիից՝ 11 և այլն:

1920-ական թվականներին Հայաստանի ԱՀ-ում, ապա ՊՔՎ-ում վարվող գործերի մեծամասնությունը նախկին դաշնակցական գործիչների կամ ընդհատակյա դաշնակցական կազմակերպությունների անդամների վրա էր: Աչքի են ընկնում նաև մի քանի բանդիտական խմբերի բացահայտման մասին գործերը, ինչպես նաև թուրքա-

[173] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 113, ց. 3, գ. 152, թ. 177

կան հյուպատոսարանի հետ կապերի մեջ մեղադրվող Գ. Խուդոյանի, հայ սպեցիֆիկների առաջնորդ, գրականագետ Դ. Անանունու, տրոցկիզմի մեջ մեղադրվող Կապանի շրջկոմի քարտուղար Ա. Մանուկյանի գործերը: Ուշագրավ են նաև եկեղեցականների նկատմամբ գործերը, որոնց անդրադարձանք վերևում:

Նախ, Հայաստանի ԱՀ-ն փնտրում էր դաշնակցական նախկին ակտիվիստների, ինչը տրամաբանական հետևանք էր փետրվարյան ապստամբության: Այսպես, 1921 թ. ձերբակալվում և գնդակահարվում է ենթասպա Ավետիս Դադայանցը, որը ծառայել է Նժդեհի զորամասերում, եղել Յապոնի (Արմենակ Պարոնյան) ղեկավարած հակահետախուզության ջոկատում[174]:

Նույն ճակատագրին է արժանանում խմբապետ Յապոնը, որին ձերբակալում են 1924 թ. հուլիսին, Զանգեզուրում: Գործի նյութերը պատմում են այն մասին, որ 1918 թ. Յապոնը եղել է Բաքվում, որտեղ գլխավորել է հեծելազորային դիվիզիոն, ապա Հյուսիսային Կովկաս է տեղափոխվել և ծառայել Դենիկինի բանակի հակահետախուզությունում, իսկ վերջինիս ջախջախումից հետո՝ տեղափոխվել է Զանգեզուր, որտեղ սկզբում վաշտի հրամանատար էր, այնուհետև Կապանի ուղղության ռազմաճակատի հրամանատար: 1920 թ. Կարմիր բանակի Զանգեզուր մտնելուց հետո, նրան մի քանի սպաների հետ ուղարկում են Բաքու, որտեղից աքսորում են Նարգեն կղզին: Այնտեղից նա փախչում է և հայտնվում Հայաստանում[175]: Որպես Դաշնակցություն կուսակցության նախկին անդամ, փետրվարյան ապստամբության մասնակից և ընդհատակյա դաշնակցական կազմակերպության անդամ, 1922 թ. երկու տարով հեռավոր Պետրոզավոդսկ է աքսորվում Արմենակ Բաղդասարյանը, իսկ «Խորհրդ. Հայաստանի համար որպես վնասարար տարրեր և Դաշնակցության ակտիվ մարտականներ» ՝ Ռուբեն Թաթոյանը, Արամ Օգանեզովը, Ալեքսան Էլիզբարյանը և Միքայել Օհանյանը՝ 5 տարի ժամկետով[176]:

1922 թ. ամռանը ձերբակալվում և հինգ տարի ազատազրկվում են Դրոյի 2-րդ հայկական կամավորական ջոկատում մարտնչած, մաուզերիստ Լևոն Մելիքսեթյանը, երեք տարի՝ նույն ջոկատի կամավոր, դրոշակակիր Խաչատուր Շահբազյանը և երկու տարի Անդ-

[174] Տես ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 10865
[175] Նույն տեղում գ. 9712, թ. 4
[176] Նույն տեղում, գ. 5871, թ.թ. 15, 96

ռանիկի առաջին հայկական կամավորական ջոկատի վաշտի հրամանատար Հովհաննես Ախեյանը[177]:

Նույն տարի Թբիլիսիում Ջեմալ փաշայի սպանությանը մասնակցելու կասկածանքով ձերբակալվել են 16 մարդ, որոնցից 14-ը ազատ են արձակվել, իսկ Անդրանիկի խմբապետներից Շավարշ Բասենցյանը և Հովհաննես Գյուլխանդարյանը 5 տարով աքսորվել են Ռուսաստան: Նշենք, որ վերոնշած կասկածները տվյալ գործով ձերբակալվածների նկատմամբ չեն հաստատվում[178]:

1924 թ. Երևանում ձերբակալվում են ընդհատակյա դաշնակցական կազմակերպության հինգ անդամներ, որոնցից Զազիկ Բաղրամյանը և Արշակ Սարուխանյանը Երևանի կազմակերպության Կենտկոմի անդամներ էին: Նրանց սկզբում դատապարտում են տարբեր ժամկետների աքսորի (1-ին 5 տարի), սակայն 1925 թ. հունիսին ազատ են արձակում՝ արգելելով 3 տարի ժամկետով բնակվել Անդրկովկասում և ԽՍՀՄ-ի խոշոր քաղաքներում[179]:

1927 թ. նոյեմբերին Էջմիածնի շրջանում ձերբակալվում են 59 մարդ, որոնք մեղադրվում են դաշնակցական ընդհատակյա կազմակերպության մեջ լինելու համար: Նրանցից 5-ին ազատ են արձակում հանցանքի անապացուցելի լինելու, 1-ին՝ սոցիալական դրության համար, 4-ին՝ հաշվի առնելով տարիքը, իսկ մյուսները դատապարտվում են 3-ական տարի աքսորի[180]:

1928 թ. Երևանում բացահայտվում է 12 հոգանոց դաշնակցական կազմակերպություն՝ Միքայել Մելիք-Մուրադովի գլխավորությամբ: Նրան ազատազրկում են 10 տարի, իսկ մյուսներին 3-ից 5 տարի ժամկետներով[181]:

1929 թ. վերջին Երևանում ձերբակալվում են ընդհատակյա դաշնակցական կազմակերպության 35 անդամներ, որոնց ղեկավարն էր Գրիգոր Մոկացին, իսկ դրանցից մի փոքր անց, Էջմիածնի շրջանում 33 մարդ և այլն[182]:

Վերոշարադրվածից հասկանալի է դառնում նաև 1927 թ. հուլի-

---

[177] Նույն տեղում, գ. 77
[178] Նույն տեղում, գ. 3336, թ. 130
[179] Նույն տեղում, գ. 9342, թ.թ. 146, 169
[180] Նույն տեղում, գ. 6923
[181] Նույն տեղում, գ.10827, թ.թ. 145, 154
[182] Նույն տեղում, գ. 5196

սին դաշնակցական բանակի գլխավոր շտաբի հետախուզության և հակահետախուզության նախկին ղեկավար աշխատակիցներ Վահագ Մուրադյանի, Միքայել Դոդոխյանի, Գրիգոր Խաչատրյանի, Գրիգոր Երամովի ձերբակալությունը և երկարատև ժամկետով (10 տարի) դատապարտումը:

1929 թ. հուլիսին ձերբակալվում է 1926-1927 թթ. Կապանի ՀԿ(բ)Կ շրջկոմի քարտուղար աշխատած Արամ Մանուկյանը, որին մինչ այդ 1928 թ. նոյեմբերին, ձերբակալել էին ընդդիմադիր աշխատանքի համար, ապա ազատ արձակել: Նա մեղադրվում էր ակտիվ ընդհատակյա տրոցկիստական գործունեության, հակախորհրդային բնույթի գրականություն ստանալու, պահպանելու և տարածելու մեջ[183]:

1920-ականի սկզբներին, մասնավորապես 1923 թ. գարնանը սահմանը գաղտնի անցնելու փորձ կատարելիս ձերբակալվում են 10 հոգի «ընդհատակյա բանդիտական քաղաքական շայկա», Պողոս Սիմոնյանի գլխավորությամբ: Արժանահիշատակ է, որ այդ խմբի մասին ԱՀ-ը նախնական տվյալները ստացել էր Թավրիզի ռեզինդետուրայից, որտեղից հայտնել էին, որ սահմանը անցնելու են փետրվարյան ապստամբության ակտիվ մասնակիցները: Այս անգամ առավել խիստ էր իշխանությունների վճիռը, և խմբի 2 անդամներ դատապարտվեցին գնդակահարության, իսկ մյուսները՝ 2-ից 5 տարի ազատազրկման[184]:

Այս պատկերի վրա հարկ է նշել, որ բացի քաղաքական բնույթի «բանդիտական» խմբերից, ԱՀ-ն այդ տարիներին վնասազերծում էր նաև իրական բանդիտական խմբավորումներ:

Այսպես, 1924 թ. փետրվարին Բաշ Գառնիում (Գառնի) վնասազերծվում է Արթին (Արտյուշա) Քոչարյանի գլխավորությամբ գործող 11 հոգանոց խումբ, որը դժգոհ լինելով խորհրդային կարգերից՝ կապերի մեջ էր մտել քրեական տարրերի հետ և չէր ենթարկվում խորհրդային իշխանություններին:

Խմբի ղեկավարը սպանվում է մինչև մյուսների ձերբակալությունը. երկուսին դատապարտում են գնդակահարության, երեքին իսկույն ազատ են արձակում, իսկ մյուսներին 3-5 տարի դատապարտելուց հետո ևս ազատ են արձակում[185]:

---

[183] Նույն տեղում, գ. 91, թ. 20-21

[184] Նույն տեղում, գ. 9566, թ. 88

[185] Նույն տեղում, գ. 9180

1928 թ. մայիսին Դարալագյազում ձերբակալվում են Լևոն Բալայանի գլխավորությամբ գործող «ընդհատակյա դաշնակցական կազմակերպության անդամները», որոնք բանդիտական հարձակումներ էին կատարում բնակչության վրա: Այսպես. նրանք հարձակվել էին Դարալագյազի ճանապարհի շինարարության աշխատողների վրա - վիրավորել մեկ երեխայի: Խմբի ղեկավարը և 2 անդամները դատապարտվում են գնդակահարության:

20-րդ դարի առաջին կեսին Հայաստանում տեղի ունեցող հասարակական կյանքի ցնցումներից, բնականաբար, զերծ չմնացին նաև կանայք: Հասկանալի ավանդույթների պատճառներով. հայ կինը, որպես կանոն, ակտիվ մասնակցություն ցույց չի տվել հասարակականքաղաքական կյանքին, սակայն տեղի ունեցող ճակատագրական իրադարձություններն անմիջապես առնչություն ունեին նրանց կյանքի հետ, որպես մայրեր, քույրեր, դուստրեր և, ավելի հազվադեպ՝ ակտիվ մասնակիցներ: Հայտնի է հայ կանանց օժանդակությունն ու մասնակցությունը ֆիդայական և հասարակականքաղաքական շարժումներին:

1920 թ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո, նոր գաղափարախոսությանը համապատասխան, որոշակի դեր էր տրվում կանանց և աստիճանաբար նկատելի է դառնում նրանց ակտիվացումը հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում:

Ըստ ՀՀ ԱԱՆ ԿԳՖ-ի տվյալների նշված տարիներին ձերբակալվել են 41 կին, որոնցից 5 տարի ազատազրկման է ենթարկվել մեկը, 3 տարի՝ տասնմեկը, 2 տարի՝ երկուսը, պատիժները նշված չէ ինը, և ազատ են արձակվել տասնութը:

1921 -1929 թթ., հիմնականում դաշնակցական կազմակերպությունների անդամ լինելու համար, տարբեր ժամկետներով դատապարտվում են Հռիփսիմե Բուդաղյանը, Մարիա Արևշատյանը, Մարիա Պապիլյանցը, Աշխեն Էդիլյանը, Վարդանուշ Գրիգորյանը, Հռիփսիմե Մուշեղյանը և ուրիշներ[186]:

Խորհրդային կարգերի հաստատումից հետո Հայաստանում տեղի ունեցող քաղաքական երևույթներից զերծ չմնացին նաև բժշկության ոլորտի աշխատակիցները: Բնականաբար, քաղաքական մեղադրանքներով ձերբակալվում էին նաև այդ ասպարեզի

[186] Տես ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գգ. 957, 93676, 9888, 13129, 63, 1356

մարդիկ: Ճիշտ է, 1920-1930 թթ. նրանց թիվը այնքան էլ մեծ չէր, մասնավորապես, ըստ ՀՀ ԱԱՆ արխիվի տվյալների նշված տարիներին, հիմնականում դաշնակցական գործունեության մեղադրանքով պատասխանատվության են կանչվել տվյալ ոլորտի 7 ներկայացուցիչ, որոնց մեջ էին Երևանի 4-րդ մանկական հիվանդանոցի բժիշկ Ն. Տեր-Թովմասյանը, Աշտարակի բժիշկ Վ. Նահապետյանը, ատամնաբույժ Ս. Մելիք-Փարսադանովը, բուժակներ Գ. Միխայլովը, Ռ. Մուշեղյանը և ուրիշներ[187]:

Այսպիսով, 1920-ականի վերջերին ԽՍՀՄ-ում տեղի ունեցող հասարակական-քաղաքական զարգացումները նպաստավոր պայմաններ ստեղծեցին Ստալինի միահեծան իշխանությունը հաստատելուն: Անհանդուրժողական պայքարը այլ կուսակցությունների, եկեղեցու, ինչպես նաև ներկուսակցական ընդդիմության դեմ, որին զուգահեռ, օբյեկտիվորեն, առկա էին լուրջ տնտեսական բնույթի խնդիրներ, հանգեցրին քաղաքական բռնաճնշումներին, որը լայն թափ է ստանում սկսված համատարած կոլեկտիվացման ժամանակներից: Քաղաքացիական դաժան պատերազմը առաջացրել էր մի սերունդ, որի հոգեբանությունը զերծ չէր դաժանությունից ու անհանդուրժողականությունից: Ներքաղաքական հակամարտությունը ևս նպաստել էր բարոյա-հոգեբանական անառողջ մթնոլորտի ձևավորմանը:

Այդ տարիներին ԽՍՀՄ-ում գրեթե ձևավորվել է այն քաղաքական-պետական համակարգը, որն 30-ականներին վերջնական տեսք ստանալով իրագործեց զանգվածային բռնաճշումներն երկրում: Հասկանալի է, որ Ռուսաստանի կասրությունում հեղափոխական կտրուկ փոփոխություններին հետևած քաղաքական բռնաճշումներն ունեին իրենց օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, որոնք նաև տեսական-գաղափարախոսական բացատրություն էին պահանջելու հասարակության աչքին դրանք «հիմնավորելու» համար: Դեռ բոլշևիկների առաջնորդ Լենինի կենդանության օրոք, քաղաքացիական դաժան կռիվների ժամանակ, այդ գործողությունները ներկայացվում էին որպես դասակարգային պայքարի անհրա-

[187] Նույն տեղում գգ. 3336. թ.145. 6929. թ.. 121. 49. թ.109, գ.13129, թ. 55. գ.10220, թ. 446

ժեշտ դրսևորումներ, օրինակ, «կարմիր ահաբեկչություն» էր կիրառվում «սպիտակ ահաբեկչության» դեմ և այլն:

Ընդհանրապես, պատմական փորձը ցույց է տալիս, որ ցանկացած հասարակարգում իշխանության կողմից կիրառված, հատկապես, քաղաքական բնույթի բռնաճշումները հետապնդում են մեկ գլխավոր նպատակ. ամրապնդել տվյալ պահին իշխանության լծակներին տիրապետողների դիրքերը՝ վերացնելով դրան սպառնացող իրական կամ ոչ իրական հակառակորդներին: Որպես կանոն, այդ երևույթն առավել մեծ չափեր է ընդունում հասարակարգերի փոփոխությունների ժամանակ, երբ բախվում են հասարակական առավել լայն զանգվածների շահերը: Այդ ժամանակ, ի տարբերություն սովորական, հերթական իշխանական փոփոխության, երբ լուծվում է մեկ անհատի և նրա նեղ շրջապատի խնդիրները՝ տեղի է ունենում արմատական հեղաշրջում ողջ հասարակությանում, իր մեջ ներառելով նրա, գրեթե, բոլոր շերտերին ու խավերին:

Ինչպես հայտնի է, 1917 թ. հեղափոխությունների արդյունքում Ռուսաստանում, ապա ԽՍՀՄ-ում փորձ արվեց անցում կատարել կիսակապիտալիստական, կիսաավատատիրական հասարակարգից դեպի սոցիալիստականը, որի ստեղծման պատմական փորձ չկար: Նպատակ չունենալով խորանալու այդ նոր հասարակարգի անհրաժեշտության մասին տեսական հիմնավորման հաստատման կամ ժխտման խնդիրների մեջ, նշենք այն, մեր համոզմամբ, անժխտելի իրողությունը, որ այդ նոր հասարակարգն իր հեռագնա տեսական նպատակներով ավելի դրական, առաջադիմական հեռանկարներ էր խոստանում հասարակական լայն զանգվածներին, քան կապիտալիստականը և ուներ իր բավականին մեծաքանակ հետևորդներն աշխարհում:

Հասկանալի է, որ հասարակարգի փոփոխությունն, առաջին հերթին, բախում է առաջացնում հնի և նորի ներկայացուցիչների միջև, ինչը Ռուսաստանում ու ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում, հիմնականում, դրսևորվեց միլիոնավոր մարդկանց կյանքը խլած քաղաքացիական կռիվների տեսքով: Տնտեսական և քաղաքական նոր կացութաձևի մուտքը բնական դիմադրության է հանդիպում հնի ներկայացուցիչների, նոր ուղին տանողների տակտիկայի հետ անհամաձայն ուժերի և նորը ներդրողների միջև: Առավելևս, որ այն իրագործվում էր հայտնի ուժային, վարչարարական մեթոդնե-

րով: Այսպիսով, քաղաքական հակամարտության առաջին շարքում են հայտնվում իշխանության լծակներին հասած և նրանց բացահայտ ու գաղտնի դիմադրություն կազմակերպող ուժերը: Այստեղից, վերջիններս դառնում են քաղաքական հետապնդումների առարկա:

Կարծում ենք, քաղաքական բռնաճշումների ուսումնասիրության առումով, հարկ է ուշադրություն դարձնել նաև հետևյալ կարևոր երևույթի վրա: Ցանկացած հեղափոխական ճանապարհով կատարված հասարակական փոփոխություններից հետո մարդկային լայն զանգվածների առաջ հնարավորություն է բացվում տիրանալու, մինչ այդ իրենց համար անհասանելի, իշխանական լծակներին: Անկախ հիմնավորվող նոր գաղափարախոսության տեսական բնույթից, տեղի է ունենում կառավարման բազում աթոռներին տիրանալու համար, մեղմ ասած, մրցակցություն, որն առավել սուր բնույթ է ստանում բացահայտ հակառակորդներին ասպարեզից հեռացնելուց հետո, քանի որ մինչ այդ, օբյեկտիվ անհրաժեշտությունը դրդում է նրանց հանդես գալ միասնաբար:

1917թ. վերջերին Ռուսաստանում իշխանությունն անցավ բոլշևիկյան կուսակցությունը, որը ձևավորվել էր դարասկզբին և ուներ բավականին կուռ և միասնական կառուցվածք, ընդհատակյա պայքարի փորձ և առաջնորդվում էր ժամանակի հասարակական լայն շրջանակների համար գրավիչ գաղափարախոսությամբ: Բնականաբար, անհնար է անտեսել, որ Ռուսաստանում իշխանության եկած ուժերը հայտնվեցին պատմական կոնկրետ, օբյեկտիվորեն առկա և սուբյեկտիվորեն առաջացած ներքին ու արտաքին դժվարին պայմաններում, որոնց հաղթահարումը լուրջ խնդիրներ էր առաջադրում, հասկանալի պատճառներով, նման գործունեության փորձ չունեցող ուժերի առաջ: Այդ խնդիրներից, թերևս, ամենակարևորներից մեկի լուծման փորձ կարելի է համարել բոլշևիկյան կուսակցության առաջնորդ Լենինի նախաձեռնությամբ սկսված ՆԷՊ-ի քաղաքականությունը, սակայն, 1924 թ. նրա մահը ակնհայտորեն խանգարեց կյանքում համոզվելու դրա արդյունավետության մեջ, չնայած դրական որոշ տեղաշարժերը զգացվեցին:

Նրան փոխարինած ղեկավարները 1929 թ. վերջնականապես հրաժարվեցին այդ քաղաքականությունից, ինչը հրաժարում էր ոչ միայն տնտեսական բազմակաթուղածնությունից, այլև գաղափա-

րական հանդուրժողականությունից (բազմակարծությունից): ԽՍՀՄում այդ տարիներին օբյեկտիվորեն առկա տնտեսական - քաղաքական (հատկապես դրսի ուժերի ճնշումը) իրավիճակը սրում էին նաև ներքին գաղափարական, տեսական հակադրությունները: Փաստորեն, արդեն 20-ականներին ձևավորված միակուսակցական ղեկավարման համակարգն իր տրամաբանությունն էր մտցնում տեսական տարածայնությունների մեջ: Այլ կուսակցությունների վերացումից հետո այդ տեսական տարածայնություններն սկսվում են ներկուսակցական կյանքում: Դա առավել սուր բնույթ է ստանում Լենինի մահից հետո, երբ սկսվում է անհաշտ պայքար առաջնորդի թափուր տեղի համար: Այդ հանգամանքներում կարևորություն է ձեռք բերում կուսակցության մեջ իրական լծակներին տիրելու խնդիրը, որը ճարպկորեն իր ձեռքն է վերցնում Ստալինը լինելով կուսակցական ապարատի ղեկավարը: Այդ պաշտոնը Լենինի կենդանության ժամանակ երկրորդական էր համարվում, սակայն Ստալինը հաջողությամբ օգտվելով մարդկանց տարբեր մակարդակի պաշտոններ տալու իր դիրքի հնարավորությունից շուրջն է հավաքում այնպիսի մարդկանց, որոնք այլ հանգամանքներում, անգամ չէին կարող երազել այդպիսի պաշտոնների մասին: Այսինքն, «լենինյան հին գվարդիայի» այն ներկայացուցիչներին (Տրոցկի, Զինովև, Կամենև, Բուխարին և ուր.), որոնք հավակնում էին իշխանության հակադրում է առաջխաղացումով իրեն պարտական և այդ դիրքերը պահելում խիստ շահագրգռված առավել միասնական մի թիմ, որի օգնությամբ հաղթող է դուրս գալիս:

Ուշադրության է արժանի նաև այն, որ Ստալինը կարողացավ հմտորեն օգտվել բոլշևիկյան կուսակցության գաղափարական և կազմակերպչական հնարավորություններից:

Այսպես, օրինակ, 1921 թ. մարտին Լենինի գլխավորությամբ տեղի ունեցած ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարում, երկրում ընթացող սուր ճգնաժամի պայմաններում ընդունվել էր կուսակցության միասնության մասին բանաձևը, որտեղ, մասնավորապես, նշված էր. «Համագումարը առաջարկում է անհապաղ ցրել այս կամ այն պլատֆորմի հիման վրա առաջացած առանց բացառության բոլոր խմբերը և հանձնարարում է բոլոր կազմակերպություններին խստորեն հետևել, որպեսզի թույլ չտրվի ֆրակցիոն ելույթ: Համագումարի այս որոշումը չկատարողներին պետք է անպայման և անհապաղ

վտարել կուսակցությունից»[188]: Այսինքն, այդ բանաձևի ընդունումը հնարավորություն ընձեռեց կուսակցության գլխավոր գծից շեղում հայտարարել մեծամասնության որոշումներին (տվյալ պայմաններում Ստալինին) դեմ արտահայտվող բոլոր կուսակցականներին, ինչը հարմար միջոց էր, հատկապես, առաջնորդությանը հավակնող գործիչներին հալածելու և ճանապարհից վերացնելու, կուսակցության մեջ այլակարծությունը ճնշելու համար: Դա, ինչպես տեսանք, ակտիվորեն գործադրվեց 20-ականներին, իսկ հետագայում «գաղափարական հիմք» ծառայեց քաղաքական բռնաճնշումներ իրագործելու համար: Այդ ժամանակահատվածում նման գնահատականներ տրվեցին տրոցկիզմի, ազգային, աջ թեքումների և ներկուսակցական ընդդիմադիր այլ ուղղությունների ներկայացուցիչներին, որոնց մեղադրեցին «գլխավոր գծից շեղումների» մեջ[189]: Այդ հալածանքները գնալով ընդունեցին ավելի լայնածավալ չափեր, քանի որ վերևից ներքև ընթանում էր «գլխավոր գծի» պաշտպանության համար պայքարը, իրականում, տեղական ղեկավարների և ավելի ցածր օղակներում գտնվողների միջև պաշտոնին, դիրքին միտված «գաղափարական» հակամարտությունները: Ինչպես ներկայացրեցինք, այդ երևույթին նպաստում էին նաև պարբերաբար անցկացվող կուսակցական շարքերի ստուգումները, զտումները, կուսակցական փաստաթղթերի ստուգումները: Միակուսակցական համակարգի ձևավորմամբ, փաստորեն, նպաստավոր պայմաններ են ստեղծվում անհատի պաշտամունքի առաջացման համար, քանի որ կուսակցության կանոնադրությունը, մասնավորապես, դեմոկրատական ցենտրալիզմը՝ մեծ լիազորություններ էր տալիս ղեկավարին, իսկ վերջինս, փաստորեն, պետության իրական կառավարիչ է դառնում: Այսպես, ԽՍՀՄ-ում բոլոր հիմնական, և ոչ հիմնական, քաղաքական, տնտեսական, վարչական, օրենսդրական և այլ բնույթի հարցերը որոշում էր կոմկուսի ղեկավարությունը, քանզի պետության ղեկավարման մյուս օղակները իրականում ձևական, առավելապես, կատարողական բնույթ ունեին և անշեղորեն առաջնորդվում էին կուսակցական որոշումներով: Միաժամանակ, կուսակցության մեջ ձևավորված վերնախավը (ժամանակի հետ առաջին քարտուղարը) դառնում է անքննադատելի, անսխալական, որն,

[188] Տես КПСС в резолюциях и решениях, ч. 1, М.,1954, էջ 527-530
[189] Տես ՍՍԿՊ պատմություն. Եր., 1959. էջ 414

ըստ էության, արտաքուստ պաշտպանելով կոլեկտիվ ղեկավարման պատրանքը, իրականում վերածվում է միանձնյա ղեկավարության: Եթե դրան ավելացնենք կոնկրետ Ստալինի բնավորության բազմաթիվ բացասական գծերը, որոնցից թվենք անհանդուրժողականությունը, կոպտությունը, դաժանությունը, մեծամտությունը և այլն, ապա հասկանալի կդառնա թե ինչ փորձություններ առաջ էր կանգնել ԽՍՀՄ-ի, այդ թվում եւ Հայաստանի բնակչությունը 30 ականների սկզբին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՌՆԱՃՇՈՒՄՆԵՐԸ ԱՄԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ *(1930-1940)*

ա. Ստալինի միահեծան ղեկավարության հաստատումը, բռնաճնշումները ԽՍՀՄ-ում և Հայաստանում հարկադրական կոլեկտիվացման տարիներին *(1929-1935)*

Թվում էր, թե 1930-ական թվականներին պետք է ինչ-որ չափով թուլանար ներքաղաքական պայքարը ԽՍՀՄ-ում:

Ի. Ստալինը կարողացել էր քաղաքական ասպարեզից դուրս բերել իր հիմնական հակառակորդներին և, փաստորեն, 1930 թվականի սկզբներին արդեն իսկ որպես «աջ» կամ «տրոցկիստական աջ թեքում» որակավորված Ն. Բուխարինի, Ա. Ռիկովի և Մ. Տոմսկու դեմ էին պայքարում, որոնք, ըստ էության, այլևս իրական վտանգ չէին ներկայացնում իշխանական ոլորտներում գերիշխող տեղ գրավելու առումով: Սակայն, կարծես թե տրամաբանությանը հակառակ, գաղափարական պայքարը կոմունիստական կուսակցության ներսում ավելի կոշտ և անգիջում բնույթ էր ստանում:

Այդ ոգով էր տոգորված Ի.Ստալինի ելույթը 1930 թվականին տեղի ունեցած ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարում, որտեղ նա նշեց, թե սրվել է դասակարգային պայքարը, ուժեղացել է մահացող դասակարգերի դիմադրությունը խորհրդային իշխանության դեմ[190]: Աջ թեքման ներկայացուցիչներն, ըստ Ստալինի, միայն ձևականորեն էին ընդունում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը մեկ երկրում և չէին համաձայնվում իրենց առաջադրած ճանապարհների հետ: Առավել վտանգավոր էր կարգախոսը. «առաջիկայում էլ շարունակենք անհաշտ պայքարը կուսակցության միջի այն հաշտվողական տարրերի դեմ, որոնք չեն հասկանում երկու ճակատով

[190] Տես Լենինիզմ, քրեստոմատիա, պր. 2, Եր., 1935, էջ 378

վճռական պայքար մղելու անհրաժեշտությունը»[191]:

Ինչպես հայտնի է, 1929 թ. վերջերին սկսված համատարած կոլեկտիվացման խնդիրն էր «գյուղի սոցիալիստական վերափոխումը», որը կատարվեց վարչարարական, բարբարոսական ձևերով և շատ կարճ ժամանակահատվածում: Ագրարային հարցերը տնտեսական միջոցներով լուծելու փոխարեն (դրանց մինչ այդ ինչ-որ չափով նպաստում էր ՆԷՊ-ի քաղաքականությունը), օրապահանջ խնդիրները հաղթահարելու համար, որոնք էին աճող քաղաքներին պարենամթերքով ապահովելը, կիրառվեց բռնի կոլեկտիվացումը: Այն, բնականաբար, հանդիպեց ուժեղ դիմադրության և չկարողացավ վերջնականապես հարթել գյուղատնտեսության մեջ եղած հարցերը: Դրված էր նաև սոցիալիզմի ստալինյան մոդելի համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելու խնդիրը: Այսինքն, առկա էին տնտեսական բնույթի չլուծված բարդ հարցեր, որոնք, բնականաբար իրենց գործուն ազդեցությունն էին թողնում քաղաքական զարգացումների վրա: 1930 թ. սկզբին սկսվում են կուլակաթափման զանգվածային միջոցառումները, ինչն ավելի բացասական է ազդում գյուղի վրա: Միայն 1930-1931 թթ. ԽՍՀՄ-ում կուլակաթափվել և հեռավոր շրջաններ էին աքսորվել ավելի քան 382 հազար գյուղացիական ընտանիքներ[192]:

1930 թ. հունվարի 5-ի ՀամԿ(բ)Կ Կենտկոմի «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարությանը պետության կողմից օգնություն ցույց տալու միջոցառումների մասին» որոշումը ավելի արագացրեց համատարած կոլեկտիվացման ընթացքը և դրա հիման վրա կուլակությանը որպես դասակարգ վերացնելու ուղղությամբ իշխանությունների գործողությունները[193]:

Դասակարգային պայքարի սրման ստալինյան լոզունգի ներքո սկիզբ առան «ժողովրդի թշնամիների» զանգվածային բացահայտումներն ու բռնությունները: Դրան նպաստեց 1930 թ. փետրվարի 1-ի ԽՍՀՄ Կենտգործկոմի և ժողկոմխորհի որոշումը հողի վարձակալման և վարձու աշխատանքի օգտագործման մասին: Դրանով տեղական իշխանություններին վերապահվեց համատարած կոլեկտիվացման վայրերում բռնագրավել կուլակային տնտեսություններ-

---

[191] Նույն տեղում, էջ 385

[192] Տես М. М. Горинов и др., История России,ч. 2, М.,1995, էջ 235

[193] Տես ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում, 2-րդ մաս, Եր., 1955, էջ 840-483

որի արտադրական միջոցները, տնտեսական կառույցները և դրանց տերերին արտաքսել[194]:

Ըստ էության, 1930-ական թվականները դարձան Ի. Ստալինի իշխանության համար պայքարի երկրորդ շրջան: Առաջինը ավարտվել էր 20-ականների վերջերին, և այժմ նա սկսեց քաղաքական ասպարեզից վերացնել բոլոր հնարավոր հակառակորդներին՝ նախկինում մեղա եկած և ներված «տրոցկիստներին», «զինովևականներին», «աջ» և «ձախ» թեքումների , «բանվորական ընդդիմության» «արհմիությունների մասին բանավեճերի» կողմնակիցներին:

Համատարած կոլեկտիվացման տարիներին Ի. Ստալինը դրսևորեց զանգվածային բռնությունների նկատմամբ ունեցած հակումները, որոնք գնալով առավել դաժան արտահայտություններ էին ունենում: Այդ ժամանակաշրջանում մեկ անգամ ևս դրսևորվեց Ի. Ստալինի ունակությունը՝ գտնելու կատարված սխալների «մեղավորներին» և անձնական պատասխանատվությունը ուրիշների վրա բարդելու հմտությունը:

Այսպես, բազմահազար ընտանիքների դժբախտացման գլխավոր դերակատարը 1930 թ. մարտի 2-ին հանդես է գալիս «Գլխապտույտ հաջողություններից» հոդվածով, որտեղ խիստ քննադատեց տեղական մարմիններին կոլեկտիվացման գործում թույլ տված սխալների համար[195], իսկ նույն թվականի մարտի 14-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը նման ոգով որոշում ընդունեց. «Կոլտնտեսային շարժման մեջ կուսակցական գծի շեղումների մասին», որով պահանջվում էր վերջ տալ բռնի մեթոդներով կոլեկտիվացման պրակտիկային:

1934 թ. հունվարին կայացած ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարում Ի. Ստալինը հայտարարում է. «Եթե 15-րդ համագումարում հարկ էր լինում դեռևս ապացուցել կուսակցության գծի ճշտությունը և պայքար մղել հակալենինյան որոշ խմբավորումների դեմ, իսկ 16-րդ համագումարում վերջնականապես ջախջախել այդ խմբավորումների վերջին կողմնակիցներին, ապա այս համագումարում և ապացուցելու բան չկա ու **թերևս հարվածելու մարդ էլ չկա** (ընդգծումը մերն է - Ա. Մ.)», ապա նշում է, թե դա չի նշանակում, որ գաղափարական պայքարը ավարտված է, քանզի «կուսակցության թշնամիների գաղափարախոսության մնացորդները դեռ ապրում են»[196]:

[194] Հայ ժողովրդի պատմություն, հ.,7, եր., 1967, էջ 297-298

[195] "Правда" 2 марта 1930

[196] Լենինիզմ, քրեստոմատիա, պր. 2, եր.,1935, էջ 394-395

Ստալինի ելույթը տրամադրում էր փնտրելու նոր թշնամիներ. և ճակատագրի դառը բերումով այդ «թշնամիների» շարքում հայտնվեցին նաև նշված համագումարի 1961 պատգամավորներից 1108-ը, և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի կազմում ընտրված անդամներից 98-ը (70 տոկոս)[197]:

Վերոհիշյալ գաղափարական առճակատմանը զուգահեռ անց էին կացվում կուսակցության շարքերի զտման (1933 թ.) կուսակցական փաստաթղթերի ստուգման և փոխանակման (1935-1936 թթ.) կամպանիաներ, որի ընթացքում, անհիմն տուժում էին բազմաթիվ մարդիկ, ինչպես նաև, սկսվել էին ցուցադրական, քաղաքական դատական պրոցեսները:

ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարի աշխատանքները վերագնահատելիս կարելի է անել հետևյալ եզրակացությունը. այդ օրերին Ի. Ստալինը զգաց, որ մենատիրական իշխանությունը հաստատելու ճանապարհին կարող են առաջանալ լուրջ խոչընդոտներ: Մասնավորապես, արդեն հայտնի է, որ այդ համագումարի որոշ մասնակիցներ Ս. Կիրովին առաջարկել են ստանձնել առաջին քարտուղարի պաշտոնը, որից նա հրաժարվել և այդ մասին իսկույն տեղյակ է պահել Ի. Ստալինին: Փաստ է նաև այն, որ մոտ 300 պատգամավորներ դեմ էին քվեարկել Ի. Ստալինի թեկնածությանը Կենտկոմի կազմում, որի մասին ևս նա չէր կարող տեղյակ չլինել[198]:

1934թ. դեկտեմբերի 1-ին Ս. Կիրովը սպանվում է Լենինգրադում (Ս. Պետերբուրգ): Որոշ հետազոտողներ փորձել են փաստեր գտնել, թե այդ սպանությունը կազմակերպվել է Ի. Ստալինի կողմից, սակայն, վերջերս բավականին համոզեցուցիչ փաստեր հրապարակվեցին, որոնք ապացուցում են այն իրողությունը, որ նրա սպանությունը տեղի է ունեցել խանդի հողի վրա, կուսակցությունից դժգոհ անձնավորության կողմից: Բոլորովին չանտեսելով Ի. Ստալինի բնավորությանը հատուկ նման գործողություն կազմակերպելու հակումները՝ հարկ է ուշադրություն դարձնել այն իրողությանը, որ այդ ժամանակ Ս. Կիրովը համարվում էր Ի. Ստալինի ամենանվիրյալ կողմնակիցներից մեկը, որին վստահել էր կուսկազմակերպության Լենինգրադյան մարզի հայտնի «մաքրումները»: Այլ խնդիր է,

---

[197] М. М. Горинов и др., История России, т 2, М., 1995, էջ 247

[198] Д. Волкогонов, Триумф и трагедия: И. В. Сталин, политический портрет, кн. 1, ч. 2, էջ 95

որ Ի. Ստալինը, արագ կողմնորոշվելով՝ այդ սպանությունը օգտագործեց իր անձնական շահերին: Ս. Կիրովի սպանությունը վերագրեցին աջ-տրոցկիստական կենտրոնին և դա ազդանշան դարձավ ԽՍՀՄ-ով մեկ զանգվածային բռնությունների համար, որն իր գագաթնակետին հասավ 1937-1938 թթ.: Ըստ վերջին ուսումնասիրությունների, 1937-1938 թթ. բռնադատվել է 1,4 մլն. մարդ[199]: ՍՄԿԿ 20-րդ համագումարի նախօրյակին ստեղծված Պ. Պոսպելովի հատուկ հանձնաժողովը իր հաշվետվության մեջ նշել է, որ 1935-1940 թթ. երկրում հակախորհրդային գործունեության մեղադրանքով ձերբակալվել են 1 մլն. 635 հազար մարդ, որոնցից 688 հազար 503-ը գնդակահարվել է[200]:

1920-30-ական թվականների ԽՍՀՄ պատմությունը ներկայացնելն ամբողջական և անաչառ չի լինի, եթե հաշվի չառնենք, որ այդ տարիներին երկիրը ուներ լուրջ տնտեսական և քաղաքական խնդիրներ: Արդյունաբերության ու գյուղատնտեսության վերականգնումը հսկայական կամք ու ջանքեր էր պահանջում, որին իսկապես խանգարում էին թե դրսից, թե ներսից: Հեղափոխությունն ապրած, քաղաքացիական կռիվներին ու օտարերկրյա ինտերվենցիային դիմակայած երկիրը օբյեկտիվորեն ձգտում էր դեպի «ուժեղ» ձեռք, որի ներկայացուցիչներն էին իշխանության երկու գլխավոր հավակնորդները՝ Ի. Ստալինը և Լ. Տրոցկին: Առկա էր նաև արտասահմանից հրահրվող ընդհատակյա կազմակերպությունների գործունեությունը[201]: Այդ ամենը նպաստում էր Ի.Ստալինին հաստատելու մենատիրությունը, որը խիստ համընկնում էր նրա բնութագրին տրված դեռևս Վ. Լենինի կողմից[202]:

Հարկ է անդրադառնալ մի կարևոր հարցի ևս: Տվյալ ժամանակաշրջանում իշխող կուսակցությունը կոշտ վերաբերմունք էր ցուցաբերում նաև տարբեր հանրապետություններում, այսպես թե այնպես, արտահայտվող ազգային դրսևորումների նկատմամբ: Օրինակ, վերոհիշյալ 1934 թ. ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարում Ի.Ստալինը իր զեկուցման մեջ հատուկ տեղ էր հատկացնում Ուկրաինա-

---

[199] Տես В. П. Дмитриенко и др., История отечества, 20в., М., 1995, էջ 246.
[200] Նույն տեղում, էջ 433
[201] Տես Д. Голинков, Крушение антисоветского подполья в СССР, кн. 2, М.,1986, էջ 266-339
[202] Տես ՍՄԿՊ պատմություն, Եր., 1959, էջ 450

յում բացահայտված Սկրիպնիկի ազգայնամոլական խմբին, որը բնութագրում է որպես թեքում դեպի «ուկրաինական նացիոնալիզմը», և խնդիր է դնում պայքարել բոլոր ուղղությունների ազգայնամոլական թեքումների դեմ, քանի որ, եթե դադարում է պայքարը դրանցից որևէ մեկի նկատմամբ, ապա հնարավորություն է ընձեռնվում, որ դրանք աճեն և դառնան պետական վտանգ[203]: Դրանով, փաստորեն, հրահանգ էր տրվում բոլոր հանրապետություններին փնտրելու և գտնելու նման «պետական վտանգ» ներկայացնող հայացքներ կրողներին և այդ տարիների համար ընդունված միջոցներով՝ ճնշել: Այսպես, օրինակ, 1937-1938 թթ. Բելառուսում բռնաճնշումների են ենթարկվում 85 հազար «ընդդիմախոսներ և նրանց մտերիմներ»[204]: Նույնը կատարվում էր և մյուս հանրապետություններում:

Ս. Կիրովի սպանությունից հետո, դեռևս 30-ականների սկզբներին սկսված քաղաքական դատավարություններն ավելի մեծ թափ են ստանում:

Արդեն 1934 թ. դեկտեմբերի 28-29-ին տեղի ունեցավ փակ դատավարություն, որտեղ մեղադրվելով դեկտեմբերի 1-ին Ս. Կիրովի սպանությունը կազմակերպելու և իրագործելու մեջ՝ գնդակահարվեցին «զինովևական կենտրոնի» 431 անդամներ: Ձերբակալվեցին իբրև թե այդ կազմակերպության «Մոսկովյան կենտրոնի» 19 անդամները, որոնց թվում Զինովևը և Կամենևը, որոնք 1935 թ. հունվարի 16-ին կայացած դատավարության ժամանակ «խոստովանեցին», թե իրենց նախկին գործունեությունը կարող էր նպաստել նման երևույթների հանդես գալուն և դատապարտվեցին 5 - 10 տարի ազատազրկման: Հունվարի 23-ին դատապարտվեցին ՆԳԺԿ Լենինգրադի բաժնի 12 աշխատակիցներ:

1936 թ. օգոստոսին տեղի ունեցավ առաջին Մոսկովյան դատավարությունը, որտեղ մահապատժի դատապարտվեցին Զինովևը, Կամենևը, Բակաևը, Սմիռնովը, Տեր-Վահանյանը և մյուսները: Տոմսկին, որի անունը տվել էին դատավարության ժամանակ՝ ինքնասպանություն գործեց:

1937թ. հունվարին սկսվեց երկրորդ Մոսկովյան դատավարությունը և 13 «տրոցկիստական-զինովևական կենտրոնի» անդամներ

---

[203] Լենինիզմ, քրեստոմատիա, պր. 2,Եր., 1935, էջ 379

[204] Տես Э. Радзинский, Сталин, М., 1997, էջ 422

դատապարտվեցին մահապատժի, իսկ 4-ը՝ երկարաժամկետ բանտարկության:

1937 թ. ՀամԿ(բ)Կ փետրվարյան-մարտյան պլենումի աշխատանքների ժամանակ ձերբակալվեցին Բուխարինը և Ռիկովը, որոնք 1938 թ. մարտին՝ երրորդ մոսկովյան դատավարության արդյունքում, Կրեստինսկու, Ուզբեկստանի ղեկավարներ Հիկրամովի, Խոջաևի, ՆԳԺԿ նախկին ղեկավար Յագոդայի և ուրիշների հետ՝ մահվան դատապարտվեցին:

Ուշադրություն դարձնենք 20-ական թվականներից սկսած քաղաքական պայքարի ընթացքում նկատելի մի ընդհանրական երևույթի վրա: Դրա ընթացքում ընդդիմությունը երբեք նպատակ չի դրել քայքայելու կոմկուսի միասնությունը, կամ պայքարելու նրա դեմ, ինչից հմտորեն օգտվում էր Ի. Ստալինը:

1937-1938 թթ. փոխվեց Ուկրաինայի Կ(բ)Կ ԿԿ ողջ կազմը: Ոչնչացվեցին ՀամԿ(բ)Կ Քաղբյուրոյի անդամներ Չուբարը, Էյխեն, Կոսիորը, Ռուձուտակը, Պոստիշևը: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 139 անդամներից՝ 98-ը: Բռնաճնշումների ահագնացած ալիքն իր մեջ առավ ԽՍՀՄ բոլոր հանրապետություններն ու բնակչության բոլոր խավերին ու շերտերին:

ԽՍՀՄ հանրապետություններից մեկը՝ Հայաստանը, բնականաբար, ապրեց վերը նշված իրադարձությունները՝ կրելով ստալինյան քաղաքականության բոլոր դրսևորումները:

Հարկ է հիշատակել, որ Հայաստանում դաշնակցական կուսակցության առաջնորդությամբ հռչակված և շուրջ երկուսուկես տարի գոյատևած առաջին հանրապետության փաստը, ապա հայտնի պատճառներով նրա փոխարինումը Խորհրդային Հայաստանով, իր խոր հետքն է թողել 20-30-ականների Հայաստանի քաղաքական կյանքի վրա, և դա այնպես էր ներկայացվում, որ, իբր, դաշնակցության «վտանգը» խորհրդային իշխանության համար առկա էր և առարկայական նաև 30-ական թվականներին:

Մյուս յուրահատկությունն այն է, որ հայազգի քաղաքական գործիչները ակտիվ մասնակցություն էին ցույց տվել Ռուսաստանի հեղափոխական, քաղաքական կյանքին և, բացի ակտիվ ու հայտնի բոլշևիկներից, ճանաչված գործիչներ ունեին էսէռների, մենշևիկների և այլ կուսակցությունների մեջ, որոնք հետագայում որակավորվում էին որպես հակախորհրդային: Տրոցկիստական շարժման մեջ

աչքի էր ընկնում Վաղարշակ Տեր-Վահանյանը, որին ՀամԿ(բ)Կ 15-րդ համագումարին հեռացրեցին կուսակցության շարքերից, ապա, ինչպես հիշատակեցինք, 1936 թ. Զինովևի, Կամենևի և մյուսների հետ դատապարտեցին գնդակահարության: Նույն ճակատագրին արժանացավ Սապրոնովի խմբի անդամ Ն. Զավարյանը[205]: Ժողովրդի թշնամի հայտարարված Ա. Ռիկովի հետ բավականին երկար աշխատել էր Ս. Տեր-Գաբրիելյանը և այլն:

Հայ ժողովրդի զավակները-ճակատագրի բերումով ստիպվել էին ԽՍՀՄ-ի գրեթե բոլոր հանրապետություններում, նրանցից ոմանք բարձր կուսակցական և պետական պաշտոններ էին գրավում: Ցավոք, օբյեկտիվ պատճառներով հնարավոր չէ ամբողջությամբ ներկայացնել Ադրբեջանում, Վրաստանում, Ռուսաստանում, Միջին Ասիայի հանրապետություններում բնակվող հայերի նկատմամբ կիրառված ստալինյան բռնաճնշումների ամբողջ պատկերը: Անդրադառնանք մեր ժողովրդի ճանաչված գործիչներից մի քանիսի ճակատագրին, որը, այսպես թե այնպես, իր ազդեցությունն էր ունենում Հայաստանում ծավալված հասարակական-քաղաքական իրադարձությունների վրա:

Այդ առումով խիստ ուշագրավ է ակադեմիկոս Հ. Ավետիսյանի անդրադարձը ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարի հայ պատվիրակների ճակատագրին[206]: Այդ «հաղթողների» համագումարին մասնակցում էին ԽՍՀՄ 19 կուսակցական կազմակերպություններից ընտրված 59 հայ պատգամավորներ, ներկա էին Միության կենտրոնական կազմակերպություններում աշխատող ևս 2 հայ կոմունիստ:

Հայաստանից մասնակցում էին 15 պատգամավորներ, որոնց ճակատագրին կանդրադառնանք ստորև:

1936-1938 թթ. ՀամԿ(բ)Կ ղեկավար մարմիններում ընտրված 8 հայերից բռնադատվեցին 7-ը (կենդանի մնաց միայն Ա.Միկոյանը, որն ընտրվել էր ՀամԿ(բ)Կ քաղբյուրոյի անդամ): Նրանք էին՝ ՀամԿ(բ)Կ ԿԿ անդամ, Ղազախստանի Կ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Լևոն Միրզոյանը (նախկինում եղել է նաև Ադրբեջանի Կ(բ)Կ առաջին քարտուղար), ՀամԿ(բ)Կ ԿԿ թեկնածու, Ուկրաինայի Կ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի անդամ, Դոնեցկի նահանգային կոմիտեի առաջին

[205] Տե՛ս КПСС в резолюциях и решениях, ч. 2, М.,1954, էջ 490

[206] Տե՛ս «Լենինյան ուղիով», թ.թ. 5,6,1990, ԽՍՀՄբռնաճնշումների ենթարկված հայերի մասին տե՛ս նաև К. А. Заленский, Империя Сталина, Биогрофический энциклопедический словарь, М., 2000,էջ, էջ 211, 298, 332 և ուր.

քարտուղար Սարգիս Դանիելյանը (Սարկիսով), ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ի անդամ, ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին կից Լենինգրադյան նահանգի գծով ԿՀՎ-ի նախագահ Ռուբեն Մկրտչյանը (Ռուբենով), ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ի անդամ, Տաջիկստանի Կ(բ)Կ ԿԿ-ի առաջին քարտուղար Սուրեն Շադունցը, Խորհրդային վերահսկիչ հանձնաժողովի նախագահության անդամ Հմայակ Նազարեթյանը, Խորհրդային վերահսկողության հանձնաժողովի զինվորական խմբի ղեկավար Գրիգորի Խաչանյանը:

Նշված համագումարի մասնակից և Հայաստանից դուրս աշխատող հայերից բռնաճնշումների ենթարկվեցին նաև այլ հանրապետություններում ղեկավար աշխատանքներ կատարող Արտակ Ստամբոլցյանը (Ուկրաինա), Սերգեյ Հարությունովը (Վրաստան), Պյոտր Հարությունյանցը (Մոսկվա), Երվանդ Ասրիբեկովը (Ռուսաստան), Անդրեյ Վանյանը (Ուկրաինա), Ստեփան Վարդանյանը (Ռոզին) (Տագանրոգ), Արտյոմ Գեուրկովը (Աջարիա), Իվան Կասպարովը (Լենինգրադ), Գեորգի Թովմասյանը (Ղարիբ, Միջինասիական Ե-Գ-ի քաղբաժնի պետ), Գեորգի Կուրուլովը (Վրաստան), Պապիկ Մկրտչյանը (Լուգանսկ), Նիկոլայ Հովհաննիսյանը (Ուզբեկստան), Պյոտր Սաղոյանը (Ռուսաստան), Ռաֆայել Խիտարովը (Չելյաբինսկ), Վահան Շահգելդյանը (Շահ-Գիլդյան) (Սվերդլովսկ). Գրիգորի Ասրիևը (Ղազախստան), Համո Վարդանյանը (Գորկի), Վահան Բալյանը (Մոսկվա), Մարիա Կասպարովան (Ուկրաինա), Լ. Կարախանյանը (Կարախան) (1927-1937 թթ. ԽՍՀՄ ԱԳ ժողկոմի տեղակալն էր), Մուշեղ Տեր-Եղիազարյանը (Մոսկվա):

Այդ տարիների բռնաճնշվածների մեջ էին նաև լեգենդար զորահրամանատար Հայկ Բժշկյանցը (Գայ), ԽՍՀՄ հատուկ ծառայությունների արտաքին հետախուզության հիմնադիր Յակով Դավթյանը. Պլեխանովի անվան ժողտնտեսության ինստիտուտի ռեկտոր Արտաշես Խալաթովը, Բաքվի Ազնավթկոմբինատի ղեկավար աշխատակից Սերգեյ Պետրոսյանը, Կոմինտերնի գործադիր կոմիտեի կադրերի բաժնի վարիչ Գևորգ Ալիխանյանը, Հեռավոր Արևելքի անվտանգության մարմինների ղեկավար աշխատակից Սուրեն Արշակունին, Նովոռոսիյսկի քաղաքային կոմիտեի քարտուղար Հովհաննես Բաննահյանը, Անդրֆեդերացիայի ֆինանսների ժողկոմ Վահան Երեմյանը, ՀամԿ(բ)Կ ԿԿ կազմբաժնի պատասխանատու հրահանգիչ Սուրեն Հակոբյանը, ԽՍՀՄ միլիցիայի վարչության պետի տեղակալ Սեդրակ Մարգարյանը և ուրիշներ:

Սա վկայում է այն իրողությունը, որ հայերը, ԽՍՀՄ մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ բռնադատվում էին նաև Հայաստանից դուրս:

30-ական թվականների սկզբին ԽՍՀՄ-ում, բնականաբար, նաև Հայաստանում, ծավալվեց համատարած կոլեկտիվացման շարժումը, որի ընթացքում ծայր առան զանգվածային հայտնի բռնությունները: Դրանք, որոշ ընդմիջումից հետո, առավել լայն և դաժան բնույթ ստացան 1937-1938 թթ.: Չնայած այն հանգամանքին, որ ԽՍՀՄ-ում 30-ականների բռնաճնշումների քանակի գնահատականը չափազանց տարբեր է, սակայն ըստ վերջին տարիների հրապարակումների, որոնք հենվում են արխիվային տվյալների վրա, այդ թիվը կազմում է 6-7 մլն. մարդ[207]:

Հայաստանում 1929-ին սկսված համատարած կոլեկտիվացման շարժումը նույնպես ընթանում էր բռնի, վարչարարական միջոցներով: ԽՍՀՄ-ով մեկ դիմադրությունն այնքան լուրջ էր, որ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նախաձեռնությամբ որոշակի քայլեր էին կատարվում դրա հետևանքները մեղմելու ուղղությամբ: Դրան համահունչ, 1930 թ. ապրիլի 10-ին ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը որոշում է կայացնում «Կոլտնտեսային շարժման սխալների մասին», նույն ոգով 1930 թ. ապրիլի 15-ին որոշում է կայացնում ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը[208]: Իրականում առկա էր այդ անհանգստությունը, քանի որ Հայաստանում ևս համատարած կոլեկտիվացումն ընթանում էր սխալներով և այդ գաղափարի խեղաթյուրումներով: Այսպես, 1930 թ. հունվար ամսվա ընթացքում կոլեկտիվացումը 4,6-ից հասել էր 33,5 տոկոսի, իսկ փետրվարի հինգ օրվա ժամանակահատվածում այն արդեն 53,5 տոկոս էր[209]:

1930-1933 թթ. Հայաստանում բռնադատվածների մեջ համեմատաբար մեծ թիվ էին կազմում կոլտնտեսականներն ու կուլակները՝ 3877 մարդ[210]: Ակնհայտ է բռնությունների սլաքի ուղղությունը դեպի գյուղ:

---

[207] История России под редакцией М. М. Шумилова, С. П. Рябкина, С-П., 1997, էջ 371

[208] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 12 ապրիլի 1930, 17 ապրիլի 1930

[209] Տե՛ս Վ. Ղազախեցյան, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը, 1929-1937, Եր., 1978, էջ 55

[210] Բռնադատվածների քանակը ներկայացվում է ըստ ՀՀ ԱԱՆԱ մեր ուսումնասիրությունների արդյունքների

Արդեն նշել ենք, որ համատարած կոլեկտիվացումը հանդիպում էր դիմադրության, որի դրսևորումները նկատելի են նաև Հայաստանում: Այսպես, միայն 1930 թ. փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը տարբեր շրջաններում տեղի ունեցան 24 հակակոլտնտեսային ելույթներ և այլն[211]: Այդ ժամանակահատվածում ուժեղանում է նաև իշխանությունների հակաեկեղեցական գործունեությունը: 1930-1933 թթ. կուլակաթափման պատրվակով բռնադատվում են 89 հոգևորականներ: Կոլտնտեսային շարժման դեմ զինված ելույթներին մասնակցելու համար 1930 թ. գնդակահարվել են Երևան գավառի Հորադիզ գյուղի քահանա Տեր-Ստեփան Ավետիսյանը, Դարալագյազի (Վայոց Ձոր) շրջանի Խաչիկ գյուղի քահանա Տեր-Արիստակես Խաչատրյանը, Զանգեզուրում իշխանության մարմինների հետ զինված ընդհարումներին մասնակցելու համար ձերբակալվում են քահանաներ Տեր-Վարդանյանը, Տեր-Հովհաննես Տեր-Հարությունյանը, Տեր-Վահան Ասատրյանը և ուրիշներ[212]:

Իշխանությունների 1930 թ. սկզբներին ծավալած կոլեկտիվացման շարժմանը հատկապես մեծ դիմադրություն են ցույց տալիս էջմիածնի շրջանում, որտեղ ՀԽՍՀ ՊՔՎ-ն ձերբակալում է 33 մարդ մեղադրելով Երևանից ղեկավարվող էջմիածնի, Աշտարակի և Ղուրդուղուլիի (Արմավիր) շրջաններում գործող դաշնակցական խմբի կազմում ընդգրկված լինելու մեջ: Այդ և 1929 թ. վերջին ձերբակալված 35 անդամներից բաղկացած խմբի ղեկավարն էր Գրիգոր Մոկացին[213]:

Նմանատիպ մեղադրանքով ձերբակալվում են Ն. Բայազետի գավառի 24 բնակիչներ, որոնք կազմակերպել էին ընդհատակյա «դաշնակցական» խումբ, զբաղվում էին «հակահեղափոխական, հակախորհրդային» գործունեությամբ[214]:

Ուշագրավ է, որ 1930-ականների սկզբին կոլեկտիվացման դեմ իրենց գործողությունը աշխուժացրել էին նաև Հայաստանի ռուսաբնակ գյուղերի բնակիչները: Պրիգունների և բապտիստների կրոնական աղանդների ներկայացուցիչները Ալեքսանդրովկա գյու-

---

[211] Տես Վ. Ղազախեցյան. Հայաստանի կոլտնտեսային գյուղացիության պատմությունը, 1929-1937, Եր., 1978, էջ 66-67, 83-97

[212] Տես ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 9491, թ. 28, գ. 10127, թ. 36, գ. 10682, հ. 3, թ. 254

[213] Տես նույն տեղը. գ. 6022, հ. 1, թ.թ. 328-329, 418, գ. 6055, թ. 558

[214] Տես նույն տեղը. գ. 9948, թ. 213

ղում անց են կացնում եռօրյա պաս, որն ուղեկցվում էր հակակոլտնտեսային բուռն ագիտացիայով[215]:

Հակակոլտնտեսային շարժումը իրավ համախմբել էր Հայաստանում բնակվող տարբեր ազգերի ներկայացուցիչներին: Այդ է վկայում, որ ըստ ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի տվյալների, 1931-1932 թթ. ներքին Ախտայի, Դիլիջանի, Ն. Բայազետի շրջաններում նախկին գյուղապետ Սարիբեկ Գրիգորյանի, միջակ-գյուղացի Մնացական Առաքելյանի ու ուրիշների նախաձեռնությամբ ստեղծվել է «Ազգերի Միության Բյուրո» անունը կրող կազմակերպություն, որի մեջ ընդգրկվել էին նաև ասորիներ, ադրբեջանցիներ, մոլոկաններ: Այդ կազմակերպության հիմնական խնդիրն է եղել խորհրդային կարգերի զինված տապալումը և «դաշնակցական իշխանության հաստատումը Հայաստանում»[216]: Տվյալ կազմակերպության անդամ լինելու համար հիշյալ շրջաններից և Երևանից բռնադատվում է 128 մարդ[217]:

Հակախորհրդային, դաշնակցական, ապստամբական և լրտեսական կազմակերպության անդամ լինելու մեջ մեղադրանքով գնդակահարվում են Վեդիի (Արարատ) շրջանի բնակիչներ, ասորիներ Վ. Թամրազովը, Յա. Բաղալովը, Ի. Օվչիևը և հայազգի Մ. Բուդաղյանը[218]:

Նույն ցավալի բախտին են արժանանում նաև նախկին կուլակներ, Կալինինոյի շրջանի բնակիչներ Ա. Գվոզդովը, Վ. Գոդունովը, Ա. Գլազովը, Վ. Կոբզևը և ուրիշներ[219]:

1930 թ. օգոստոսին տարբեր ժամկետներով դատապարտվում են Մարտունու շրջանի Գյոզալդարա (Վարդենիկ) գյուղի բնակիչներ Սահակ Հակոբյանը, Հակոբ Միրզախանյանը, Նազար Նազարյանը, որոնք մեղադրվում էին դաշնակցական կազմակերպություն ստեղծելու և խորհրդային իշխանության դեմ զինված պայքար մղելու մեջ[220]:

Ինչպես նկատելի է, 1930-ական թվականների առաջին կեսին Հայաստանում կիրառված բռնությունները հիմնականում կապված էին գյուղի հետ: Ճիշտ է, որ այդ տարիներին կուսակցական մար-

---

[215] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 19, գ. 48, թ. 12
[216] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ. գ. 6953,թ. 69-71
[217] Տես նույն տեղը, գ.գ. 5655,6953,6592,6035
[218] Տես նույն տեղը,գ. 6065
[219] Նույն տեղում, գ.գ. 5716, 6717, 8268
[220] Տես նույն տեղը, գ.11900 և «Լրագիր» 5 հուլիսի 1994

մինները չէին մոռանում տարբեր ընդդիմադիր ուղղությունների դեմ կոչեր և որոշումներ կայացնելը, սակայն դա, ըստ էության, ակտիվ գործողություններով չէր ուղեկցվում:

Այսպես, 1931 թ. հունիսի 28-ին ՀԿ(բ)Կ Երևանի կազմակերպության ակտիվի ժողովը լսում է «ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հունիսյան (1931) պլենումի արդյունքների մասին» հարցը և բանաձև է ընդունվում «ուժեղացնելու պայքարի օպորտունիզմի դեմ»[221]: Նոյեմբերի 13-ին նույն կազմակերպությունը քննարկում է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Անդրկովկասյան կազմակերպության աշխատանքի մասին որոշումը և ընդունված բանաձևում նշում. «ծավալուն պայքար մղել կուլակության և աջ ու տրոցկիստական թեքումների դեմ»[222]: Նույն տարվա դեկտեմբերի 6-ին ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը որոշում է ընդունում. «Բարձրացնել կուսակցական մասսաների քաղաքական մակարդակը», որտեղ խնդիր է դնում պայքարել կուսակցության քաղաքական գծի բոլոր տեսակի թեքումների, ինչպես նաև հակահեղափոխական կուսակցությունների գաղափարախոսության դեմ[223]:

Սակայն ակնհայտ է, որ 30-ականների առաջին կեսին Հայաստանի կոմկուսը իր համագումարներում և այլ միջոցառումների ժամանակ հիմնականում տնտեսական բնույթի հարցեր էր քննարկում: Բայց դա բոլորովին չի նշանակում, թե ներկուսակցական կյանքը խաղաղ և հանգիստ էր ընթանում: Ինչպես վերին օղակներում, Հայաստանում ևս նկատվում էր տեղական մասշտաբներով պայքարը իշխանության համար: Տվյալ ժամանակաշրջանում ձևավորված բարոյա-հոգեբանական մթնոլորտը ներծծված էր դրանով և այստեղ, անհատների անձնական հակումները միայն նպաստում էին տվյալ երևույթի դրսևորման ձևերին: Խմբակայնության դրսևորումները, ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարության դեմ պատեհ-անպատեհ ելույթները դարձել էին քաղաքական վերնախավի կյանքի անբնաժանելի ուղեկիցները, որոնք իրենց բացասական հետևանքներն ունեցան բռնաճնշումների առավել դաժան դրսևորման տարիներին: Ընդ որում, արդյունքում տուժում էր հանրապետությունը, տուժում էին բոլորը:

---

[221] «Խորհրդային Հայաստան» 30 հունիսի 1931
[222] Նույն տեղում, 19 նոյեմբերի 1931
[223] Նույն տեղում, 6 դեկտեմբերի 1931

Պատահական չէր, որ 1930 թվականի նոյեմբերին Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Ս. Կասյանը կուսակցական ղեկավար մարմիններին գրված նամակներում նշում էր, որ կուսակցության մեջ կոլեկտիվ ղեկավարությունն աստիճանաբար փոխարինվում է միանձնյա ղեկավարությամբ, կուսակցության շարքերում թուլանում է քննադատությունն ու ինքնաքննադատությունը, հին բոլշևիկներից շատերը հեռացվում են աշխատանքից: Սակայն, ոչ միայն ուշադրություն չդարձրեցին նրա մտահոգություններին, այլև Երկրամասի և Հայաստանի որոշ կուսակցական ղեկավարներ դրանք որակեցին որպես «նացիոնալ-ուկլոնիստական» դրսևորումներ և հասան այն բանին, որ Ս. Կասյանին ազատեցին աշխատանքից[224]:

Կարծում ենք, ժամանակի ոգին բավականին ճիշտ է արտացոլում Ա. Խանջյանի կնոջ, ՀԿ(բ)Կ ԿԿ ՎԿՀ-ի անդամ Ռոզա Վինդզբերգի նկարագրությունը այդ ժամանակահատվածի մասին, որտեղ նա մասնավորապես նշում է, թե 1930 թվականից մինչև 1936 թվականը Հայաստանի Կ(բ) Կ Կենտկոմի ղեկավար կորիզում գրեթե երբեք լիարժեք աշխատանք և միություն չի եղել: 1930 թ. ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղարի պաշտոնը ստանձնելուց հետո Խանջյանի դեմ ազգայնամոլական մեղադրանք առաջ քաշվեց կուսակցական ղեկավար աշխատակիցներ Հ. Կոստանյանի (նա Հայաստանում չէր - Ա.Մ.), Հ.Բաննահյանի, Մ. Չալյանի, Մանդալյանի, Ա. Ակոպովի, Գ. Քալաշյանի և ուրիշների խմբի կողմից, որին մոտ էր կանգնած ԿԿ երկրորդ քարտուղար Ամատունին, իսկ մյուս կողմից նրա դեմ էր աշխատում Կասյանի խումբը, որոնք բոլորը դուրս բերվեցին Հայաստանից: 1933 թ. գարնանը կրկին սկսվում է «ընդհատակյա» պայքարը, որի նախաձեռնողն էր Աշրաֆյանի, Միրզաբեկյանի, Սահակյանի, Բարսեղյանի և ուրիշներից կազմված խումբը, որին արդեն Թբիլիսիից օժանդակում էր Ամատունին: Նրանք ևս հանվեցին աշխատանքից և դուրս բերվեցին Հայաստանից:

1933 թ. վերջին Թբիլիսիից աշխատանքի են ուղարկվում Հայաստան Ստ. Ակոպովը և Գ. Ծատուրովը, որոնք նոր խառնակչություններ են սկսում Ա.Խանջյանի դեմ: 1935 թ. աշնանը Ար. Երզնկյանը և Ա.Եսայանը դիմումներ են գրում Խանջյանի դեմ, սակայն, այս անգամ էլ նրանց մեղադրանքները անհիմն են հռչակվում, իսկ

---

[224] Հայաստանի Կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր. Եր.,1967, էջ 433

գրողները կուսակցական տույժեր են ստանում: Այնուհետև Ռ. Վինդզբերգը գրում է. «1935 թ. աշնանը Խանջյանը Բերիայի առաջ հարց դրեց իրեն Հայաստանից տեղափոխելու մասին (դա արվել էր նաև 1933 թ. և 1934 թ. սկզբներին), սակայն անարդյունք»:

Հայաստան աշխատանքի ուղարկվեց Ամատունին: Հենց սկզբից նա իր շուրջը համախմբեց Խանջյանի դեմ «օպոզիցիոն» տրամադրված տարրերին: Ամատունին, Ակոպովը, Գուլոյանը, Ենգիբարյանը, հետագայում Մուղդուսին, փաստորեն, իրենց հակադրում էին Խանջյանին:

Ամբողջ 1936 թ. ընթացքում Խանջյանը շատ ծանր տրամադրության մեջ էր»[225]:

Ուշադրություն դարձնենք այն իրողությանը, որ Հայաստանի ղեկավարության դեմ տարբեր ժամանակահատվածներում (սկսած 1925-ից) ակտիվություն են ցուցաբերում Ար. Երզնկյանը և Ա. Եսայանը, որոնց 1935 թ. դիմումներն, այս անգամ Խանջյանի դեմ, Անդրերկրկոմը գնահատում է որպես անհիմն, իսկ նրանց իջեցնում իրենց զբաղեցրած պաշտոններից: Կարծում ենք, որ սրանց պարագայում նկատելի է ավելի բարձր պաշտոններ գրավելու ձգտումը, որի նպատակներով պարբերաբար իրենց հիշեցնել են տալիս[226]:

Եթե հետևենք 1930-1935 թթ. կայացած ՀԿ(բ)Կ 7-ից 9-րդ համագումարների աշխատանքներին, ապա արտաքնապես նկատվում է, որ դրանք առավել տնտեսական բնույթի, հատկապես կոլեկտիվացման հետ կապված հարցերին էին նվիրված: Նույնը կարելի է ասել ՀԿ(բ)Կ ԿԿ պլենումների մասին: Այսպես, 1933 թ. փետրվարին կայացած պլենումում քննարկում էին Համկ(բ)Կ Անդրերկրկոմի օգնությամբ բացահայտված գյուղատնտեսության բնագավառում թույլ տված սխալները և թերությունները և այլն: Այսինքն, ի տարբերություն կենտրոնի, Հայաստանում, բացի ներխմբակային, պաշտոնի համար մղվող և հրապարակայնորեն չդրսևորվող երևույթներից, բուռն ձևով չի զգացվում ներկուսակցական «թեքումների» դեմ պայքարի շունչը: Ավելին, նշված տարիներին բացահայտվող «գործերը» հիմնականում վերաբերում էին գյուղական ոլորտին:

Դրա վկայությունն է նաև այն, որ 1933 թ. տրոցկիզմի մեջ մե-

---

[225] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 3823, հ. 1 թ. 96-119

[226] Տես ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, Ֆ 1, ց. 123, գ. 4642, ֆ. 91, ց. 3, գ. 2278, ֆ. 91Ֆ, ց. 3, գ. 2293, ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ 731, գ. 908

ղադրվող մի խումբ ծառայողներ (Հ. Քամալյան, Ս. Միքայելյան և ուրիշներ) ՀԽՍՀ Հողժողկոմատի աշխատակիցներ էին[227]:

Հարկ է նշել, որ այս շրջանում նկատելի չեն ճանաչված հասարակական-քաղաքական գործիչների և մտավորականության նկատմամբ դրսևորված բռնարարքներ: Բռնությունների այս շրջանում ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի կազմած գործերում որպես հիմնական մեղադրանք էին հնչում հակախորհրդային, հակակոլտնտեսական, բանդիտական, դաշնակցական գործունեությունը, երբեմն տրոցկիզմը: Նշենք նաև, որ տվյալ ժամանակահատվածում գնդակահարվածների թիվը համեմատաբար քիչ էր հետագա 1937-1938 թթ. համեմատությամբ և կազմում էր 104 մարդ: Ուշագրավ է այն, որ պահպանվել է 1930-1931 թթ. դատական մարմինների կողմից դատապարտված և կալանավայրեր ուղարկվածների հետևյալ ցուցակը: 1930 թ. Կեմ է աքսորվել 51, 1931 թ. Տաշքենդ՝ 52, 1931 թ. Նովոսիբիրսկ՝ 8 մարդ: Այսինքն՝ 111 մարդ[228]: Ընդհանուր առմամբ, ըստ ՀՀ ԱԱՆ արխիվի տվյալների 1929-1933 թթ. համատարած կոլեկտիվացման շրջանում, բռնությունների ենթարկվեցին, գլխավորապես գյուղական վայրերում ապրող, 5615 մարդ: Փաստորեն, վերոհիշյալ համեմատությունից երևում է, որ բռնաճնշումները հիմնականում իրականացվում էին արտադատարանական մարմնի՝ Հատուկ խորհրդակցության որոշումներով: Դրա վկայությունն է նաև այն փաստը, որ 1934 թ. ՀԽՍՀ Արդժողկոմի կազմած զեկուցագրում նշվում էր, որ Հայաստանի Գերագույն դատարանի և ժողդատարանների կողմից տվյալ տարում քննված է ընդամենը 9-ը հակահեղափոխականների գործեր, որոնցից 4-ը վերաբերում էր հակահեղափոխական սաբոտաժին և կոլտնտեսության քայքայմանը, 3-ը՝ ահաբեկչությանը և 2-ը՝ հակահեղափոխական նպատակով կոլտնտեսային գույքի հրկիզմանը[229]:

Հասկանալի է, որ Հայաստանում, ինչպես ողջ ԽՍՀՄ-ի տարածքում, կապված համատարած կոլեկտիվացման հետ, անցկացվեցին բռնություններ, աքսորվեցին, վտարվեցին կուլակներ հայտարարված գյուղացիները: Նույն ժամանակահատվածում ԽՍՀՄ-ում, հատկապես կենտրոնում զուգահեռ տեղի էին ունենում բռնարարք-

---

[227] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 5934, թ. 59-62

[228] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 112, ց. 13, գ. 5, թ. 13

[229] Տե՛ս նույն տեղը, ֆ. 571, ց. 1, գ. 75, թ. 46

ներ մտավորականության, պետական, հասարակական գործիչների նկատմամբ, որոնք առավել մեծ թափ հավաքեցին Ս. Կիրովի սպանությունից հետո: Հայաստանում, անկախ իշխանությունների վերին ոլորտներում առկա վերոհիշյալ խմորումներից, հասարակական, քաղաքական գործիչների և մտավորականության նկատմամբ բռնարարքներ տեղի չեն ունենում: Դա կարելի է բացատրել կուսակցական վերնախավի, մասնավորապես, ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Ա.Խանջյանի դիրքորոշմամբ: Բնական է, որ վերևներից, հատկապես Անդրերկրկոմում ղեկավար դիրքի հասած Լ. Բերիայի կողմից առկա էր ճնշումը, բայց, մինչև 1936 թ. մայիս Ա. Խանջյանին հաջողվել է խուսափել նման զարգացումներից: Հայտնի է նրա խիստ դրական վերաբերմունքը հայ մտավորականության նկատմամբ (Ե.Չարենց, Ա. Բակունց, Վ. Ալազան, Ն. Ստեփանյան և ուրիշներ), որը բացատրվում է նրա պետական մտածողությամբ և, անկասկած, ազգասիրությամբ:

Սակայն ԽՍՀՄ-ում արդեն ձևավորված Ի. Ստալինի մենատիրական համակարգն արդեն նոր, առավել դաժան և խիստ պահանջներ էր իջեցնում ներքին օղակների ղեկավարներին, որին, ըստ էության, դիմագրավելը դառնում էր անհնար: Զանգվածային բռնաճնշումների գնացող Ի. Ստալինը և նրա մերձակա շրջապատն այլևս առարկություն չէին ընդունում: Հարցը դրված էր այսպես. կամ մասնակից ես դառնում այդ բռնությունների իրագործմանը, կամ ինքդ ես ենթարկվում բռնաճնշումների:

Բ. Քաղաքական բռնաճնշումները 1936-1939 թթ.

30-ական թվականների երկրորդ կեսին Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը մխրճվում է ԽՍՀՄ-ում արդեն եռող բռանճնշումների հորձանուտը, որի սկիզբը կարելի է համարել Ա. Խանջյանի նկատմամբ ճնշումների սաստկացումը 1936 թվականին: Դա, առաջին հերթին, իր արտահայտությունը գտավ 1936-ին ԽՍՀՄ ղեկավարության կողմից Վեյնբաումի հանձնաժողովի Հայաստանում կազմակերպած տնտեսական ստուգումների ձևով, որը «լուրջ թերություններ» բացահայտեց այդ բնագավառում: Առանձնապես աչք է զարնում, որ վերոհիշյալ հանձնաժողովը հատուկ ուշադրություն էր դարձրել այն հանգամանքին, որ Հայաստանի ղե-

կավարությունը ի վնաս ԽՍՀՄ ընդհանուր տնտեսական շահերի և ընդհանուր ծրագրերի, կառուցել է մի շարք «տեղական բնույթի տնտեսական օբյեկտներ»[230]: Իհարկե, նման փաստերն անհիմն չէին, իրոք, առաջին հերթին, ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Ա. Խանջյանի և ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի ջանքերով 1930-ական թվականներին տնտեսական և այլ բնույթի լայնածավալ շինարարություն էր կատարվել Հայաստանում, ինչի մասին, բնականաբար, տեղյակ էին ՀամԿ(բ) Կ ԿԿ և ԽՍՀՄ կառավարության ղեկավարությունը:

Տնտեսական ծանր պայմաններում, այս կամ այն ձևերով միջոցներ հայթայթելն ու օգտագործելը առկա էր ԽՍՀՄ ողջ տնտեսվարության մեջ: Սակայն, ակնհայտ է, որ վերևներում դժգոհություններ էին ծագել Հայաստանի ոչ թե տնտեսական ոլորտում եղած թերությունների նկատմամբ, այլ առկա էր դժգոհությունը քաղաքական գործունեության ոլորտում: Ի տարբերություն այլ հանրապետությունների՝ Հայաստանում «ըստ պատշաճի» չէին պայքարում երկիրը «հեղեղած» հակախորհրդային տարրերի դեմ: Այդ դժգոհության դրսևորումներին առավել մանրամասն կանդրադառնանք ստորև, բայց ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ զուտ տնտեսական բնույթ կրող հանձնաժողովի ստուգումների արդյունքում արվում են քաղաքական հետևություններ, թե Հայաստանի ղեկավարությունը ցուցաբերում է ազգայնամոլական, տեղական մոտեցումներ և հանրապետության շահերը վեր է դասում ԽՍՀՄ-ի շահերից:

Նման բնույթի մեղադրանքներն իսկույն պարարտ հող էին ստանում հանրապետության վերին ոլորտներում տեղի ունեցող վերոհիշյալ միջխմբակային պայքարի առկայության պայմաններում: Միաժամանակ ճնշման օղակը սեղմվում էր Հայաստանի ղեկավարության, մասնավորապես, Ա. Խանջյանի շուրջն այն իրողությամբ, որ նա, ըստ ամենայնի, դիմակայել է հանրապետությունում մտավորականության նկատմամբ բռնություններ ծավալելու, հատկապես ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի կողմից կատարվող փորձերին: Հարկ է կրկին հիշատակել, որ Ա. Խանջյանը, անկախ նրա քաղաքական գործունեության այս կամ այն գնահատականից, ունեցել է ազգային կեցվածք, հարգված և սիրված է եղել ժողովրդի կողմից:

[230] Տե՛ս ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 59

Դրան, անկասկած, նպաստել է նաև այն, որ նրա ղեկավարության տարիներին չեն եղել զանգվածային և մասնակի բռնություններ Հայաստանում՝ հայ մտավորականության և ղեկավար կազմի նկատմամբ: Սակայն 1936 թ. մայիսին, երկար դիմադրությունից հետո, նա ստիպված էր համաձայնություն տալ ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ, գիտնական Ներսիկ Ստեփանյանի ձերբակալությանը, իսկ մեկ ամիս անց 1936 թ. հուլիսի 9-ին ինքը սպանվեց ՀամԿ(բ(Կ Անդրերկրկոմի առաջին քարտուղար Լ. Բերիայի աշխատասենյակում[231]:

Ուշագրավ է այն, որ 1936 թ. մայիսի 26-ին կայացած ՀԿ(բ(Կ ԿԿ-ի բյուրոյի նիստի արձանագրությունը, որտեղ թույլատրվել է Ն. Ստեփանյանի ձերբակալությունը և կայացվել նրան կուսակցությունից ու ԿԿ-ի շարքերից հանելու որոշումը, ստորագրել է քարտուղար Ամատունին[232]:

Անգամ արտասահմանի դաշնակցական մամուլը Ա. Խանջյանի մահվան կապակցությամբ հիշատակում էր, թե 1936 թ. հունիսի 1-4-ը կայացած ՀամԿ(բ)Կ ԿԿ լիագումար նիստի ժամանակ «Ընդունված նոր սահմանադրության նախագծի և մասնավորապես Անդրկովկասյան Դաշնակցության (Դաշնության - Ա. Մ.) վերացման հարցի շուրջը խոր տարակարծություններ ունեցավ կուսակցության ղեկավար շրջանների հետ և դրա նետևանքով դրվեց այնպիսի վիճակի մեջ, որ ստիպված եղավ վերջ տալ իր կյանքին»[233]:

1936 թվականի գարնանը առավել սրվել էր ներքաղաքական իրադրությունը Հայաստանում: Ուշադրություն դարձնենք նաև նրան, որ նույն ժամանակահատվածում, գուցեև պատահականորեն, սկսվում է կուսակցական փաստաթղթերի փոխանակման կամպանիան, ինչի մասին հայտնում է ՀԿ(բ)Կ ԿԿ օրգան «Խորհրդային Հայաստան» թերթը[234]:

Նշված օրինակներից համոզվեցինք, որ նմանատիպ միջոցառումները զուգորդվում էին քաղաքական հետապնդումներով, իսկ 1936 թ. գարնանը ակնհայտորեն զգացվում էին դրանց նախապայմանները:

---

[231] Մանրամասն տես «Նժար» 2 հոկտեմբերի 1996, "Республика Армения", 9 июля, 1996 և այլն

[232] Տես ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 3036, հ. 1, թ. 17

[233] Տես ՎԷՄ, ժե, մայիս-հունիս, Փարիզ, 1936, էջ 105

[234] «Խորհրդային Հայաստան»,14 մայիսի 1936

Նախ, 1935 թ. մայիսին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը փակ նամակ է ուղարկում բոլոր կազմակերպություններին կուսփաստաթղթերի ստուգման մասին: Այնուհետև, 1935 թ. օգոստոսի 10-ին Եժովը և Մալենկովը զեկուցագիր են ներկայացնում Ստալինին այդ աշխատանքների կատարման ընթացքի և կամպանիայի ժամանակ բացահայտված, կուսակցության մեջ ներթափանցած թշնամիների մասին, որը կազմվել էր տեղական կազմակերպությունների, այդ թվում ազգային կոմկուսների հաշվետվությունների հիման վրա: Ուշադրություն դարձնենք այն իրողությանը, որ նշված փաստաթղթի և ոչ մի մասում Հայաստանը չի հիշատակվում[235]: Դրանից կարելի է եզրակացնել, որ Հայաստանում, որտեղ ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղարն էր Ա.Խանջյանը, առանձնապես մեծ ակտիվություն չէին ցուցաբերել այդ կամպանիայի ընթացքում: Դրա վկայությունն է նաև այն, որ 1935 թ. դեկտեմբերի 12-ին ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի կազմած Անդրկովկասի կազմակերպություններում անցկացրած փաստաթղթերի փոխանակման մասին գրված զեկուցագրում մեղադրանքներ են տրվում Հայաստանի հասցեին, որ միայն վերստուգիչ գործողություններից հետո են հայտնաբերվել Կոտայքի և, հատկապես, Լենինականի (Գյումրի) կազմակերպություններում գտնվող, բավականին մեծ թիվ կազմող տրոցկիստները: Ավելին, երկրորդ ստուգումից հետո՝ կրկին ստուգումներ են նշանակվում Լենինականում և Ախտայում արդեն ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի աշխատակիցների մասնակցությամբ: Օրինակներ են բերվում, թե ինչպես Թալինի շրջանում երկրորդ ստուգումից հետո հեռացվել էին 32 մարդ, վերստուգումից հետո նրանց թիվը հասավ 48-ի, Լենինականից 323 հոգին՝ դարձավ 356, Կիրովականում (Վանաձոր) 100-ը դարձավ 139 և այլն:

Համեմատության համար նշենք, որ այդ միջոցառումների արդյունքում կուսակցությունից հեռացվել էին Ադրբեջանում 11113, Վրաստանում՝ 7293, իսկ Հայաստանում 3220 մարդ (2070 կուսանդամ, 1150 թեկնածու)[236]:

Թե ինչպիսի մոտեցումներ էր ցույց տրվում կուսփաստաթղթերի փոխանակման ժամանակ հեռացվածներին, կարելի է եզրակացնել հետևյալ օրինակներից:

---

[235] Տե՛ս ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 48, թ. 1-3

[236] Տե՛ս ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 97, թ. 7-12

Պետական տպարանի կուսկոմիտեի քարտուղար, «թաքնված տրոցկիստ» Սերգո Խաչատրյանը մինչև 1935 թ. օգոստոսը «չէր գլխավորում կուսաշխատանքները, կապված է տրոցկիստ Սահակ Աբրահամյանի (տպարանի նախկին աշխատակից) և Գարուշ Մաղաքյանի (տպարանի նախկին աշխատակից) հետ: ՀամԿ(բ)Կ ԿԿ նամակի քննարկման ժամանակ նրանք չարտահայտվեցին, չցուցաբերեցին իրենց վերաբերմունքը» և, փորձելով մտնել ղեկավար օղակներ, ցանկանում էին հակահեղափոխական աշխատանք կատարել ներսում:

Կամ, Վաղարշակ Մարտիկյանը ակտիվ տրոցկիստ է, որը հանդես է գալիս գյուղատնտեսական ծրագրերի դեմ և նրա «քայքայիչ աշխատանքի պատճառով այս տարի ցածր է բերքատվությունը»[237]: Ինչպես նկատելի է, նման «մեղադրանքները» որևէ ուղղակի կապ կուսփաստաթղթերի փոխանակման հետ չունեին:

Ինչպես արդեն հիշատակել ենք, Ս. Կիրովի սպանությունն առիթ հանդիսացավ բռնաճնշումների ծավալը մեծանալու համար: 1935թ. փետրվարի 2-ին ՀամԿ(բ)Կ ԿԿ փակ նամակ էր հղել կուսկազմակերպություններին «Կիրովի չարանենգ սպանության հետ կապված իրադրության դասերի մասին», որտեղ փաստորեն հրահանգ էր իջեցվել ուժեղացնելու պայքարը բոլոր տեսակի հակահեղափոխական ուղղությունների դեմ[238]:

Պատահական չէ, որ այդ ժամանակահատվածում ՊՔՎ-ի պարբերաբար կազմվող և ղեկավարությանն ուղարկվող տեսություններում հատուկ ուշադրություն էին դարձնում նման հարցերին: Այդ տեսությունների բովանդակությունը, ասես, ժամանակի ոգին բնորոշող մատնագրեր լինեն: Դրանցում, օրինակ գրված է, թե կոմերիտական քաղպարապմունքի ժամանակ Մանուսաջյանը հայտարարել է, թե «Լենինը բլոկների կողմնակից է եղել և մասնակցել է օգոստոսյան բլոկին»: Կամ, ժողովներից մեկում Մուշեղ Սերոբյանը ասել է, թե «իմ մեղքը նախկինում եղել է այն, որ քվեարկել եմ ԿԿ թեզիսների դեմ», իսկ երբ հարցրել են իրեն թե ինչո՞ւ չեն գնդակահարել Զինովևին պատասխանել է, որ վախեցել են: Մեկ ուրիշ օրինակ ակումբներից մեկում կախել են Զինովևի և Տրոցկու նկարները և այլն[239]:

---

[237] Տես ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 15, գ. 98, թ. 41

[238] Տես նույն տեղը, ֆ. 1, ց. 15, գ. 100

[239] Նույն տեղում, ֆ. 1, ց. 15, գ. 100, թ. 1-2

1936 թ. մայիսին Հայաստանում սկսված կուսփաստաթղթերի փոխանակման կամպանիան, հիմնականում, ավարտվում է սեպտեմբեր ամսին: Այդ աշխատանքների մասին ՀԿ(բ)Կ ԿԿ քարտուղար Ամատունին զեկուցում է ուղարկել ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին 1937թ. հունվարին, որտեղ, մասնավորապես նշում է, որ կոմկուսի շարքերից հեռացվել են 284 անդամներ և 131 թեկնածուներ: Այդ 415 մարդուց տրոցկիստներ, զինովևականներ և նրանց հետ կապ ունեցողներ էին 77 կուսանդամ և 15-ը թեկնածու, ազգայնամոլներ և դաշնակցականներ էին՝ 21-ը և 14-ը, օտար և թշնամական միջավայրից ելածները՝ 4-ը և 2-ը, կուլակներ և սպիտակգվարդիականներ՝ 2-ը և այլն[240]: Հասկանալի է, որ այս թվերն ամբողջովին չեն արտահայտում 1936 թ. երկրորդ կեսից Հայաստանում սկսված քաղաքական բռնությունների ողջ պատկերը: Պահպանվել է մինչև 1936 թ. դեկտեմբերի 20-ը կուսակցությունից վտարվածների ցուցակը, որտեղ հեռացման պատճառների տակ գերակայում են հետևյալ ձևակերպումները՝ «տրոցկիստ» կամ «որպես թաքնված տոցկիստ»: Սակայն, կարծում ենք առավել ուշագրավ են հետևյալ ձևակերպումները՝ «Իր ամուսնու, տրոցկիստի հովանավորության համար», «տրոցկիստ եղբորը հովանավորելու համար», «տրոցկիստին կուսակցության մեջ երաշխավորելու համար» և այլն[241]:

Ինչպես ակնհայտ է, կուսակցական մարմիններում արդեն իսկ ձևավորվել էր այն անընդունելի մոտեցումը, որ մարդիկ պատասխանատվություն են կրում իրենց հարազատների, մտերիմների կատարած, իսկ, որպես կանոն, իրականում չկատարած գործողությունների համար: Դա համընդհանուր վախի մթնոլորտ էր ձևավորում. խեղում մարդկանց ճակատագրերը և, երբեմն, գիտակցորեն հանգեցնում անմարդկային այն փաստերին, որ հարազատները հրաժարվում էին միմյանցից: Այսինքն, ոչ միայն ֆիզիկապես էին վերացնում մարդկանց, այլև խեղում էին ապրողների հոգեբանությունը, որի հիվանդագին հետևանքները լիովին չեն վերացել անգամ մեր օրերում:

Վերոհիշյալ օրինակները խոսում են այն մասին, որ 1936 թ. գարնանը իսկապես ծանրագույն իրավիճակում էր հայտնվել Հայաստանի ղեկավարը՝ Ա. Խանջյանը:

---

[240] Նույն տեղում. ֆ. 1, ց. 16, գ. 94, թ.թ. 3, 5

[241] Նույն տեղում, ֆ. 1, ց. 16, գ. 111, թ.14-15

1936 թ. մայիսի 5-ին կայացած ՀԿ(բ)Կ ԿԿ-ի անդամների, շրջանային քարտուղարների և ղեկավար աշխատակիցների խորհրդացությունը քննարկում էր ՀամԿ(բ)Կ ԱԿԿ-ի և Անդրժողկոմխորհի ապրիլի 16-ի որոշումը Վեյնբաումի գլխավորությամբ անցկացված ԽՍՀՄ Խորհրդային վերստուգիչ հանձնաժողովի հետաքննության արդյունքները Հայաստանի ֆինանսական աշխատանքների մասին: Ըստ էության, դա նաև տնտեսական ոլորտում հանրապետության ղեկավարության վրա քաղաքական ճնշման ուժեղացման վկայությունն էր: Ա. Խանջյանը ստիպված էր արդարանալ և պաշտպանվել: Իր ելույթում նա նշում է, որ միութենական ժողկոմխորհը Անդրֆեդերացիայի ղեկավարությանը ապրիլի 13-ի որոշմամբ առաջարկել էր կրճատել Կառավարության տան համար ծախսերը, և հետաքննել տեղական տրեստների եկամուտների անօրինական ծախսեր կատարելու փաստերը Ս. Տեր-Գաբրիելյանի ղեկավարության ժամանակ:

Այդ նպատակով ուղարկվել էր Վեյնբաումի հանձնաժողովը, որը և ստուգել է հանրապետության ֆինանսական մարմինների աշխատանքը վերջին 7 տարիների ընթացքում (1929-1936 թթ.): Մեղադրանքները հիմնականում վերաբերվում էին արտաբյուջետային շինարարություն կատարելուն, ուստի Խանջյանը հատուկ նշում է, որ ինքը ևս այդ առանձին փաստերը որակում է որպես տեղական շահերի հակադրում ընդհանուր շահերին, որի հիմնական զսպանակը ազգայնամոլություն է[242]: Ինչպես նկատելի է այդ ելույթից, ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմում Լ. Բերիան արդեն ընտրել էր հարվածի կոնկրետ թիրախը ՀԽՍՀ ժողկոմխորհի նախկին նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին, սակայն, բնականաբար, անկախ պահի կոնկրետ մոտեցումներից, հայտնաբերված «թերությունների» հիմնական պատասխանատվությունն ընկնում էր հանրապետության կոմկուսի ղեկավարի՝ Ա. Խանջյանի վրա և վերջինս չէր կարող դա չգիտակցել[243]: Ուշադրություն դարձնենք նաև այդ խորհրդակցությունը վարող Ամատունու վարքագծին: Նա մի քանի անգամ դիտողություններ է անում մասնակիցներին, որ ակտիվ չեն մասնակցում քննարկմանը և իր խոսքում հատուկ քննադատության է ենթարկում տեղական ազգայնամոլությունը[244]: Իրադարձությունների հետագա զար-

[242] Նույն տեղում, ֆ. 1, ց. 16, գ. 59, թ. 12
[243] Նույն տեղում, թ. 14
[244] Նույն տեղում, թ.թ. 29, 81-82, 88

գացումներից կարելի է եզրակացնել, որ, հավանաբար, դա պատահական բնույթ չէր կրում:

Երկարատև ճնշումներից հետո, 1936 թ. մայիսի 26-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի նիստում Խանջյանը ստիպված համաձայնվում է տրոցկիզմի մեջ մեղադրվող հայտնի քաղաքական գործիչ և գիտնական Ներսիկ Ստեփանյանի ձերբակալմանը: Բռնարարքների հոսանքն ըստ կարելվույն կասեցնելու ջանքը որպես մեղադրանք է հնչում Ա. Խանջյանի հասցեին՝ նրա մահվանը նախորդած ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի բյուրոյի նիստում: Մինչ այդ ակնհայտ էր, որ Լ. Բերիան ամեն կերպ ձգտում էր «ամրացնել» Հայաստանի կոմկուսը հանրապետություն ուղարկելով իր կադրերին՝ ՀԿ(բ)Կ քարտուղարներ Ա. Ամատունուն, ՆԳ ժողկոմիսար Խ. Մուղդուսուն և ուրիշների, որոնք, ըստ էության, անելանելի վիճակ էին ստեղծել Ա. Խանջյանի համար: Սակայն վերջինս, թերևս, դեռ հույս ուներ ինչ-որ քայլերով մեղմացնել ահագնացող վտանգը: Պատահական չէր, որ նա իր մահից առաջ Թբիլիսի մեկնելիս՝ կնոջը զգուշացրել էր, թե այնտեղից էլ մեկնելու է Մոսկվա[245]:

Ուշագրավ է այն իրողությունը, որ 1936 թ. մայիսին ՀԽՍՀ ՆԳԺԿ-ն արդեն վարկաբեկիչ նյութերի մեծ պաշար էր հավաքել Հայաստանի բնակչության տարբեր խավերի վրա և ցուցակներով այն ներկայացնում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմ: Այսպես, օրինակ, մայիսի 14-ին ներկայացվել է նման մի ցուցակ 11 դատախազների վրա (Գր. Ջավախյան, Հ. Հայրապետյան, Ա. Արշակյան և ուր.)[246], ինչը Ա. Խանջյանի վրա ճնշում գործելու միջոցներից մեկն էր:

ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղարի պաշտոնում Ա. Խանջյանին փոխարինած Ա. Ամատունու վրա կազմված գործում, որը գտնվում է ՀՀ ԱԱՆ արխիվում, պահպանվել է ԽՍՀՄ զինվորական դատախազության գնդապետ Ա. Ն. Վիտիևսկու կողմից պատրաստված մի տեղեկանք՝ «Հայաստանի Կ(բ)Կ նախկին 1-ին քարտուղար Աղասի Ղևոնդի Խանջյանի մահվան (հուլիս 1936 թ.) պատճառների ստուգման արդյունքների մասին» վերնագրով: Փաստաթղթից կարելի է գրեթե անվերապահորեն եզրակացնել, որ Ա. Խանջյանը 1936 թ. հուլիսի 9-ին սպանվել է ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ղեկավար Լ. Բերիայի աշխատասենյակում: Հարկ է նշել, որ Ա. Վիտիևսկին հմուտ

---

[245] Տե՛ս ՀՀ ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 3823, հ. 1, թ. 116

[246] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 17, գ. 73, թ. 108-110

քննիչ էր, բացի այդ գործի վերանայումից, քննել և արդարացրել է բռնադատված հայ հասարակական-քաղաքական պետական ու մտավորական ճանաչված գործիչներից շատերին: Նրա մասին գովեստով է արտահայտվել նաև Վ. Ալազանը իր «Տառապանքի ուղիներում» գրքում:

Վերոնշված փաստաթուղթը ծավալուն է: Այնտեղ մանրամասն բերված են, թե պաշտոնական հայտարարությունը Ա. Խանջյանի «ինքնասպանության» մասին, և թե հետագայում ուսումնասիրված ու ստուգված տվյալները, որոնցից մի քանիսը կներկայացնենք:

Այսպես. «Դիահերձման արձանագրությունում գրված է. հիվանդին վիրահատել են ըստ Դեբրիդեմանի (օպերատորներ՝ պրոֆ. Էրիսթավի, պրոֆ. Մուխիձե, դոկտոր Խունդաձե և դոկտոր Յուզբաշև), արդյունքը մահ (ստույգ ժամանակը նշված չէ):

Արխիվում հայտնաբերեցինք Խանջյանի դիահերձման թիվ 38 արձանագրությունը, որը կազմվել է 1936 թ. հուլիսի 10-ին դատաբժշկական փորձագետ, պաթոլոգանատոմ Ջորբեխաձեի կողմից:

Խանջյանի դիահերձման արձանագրությունում նշված է, թե նա մահացել է 1936 թ. հուլիսի 9-ին, և որ դիահերձումը կատարվել է գործող կարգի համաձայն մահվանից 12 ժամ հետո, որը հակասում է հիվանդանոցի տեղեկություններին:

Ինչպես երևում է արձանագրությունից, Խանջյանը վիրահատվել է 1936 թ. հուլիսի 10-ին 1.30-ին և մահացել է կարճ ժամանակ անց: Իսկ եթե նա մահացել է 1936 թ. հուլիսի 9-ին, ուրեմն հուլիսի 10-ին կարող էր կատարվել սոսկ ձևական վիրահատություն՝ դիակի վրա:

Դիահերձմամբ փաստվել է, որ Խանջյանը մահացել է գլխին ստացած հրազենի վերքից: Այդ արձանագրությունը, որ ձեռագիր է ու կցվել է ավելի ուշ, առանձին թղթով անհայտ մեկի կողմից, վկայում է, որ Խանջյանը մահացել է գլխին հասցված փոքր տրամաչափի զենքի ուժեղ հարվածից և ենթադրություն է արված, թե տեղի է ունեցել ինքնասպանություն:

Ինչպես վկայել են Խանջյանի կինը Ռոզա Վինդզբերգը և թիկնապահ Սանոյանը, Խանջյանը 1936 թ. հուլիսի 8-ին Թբիլիսի, ՀամԿ(բ)Կ Արդրերկրկոմի բյուրոյի նիստին մասնակցելու է մեկնել՝

հետը վերցնելով կնոջը պատկանող «Լիգնոզե» մակնիշի փոքրիկ ատրճանակը:

Վրացական ԽՍՀ Գլխավոր դատաբժշկական փորձագետ Մարիկաշվիլին և Անդրկովկասյան զինօկրուգի դատաբժշկական փորձագետ գնդապետ Զելինսկին, հիմնականում համաձայնելով դիահերձման արձանագրությանը, միաժամանակ, հաշվի առնելով գանգոսկրի վնասվածքի մեծությունը (հաստատվել է դիահերձման արձանագրությունում), անհիմն են համարել այն հետևությունը, թե Խանջյանի գլուխը վիրավորվել է փոքր տրամաչափի զենքից:

Պաշտպանության նախարարության գլխավոր դատաբժշկական փորձագետ պրոֆ. Մ. Ս. Ավդեևը, ծանոթանալով դիահերձման ակտին, հայտարարել է, որ դատելով վնասվածքի չափերից, Խանջյանի գանգոսկրում հայտնաբերված վնասվածքը չէր կարող առաջանալ 6,35 մմ տրամաչափի «Լիգնոզե» ատրճանակի կրակոցից: Եվ իր ենթադրությունը հաստատելու համար առաջարկել է լրացուցիչ զննում կատարել»[247]:

Մեկ ուրիշ փաստաթղթում նշվում է, որ համաձայն դատախազ Գորելովի որոշման, Երևանում 1957 թ. նոյեմբերի 21-ին զննվել է Խանջյանի դին: Պարզվել է, որ բացակայում է գանգի կափարիչի վերնամասը, որտեղ դիահերձման թիվ 38 արձանագրության պատճենի տվյալներով, գտնվում էր գլխի հրազենով հասցված վերքը[248]: Ինչպես դժվար չէ կռահել, վերացվել էր հանցագործությունը հետագայում հայտնաբերելու հնարավորությունը:

Այնուհետև Վիտիևսկին բերում է սպանության օրը ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի շենքում գտնվող ՀամԿ(բ)Կ ԿԿ-ին կից կուսվերստուգիչ հանձնաժողովի անդամ Ա. Ա. Իվանովայի վկայությունն այն մասին, որ այդ օրը հանձնաժողովի երեք անդամներով (ղեկավարն էր Կորոտկովը) 1936 թ. հուլիսի 9-ին աշխատելիս են եղել Բերիայի առանձնասենյակի հարևանությամբ գտնվող սենյակներից մեկում: Նրանք երեկոյան երկու կրակոցի ձայն են լսել Բերիայի աշխատասենյակից: Կորոտկովը իսկույն գնացել է Բերիայի մոտ և միայն շատ ուշ վերադարձել հյուրանոց, հայտարարելով. «Կատարվել է սարսափելին, կիմանաք վաղը»: Մյուս օրը մամուլում ծանուցվում է Ա. Խանջյանի մահվան մասին, իսկ Կորոտկովը՝ կարդա-

---

[247] ՀՀ ԱԱՆԱ. ԿԳԲ. գ. 8997, հ. 4, թ. 27-35

[248] Նույն տեղում, թ. 17

լով այդ տեղեկատվությունը, ասում է. «Ճիվաղ Բերիան սպանեց Խանջյանին»: Վիտիևսկու եզրակացությունը. «Իվանովայի ցուցմունքներն ու մի շարք այլ հանգամանքներ կասկածներ են հարուցում Խանջյանի ինքնասպանության փաստի իսկության վերաբերյալ»:

Այդ ժամանակների ոգուն համապատասխանող վերջաբան կարելի է համարել նաև տեղեկանքում նշված հետևյալ փաստը.

«Պարզվեց, որ շտապ օգնության հիվանդանոցում, ուր տարվել էր Խանջյանը, գտնվել են Կուդրյավցևը, Բերիան, Գոգոլիձեն, Վրաստանի ՆԳԺԿՎ-ի պետ Ագրբան, դատախազ Վարձիելին, առողջապահության ժողկոմ Մամլաձեն, հիվանդանոցի գլխավոր բժիշկ Կիրշենբլատը՝ հերթապահ բժիշկ Թոփաձեն:

Պատահական զուգադիպություն է, թե ոչ, բայց Ամատունին, Գուլոյանը (Հայաստանի ղեկավարության ներկայացուցիչներ, որոնք Խանջյանի հետ մեկնել էին Թբիլիսի և պաշտոնական հայտարարության համաձայն՝ ինքնասպանության պահին գտնվել են Խանջյանի ննջասենյակի կողքի սենյակում - Ա. Մ.), ինչպես նաև Կուդրյավցևը, Ագրբան, Վարցիելին և Կիրշենբլատը հետագայում ձերբակալվել են և դատապարտվել գնդակահարության...»: Նույն բախտին է արժանացել նաև հերթապահ բժիշկ Թոփաձեն, որին Գոգոլիձեի հրահանգով 1940 թ. առանց որևէ հիմքի, ձերբակալել են Լենինգրադում, դատապարտել սկզբում 10 տարվա ազատազրկման, իսկ հետո՝ գնդակահարության:

Խանջյանի մահվան առնչությամբ, մեր կարծիքով, միակ, դեռևս պատասխան չստացած հարցն այն է, որ նա մահվանից առաջ իբր նամակներ է թողել՝ հասցեագրած Բերիային ու կնոջը, որտեղ բացատրել է իր «ինքնասպանության» պատճառները: Այդ նամակների բնօրինակները դեռևս չեն գտնվել և դժվար թե գտնվեն, սակայն Ռ. Վինդզբերգին վերաբերող և ոչ մի փաստաթղթում որևէ կասկած չի հայտնվում այդ նամակի իսկության առնչությամբ: Կարելի է ենթադրել, որ այդ նամակը սարքվել է մարդասպանների կողմից, սարքվել է այնքան վարպետորեն, որ Խանջյանի կինը չի նկատել կեղծիքը: Ավելի հավանական է այն, որ իր ամուսնու մահից հետո բռնության ենթարկված կինը ստիպված և պարտադրված է եղել հաստատել նամակի իսկությունը:

Իշխանությունները պաշտոնապես հայտարարում են, որ Ա.

Խանջյանը ինքնասպանություն է գործել և ժողովրդական լայն զանգվածների մասնակցությամբ նրա թաղման օրը՝ հուլիսի 12-ին, անց են կացնում Հայաստանի կուսակտիվի ժողով, ուր ելույթ ունեցած 23 մասնակիցները, առանց բացառության մեղադրում են կուսակցության նախկին ղեկավարին դավաճանության, ազգայնամոլության, հակահեղափոխական տրոցկիստական տարրերին (մասնավորապես Ն. Ստեփանյանին) հովանավորելու և այլ «մեղքերի» մեջ[249]:

Այն, որ կուսակցական բարձրագույն ղեկավարությունը դժգոհ էր Ա. Խանջյանից, հստակ երևում է վերոհիշյալ ժողովում ՀամԿ(բ(Կ Արդրերկրկոմի քարտուղար Ս. Կուդրյավցևի ելույթից, որտեղ նա նշում է, որ Հայաստանում 1936 թ. գարնանից ձերբակալված տրոցկիստների քանակը անհամեմատ քիչ է հարևան հանրապետություններում ձերբակալվածների քանակից, քանի որ նրանց բացահայտմանը խանգարում էր Ա. Խանջյանը:

Հարկ է նշել, որ մեր կողմից ճշտվել է, թե այդ ժողովի 106 մասնակիցներից 71ը, այդ թվում և ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ղեկավարներ Ս. Կուդրյավցևը, Մուսաբեկովը, Պ. Ագնիաշվիլին, ՀԿ(բ)Կ և Հայաստանի կուսակցական և պետական ղեկավարներ Ա. Ամատունին, Ստ. Ակոպովը, Գ. Ծատուրովը, Խ. Մուղդուսին և մյուսները հետագա տարիներին ևս ենթարկվեցին բռնությունների:

30-ական թվականներին Հայաստանում ստալինյան բռնությունների իրական պատկերը հետազոտելու առումով, խիստ կարևորվում է Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն, Երևանի պետհամալսարանի և մանկավարժական ինստիտուտի դասախոս, նախկին լուսժողկոմ Ներսիկ Ստեփանյանի բազմահատոր քննչական գործի ուսումնասիրությունը[250]:

Ն. Ստեփանյանի ձերբակալությունը և Ա. Խանջյանի «ինքնասպանությունը», ինչպես 1934 թ. դեկտեմբերին Կիրովի սպանությունը ԽՍՀՄ-ի համար, դարձան զանգվածային հալածանքների ազդանշան Հայաստանում: Առավել ևս, որ նրա հետ «հանցագործ կապերի» մեջ լինելու մեղադրանքները հանդիպում են 1936-1938 թթ. դատապարտված գրեթե բոլոր հասարակական-քաղաքական գործիչների, գիտության, գրականության և արվեստի ներկայացուցիչ-

---

[249] ՀՀ ԱԱՆԱ, Պատմ. ֆ., գ. 186

[250] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 3036, տես նաև ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 62, գ. 9395

ների գործերում, որոնք, որպես կանոն, սկսվում էին հետևյալ նախադասություններով. «...ՆԳԺԿ մարմինների կողմից Հայաստանում բացահայտվել և վերացվել է հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական կազմակերպություն, որը նպատակադրել էր Խորհրդային իշխանության զինված տապալումը, Հայաստանի անջատումը Խորհրդային Միությունից և, այսպես կոչված, «անկախ» ազգային-բուրժուական հայկական պետության ստեղծումը կապիտալիստական պետություններից մեկի հովանավորության տակ:

Հակահեղափոխական գործունեությունը ծավալելու համար՝ աջ-տրոցկիստական, ազգայնամոլական կազմակերպությունը հակահեղափոխական խումբ է կազմակերպել և թվարկում էին կոնկրետ կազմակերպություններ, ինստիտուտներ, հասարակական շերտեր և այլն:

Պարզաբանենք, որ ըստ ՆԳԺԿ «տվյալների» վերոնշյալ կազմակերպության ղեկավարն էր Ն. Ստեփանյանը՝ Ա. Խանջյանի հովանավորությամբ կամ գլխավորությամբ[251]:

Հակիրճ ներկայացնենք 1898 թ. Գանձակում ծնված Ն. Ստեփանյանի կենսագրությունը: Նա 1917 թվականից եղել է ՀամԿ(բ)Կ անդամ,ՀԿ(բ)Կ կենտկոմի անդամ. 1920 թ. հուլիսին ձերբակալվել է դաշնակցական իշխանությունների կողմից և մահվան դատապարտվել, ինչը հետագայում փոխվել է 10 տարի ազատազրկման: Այնուհետև ղեկավարել է Անդրկովկասի կոմունիստական համալսարանը, 1933թ.-ից լուսավորության ժողկոմն էր, միաժամանակ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ռեկտորը, դասավանդում էր տարբեր բուհերում[252]:

Այժմ ներկայացնենք Ն. Ստեփանյանի մեղադրական եզրակացության մեջ նրան վերագրվող մեղադրանքները:

Այսպես.

«1. Եղել է հակահեղափոխական, տրոցկիստական, ահաբեկչական կազմակերպության մասնակից, որը 1934 թ. դեկտեմբերի 1-ին չարագործորեն իրագործել է ընկ. Ս. Մ. Կիրովի սպանությունը և ահաբեկչության ակտեր նախապատրաստել ՀամԿ(բ)Կ-ի և Խորհրդային իշխանության ղեկավարների դեմ:

---

[251] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 3036, հ. 6, թ. 339-368

[252] Մանրամասն տե՛ս Ц. Агаян, Нерсик Степанян, Ер., 1967

2. Մտել է Հայաստանի տրոցկիստական-ազգայնամոլական, ահաբեկչական կազմակերպության Կենտրոնի կազմի մեջ, որն իր առջև խնդիր էր դրել ահաբեկչություն իրագործել ընկ. Ստալինի նկատմամբ և ահաբեկչություն էր նախապատրաստում ընկ. Բերիայի նկատմամբ:

3. 1932 թ. Հայաստանում կազմակերպվել է տրոցկիստական-ազգայնամոլական, ահաբեկչական կազմակերպություն, որի մեջ ընդգրկել է մի շարք մարդկանց, որոնք պատասխանատվության են կանչված այս և ուրիշ գործերով»[253]:

Զարմանալի չէ, որ Ա. Խանջյանի թաղման օրը՝ 1936 թ. հուլիսի 12-ին կայացած Հայաստանի կուսակտիվի ժողովում, բացի Ա. Խանջյանի «դավաճանական արարքը» և «հակահեղափոխական, ազգայնամոլական վարքագիծը» քննադատելուց, բազմաթիվ հռետորներ, այդ թվում և հիմնական զեկուցող՝ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Ս. Կուդրյավցևը, հատուկ ուշադրություն էին դարձնում ձերբակալված Ներսիկ Ստեփանյանի անձի «հակահեղափոխական, աջ-տրոցկիստական ու ազգայնամոլական գործունեության» վրա[254]:

Այսպես, իր ծավալուն ելույթում Ս. Կուդրյավցևը մեջ է բերում նաև համարձակ ու լայնախոհ մտավորականի հետևյալ գրառումը. «Բուն կոմունիստական երիտասարդության մեջ ահաբեկչության առաջացման քաղաքական և բարոյական պատասխանատվությունն ընկած է Ստալինի վրա: Կոմունիստական երիտասարդության մեջ ահաբեկչական միտումների առկայությունը դա այն առավել հիվանդագին նշաններից է, որ բոնապարտիզմը սպառել է իր քաղաքական հնարավորությունները, սկսվել է ամենադաժան պայքարը գոյության համար» և այլն:

Ինչպես նշում է նա՝ Ն. Ստեփանյանի ձերբակալության ժամանակ հայտնաբերվել են վերջինիս «թունդ հակահեղափոխական բովանդակությամբ գրառումները»: Թղթապանակում, որի վրա գրված էր «Ազգային հարց», եղել են Ն. Ստեփանյանի հետևյալ գրառումները. «Հայաստանը գտնվում է կախյալ երկրի վիճակում», «Ես ձեզ մեղադրում եմ հայ ժողովրդի սպանության և թալանի մեջ», «Մերկացնել վրացական շովինիստական քաղաքականությունը, որը

---

[253] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 3036, հ. 6, թ. 363

[254] Տես, ՀՀ ԱԱՆԱ, պատմ. ֆոնդ, գ.186,ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 16, գ. 60

ծգծգում է Դիլիջանի և Օսեթիայի ճանապարհների շինարարությունը». «Վրաց կոմկուսի քայքայված կուսակցական ապարատը կատարում է երկակի աշխատանք. մի կողմից ամրացնում է ազգայնամոլական դիրքերը՝ նույնիսկ պատմության խեղաթյուրման ճանապարհով, մյուս կողմից զրկում է իրենց հանցագործ գործունեությունն ուսումնասիրելու բոլոր հնարավորությունից», «Մոտակա ժամանակներում կսկսվի ոչնչով չքողարկված հարձակումները հայերի, ռուսների, այլ ազգային փոքրամասնությունների վրա, որոնց կխեղդեն: Վրաստանի ազգայնամոլությունը իմպերիալիստական է...», «Բոլոր հայերին դուրս են մղում Թիֆլիսից, հայերից վերցրել են պաշտոնները...»:

Ապա. մեջբերում է կատարում Ն. Ստեփանյանի ցուցմունքներից, որտեղ նա ասում էր. «Ես գտնում էի, որ կուսակցությունում բացակայում է դեմոկրատիան: Ես չէի հավատում Ստալինի ղեկավարությանը: Ես գտնում էի, որ կուսակցությունում կոլեկտիվ ղեկավարություն չկա, որ ամեն ինչ փաստացի կախված է Ստալինի անձնական կամքից, որ փաստացի գոյություն ունի միայն նրա անձնական դիկտատուրան»:

Ակնհայտ է, որ հայ մտավորականը այն փոքրաթիվ մարդկանցից է. որը մինչև իր ձերբակալությունը և նրանից հետո համարձակություն է ունեցել ճշմարտացի ներկայացնելու իրադրությունը: Ավելին. դեռ 1934 թ. Ն. Ստեփանյանը իր զրույցներից մեկում համարձակություն է ունեցել ասելու, որ Ստալինի քաղաքականությունը մեր երկիրը տանում է անխուսափելի կործանման և մեր փրկությունը միայն ներքին հեղաշրջումն է, ինչի արդյունքում պետք է Ստալինին հանել պաշտոնից[255]:

Նույն ոգով էին ժողովում հնչած բոլոր ելույթները, սակայն կառանձնացնենք Աբգար Մովսիսյանին, որը տխուր մատնագիր է հիշեցնում: Ինչպես ակնհայտ է նրա ելույթից, Ն. Ստեփանյանը Լուսժողկոմատը ղեկավարելիս «նեղել է» Ա. Մովսիսյանին, մասնավորապես, խիստ քննադատել է «Կուլտ ֆրոնտում» տպագրված մի հոդվածի համար, որտեղ բացասական կածիք էր հայտնել «...աշխարհագրագետ, նախկին դաշնակցական Հայրապետ Հովհաննիսյանի գրքի առթիվ»: Շատ պատկերավոր են հնչում Ն. Ստեփանյանի նրա երեսին շպրտած բառերը. «Դուք մարդակեր եք, դուք չգի-

[255] Տես ՀՀ ԱԱՆԱ. պատմ. ֆ. 1, գ. 186, էջ 5-8

տեք ծնել, բայց մեռցնել կարող եք, Հայրապետ Հովհաննիսյանի նման քանի մասնագետ ունեք, որ հարվածում եք նրան...»[256]:

Ասենք, որ հետագա տարիներին պարզվեց 30-ական թվականների մեղադրանքների անհիմն լինելը, և, փաստորեն, բռնադատվածների մեծ մասն արդարացվեց: Արդարացվեց նաև 1937 թ. հուլիսի 7-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական տրիբունալի որոշմամբ գնդակահարության դատապարտված Ն. Ստեփանյանը և վերականգնվեց կուսակցության շարքերում[257]: Սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ, ճիշտ է, չկար կազմակերպված հակախորհրդային գործունեություն, բայց հասարակական-քաղաքական գործիչների որոշ ներկայացուցիչներ իրոք ունեին դժգոհություններ տիրող իրավիճակից, մասնավորապես, Հայաստանի երկակի կախվածությանը Թբիլիսիից (հանձինս ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի) և Մոսկվայից, հավանություն չէին տալիս Ստալինի ստեղծած մենատիրական մթնոլորտին և այլն: Այդ առումով Ն. Ստեփանյանն, անշուշտ, աչքի է ընկել իր համարձակ մտքերով, և պատահական չէր, որ դարձավ բռնությունների առաջին զոհերից մեկը:

30-ականներին Հայաստանում կատարվող ստալինյան չարագործությունների մեջ, ցավոք, քիչ չէին դեպքերը, երբ անպաշտպան վիճակում գտնվող մարդկանց խոշտանգումների հետևանքով հասցնում էին մահվան: Այդպիսի ողբերգական վախճան ունեցավ 1928-1935 թթ.ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ, 1902 թ. ՈՍԴԲԿ անդամ, Հայաստանի բոլշևիկյան կուսակցության հիմնադիրներից մեկը՝ Սահակ Տեր-Գաբրիելյանը:

Ս. Տեր-Գաբրիելյանը ձերբակալվեց Մոսկվայում, որտեղ նա աշխատում էր ԽՍՀՄ թեթև արդյունաբերության ժողկոմատում, և ուղարկվեց Երևան՝ մեղադրվելով «հայկական ազգայնամոլական կազմակերպության Կենտրոնի «ղեկավար լինելու մեջ, որը դաշինքի մեջ էր մտել աջ-տրոցկիստական» կազմակերպության հետ[258]: Արդեն, վերոհիշատակված Վեյնբաումի հանձնաժողովի ստուգումների ժամանակ Ս. Տեր-Գաբրիելյանը դարձել էր Հայաստանի տնտեսությունը «քայքայման» գլխավոր մեղավորը: Չմոռանանք

---

[256] Նույն տեղում, գ.186, էջ. 21-24
[257] Տես ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 3036, հ. 6, թ. 363 և ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 62, գ. 9395, թ.1
[258] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ. գ. 5407, հ. 2, թ. 289

նաև, որ նա որոշ ժամանակ, աշխատանքի բերումով սերտորեն համագործակցել էր «ԽՍՀՄ հակախորհրդային հայտնի գործիչ» Ռիկովի հետ: Չխորանալով գործում եղած անհիմն մեղադրանքների մեջ, առավել ևս, որ այնտեղ կա ընդամենը մեկ հարցաքննության արձանագրության պատճենը. նշենք, որ 1937 թ. օգոստոսի 21-ին Ս. Տեր-Գաբրիելյանը նետվելով, կամ ՆԳԺԿ աշխատակիցներ Ի. Գևորկովի և Ե. Նիկողոսովի կողմից դուրս գցվելով 3-րդ հարկի պատուհանից մահանում է:

Կան ՀԽՍՀ ՆԳԺԿ ղեկավար աշխատակիցներ Խ. Մուղդուսու, Ի. Գևորկովի և Ե. Նիկողոսովի ցուցմունքներն այն մասին, որ Ս. Տեր-Գաբրիելյանին իբրև թե իրենց հանցագործությունները չբացահայտելու նպատակով Խ. Մուղդուսու հրահանգով վերջին երկուսը հարցաքննության ժամանակ նրան դուրս են գցել պատուհանից: Սակայն կան նաև տվյալներ, որ նրանք այդ «խոստովանություններ»-ը կատարել են կտտանքների ազդեցության տակ և, որ իրականում Ս. Տեր-Գաբրիելյանն ինքն է դուրս նետվել պատուհանից: Այս հարցի մանրամասներին կանդրադառնանք, սակայն կարծում ենք, որ ամեն դեպքում տեղի է ունեցել նողկալի սպանություն, քանի որ կարևոր չէ՝ դուրս են նետել դահիճները. թե՞ մարդուն հասցրել էին այն հոգեկան վիճակին, որ ինքնասպանություն է գործել:

Այսպիսով, քաղաքական բռնությունների մեքենան ողջ թափով գործի դրվեց Հայաստանում 1936 թ. հուլիսից, որի առաջին զոհեր դարձան կուսակցական. հասարակական և պետական բազում ճանաչված գործիչներ: Այսպես, բռնությունների զոհ դարձան ՀԿ(բ(Կ ԿԿ նախկին քարտուղարներ Գ. Ալիխանյանը, Ս. Սրապիոնյանը (Լուկաշին), Ա. Հովհաննիսյանը, Հ. Հովսեփյանը, Հ. Կոստանյանը. Ա. Խանջյանը, Ա. Նուրիջանյանը, Ա. Մարգարյանը, Ս. Վարդանյանը. ՀԽՍՀ ժողկոմխորհի նախկին նախագահներ Ս. Համբարձումյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Գուլոյանը, Մ. Դանիելյանը, ՀԽՍՀ Կենտգործկոմի նախկին նախագահներ Ս. Մարտիկյանը. Գ. Հանեսօղլյանը, Ա. Անանյանը, լուսժողկոմներ Ն. Ստեփանյանը. Ա. Եղիազարյանը. Լ. Արիսյանը, Ա. Վարդապետյանը, ֆինժողկոմներ Վ. Երեմյանը, Հ. Յաղուբյանը, հողժողկոմ. Գումեդինը, ՀԼԿԵՄ քարտուղարներ Ս. Մոկացյանը. Ա. Յուզբաշյանը, Ա. Շահբատյանը և շատ ուրիշներ:

Եթե զուգահեռ տանենք ԽՍՀՄ-ում (Կենտրոնում) և Հայաստա-

նում կատարվող բռնությունների միջև, ապա ակնհայտ են նույն մոտեցումները:

Այսպես Ստալինը «հատուկ» վերաբերմունք էր դրսևորում բոլշևիկյան հին գվարդիայի նկատմամբ ու ասպարեզից հանում էր Լենինի զինակիցներին՝ Տրոցկուն, Զինովևին, Կամենևին, Բուխարինին, Ռադեկին և մյուսներին: Դրանք հնարավոր կամ իրական հակառակորդներն էին իշխանության համար մղվող պայքարում և չափից ավելի լավ գիտեին Ստալինի անցած հեղափոխական ուղու մասին: Այսպես, 1917 թ. բոլշևիկյան կուսակցության Կենտկոմի 21 անդամներից 11-ը «ժողովրդի թշնամի» հայտարարվեց: Եթե ի նկատի ունենանք, որ այդ Կենտկոմի 7-ը անդամները մինչ այդ զոհվել կամ մահացել էին, ապա ստացվում է, որ Ստալինի հետ մնացել էին ընդամենը 3 մարդ: Նույն տրամաբանությամբ տեղերում ևս վերացնում էին հնագույն բոլշևիկներին, որոնք, բացի վերոհիշյալ պատճառներից, «խանգարում» էին տեղական մասշտաբի կուսղեկավարներին: Բացի Ս. Տեր-Գաբրիելյանից, Ա. Խանջյանից, բռնությունների մսաղացի անիվների տակ ընկան նաև Հայաստանի Հեղկոմի առաջին նախագահ Ս. Կասյանը, ՌՍԴԲԿի հնագույն անդամներ Դ. Շահվերդյանը, Ստ. Շահումյանի զինակից և ազգական (քրոջ ամուսինը) Ռ. Դաշտոյանը, Ալ. Բեկնազարյանը, Ա. Երզնկյանը, Ա. Մելիքյանը և ուրիշներ: Նրանք իրենց հեղինակությամբ, հավանաբար, խանգարում էին ոչ միայն ՀԿ(բ)Կ Կենտկոմի նոր ղեկավարներին, այլև ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ղեկավարներին, որոնց 1936-1937 թվականներին գլխավորում էր տխրահռչակ Լ. Բերիան նշանակված Ստալինի կողմից:

Հայաստանում քաղաքական բռնությունների սաստկացմանն անշուշտ զարկ տվեց նաև 1936 թ. օգոստոսի 20-ին «Զարյա Վոստոկա»-ում տպագրված Լ. Բերիայի «Փոշիացնել, հողմացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին» տպավորիչ վերնագրով հոդվածը, որտեղ Ա. Խանջյանը, Ն. Ստեփանյանը և ուրիշներ մեղադրվել են հակահեղափոխական գործունեության մեջ:

Դրա ակնառու վկայություն էր նաև այն, որ, մինչ այդ հրապարակված Լ. Բերիայի «Անդրկովկասի և Վրաստանի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» վերնագրով գրքույկում լիովին կեղծվել էր պատմության այդ շրջանը, նսեմացվել էր կամ անտեսվել անվանի հեղափոխականների դերը (մասնա-

վորապես Ս.Շահումյանի) և Ի. Ստալինը ներկայացվել՝ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հիմնադիր ու ղեկավար: Բնական է, որ այդ ոչ գիտական աշխատությունը միանշանակ չէր կարող ընդունվել և այն քննադատվեց անգամ անհատի պաշտամունքի օրերին: Նրա քննադատողներից էին նաև հայազգի հին բոլշևիկները, որոնք և դարձան քաղաքական բռնաճնշումների առաջին թիրախը:

Քանի որ վերոհիշյալ գործիչների մեղադրանքները գրեթե չէին տարբերվում իրարից, ուստի ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Այսպես 1937 թ. հուլիսին ձերբակալված Ռուբեն Դաշտոյանին 1938 թ. հուլիսի 18-ին դատապարտում են գնդակահարության այն մեղադրանքով, որ նա եղել է Հայաստանում գործող հակախորհրդային աջ-տրոցկիստական, ազգայնամոլական, ահաբեկչական կազմակերպության անդամ և օգտագործելով ԿԳԿ-ի նախագահի տեղակալի իր պաշտոնը խանգարում էր կուսակցության և կառավարության գյուղատնտեսական խնդիրները կատարելուն և այլն[259]:

Գրեթե նույնությամբ այն կրկնվում է 1937 թ. փետրվարին ձերբակալված և 10 տարի ազատազրկման դատապարտված Դանիել (Դանուշ) Շահվերդյանի մեղադրականում, որտեղ նշվում է. թե նա «ՀամԿ(բ)Կ շարքերում լինելով երկերեսանի հակահեղափոխական, տրոցկիստ-ազգայնամոլ, 1931 թ. հարել է Ստեփան Վարդանյանի (այդ տարիների ՀԿ(բ)Կ ԿԿ 2-րդ քարտուղար - Ա. Մ.) հ-հ (հակահեղափոխական - Ա. Մ.) տրոցկիստական խմբին» և այլն[260]:

Այդ տարիների համար խիստ բնորոշ էր վերը նշած 1936 թ. հուլիսի 12-ի կայացած Հայաստանի կուսակտիվի ժողովի մասնակիցների մեծ մասի ճակատագիրը, ուստի ավելի մանրամասն անդրադառնանք այդ իրադարձությանը: Ա. Խանջյանի իրավ համաժողովրդական թաղման արարողությունից հետո Երևանում ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ներկայացուցիչներ Ս. Կուդրյավցևի, Գ. Մուսաբեկովի, Պ. Ագնիաշվիլու մասնակցությամբ տեղի ունեցավ վերոհիշյալ ժողովը, որտեղ քննարկվում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Ա. Խանջյանի ինքնասպանության հարցը:

Նշենք, որ ժողովի գրեթե բոլոր մասնակիցները, այդ թվում և Թբիլիսիի հյուրերը մասնակցել էին Հայաստանի նախկին ղեկավա-

[259] Նույն տեղում, գ. 6935, թ. 100-104, տես նաև ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ. 91, ց. 3 գ. 2150, թ. 1-18

[260] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 17, թ. 236

րի թաղման արարողությանը: Ժողովի ժամանակ ելույթ ունեցան 23 հռետոր, որոնք, առանց բացառության, դատապարտեցին Ա. Խանջյանի «դավաճանական արարքը», միաժամանակ մեղադրանքներ հնչեցնելով նրա մտերիմների և արդեն ձերբակալված Ն. Ստեփանյանի հասցեին: Այդպիսին էին ժամանակները և այժմ դժվար է միանշանակ ասել, թե նրանցից ովքեր էին անկեղծ, ովքեր էին աթոռի ակնկալիքով շարժվում կամ ովքեր՝ գիտակցելով ստալինյան մենատիրության ստեղծած անելանելի իրողությունը, փորձում փրկել իրենց և ընտանիքի անդամներին հնարավոր բռնարարքներից: Սակայն, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, ժողովում արդեն տիրություն անող ՀԿ(բ)Կ ԿԿ քարտուղարներ Ա. Ամատունին, Ստ. Ակոպովը, շրջկոմի քարտուղարներ Գ. Ծատուրովը, Մ. Դանիելյանը, ՆԳԺԿ ղեկավար Խ. Մուղդուսին և մի շարք այլ գործիչներ մտել էին վերից իջեցված իրենց դերի մեջ: Անհանդուրժողականության մթնոլորտում ընթացող ժողովի այդ և ուրիշ մասնակիցներն արդեն իսկ այնպիսի մեղադրանքներ էին նետում իրենց կուսակցական ընկերների հասցեին, որոնք մի քանի ամիս անց, գրեթե նույնությամբ, կրկնվում էին ՆԳԺԿ-ում կազմված մեղադրական եզրակացությունների մեջ: Բերենք մի բնորոշ օրինակ: Ժողովականների կողմից, բառիս բուն իմաստով, հարձակում սկսվեց ելույթ ունեցող Ամասիայի շրջկոմի առաջին քարտուղար Ընձակ Տեր-Վահանյանի դեմ: Պատճառը ակնհայտ էր: Նրա եղբայրը հայտնի տրոցկիստ Վաղարշակ Տեր-Վահանյանն էր, որը դեռևս 1917 թ. ՀամԿ(բ)Կ Մոսկվայի կոմիտեի քարտուղարն էր, 1927 թ. ստորագրել էր «46»-ի հայտարարությունը և 1928-ին վտարվել կուսակցությունից: Վերականգնվել է 1930-ին, ապա կրկին վտարվել 1934-ին: Մեղադրվելով որպես Համամիութենական տրոցկիստական-զինովևական Կենտրոնի անդամ՝ գնդակահարվել է 1936 թ. օգոստոսի 24-ին: Ահա, այդ ամենը գիտենալով՝ հասկանալի է դառնում, թե ինչո՞ւ էին որոշ ժողովականներ, մասնավորապես, ԱՀ-ի նախկին աշխատակից Գ. Ծատուրովը և անձամբ Ս. Կուդրյավցևը, փաստացի խաչաձև հարցաքննություն սկսել Ը. Տեր-Վահանյանի նկատմամբ: Նրանց հետաքրքրում էր, թե որտե՞ղ և ե՞րբ է հանդիպել իր եղբորը, ինչի մասին են խոսել և, բնականաբար, մեղադրում նրա տրոցկիստական հայացքները կիսելու մեջ: Դժվար չէ կռահել, թե այդ ամենից հետո ինչ էր սպասվում, ըստ էության, նվիրված բոլշևիկ, շրջկոմի քարտուղար Ը. Տեր-

Վահանյանին: Մեկ ամիս անց 1936 թ. օգոստոսի 22-ին, նրան վտարում են ՀամԿ(բ)Կ շարքերից և ձերբակալում, իսկ 1937 թ. հուլիսի 8-ին դատարանի վճռով, որտեղ նշված էր, թե եղել է հակահեղափոխական կազմակերպության անդամ և «հակահեղափոխական» կազմակերպական կապ էր պահպանում եղբոր՝ Վ. Տեր-Վահանյանի հետ, գնդակահարում[261]: Սա եզակի դեպք չէր:

Ժողովին հաջորդած ամիսներին Հայաստանում սկսվում են հասարակական-քաղաքական, պետական գործիչների, մտավորականների և այլ խավերի ճանաչված ներկայացուցիչների զանգվածային ձերբակալությունները. որոնց մեջ առաջին հերթին Ա. Խանջյանի մտերիմներն էին: Ինչպես արդեն հիշատակել ենք, բռնությունների ենթարկվեցին նաև այդ ժողովի մասնակիցների մոտ 70 տոկոսը ՀԿ(բ)Կ ԿԿ բյուրոյի անդամներ Գ. Հանեսօղլյանը, Ա. Անանյանը, Մ. Ենգիբարյանը. Ս. Մարտիկյանը, Թաղի-Զադեն, Ա. Շահսուվարովը: Սակայն բռնություններից զերծ չմնացին նաև նույն բյուրոյի անդամներ Ա. Ամատունին, Ստ. Ակոպովը, Խ. Մուղդուսին: Այսինքն, բռնադատվեց ողջ բյուրոյի կազմը: Նույն դառը բախտին արժանացան ՀԿ(բ)Կ ԿԿ բյուրոյի թեկնածուներ Լ. Արիսյանը. Ա. Եղիազարյանը և Ա. Շահբատյանը:

Ուշագրավ է, որ մինչև 1937 թ. սեպտեմբերը ձերբակալված հասարակական-քաղաքական և պետական գործիչներին մեղադրում էին, իբր. Ա. Խանջյանի, Ն. Ստեփանյանի. Ս. Տեր-Գաբրիելյանի կողմից ղեկավարվող հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական, ահաբեկչական կազմակերպության անդամներ, իսկ սեպտեմբերյան պլենումի ժամանակ ձերբակալված Ա. Ամատունուն, Ստ. Ակոպովին, Խ. Մուղդուսուն, Գ. Ծատուրովին և մյուսներին տալով նույն մեղադրանքները ավելացնում էին, թե այդ կազմակերպությունը իբրև թե շարունակել է գլխավորել ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Ա. Ամատունին:

1937 թ. սեպտեմբերի 16-ին Մոսկվայում ձերբակալվեց և Երևան տեղափոխվեց նաև Հայաստանի մշտական ներկայացուցչության ղեկավարի պաշտոնակատար Երվանդ Խոջամիրյանը, որը երկար տարիներ Հայաստանում և Անդրերկրկոմում վարել էր բարձր կուսակցական և հասարակական պաշտոններ: «Հակախորհրդային գործունեության» մեղադրանքով Ե. Խոջամիրյանը

[261] Նույն տեղում, գ. 2512, հ. 1, թ.թ. 6, 203

գնդակահարվում է 1938 թ. հուլիսի 18-ին[262]: Արդեն 1940 թ. 5 տարի, ապա՝ 1948 թ. 10 տարի ազատազրկման է ենթարկվում Մոսկվայի Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտի ունկնդիր Ադո Ադոյանը[263]: Գնդակահարվում է նաև Հայաստանի հեղափոխական շարժումների ակտիվ մասնակից, 1936 թ.-ից ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի կուսակցական կոլեգիայի հանձնաժողովի քարտուղար Պյոտր Կուզնեցովը (Դարբինյանը):

Ա. Երզնկյանը ձերբակալվեց 1936 թ. նոյեմբերին և մեղադրվեց որպես «հակահեղափոխական, ազգայնամոլական խմբի ակտիվ անդամ»: Կրկին չներկայացնելով անհիմն մեղադրանքների մանրամասները՝ մեջ բերենք 1936-1937 թթ. ՀԽՍՀ ՆԳԺԿ բարձր պաշտոնյաներից մեկի ցուցմունքը, որը հետագայում պատասխանատվության է ենթարկվել որպես անօրինականությունների մասնակից և ղեկավար ու գնդակահարվել.

«Ինձ Ասլանովը (ՆԳԺԿ բանտի պարետը - Ա. Մ.) ասաց, որ նա Մուղդուսուց հանձնարարություն ունի բանտում այնպիսի պայմաններ ստեղծել ձերբակալված Երզնկյանի համար, որ նա մեռնի...

Երզնկյանին նստեցրել էին ամենավատ կարցերում, այն դեպքում, երբ նա այն ժամանակ, առանց այն էլ հիվանդ էր: Երզնկյանն այդ պայմանները չկարողացավ տանել և կարցերում տեղավորվելուց մի քանի օր անց, մահացավ[264]:

Խոշտանգումների հետևանքով բանտում 1938 թ. մայիսի 6-ին մահացավ նաև Ա. Գալոյանը[265]:

1936 թ. նոյեմբերին ձերբակալվում է նաև այդ տարիների ՀՕԿ-ի նախագահ, ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահի նախկին տեղակալ Արսեն Եսայանը նույնպիսի մեղադրանքներով և մահվան դատապարտվում 1938 թ. հուլիսի 18-ին: Արդեն 1938-ին գնդակահարվում է նաև ՀՕԿ-ի Փարիզի մասնաճյուղի ղեկավար Հայկազ Ղարագյոզյանը[266]:

---

[262] Տե՛ս նույն տեղը, գ. 2819

[263] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ.1, ց. 61, գ. 1235

[264] Նույն տեղում, գ. 908, թ. 144, ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 123, գ. 4642, ֆ. 91, ց. 3, գ. 2278: Ա. Երզնկյանի մասին մանրամասն տե՛ս «Ազգ» 5 մարտի 1996, նրա և ՀՕԿի մյուս ղեկավարների մասին տե՛ս «Ազգ», 9 մարտի 1996, էդ. Լ. Մելքոնյան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում 1923-1937թ.թ., Եր., 1999

[265] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 1214

[266] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ.գ. 731, 3058

1936-ի կեսերից սկսված քաղաքական բռնաճնշումներն առավել ուժգնությամբ կրկին դրսևորվեցին Հայաստանում 1937 թ. աշնանը: Գործում էր կենտրոնի ակնհայտ ծեռագիրը, որն արտահայտվեց նրա ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ: 1936 թվականին ԽՍՀՄ-ում, ինչպես ընդունված էր այդ տարիներին, միահամուռ հավանությամբ ընդունվեց երկրի նոր Սահմանադրությունը: Ստալինյան անվանում ստացած այդ Սահմանադրությունն, ասես եկավ հաստատելու այն ճշմարտությունը, որ իրական գործերով են կատարվում ընդունված օրենքները և ոչ թե հայտարարություններով: Տվյալ ժամանակների համար, թերևս, ամենաժողովրդական բովանդակությունը կրող Սահմանադրությունը որևէ կերպ չսահմանափակեց և, անգամ, չմեղմացրեց երկրում ծավալված բռնաճնշումները: Զանգվածաբար և կոպտորեն երկրում ոտնահարվում էին մարդու, քաղաքացու իրավունքները, քանի որ պետության կառավարման լծակը գտնվում էր միակ կուսակցության ձեռքին, իսկ վերջինս, փաստորեն, ղեկավարվում էր մեկ անձի Ի. Ստալինի կողմից: Բռնաճնշումների զարգացման տրամաբանությամբ, արդեն 1937-ի կեսերից հերթը հասավ մինչ այդ ամենայն ճշգրտությամբ և նվիրվածությամբ այն իրագործած մարդկանց վերացման պահը:

Ի. Ստալինն, ինչպես միշտ անհրաժեշտ էին սլաքավարներ, որոնց վրա նա պետք է բարդեր երկրում, բնականաբար, բացասական տրամադրություններ առաջացրած բռնարարքների մեղքը: Նա հիանալի հասկանում էր, որ ժողովրդի համբերությունը կարող է սպառվել, իսկ դրա հետևանքով ինքը կգրկվեր իշխանությունից: Հարկավոր էր ժողովրդի առաջ երևալ սպիտակ ձեռնոցներով: Պատահական չէր, որ խորհրդային տարիներին ժողովրդի մեջ ներծծվել էր այն գաղափարը, թե Ստալինն իբրև տեղյակ չի եղել երկրում զանգվածաբար իրագործվող այդ բռնաճնշումների մասին: Ավելին, շատ բռնադատվածներ և նրանց ազգականներ նամակներ էին հղում «Մեծ Առաջնորդին» խնդրելով վերականգնել արդարությունը: Անհրաժեշտություն չկա մանրամասն կանգ առնելու այն իրողության վրա, որ Ստալինը ոչ միայն գիտեր, ոչ միայն ինքն էր նախաձեռնել այդ սարսափազդու արհավիրքը, այլև բազմաթիվ փաստեր են հրապարակվել, որ նա և կուսակցական վերնախավը անձնապես հաստատում էին բռնաճնշումների ենթարկվող մարդկանց

ցուցակները, որ կուսակցական ղեկավարությունն էր որոշում, թե որ հանրապետությունում քանի հազար մարդ պետք է գնդակահարվի և քանիսը՝ բանտարկվի ու աքսորվի: Հարկ է ուշադրություն դարձնել զանգվածային բռնաճնշումների, այսպես ասած, երկրորդ ալիքի ժամանակ նաև այն հանգամանքին, որ Ստալինը նպատակադրվել էր ազատվել իր կարգադրությունը դաժանորեն իրագործած վկաներից, որոնց և դարձրեց բռնությունների մեղավորներ:

Այդ գործընթացը, բնականաբար, տարածվում էր բոլոր հանրապետությունների վրա:

Ա. Խանջյանին փոխարինած ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Ա. Ամատունին ամենայն նվիրվածությամբ կատարում էր վերևից իջնող հրահանգները և, ինչպես մասնակի անդրադարձանք, հանրապետությունում նրա օրոք մոլեգնում էին բռնաճնշումները: Բոլորովին չարդարացնելով նրա և իր շուրջը հավաքված ղեկավար կորիզի գործողությունները նշված ժամանակահատվածում, փաստենք, որ դրանք ուղղորդվում էին, իսկ երբեմն և անմիջական մասնակցություն և միջամտություն էին ցույց տալիս, նաև վերևից: Բացի կուսակցական կազմակերպչական որոշումներից՝ իջեցվում էին նաև այս կամ այն մարդուն բռնաճնշելու կոնկրետ հրահանգներ: Այսպես, օրինակ, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի ղեկավար Լ. Բերիան չէր զլանում և հատուկ հեռագիր էր հղում Ա. Ամատունուն՝ կարգադրելով զբաղվել հանրապետությունում ճանաչված ինժեներ Աստվածատրյանով:

Այն, որ ամպեր էին կուտակվում նաև Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարության գլխին, կարելի էր եզրակացնել 1937 թ. մայիսին «Պրավդա» թերթում ծավալված քննադատության փաստով: Հայտնի է, որ ՀամԿ(բ)Կ օրգան հանդիսացող «Պրավդան» պատահական չէր անդրադառնում այս կամ այն խնդրին: Այսպես, 1937թ. մայիսի 26-ին «Պրավդա» թերթում հրապարակվում է Մ. Կոտլյարովի հոդվածը «Ինքնաքննադատության ճնշում և ստորաքարշություն» վերնագրով, որտեղ հեղինակը հիշեցնում է, որ նույն ամսվա 7-ին և 17-ին «Պրավդայում» հոդվածներ են տպվել այն մասին, թե Հայաստանի կուսկազմակերպությունը, նույնիսկ ՀԿ(բ)Կ ԿԿ ապարատ են սողոսկել օտար մարդիկ[267]: Սակայն Հայաստանի և

[267] Տե՛ս "Правда" 7 мая 1937, "Грубый зажим самокритики", 17 мая 1937, " В Армении не сделали выводов из решений Пленума ЦК ВКП (б)"

Երևանի կուսակցական ղեկավարները համապատասխան հետևություններ չեն արել, իսկ «Ամատունին կանգնել է սխալները աղավաղելու և քննադատությունը անտեսելու ուղու վրա»: Բնական է, որ դրան հետևել է Ամատունու բուռն արձագանքը, որը հատուկ հեռագիր է հղել «Պրավդայի» խմբագրություն՝ Մեխլիսին, որտեղ ամեն կերպ արդարանում էր և հավաստիացնում, որ մոտակա համագումարում հետևություններ կանեն, մասնավորապես նշելով, թե հեշտ չէր Խանջյանի ժառանգությունը մաքրելը[268]:

Հարկ է նշել, որ Միխայիլ Կոտլյարովը, ինչպես ինքն է խոստովանել 1937 թ. մայիսին, Հայաստան է գործուղվել՝ չիմանալով հայերեն, ուստի իրեն որպես օգնական են տվել «Կոմունիստ» թերթի աշխատակից Գր. Ասրիևին: Այսինքն, ակնհայտ է, որ նա պատվեր էր կատարում: Ավելին, արդեն 1937 թ. սեպտեմբերին, երբ ՀԿ(բ)Կ ԿԿ պլենումում վերջնականապես «մերկացրեցին» և ձերբակալեցին Ամատունուն, նույն Կոտլյարովը, արդեն անձամբ Ստալինի «օրհնությամբ», ժամանել էր Հայաստան և 1937 թ. սեպտեմբերի 28-ին «Պրավդայում» հանդես եկավ այդ պլենումի մասին «Հայ ժողովրդի թշնամիների գործերը» հոդվածով[269]:

ՀԿ(բ)Կ 10-րդ համագումարի զեկուցման մեջ Ա. Ամատունին հանգամանորեն կանգ է առնում «Խանջյանի աջակցությամբ» Հայաստանում գործող «Ն. Ստեփանյանի, Դ. Սիմոնյանի, Ա. Բակունցի և ուրիշների տրոցկիստական-նացիոնալիստական տեռորիստական կենտրոնի» գործունեության վրա[270]: Այնուհետև անդրադառնում է մերկացված «հակահեղափոխական նացիոնալիստական-տրոցկիստական կենտրոնին», որի անդամներն էին Ա. Երզնկյանը, Ա. Եսայանը, Ս. Փիրումովը, Պ.Մակինցյանը և որիշներ, «լրտես, և, մեր հայրենիքի դավաճան» Դ. Շահվերդյանին, «դաշնակների հետ կապված և նրանց անմիջական դիրեկտիվներով աշխատող» Ա. Շահվերդովին:

Ուշադրություն դարձնենք զեկուցման հետևյալ հատվածին. «Մեր կուսակցությունն արմատախիլ արեց այդ սրիկաների ոհմակը...»: Բայց սխալ կլիներ կարծել, որ հենց դրանով Հայաստանի կոմկուսակցությունն արդեն լուծել է հակահեղափոխական տրոց-

---

[268] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ. ֆ. 1, ց. 17, գ. 77, թ. 23-24

[269] Տես նաև ՀՀ ԱԱՆԱ. ԿԳՖ. գ. 8997, հ. 3, թ. 12-17, հ. 4, թ. 1-6

[270] Նույն տեղում. գ.62, թ.112-118

կիզմի և նացիոնալիզմի դեմ մղվող պայքարի բոլոր խնդիրները: Թաքնված թշնամիներ կան շատ տեղերում և նրանց գործերն ու դեմքերը դեռ չեն բացված մեր կուսակցության կազմակերպությունների կողմից»: Ապա, իսկույն մատնաշում է «մերկացված թշնամիների» աջակիցներ ու մոտիկ բարեկամներ, պատասխանատու աշխատանքներից հեռացված Ս. Մարտիկյանին, Ռ. Դաշտոյանին, Օ. Դուրգարյանին:

Հասկանալի է, որ ժամանակի ոգով, Ամատունին կատարում է լուրջ հետևություններ, այսուհետև ևս շարունակելու «տրոցկիստական-նացոնալիստական-դաշնակցական թշնամիների» բացահայտումն ու մերկացումն, «արմատից պոկել հակահեղափոխական նացիոնալիզմի-սպեցիֆիզմի-դաշնակիզմի նկատմամբ տեղ-տեղ դեռ գոյություն ունեցող հաշտվողականությունը, որը տարիների ընթացքում պատվաստում էր սրիկա Խանջյանը», և վերջապես կոչ է անում «արթուն հետևել և անողոքաբար ոչնչացնել յուրաքանչյուրին՝ ով կփորձի բարձրացնել գլուխը»[271]:

Ինչպես նկատելի է, Ա. Ամատունին յուրովի հետևություններ էր արել «Պրավդայի» վերոհիշյալ քննադատությունից, սակայն, դա նրան և Հայաստանի իր կամակատարներին չօգնեց խուսափելու բռնաճնշումների մամլակից: Հիշատակենք, Հայաստանի կոմկուսի պատմության աննախադեպ այն փաստը, որ 10-րդ համագումարում Կենտկոմի աշխատանքները գնահատվեցին անբավարար: Սա, իհարկե, վերաբերվում էր Ա. Խանջյանի ղեկավարած ՀԿ(բ)Կ Կենտկոմի աշխատանքներին, բայց չմոռանանք, որ երկրորդ քարտուղարը Ա. Ամատունին էր, որն արդեն հուլիսին ցույց է տալիս անհանգստության նշաններ և ամեն կերպ ուզում է ձեռք գցել Մոսկվայում ձերբակալված ՀԿ(բ)Կ ԿԿ նախկին 1-ին քարտուղար Ա. Հովհաննիսյանի արխիվը՝ այդ նպատակով երկու անգամ անձամբ դիմելով ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի ղեկավար Եժովին[272]: Բայց նա իր որոնած նամակը, հասցեագրված Ա. Հովհաննիսյանին, այդպես էլ ձեռք չի բերում, ինչը սեպտեմբերին իսկապես օգտագործվում է նրա դեմ:

Ուշագրավ է այն փաստը, որ 1937 թ. մարտի 3-ին Աշոտ Հովհաննիսյանը նամակ է հղել ՀամԿ(բ)Կ Կենտկոմ, որտեղ հիշել է, թե Ամատունին դեռ 1925 թ. տրոցկիստական տատանումներ է ունեցել,

---

[271] Նույն տեղում, թ.115-117

[272] Տես «Երեկոյան Երևան» 9 սեպտեմբերի 1988

առաջարկում է ստուգել նրա կապը 1930-31 թթ. Լոմինաձեի հետ, որին մեղադրել են ձախության մեջ և. ամենակարևորը. հիշեցնում՝ 1927 թ. Ամատունու իրեն հղած նամակի մասին, որտեղ վերջինս որպես կուսակցական ճիշտ գծի ներկայացուցիչ իրեն երաշխավորել է Խանջյանին, տրոցկիստ Ավիսին (Նուրիջանյան) և այլն[273]:

Հայաստանում նոր բռնաճնշումներ ծավալելու համար Ստալինը որպես պատրվակ է օգտագործում Ս. Տեր-Գաբրիելյանի մահը: Ինչպես հայտնել է 1937-ի սեպտեմբերին Երևան ժամանած ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի քննչական խմբի ղեկավար Լիտվինն իր գործընկերներին մեկնելուց առաջ Ստալինն ընդունել է իրեն և ասել, որ ինքը լավ ճանաչում է Ս. Տեր-Գաբրիելյանին, և վերջինս ինքնասպանություն չէր կարող կատարել, ուստի անհրաժեշտ է լրջորեն քննել այդ փաստը և մեղավորներին պատասխանատվության ենթարկել: Երևան են ժամանում ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Ա. Միկոյանը և Կենտկոմի ղեկավար կուսակցական մարմինների բաժնի վարիչ Գ. Մալենկովը. որոնք մասնակցում են 1937 թ. սեպտեմբերի 15-ին սկսված ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումին: Վերջինիս աշխատանքների ժամանակ, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի հրահանգով նրանց է միանում նաև Լ. Բերիան: Ընդլայնված կազմով անցկացված պլենումում Գ. Մալենկովը հանդես եկավ սեպտեմբերի 8-ին Ստալինի ստորագրած Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյին հասցեագրված նամակի մասին հաղորդումով, որը սկսվում էր հետևյալ նախադասությամբ. «ԽՍՀՄ կառավարությունը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը գտնում են, որ Հայաստանում ինչպես տնտեսական, այնպես էլ կուսակցական և կուլտուրական գործը գտնվում են չափազանց վատ վիճակում»[274]: Այնտեղ հանգամանորեն կանգ է առնված Ս. Տեր-Գաբրիելյանի «ինքնասպանության» հետ կապված վերջին դեպքին», որտեղ, մասնավորապես. նշված է, թե իրեն պատուհանից դուրս է շպրտելը. միանգամայն անհամատեղելի է նրա վախկոտ և հաշվենկատ բնավորության հետ: Ավելի շուտ նրան դուրս են շպրտել և փակել նրա բերանը, որ նա չկարողանա մերկացնել սովետական իշխանության թշնամիներին: Այնուհետև. փաստորեն. ուղղակի ցուցում է տրված. որ ղեկավարությունը չի կարող թույլ տալ, որ «**հայ ժողովրդի թշնամիների հովա-**

---

[273] Տես ՀՀ ԱԱՆԱ ԿԳՖ. գ. 8997, հ. 3, թ. 171-173

[274] «Երեկոյան Երևան». 8 սեպտեմբերի 1988

նավորները ժողովրդից թաքցնեն ղեկավարության «խոցերը» (ընդգծումը մերն է - Ա.Մ.):

Եվ որպես առաջին քայլ հայտնվում է, որ ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ ժողկոմխորհը որոշում են կայացրել բանտարկել Գուլոյանին և Մուղդուսուն: Իհարկե, չէին մոռացել նաև Ամատունու պատասխանատվության հարցը, որի կապակցությամբ և գործուղվել էր Գ. Մալենկովը՝ գործը տեղում քննության ենթարկելու համար:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումն ընդմիջումներով տևեց մինչև սեպտեմբերի 23-ը, որի արդյունքում քարտուղարներ Ամատունին և Ստ. Ակոպովը ազատվում են իրենց պաշտոններից, հեռացվում կուսակցությունից և ձերբակալվում: Կենտկոմի կազմից հանվում են և ձերբակալվում նաև Գուլոյանը, Մուղդուսին, Գևորկովը, Կոստիկյանը, Ար. Դաստակյանը, Ն. Կուրսելը, Հ. Յուզբաշյանը:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար է ընտրվում մինչ այդ Թբիլիսիի քաղկոմի քարտուղար աշխատած Գ. Հարությունյանը, որը ներկա չէր այդ պլենումի աշխատանքներին: Պլենումում ելույթ է ունեցել նաև Ա. Միկոյանը, սակայն նրա և պլենումի մյուս մասնակիցների ելույթների սղագրությունները չեն արվել կամ չեն պահպանվել[275]:

Փաստորեն սեպտեմբերյան պլենումով սկսվեց Հայաստանի բռնաճնշումների մի նոր փուլ, որն, ինչպես արդեն նշել ենք, իր շրջապտույտի մեջ առավ արդեն 1936-1937 թթ. բռնաճշումների իրագործողներին:

Ի միջի այլոց նշենք, որ Ա. Միկոյանի և Գ. Մալենկովի Երևանում գտնվելու մասին ոչ մի պաշտոնական հաղորդագրություն չի եղել, սակայն հանրապետությունում գիտեին այդ մասին և բանտարկվածների հարազատները և ուրիշները, բազմաթիվ նամակներ են հղում նրանց, ցավոք, մեծ մասամբ անարդյունք, չնայած այդ դիմումներին ուսումնասիրելու համար անգամ հանձնաժողով էր ստեղծվել[276]:

Այդ օրերին Երևան ժամանած ՆԳԺԿ քննչական խմբի ղեկավար Լիտվինը 1937 թ. հոկտեմբերին զեկուցագիր էր կազմել իրենց խմբի աշխատանքների մասին Հայաստանում:

Այնտեղ, մասնավորապես, թվարկվում են մեկ ամսվա ընթաց-

---

[275] Տես ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 8997, հ. 3, թ. 189

[276] Տես ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 17, գ. 91

քում ձերբակալված Հայաստանի 27 ղեկավարների անունները, որը սկսվում է ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Ամատունու, երկրորդ քարտուղար Ակոպովի և ժողկոմխորհի նախագահ Գուլոյանի անուններով: Այնուհետև նշվում է, թե ԽՍՀՄ ՆԳԺԿ այդ բրիգադը ձերբակալել է 1183 մարդ, որոնցից Երևանի պատասխանատու աշխատակիցներ էին 100-ը, դաշնակցականներ՝ 936-ը: Ձերբակալվածներից 500-ը այդ ամսվա ընթացքում դատապարտվել են առաջին կատեգորիայով (մահապատժի -Ա. Մ.), որն ի կատար է ածվել:

Այնուհետև նկարագրվում էր, թե ինչպիսի «ազգայնամոլական, աջ-տրոցկիստական» կազմակերպություն էր երկար տարիներ գործում Հայաստանում Ա. Խանջյանի և Ս. Տեր-Գաբրիելյանի գլխավորությամբ: Այդ «կազմակերպությունում» ղեկավար դիրքեր էին գրավում Ար. Երզնկյանը, Ա. Գուլոյանը և մի շարք այլ ժողկոմներ և տնտեսական ոլորտի ղեկավար աշխատակիցներ[277]:

Բացասական իմաստով, մասնագիտորեն համոզեցուցիչ թվացող, 45 էջանոց այդ փաստաթղթում մանրամասն նկարագրվում է այդ «կազմակերպության» ծավալած հակախորհրդային գործունեությունը հանրապետության բոլոր ոլորտներում: Նրանք, իբրև, իրենց կադրերին տեղավորում էին կուսակցական, խորհրդային և տնտեսական կարևոր օղակներում, վնասարարություն էին կատարում տնտեսության բոլոր ոլորտներում, ստեղծել էին հակահեղափոխական ամուր օղակ Հայկական դիվիզիայում, մշտական կապեր էին ստեղծել արտասահմանում գտնվող «Դաշնակցություն» և «Ռամկավար» կուսակցությունների հետ. ներգաղթի պատրվակով Հայաստանը լցրել էին ազգայնամոլ կադրերով, ահաբեկչական խմբեր էին կազմակերպում ՀամԿ(բ)Կ և Խորհրդային կառավարության ղեկավարներին ահաբեկելու նպատակով և այլն[278]:

Այնուհետև, այդ փաստաթղթի ոգով և ոճով էին կազմվում բռնաճնշումների ենթարկվածների մեղադրական եզրակացությունները և այլ վճիռները:

Դեռևս հնարավոր չէ վստահությամբ հայտարարել, թե ինչքան է Հայաստանում 30-ականներին բռնադատվածներից հասարակական-քաղաքական, պետական գործիչների ստույգ քանակը, սակայն ստացված նախնական թվաքանակն արդեն իսկ խոսում է այն

---

[277] Տես ՀՀ ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 3394, թ. 30-33

[278] Նույն տեղում, թ. 35-36

մասին, որ դա բավականին լուրջ կորուստ էր հայ հասարակական-քաղաքական ներուժի համար:

Այսպես՝ ըստ ՀՀ ԱԱՆ արխիվի ԿԳԲ-ի ցուցակային տվյալների 1936-1938 թթ. նրանց թիվը կազմում էր 69 մարդ, որոնցից 33-ը գնդակահարվել են, մյուսները՝ ստացել տարբեր ժամկետների ազատազրկում: Սակայն մեր ուսումնասիրությունը 1936 թ. հուլիսի 12-ի ժողովի մասնակիցների հետագա ճակատագիրը ճշտելու նպատակով ցույց տվեց, որ տվյալ ցուցակում չկան այդ ժողովին մասնակցած և հետագայում բռնադատված 15 հոգու անուններ, ուստի վստահությամբ ընդհանուր թվաքանակին կարելի է ավելացնել այդ անունները, և այն կդառնա 84 հասարակական-քաղաքական գործիչ: Այնուամենայնիվ, հարկ է հաշվի առնել, որ ցուցակներում նախկին հայտնի հասարակական-քաղաքական գործիչներից ոմանք կարող են ներկայացված լինել որպես թոշակառուներ կամ ծերբակալվելիս աշխատել են, ասենք, որպես հրատարակչության տնօրեններ կամ թերթերի, ամսագրերի խմբագիրներ, գիտնականներ և այլն: Ավելին, ցուցակներում նշված չեն որպես այդ խավի ներկայացուցիչներ 1957 թ. ՀԽՍՀ ՊԱԿ-ի կողմից կազմված վերոհիշատակված ցուցակից որոշ անձիք: Այնպես որ 100-ից անցնող ճանաչված հասարակական-քաղաքական գործիչների թվաքանակը զգալի կորուստ էր Հայաստանի ակտիվ մտավոր ներուժին:

Համեմատության համար բերենք, այն իրողությունը, որ նախկին հասարակական-քաղաքական գործիչներ Ն. Ստեփանյանը, Ե. Չուբարը, Ա. Հախումյանը, Թ. Ավդալբեգյանը, Պ. Մակինցյանը բռնադատման պահին գիտությամբ և գրականությամբ էին զբաղվում, իսկ Ն. Կուրսելը՝ գործարանի տնօրեն էր, Վ. Մամիկոնյանը՝ պետբանկի տնօրեն և այլն:

Ուշագրավ է 1902 թ. կուսակցական ակտիվ գործիչ Ս. Մարտիկյանի 1956 թ. գրությունը՝ տրված Ս. Տեր-Գաբրիելյանի գործը վերանայելու կապակցությամբ: Այնտեղ, մասնավորապես, նշվում է, որ «1935 թ. Ս. Տեր-Գաբրիելյանը չկարողացավ տանել այն մթնոլորտը, որը ստեղծել էին Թբիլիսիից եկած Ակոպովը, Ծատուրովը, Մուղդուսին և մյուսները, իրեն պաշտոնից ազատելու մասին դիմում տվեց ՀամԿ(բ)Կ ԿԿ, որը հարգվեց: Այնուհետև սկսվեցին ինտրիգներն ու հալածանքները հենց Խանջյանի դեմ, որը 1936 թ. հուլիսին ինքնասպանություն կատարեց: Դրանից հետո՝ 1936 թ. վեր-

ջերին և 1937 թ. սկզբներին սկսվում են ազնիվ կուսակցականների և խորհրդային կադրերի զանգվածային ձերբակալությունները... Բոլոր նրանց մեղադրում էին աջ-տրոցկիստական, ազգայնամոլական-ահաբեկչական կազմակերպության մասնակցելու մեջ, որը գլխավորում էին Խանջյանը և Տեր-Գաբրիելյանը...»[279]:

Բռնատենչ իշխանությունների հարվածի ալիքի մեջ ընկան նաև Հայաստանի հասարակական-քաղաքական և պետական այրերի կանայք, որոնց վտարում էին կոմկուսի շարքերից, աքսորում և բանտարկում հիմնականում իրենց ամուսինների «հակախորհրդային գործունեությունը» թաքցնելու, համապատասխան մարմիններին այդ մասին չհայտնելու կամ այդ գործունեությանը մասնակցելու համար: Այսպես, երկարաժամկետ աքսորվում են Ա. Խանջյանի կինը Ռ. Վինդզբերգը, Ա. Ամատունու կինը՝ Վ. Սելիվոխինան և շատ-շատ ուրիշներ:

Մի փոքր այլ մոտեցում է պահանջում 1937 թ. ՀԿ(բ)Կ ԿԿ-ի սեպտեմբերյան պլենումի ժամանակ և նրանից հետո ձերբակալված քաղաքական գործիչների գործերի ուսումնասիրությունը:

Ինչպես նշել ենք, այդ պլենումին մասնակցելու համար Հայաստան էին ուղարկվել ՀամԿ(բ)Կ ԿԿի ներկայացուցիչներ Մալենկովը, Միկոյանը և Բերիան: Հենց դրա աշխատանքների ժամանակ ձերբակալվեցին ՀԿ(բ)Կ քարտուղարները: Այնուհետև ձերբակալվում են նաև նույն քաղաքական գործիչների հետ մինչ այդ Հայաստանում ՀամԿ(բ)Կ ԿԿ գիծը անշեղորեն կիրառած այլ քաղաքական գործիչներ, ՀԽՍՀ ՆԳԺԿ բազմաթիվ ղեկավար և շարքային աշխատողներ, որոնցից առաջինները կրկին մեղադրվում էին աջ-տրոցկիստական, ազգայնամոլական կազմակերպության անդամ լինելու մեջ, իսկ երկրորդները նաև անօրինականություններ կատարելու համար: Այստեղ, իհարկե, գործում էր բռնապետի հատուկ երկաթյա տրամաբանությունը, որի համաձայն պարբերաբար ասպարեզից վերացվում էին ոճրագործությունների կենսագործողները և վկաները:

Տարօրինակ է, բայց փաստ է, որ անկախ այն բանից, թե տվյալ գործիչները ինչ-ինչ մեղքեր ունեին կամ իրապես հանցագործություններ էին կատարել, նրանց նկատմամբ ևս կիրառվում էին անօրինական բռնություններ, շատ դեպքերում տրվում անհիմն մեղադ-

[279] Նույն տեղում, թ. 220[2]

ռանքներ (ասենք, Ա. Խանջյանի ղեկավարած հակահեղափոխական, ազգայնամոլական կազմակերպության անդամ լինելը և այլն):

Դրա վկայությունն է, օրինակ, այն փաստը, որ Ա. Ամատունու գործը վերանայելիս՝ 1977 թ. այն կարճվել է[280]:

Իհարկե ոչ ոք չի կարող ժխտել, որ հենց նրա ղեկավարության օրոք է կատարվել հանրապետության մտավոր, քաղաքական սերուցքի անխնա ջարդը, նամակ ուղարկվել ՀԱՄԿ(բ)Կ Կենտկոմ, որտեղ խնդրում էին ավելացնել Հայաստանում բռնությունների ենթակա քաղաքացիների թվաքանակը և այլն[281]: Սակայն, անգամ դատարանով վճռված նրա մահվան դատավճիռը կատարվել է՝ չպաշտպանելով օրենքի պահանջները[282]:

Այն մասին, որ Հայաստանի այդ շրջանի ղեկավարները դարձել էին Անդրերկրկոմի և Կենտրոնի հլու կամակատարները՝ վկայում է նաև հետևյալ փաստը: 1937 թ. հուլիսի 10-ին Բերիայի ստորագրությամբ Թբիլիսիից հեռագիր է ուղարկվում Ամատունուն, որտեղ գրված էր. «... Ձեզ մոտ աշխատող ինժեներ Տեր-Աստվածատուրովը անցնում է շատ նյութերով որպես վնասարար, լրտես, դիվերսանտ: Հայաստանի պայմաններում նա ավելի խոշոր դեմք է, քան Չիչինաձեն: Անհրաժեշտ է ձերբակալել և լավ աշխատել հետը: Նյութերի հետ Մուղդուսին ծանոթ է»:

Առանց որևէ մեկնաբանության նշենք, որ Սևան-Զանգու շինարարության ղեկավար, հայտնի ինժեներ Հովսեփ Տեր-Աստվածատուրովը ձերբակալվում է 1937 թ. հուլիսի 29-ին և «հակախորհրդային գործունեության» համար գնդակահարվում[283]:

Նման մոտեցում է պահանջում նաև ՀԿ(բ)Կ երկրորդ քարտուղար Ստ. Ակոպովի, ժողկոմ Գ. Ծատուրովի և մյուսների գործերի քննությունը, որոնցից առաջինին գնդակահարեցին, իսկ երկրորդին դատապարտեցին 8 տարի ազատազրկման[284]:

1937 թ. սեպտեմբերից հետո ձերբակալված քաղաքական գործիչների, մասնավորապես, ՀԿ(բ)Կ ԿԿ քարտուղարներ Ամատունու, Ստ. Ակոպովի ղեկավարման շրջանում կատարված դառը իրողությունն է պատկերված 1955 թվականին ՀԽՍՀ ՆԽ կից ՊԱԿ-ի կողմից

---

[280] Նույն տեղում, գ. 8997, հ. 4, թ. 136-142

[281] "Известия" 3 апреля, 1996

[282] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 8997, հ. 1, թ. 210-212

[283] Նույն տեղում, գ. 4451, տե՛ս նաև «Հայություն» հոկտեմբեր 1995

[284] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 4234, 3823

կազմված «1936 թ. հունիսից մինչ1937 թ. սեպտեմբերի 23-ն ընկած ժամանակաշրջանում բռնադատված Հանրապետության ղեկավար, պատասխանատու և գիտական աշխատողների, ինչպես նաև մասնագետների «աջ-տրոցկիստական, ազգայնամոլական կենտրոնի մասնակիցների ցուցակ»-ում, որտեղ թվարկվում են 69-ը ճանաչված մարդկանց անուններ[285]: Կարծում ենք, որ այդ ցուցակն, այնուամենայնիվ, ամբողջական չէ և դրա մեկնաբանությունների անհրաժեշտությունը չկա:

Ինչպես արդեն հիշատակել ենք, տվյալ տարիների մեղադրանքներում հիմնական «աջ-տրոցկիստական-ազգայնամոլական» գործունեությունից բացի, երբեմն հանդիպում են նաև ուրիշները, այդ թվում նաև էսէռների (սոցիալիստ-հեղափոխականներ - Ա. Մ.) կուսակցության անդամ լինելը: Այդ մեղադրանքով 1938 թ. հունվարին ձերբակալվեց մի խումբ (Գ. Աղամալյան, Վ. Սադոյան, Գ. Տեր-Հակոբյան, Ա. Նալբանդյան, Խ. Կեմչյան, Պ. Թարվերդյան, Մ. Շահպարոնյան, Ս. Մարկոսյան), այն պատճառով, որ նրանք «մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը եղել են էսէռների կուսակցության անդամներ և հետագայում, մինչև ձերբակալվելը վարել են ակտիվ թշնամական կազմակերպված աշխատանք»: Այս խմբի անդամները 1956 թ. արդարացվեցին հանցանքն ապացուցված չլինելու պատճառով[286]:

Այդ տարիների բռնադատվածների մեջ էր նաև նախկինում էսէռական ճանաչված գործիչ Գրիգոր Չուբարը:

1930-ականի վերջերին ԽՍՀՄ-ում ամրապնդվեց կոմկուսի ամենատիրությունը (տոտալիտարիզմը) և Ստալինի անձի պաշտամունքը: Հասարակությունը, որը կրեց աննախադեպ բռնություններ՝ սկսած ղեկավարներից մինչև ամենաշարքային քաղաքացին, անպաշտպան էին դարձել ճնշման ահավոր մեքենայի առաջ:

Այսպիսով, 1930-ական թվականների ստալինյան բռնությունները Հայաստանում լուրջ հարված հասցրին նաև քաղաքական մտքին և սոցիալապես ակտիվ խավերին, որն իր բացասական ազդեցությունը թողեց հետագա տարիներին: Դա ճակատագրական եղավ նաև նոր սերնդի ձևավորման առումով: Կտրվեց ազնիվ, նվիրված կադրերի պատրաստման գործընթացը և ճանապարհ բացվեց

[285] Նույն տեղում, գ. 8997, հ. 3, թ. 5-18
[286] Նույն տեղում, գ. 3076, հ. 6, թ.թ. 217, 315-317

բոլոր տեսակի պնակալեզների, քծնողների, մարդկային և ազգային դեմքը կորցրածների բարձրացման ու ղեկավար պաշտոններ գրավելու համար:

Երկար ժամանակ իրարամերժ տվյալներ էին հրապարակվում 1930-ական թվականներին ԽՍՀՄ-ում բռնաճնշումների ծավալների մասին: Ինչպես արդեն նշեցինք, ըստ վերջին տարիների հրապարակումների, որոնք հենվում են արխիվային տվյալների վրա, այդ թիվը կազմում է 6-7 մլն մարդ: Հասկանալի է, որ հնարավոր չէ այդ թիվը ճշտել ամենայն ստուգությամբ և տարօրինակ չէ, որ այն, այսպես թե այնպես, մոտավոր է:

Այդ խնդրի առումով Հայաստանում ևս տարբեր, հաճախ ոչ իրական, թվաքանակ է նշվել: ՀՀ ԱԱՆ արխիվի կարճված գործերի ֆոնդում կատարված մեր ուսումնասիրությունները հիմք են տալիս ներկայացնել այդ բռնությունների ծավալի և պատժաչափերի հետևյալ, գրեթե ամբողջական պատկերը Հայաստանում:

Աղյուսակ 1

Տարեթիվը	Բռնադատվածների թիվը	Դատապարտվել են							
		3 տարի	5 տարի	8 տարի	10 տարի	Գնդակահարություն	Ուղղիչ աշխատ. ճամբար	Հանձնարարությամբ ճամբար	Պատ. ազատել
1930	1802	367	222	452	47	80	156	270	225
1931	1464	366	238	341	51	13	27	181	155
1932	852	161	42	302	14	2	60	124	171
1933	1497	216	78	848	16	9	70	56	388
1934	122	30	7	60	2	2	10	-	14
1935	330	52	30	135	5	2	52	-	41
1936	733	159	165	245	14	1	138	1	40
1937	4951	50	209	619	749	3140	431	1	67
1938	3153	29	103	649	823	1390	304	1	65
Ընդամենը	14904	1494	1094	3651	1721	4639	1248	634	1166

Բերված թվերը ցույց են տալիս, որ 1930-1938 թթ. ստալինյան

բռնությունների զոհ է դարձել 14904 մարդ, որոնց գերակշիռ մասը՝ 8837 մարդ, բռնադատվել է 1936-1938 թթ.:

Ինչպես նկատելի է, պատիժների ենթարկվածների թիվը հատկապես մեծ է եղել 1937-1938 թթ., երբ բռնությունների են ենթարկվել 8104 մարդ:

Աղյուսակում արտահայտված են այդ տարիներին տարածված պատժաչափերը, ինչպես նաև նշված է, թե քանի մարդ է ուղարկվել ուղղիչ աշխատանքային ու համակենտրոնացման ճամբարներ: Ընդ որում, այդ պատժաչափերի մեջ ընդգրկված է դատապարտմանը նախորդող տարիների պատժաժամկետը:

Աղյուսակում ընդգրկված են նաև ազատ արձակվածների վերաբերող տվյալներ. այս մարդիկ ևս կալանավորվել են, նրանց դեմ գործեր են հարուցվել: Այսինքն, նրանց նկատմամբ նույնպես կիրառվել է բռնարարք, և նրանց թվաքանակի նշումն առավել ամբողջական է դարձնում երևույթի ընկալումը:

Ստորև բերվում է Հայաստանում բռնադատվածներին ներկայացված մեղադրանքների ցանկը: Անհրաժեշտ ենք համարում նշել,

Աղյուսակ 2

Տարեթիվը	Հակախորհրդային գործ.	Դաշնակցական գործ.	Հակահեղափոխական գործ.	Բանդիտիզմ	Տրոցկիզմ	Հակակրտ. գործ.	Լրտեսություն	Սաբոտաժություն	Ազգայնամոլական քարոզչություն
1930	391	298	71	33	1	1	-	2	-
1931	227	200	7	16	4	7	5	-	-
1932	144	118	6	20	1	6	3	-	-
1933	202	53	24	7	4	14	3	1	-
1934	21	2	8	-	-	-	-	-	-
1935	76	2	16	1	9	-	1	1	-
1936	214	7	50	17	89	2	8	1	-
1937	2266	971	345	102	60	48	37	6	8
1938	1463	362	163	58	49	30	44	2	1
ընդամենը	5004	2013	690	254	217	108	101	13	9

որ արխիվային համապատասխան գործերում ամենից հաճախ հանդիպող դաշնակցական կամ տրոցկիստական գործունեության համար մեղադրանքները բացակայում էին այդ տարիների ՀԽՍՀ քրեական օրենսգրքում: Հիշատակված մեղադրանքները հիմնականում ընկնում էին քրեական օրենսգրքի հատուկ մասի առաջին գլխի «Կոնտրռևոլուցիոն հանցագործություններ» հոդվածի տակ[287]:

1930-ականների վերջերին ԽՍՀՄ-ում կայունացավ քաղաքական համակարգը, և վերջնականապես ձևավորվեց Ստալինի անձի պաշտամունքը: Աննախադեպ բռնություններ կրած հասարակությունը ղեկավարներից մինչև ամենաշարքային քաղաքացին, անպաշտպան էին դարձել ճնշման ահավոր մեքենայի առաջ: Սակայն, համընդհանուր ահաբեկչությունը ծայրահեղորեն լարել էր քաղաքական ներքին մթնոլորտը, որը վտանգում էր նաև իշխանավորների վիճակը: Միևնույն ժամանակ, արտաքին աշխարհում մութ ամպեր էին կուտակվում Խորհրդային երկրի վրա, մասնավորապես զորեղանում էր ֆաշիստական Գերմանիան, ինչը մոտալուտ, ծանր պատերազմ էր կանխագուշակում: Բացարձակ միապետի դիրքի հասած Ստալինը չէր կարող չզգալ այդ վտանգները և կառավարման թելը ձեռքից բաց չթողնելու համար մեղմացուցիչ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը: Արդեն իսկ 1938 թ. հունիսի 1-ին, բնականաբար, ոչ առանց կուսակցական մարմինների կարգադրության, տրվում է ԽՍՀՄ դատախազության հրամանը, որտեղ վերլուծված է այդ համակարգի 1937 թ. կատարած աշխատանքները: Այնտեղ, մասնավորապես, նշված էր, թե դատախազության քննչական մարմինները մինչև վերջերս թույլ են տվել առանց բավարար հիմքի քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքեր, որի հետ միասին «տեղի են ունեցել նաև հակահեղափոխական հանցագործությունների գործերի և, մասնավորապես, տրոցկիստա-զինովևական, բուխարինական և այլ բանդիտական խմբակների հանցագործությունների վերաբերյալ գործերի բացահայտ թողտվություններ և կոծկումներ» [288]: Մինչ այդ, 1938 թ. մայիսի 3-ի ԽՍՀՄ դատախազի

---

[287] ՀԽՍՀ Քրեական օրենսգրքի 58-րդ հոդվածում նշված է. «Կոնտրռևոլուցիոն է համարվում ամեն մի գործողություն, որի նպատակն է տապալել, քայքայել կամ թուլացնել բանվորագյուղացիական Սովետների և ՍՍՌ միության Կոնստիտուցիաների հիման վրա այդ սովետների կողմից ընտրված բանվորագյուղացիական կառավարությունների իշխանությունը...»

[288] Տես ՀՀ ՆՊԿՊԱ. ֆ 571, ց. 1, գ. 94, թ 80

436 հրամանով ժամանակավորապես արգելվել էր հանրապետական դատախազներին հակախորհրդային հանցագործությունների գործեր հարուցել առանց ԽՍՀՄ դատախազի հաստատման[289]: Նաև դրանով կարելի է բացատրել 1938 թ. նոյեմբերի 17-ին Ստալինի ու ԽՍՀՄ ժողկոմխորհրդի նախագահ Մոլոտովի ստորագրություններով «Ձերբակալությունների» դատախազական վերահսկողության և քննություններ վարելու մասին» «խիստ գաղտնի» որոշման երևան գալը: Այստեղ նշվում էր, որ նախորդ տարիներին թույլ էին տրվել «խոշորագույն թերություններ և խեղաթյուրումներ» ՆԳԺԿ և դատախազական մարմինները «անց էին կացնում զանգվածային ձերբակալություններ»[290]: Ինչպես նշել ենք, ԽՍՀՄ ղեկավարությունը քավության նոխազ էր դարձնում իր իսկ ցուցումները նվիրվածորեն կատարողներին:

Այնուամենայնիվ, 1939 թ. դեռևս շարունակվում էին բռնությունները, որի ընթացքում Հայաստանում բռնաճնշվեցին 765 մարդ: Նրանցից 226-ը կոլտնտեսականներ էին, 147-ը բանվորներ, 198-ը՝ ծառայողներ, 27-ը ուսուցիչներ, 23-ը՝ տնօրեններ, 42-ը՝ զինվորականներ, 41-ը տնային տնտեսուհիներ, 4-ը գիտնականներ, 5-ը՝ ստեղծագործող մտավորականներ, 11-ը բժիշկներ, 8-ը իրավաբաններ, 19-ը՝ ուսանողներ, 7-ը կուսակցական աշխատողներ, 3-ը՝ կոլտնտեսության նախագահներ և այլն:

Ներկայացնենք նաև այն պատժաչափերը, որոնք տրվել են 1939-ին: Անշուշտ, ուշադրություն է գրավում այն իրողությունը, որ 462 մարդու ազատ են արձակել կամ նրանց գործերը կարճվել են: 1 տարի ժամկետով դատապարտվել են 13-ը, 2 տարի 16-ը, 3 տարի 26-ը, 4 տարի 9-ը, 5 տարի 57-ը, 6 տարի 19-ը, 7 տարի՝ 14-ը, 8 տարի 42-ը, 9 տարի 1-ը, 10 տարի 49-ը, 15 տարի 5-ը, 20 տարի 6-ը: Ուղղիչ աշխատանքային ճամբարներ են ուղարկվել 67, աքսորվել և արտաքսվել 16 մարդ (նրանց դատապարտման ժամկետները նշված չեն), գնդակահարվել են 5-ը, քննության ընթացքում մահացել են 5-ը և այլն:

Ավելացնենք նաև, որ 1939 թ. բռնաճնշումների մեջ գերիշխում է հայերի քանակը 610 մարդ: Ռուսներ էին 70-ը, ադրբեջանցիներ՝ 65-ը, հույներ 8-ը, ուկրաինացիներ 5-ը, գերմանացիներ՝ 2-ը, վրա-

---

[289] Նույն տեղում, թ.91

[290] ՀՀ ՀԲԿՓԿՊԱ, ֆ.1, ց.18, գ.18, թ.2

ցի՝ 2-ը և այլն:

Սակայն, զանգվածային դարձած բռնությունների թափը կասեցնելու ԽՍՀՄ իշխանությունների այդ միտումները չէին կարող արդարացնել նրանց գործադրած այն չարագործությունները, որոնց միայն Հայաստանում, ըստ ՀՀ ԱԱՆ արխիվի տվյալների 1930-1940 թթ. զոհ գնացին 15669 մարդ: ՆԳՆ արխիվի տվյալներով նույն ժամանակահատվածում բռնաճնշումների են ենթարկվել մոտ 2 հազար մարդ: Այդ արխիվի սույն խնդրին վերաբերվող գործերը, ժամանակին, ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի ներքին գործերի և ազգային անվտանգության առանձին գերատեսչություններ ստեղծելիս, մնացել են ՆԳՆ համակարգում: Այսպիսով, եթե ամփոփելու լինենք այդ արխիվների գործերի տվյալները, ապա ստացվում է, որ 1930-1940 թթ. ստալինյան բռնաճնշումների զոհ են դարձել Հայաստանի մոտ 18 հազար բնակիչներ: Եթե դրան ավելացնենք վերջիններիս ընտանիքների անդամներին, ընկերներին, հարազատներին հասցված բարոյահոգեբանական և այլ վնասները, ապա կարելի է պատկերացնել, թե դա ինչպիսի աղետ էր բավականին փոքրաթիվ ազգաբնակչություն ունեցող հանրապետության համար: Ինչպես հայտնի է, 30-ականներին Հայաստանը գյուղացիական հանրապետություն էր, ինչը ակնհայտ է նաև բռնությունների ենթարկվածների սոցիալական կազմի պարզ վերլուծությունից: Ըստ ԱԱՆ վերոհիշյալ արխիվի համապատասխան տվյալների, 1930-1940 թթ. բռնության ենթարկված բնակչության մեջ գյուղացիությունը կազմում էր 8620 մարդ: Բանվոր-ծառայողների թիվը՝ 1322 էր, մտավորականներինը (գիտնականներ, գրողներ, նկարիչներ և այլն) 733, ուսուցիչներին ու մանկավարժներինը 395, զինվորականներինը 242, ՆԳԺԿ աշխատակիցներինը՝ 161, բժիշկներինը՝ 88 և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ Հայաստանում բռնադատվածների կազմը ուներ ազգային հետևյալ պատկերը. հայեր 12806, ադրբեջանցիներ՝ 1092, ռուսներ՝ 591, քրդեր՝ 95, եզդիներ՝ 71 և այլն: Այսպիսով, ահաբեկչության հիմնական հարվածն ուղղված էր հայ ազգաբնակչությանը, ինչը հասկանալի էր,

քանի որ հայերը կազմում էին հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը:

դ. Իրավապահ մարմինները և բռնաճնշումները

Ինչպես տեսանք 30-ական թվականներին մենատիրության ձգտող Ստալինը և նրա մերձավորները սանձազերծեցին աննախադեպ բռնաճնշումներ՝ իրենց ժողովրդի նկատմամբ, բանտերը լցնելով և գնդակահարելով հարյուր հազարավոր, ըստ էության, անմեղ մարդկանց: Բռնությունների ալիքն իր մեջ առավ նաև դատարանների ու դատախազության, իրավապահ մյուս մարմինների աշխատակիցներին:

Այսպես ԽՍՀՄ-ում այդ տարիներին դաժանորեն «մաքրվեցին» դատական և դատախազական մարմինները՝ հանձինս արդարադատության ժողկոմ Ն. Կրիլենկոյի, գլխավոր դատախազ Ի. Ակուլովի, որը փորձել էր ելույթ ունենալ ՆԳԺԿ մարմինների կողմից թույլ տրված չարաշահումների դեմ, Մոսկվայի քաղաքային դատարանի նախագահ Ն. Նեմցևի, ԽՍՀՄ Գերագույն դատարանի անդամ Ա. Մեդվեդևի, ՌԽՖՍՀ-ի դատախազ Վ. Դեգոտի, ԽՍՀՄ դատախազության ականավոր ներկայացուցիչներ Ռ. Կատանյանի և Մ. Օստրոգորսկու, զինվորական դատախազներ և զինվորական տրիբունալների ղեկավարներ Ն. Գոմերովի, Յու. Ձերվիտի, Ե. Պերֆիլևի, Լ. Պլավնիկի և ուրիշների[291]:

Պատահական չէ, որ 1930-ական թվականներին բռնաճնշումների ենթարկվեցին Գլխավոր զինվորական դատախազության աշխատակիցների ավելի քան երկու երրորդը, որոնցից 80-ը բացահայտորեն հանդես են եկել անօրինականությունների դեմ և հնարավոր միջոցներով պայքարել արդարության համար[292]:

Այսպես, օրինակ, 1933-1936 թթ. Սևծովյան նավատորմի զինվորական դատախազ Պավել Վոյտենկոն, որն առանց իրավական հիմքի ձերբակալությունների թույլատրությունները չէր ստորագրում, ձերբակալվում է 1938 թ., մեղադրվելով «ձերբակալվածների նկատմամբ լիբերալ վերաբերմունք արմատավորելու մեջ», կեսգիշերից հետո հարցաքննությունները արգելելու համար և այլն: Նա

---

[291] Р. Медведев, О Сталине и сталинизме, М., 1990, էջ 382-383

[292] Они не молчали, Сост. А. В. Афанасьев, М., 1991, էջ 226

իր կյանքն ավարտում է աքսորավայրում 1944 կամ 1945 թթ.:

1930-ական թվականների զոհերի թվում էին նաև տարբեր տարիների զինվորական տրիբունալը ղեկավարած Ն. Կուզմինը, Պ. Պավլովսկին, Մ. Լանդան[293]:

Ըստ ՀՀ ԱԱՆ արխիվում կատարած մեր ուսումնասիրությունների, 1920-1940 թթ. տարբեր քաղաքական մեղադրանքներով Հայաստանում բռնությունների են ենթարկվել 41 իրավաբաններ՝ դատարանների և դատախազության աշխատակիցներ, ընդ որում, առավել մեծ էր նրանց թիվը 1937-1938 թթ.՝ 26 մարդ, որը զգալի քանակ էր հանրապետության համար:

Մինչև նրանցից մի քանիսի գործերին մանրամասն անդրադառնալը՝ ներկայացնենք բռնությունների ընդհանուր պատկերը նշված տարիներին ըստ վերոնշված տվյալների:

1920-1929 թթ. դատապարտվածների մեջ իրավապահ մարմինների աշխատակիցները 3-ն էին՝ 1925 թ. դատարանի գործավար Սմբատ Սարխոշյանը, 1928 թ..՝ իրավաբան Միհրան Ասատրյանը և 1929թ.՝ իրավաբան Պերճ Թարվերդյանը: Նրանք բոլորն էլ մեղադրվել են դաշնակցական ընդհատակյա կազմակերպություններին անդամակցելու մեջ: Ս. Սարխոշյանը դատապարտվել է, ապա ազատ արձակվել[294]:

1930 թվականին 8 տարվա ազատազրկման է ենթարկվում Երևանում աշխատող դատական կատարածու Հմայակ Պողոսյանը և դատապաշտպան Նիկոլայ Գևորգյանը, որը 10 հոգու հետ ընդհատակյա դաշնակցական գործունեության համար ուղարկվում է համակենտրոնացման ճամբար:

1936 թ. 5 տարի ազատազրկման է դատապարտվում նաև Լենինականի ժողդատարանի քարտուղար Անուշավան Էյրամջյանը[295]:

1937 թ. հունվարին դաշնակցական գործունեության համար ձերբակալվում և ՆԳԺԿ եռյակի որոշմամբ 10 տարի ազատազրկման է դատապարտվում Լիպարիտ Գաբրիելյանը, հակախորհրդային գործունեության համար նույն պատիժն է ստանում Ստեփանավանի ժողդատարանի քարտուղար Գևորգ Լուսարարյանը[296]:

---

[293] Նույն տեղում , 234-235

[294] Տե՛ս ՀՀ ԱԱՆԱ. ԿԳՖ. գ. 9308, ԿԳՖ, գ.գ. 6915,11872

[295] Նույն տեղում, ԿԳՖ, գ.գ. 6073, 11035, 7533, 3788

[296] Նույն տեղում, գ.գ. 1922, 2900

Հակահեղափոխական գործունեության համար 5 տարի ազատազրկման է ենթարկվում Ղուկասյանի շրջանից իրավաբան Արտավազդ Գեոդակյանը, գնդակահարվում է Լենինականում դատախազ աշխատող Թորոս Թորոսյանը, 6 տարի ազատազրկման է ենթարկվում հակախորհրդային գործունեության համար, նույն քաղաքից իրավաբան Գեորգի Խոյեցյանը, 10 տարի՝ իրավաբաններ Տրդաթ Տրդաթյանը և Ալեքսանդր Տեր-Աստվածատրյանը Երևանից, գնդակահարվում է դատապաշտպանների կոլեգիայի անդամ Գրիգորի Զամոևը, ՀՕԿ-ի և տեղական արդյունաբերության ժողկոմատի իրավախորհրդատու Ալեքսանդր Համբարձումյանը[297]:

Տարբեր ժամկետներով ազատազրկման են ենթարկվում գերագույն դատարանի անդամ Միսակ Մուրադյանը, իրավաբան Միքայել Ամիրաջիբին, Երևանի դատախազ Գագիկ-Հայկ Ռաշիդյանը, իրավախորհրդատու Պերճ Թարվերդյանը, իրավաբան Մկրտիչ Ջեյթաչյանը: Նույն 1938 թվականին գնդակահարվում են իրավաբաններ Կավկազ Սարգսյանը, Սանատրուկ Բաղրամյանը, Եղեգնաձորի ժողդատարանի քարտուղար Սարգիս Ավագյանը, դատապաշտպան Լևոն Կանտ-Կանդոյանը, Երևանի պետհամալսարանի դասախոս, Հայաստանի դատախազի նախկին տեղակալ Հրանտ Գալիկյանը, արդարադատության ժողկոմ Արմենակ Հովսեփյանը, Հայաստանի դատախազության բաժնի վարիչ Խաչիկ Գնունին, դատապաշտպան Հմայակ Սուքիասյանը, իրավական խորհրդատու Գրիգորի Եվանգուլովը, հանրապետության դատախազ Պետիկ Թորոսյանը:

Նշենք, որ 1937-1938 թթ. ձերբակալված մի քանի իրավաբաններ Սուրեն Միքայելյանը, Մելիք Օկմինյանը, Իոսիֆ Ամիրխանյանը, Մխիթար Սաֆարյանը, Ստեփան Գրիգորյանը 1939 թվականին ազատ են արձակվում կամ նրանց գործերը կարճվում են[298]:

Սակայն, 1938 թվականին Լենինականում ձերբակալված իրավաբան Լևոն Ազնավուրյանին և 1939 թ. Երևանում ձերբակալված իրավաբան Բագրատ Դադայանին հակախորհրդային գործունեության համար դատապարտում են 8 տարի ազատազրկման, ընդ որում, առաջինը մահանում է ճամբարում, 1942 թվականին[299]:

---

[297] Նույն տեղում, գ.գ. 3030, 3221, 3909, 4154, 10709, 11909, 912

[298] Տես նույն տեղը, ԿՖ. գ.գ. 671, 713, 3926, 4092, 4425

[299] Տես նույն տեղը, գ.գ. 3122, 1408

Այժմ ավելի մանրամասն անդրադառնանք մի քանի գործերի, որպեսզի առավել առարկայական լինի թե ինչպիսի կոնկրետ մեղադրանքներ և վերաբերմունք էր դրսևորվում հատկապես 1930-ականների ստալինյան բռնաճնշումների տարիներին մեր հանրապետության ճանաչված իրավաբանների նկատմամբ:

Այդ առումով ուշագրավ է 1936 թ. նոյեմբերի 27-ին ձերբակալված Կոտայքի շրջանի դատախազ Հմայակ Հակոբյանի գործը, ում, ինչպես նշված է մեղադրական եզրակացության մեջ, մեղադրում էին. «... հովանավորում էր հ(հ (հակահեղափոխական-Ա.Մ.) տրոցկիստներին, նրանց ձերբակալության սանկցիաներ չէր տալիս, կապվել է դաշնակցականների հետ և վերջիններիս վերցրել իր պաշտպանության տակ, 1936 թ. մայիսի 24-ի դատական նիստի ժամանակ ունեցել է կտրուկ հակահեղափոխական ելույթ Զինովևի, Կամենևի և մյուսների հ(հ տրոցկիստական բանդայի նկատմամբ դատավճռի կապակցությամբ հրավիրված միտինգի ժամանակ թույլ է տվել բացահայտ հ(հ տրոցկիստական ելույթ»: Այնուհետև հիշատակվում է, որ Հ. Հակոբյանը Կոտայքի կուսակցական շրջկոմի պլենումի ժամանակ փորձել է ապացուցել ձերբակալված հ(հ (հակահեղափոխական-Ա. Մ.) տրոցկիստների անմեղությունը, որ նա 1936 թ. կարճել և արխիվ է հանձնել Կոտայքի շրջանի բնակիչ, հ(հ տրոցկիստ Հովհաննես Գասպարյանի գործը: Հետագայում Հ. Գասպարյանը դատարան է կանչվել, որտեղ խոստովանել է, թե իսկապես եղել է տրոցկիստ: Հատուկ նշված է, որ վերոհիշատակած միտինգի ժամանակ Հ. Հակոբյանն իր ելույթը ավարտել է. «Կեցցե Տրոցկին» բացականչությամբ: Ի միջիայլոց, մեղադրանքի այդ դրվագը խոստովանում է նաև ինքը՝ Հ. Հակոբյանը: Բերվում են նաև տարբեր դատավարությունների ժամանակ վերջինիս ասած «անթույլատրելի» խոսքերը: Այսպես, մի անգամ նա ասել է. «Խեղճ գյուղացիները տանջվում են ծանր հարկերի տակ» և այլն[300]:

1937 թ. հուլիսի 7-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի շրջիկ նստաշրջանը դռնփակ դատական նիստում Հ. Հակոբյանին դատապարտում է 10 տարի ազատազրկման, զրկելով քաղաքական իրավունքից 5 տարի ժամկետով և անձնական գույքի բռնագրավումով:

Սակայն դրանով չեն ավարտվում դատախազ Հ. Հակոբյանի

---

[300] Նույն տեղում, ԿԳՖ, գ. 3168, թ. 102

տանջանքները: Ինչպես պարզվում է գործի նյութերից նա իր պատիժը կրում է ԽՍՀՄ ՆԳԺԿ Նորիլսկի ճամբարում և 1946 թ. ազատվելով, 1947 թ. վերադարձել է Հայաստան, որտեղ 1949 թ. կրկին դատապարտվում է աքսորի: Մեղադրական եզրակացության մեջ, բացի 1937 թ. արդեն հիշատակված մեղադրանքներից, ավելացնում են, թե նա պատժավայրից վերադառնալուց հետո թույլ է տվել «հակահեղափոխական բնույթի արտահայտություններ»: Այս անգամ անհրաժեշտ չեն համարել «մանրամասնելու» նրա, «հանցագործությունները» և Հ. Հակոբյանը երկրորդ անգամ՝ 1949 թ. ընկնում է զանգվածային բռնությունների հորձանուտը[301]:

Հայաստանում ստալինյան բռնություններին ենթարկված զոհերի մեջ քիչ թիվ չէին կազմում Թբիլիսիի հանրահայտ Ներսիսյան դպրոցի սաները, որոնցից շատերը դարձել էին հանրապետության տարբեր բնագավառների ղեկավարներ (Ա. Երզնկյան, Հ. Կոստանյան, Ալ. Շահսուվարյան, Դր. Տեր-Սիմոնյան, Ս. Մարգարյան, Ա. Եսայան և ուրիշներ)[302]: Այդ փառաբանված դպրոցի սանն էր նաև Արմենակ Հովսեփյանը, որը 1917թ. մտել էր բոլշևիկյան կուսակցության շարքերը, 1920 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի) էր, այնուհետև 1924-1929 թթ., հանրապետության դատախազի տեղակալն էր, ապա արդարադատության ժողկոմը, 1930-ականի սկզբներից թեթև արդյունաբերության ժողկոմ, 1936թ. արդարադատության ժողկոմ:

1937 թ. հուլիսի 29-ին ձերբակալվում է նաև Ա. Հովսեփյանը, որին 1938 թ. հուլիսի 18-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանը Զինվորական կոլեգիայի շրջիկ դատարանի նիստում դատապարտում է գնդակահարության, անձնական իրերի բռնագրավումով:

Ինչպես այդ դժնի տարիներին ընդունված էր հանրապետության արդարադատության ժողկոմը մեղադրվում էր որպես Հայաստանում գործող «հակախորհրդային ազգայնամոլական կազմակերպության ակտիվ անդամ», որը գործում էր դաշնակցական «աջտրոցկիստական ահաբեկչական կազմակերպության հետ», նպատակ ունենալով զինված ապստամբության միջոցով բռնի տապալել խորհրդային իշխանությունը և անջատել Հայաստանը ԽՍՀՄից, հաստատել բուրժուա-նացիոնալիստական կարգեր՝ կապիտալիս-

[301] Նույն տեղում, թ. 198

[302] Տես Անմոռաց դեմքեր, Ներսիսյան դպրոցի սաները, կազմ. Հ. Ագուլյան և ուր. եր., 1965

տական պետություններից մեկի հովանավորության տակ: Բացի այդ ընդհանուր բնույթի մեղադրանքներից Ա. Հովսեփյանին վերագրվում են նաև արդյունաբերության մեջ վնասարարությամբ զբաղվելը և Բերիայի դեմ նախատեսված ահաբեկչական գործողության նախապատրաստական աշխատանքներին մասնակցելը: Ինչպես Ա. Հովսեփյանն է «խոստովանել» 1937 թ. օգոստոսի 21-ին, վնասարարական աշխատանքը կայացել է նրանում, որ միութենական բյուջեից թաքցրել է տեղական արդյունաբերության եկամուտները և կատարել հիմնավորված ծախսեր նավթի պաշարների հետախուզման ուղղությամբ և այլն: Հենց իր իսկ խոսքերով, վերոհիշատակած կազմակերպությունը ահաբեկչական գործողություն է նախապատրաստել Բերիայի դեմ:

Այժմ ներկայացնենք, թե ինչպիսի «վնասարարություն» էր «խոստովանել» Ա. Հովսեփյանը հարցաքննությունների ժամանակ: Այսպես, նա «վնասարարությամբ կառուցել է բազալտի գործարանը», կոշիկի ֆաբրիկա, ընդարձակել է Երևանի կաշվի գործարանը, մետաքսի ֆաբրիկան, ծրագրել է Դավալուի ցեմենտի գործարանի արտադրության ավելացումը և այլն[303]: Կարծում ենք, որ վերոշարադրածը ակնհայտ ապացուցում է, որ Ա. Հովսեփյանը նվիրված աշխատել է Հայաստանի արդյունաբերության ստեղծման և զարգացման համար, ինչը և հաստատվում է 1955 թ. նրա գործը վերանայելիս[304]:

1938 թ. փետրվարի 28-ին եռյակի որոշմամբ՝ գնդակահարության են դատապարտվում Ախտայի (Հրազդան) շրջանի նախկին դատախազ, ԽՍՀՄ Դատախազության բաժնի վարիչ Խաչիկ Գնունին և Երևանի պետհամալսարանի դասախոս, Հայաստանի դատախազի նախկին տեղակալ Հրանտ Գալիկյանը, ովքեր մեղադրվում են այն բանում, որ, «1920-1922 թթ. գտնվելով Կոստանդնուպոլսում (Թուրքիա), հարել են «Հնչակյան» կուսակցությանը և «Երկիր» թերթում («Հնչակյան» կուսակցության օրգան) տեղադրել են իրենց ծրագրային հոդվածները Խորհրդ. իշխանության դեմ: 1922 թ. Հայաստան գալուց հետո, մտել են, իբրև թե Հայկ. ԽՍՀ-ի Դատախազությունում գործող հակախորհրդային ազգայնամոլական խմբի մեջ և

---

[303] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ., գ. 6853, թ. 38-39

[304] Նույն տեղում, թ. 100

մինչև իրենց ձերբակալման օրը վարել են ակտիվ հակախորհրդային աշխատանք»[305]:

1937-ի դժնի օրերից մեկում՝ հունիսի 11-ին ձերբակալվում է Երևանի փայտամշակման կոմբինատի մեխանիկական գործարանի իրավախորհրդատու Գրիգորի Եվանգուլովը: Նա ծնվել է 1871 թ. Թբիլիսիում, «խոշոր բուրժուայի ընտանիքում»: 1894 թ. ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1895-1917 թթ. ծառայել է ցարի պետական խորհուրդի գրասենյակում, ունեցել իսկական ստատ խորհրդականի կոչում: 1931 թ. ձերբակալվել է Անդրկ. ՊՔՎ կողմից հակախորհրդային գործունեություն վարելու մեղադրանքով, սակայն 10 ամիս անց ազատ է արձակվել: Այս, գուցեև ընթերցողին առանձնապես ոչինչ չասող տվյալներով է ներկայացվում տվյալ գործում հայ իրականության բավականին ճանաչված իրավագետներից մեկը Գ. Եվանգուլովը, ով իր ներդրումն է ունեցել 20-րդ դարի սկզբին Ռուսաստանի օրինաստեղծ գործունեության մեջ, մասնավորապես 1912-1917 թթ. պետխորհրդի օրինականության գծով ստատքարտուղարի օգնականը և մի շարք օրենքների նախագծերի ուղղակի հեղինակը: Ավելորդ չենք համարում նշել, որ նրա գործում գտնվել են մի շարք արժեքավոր ձեռագրեր, որոնք 1996 թ. հանձնվել են Մատենադարանին:

1937 թ. ձերբակալված 66-ամյա իրավաբանը մեղադրվում է ՀԽՍՀ ՆԳԺԿ-ում «ունեցած այն տվյալների հիմքի վրա, որ նա առնչվում է կապիտալիստական երկրներից մեկի հետախուզությանը»:

Նախ, հիշատակվում է, որ Գ. Եվանգուլովը 1893ից 1914 թթ. բազմիցս ուղևորվել է արտասահման Գերմանիա, Ավստրիա, Հունգարիա, Իտալիա, Թուրքիա: Ապա, որ նա «թշնամաբար է ընդունել Խորհրդային իշխանությունը և լինելով գերմանոֆիլ 1918 թ. մարտին մեկնել է գերմանացիների կողմից զավթված Անդրկովկաս, որոշելով իրեն նվիրել հայկական բուրժուական պետության՝ Գերմանիայի հովանավորության տակ»: Գնալով Թբիլիսի, Գ. Եվանգուլովը շփման մեջ է մտնում Անդրկովկասի օկուպացիոն կորպուսի հրամանատար գեներալ Ֆոն-Կրեսսի հետ և ստեղծում հայ-գերմանական «Ֆերեյն» ընկերությունը, որի աշխատանքներում ընդգրկեց «հայ հեղինակավոր արիստոկրատ, գերմանական կրթություն

[305] Նույն տեղում, գ. 2671, թ. 131

ստացած երաժշտության պրոֆեսոր Վասիլի Կորդանովի (մահացել է 1934 թ.), նույնպիսի կրթություն ստացած տնտեսագետ Գրիգոր Ջաղեթյանին մեղադրվել է այլ գործով և այդ տարիներին մանկավարժ, հետագայում պատմության և աշխարհագրության գծով գիտնական Ստեփան Կանանյանին (մահացել է)»:

Ինչպես գրված է Գ. Եվանգուլովի մեղադրական եզրակացության մեջ, նա իր Գերմանիայի ուսուցիչ Լեյստ Արթուրի միջոցով կապվում է Անդրկովկասում լույս տեսնող «Կաուկազսշե պոստ» թերթի խմբագիր Ֆուֆաևի հետ, որը 1935 թ. որպես գերմանական հետախուզության ռեզիդենտ «բացահայտվել և գնդակահարվել է Անդրկովկասի ՊՔՎ-ի կողմից:

Կարծում ենք, որ հարկ չկա խորանալու Գ. Եվանգուլովի ինքնախոստովանությունների մեջ, քանի որ այժմ քաջ հայտնի է, թե ինչպես էին դրանք ծեռք բերվում 30-ականներին ՆԳԺԿ մարմինների կողմից, ուղղակի նշենք, թե ինչպես են զարգանում նրա մեղադրանքները գործում:

Այսպես, մինչև 1935 թ., վերոհիշատակված Ֆեոֆանովի ծերբակալությունը՝ Գ. Եվանգուլովը համագործակցում էր գերմանական հետախուզության հետ, միաժամանակ՝ 1920 թ. այդ հետախուզության ցուցումով կապվում է «Ինտելիջենս Սերվիսի» սպա անգլիացի Սանդերսի հետ և հավաքագրվում անգլիական հետախուզության կողմից, որոնց տեղեկություններ է հաղորդում ընդհուպ մինչև 1930թ. Անգլիայի ինտուրիստի ներկայացուցչության, Բիթլիսի անգլիական նախկին փոխհյուպատոս Արշակ Սաֆարյանի և Երևանի անգլկոմի ներկայացուցիչ Հարկորտի և Նորկորտի միջոցով և այլն:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Գ. Եվանգուլովը Թբիլիսիից տեղափոխվում է Հայաստան և, կապվելով «դաշնակցությամբ վարակված մտավորականության հետ, ծավալում է հակախորհրդային գործունեություն հակախորհրդային ազգայնամոլական դաշնակցական կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ: Այս անգամ, նա արդեն «հայկական բուրժուական պետություն էր ստեղծում Անգլիայի հովանավորության ներքո»: Այդ տարիների տխուր տրամաբանությանը համապատասխան «բացահայտ հակախորհրդային կազմակերպության» մեջ հիշատակվում են հայ մտավորականության ճանաչված ներկայացուցիչներ Աշոտ Հովհաննիսյանը, Ստ. Ղամբարյանը, Ս. Կամսարականը և ուրիշներ,

ովքեր ևս եղել են 37-ի բռնաճնշումների զոհեր: Եվ տարօրինակ չպետք է համարել, որ տվյալ գործում նշվում է, թե Գ. Եվանգուլովը անգլիացիներին համոզելու նպատակով իրենց «գործունեության» մասին՝ 1922թ. կազմակերպում է ՀԿ(բ)Կ նախկին առաջին քարտուղար, ճանաչված պատմաբան, դասախոս Ա. Հովհաննիսյանի հանդիպումը Անգլկոմի ներկայացուցիչ Հարկորտի հետ...

Հասկանալի է, որ Գ. Եվանգուլովին առաջադրված մեղադրանքներն այնքան ծանր էին, որ նա չէր կարող փրկվել: 1938թ. հոկտեմբերի 4-ին տեղի է ունենում ՀԽՍՀ Հատուկ եռյակի նիստը, որը Գ. Եվանգուլովի նկատմամբ գնդակահարության որոշում է կայացնում: Արդարացվել է 1991 թ.[306]:

Ստալինյան բռնաճնշումների զոհերի մեջ անշուշտ կարելի է առանձնացնել նաև Պետիկ Թորոսյանի գործը: 1899 թ. Վանում ծնված Պ. Թորոսյանը կրել է իր ժամանակի բոլոր վայրիվերումները. 1925 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, բարձր պաշտոններ վարել ՀԿ(բ)Կում, իսկ 1933-1937 թթ. եղել է ՀԽՍՀ արդարադատության ժողկոմ, հանրապետության դատախազ, ՀԽՍՀ ժողկոմխորհրդի նախագահի տեղակալ:

Նախ ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ Պ. Թորոսյանը ծնվել է Վանում, այսինքն ՀԿ(բ)Կ Կենտկոմի «ինքնասպանություն» կատարած, «ազգայնամոլ» Ա. Խանջյանի հայրենակիցն էր: Ցավոք, այդ տարիների ուսումնասիրված գործերն ասում են այն մասին, որ ծնունդով վանեցի քիչ թե շատ պաշտոն գրավող կամ ճանաչված գործիչների ճնշող մեծամասնությունը, կարծես կախարդական փայտիկի զորությամբ, դարձել էին Հայաստանում, իբրև թե բուն դրած, «աջ-տրոցկիստական, ազգայնամոլական, ահաբեկչական» խմբի անդամներ, որոնց, «բնականաբար» առաջնորդում էր Ա. Խանջյանը:

Պ. Թորոսյանին, բացի այդ «հիմնական» մեղադրանքներից տրվում է «Հնչակյան» կուսակցությանը հարելու «մեղքը»: Ավելի լավ է ծանոթանանք նրա մեղադրական եզրակացության հետ. «1. 1920 թվականին հարել է հակահեղափոխական «Հնչակ» կուսակցությանը և վարել ակտիվ հակախորհրդային աշխատանք:

2. 1929 թվականից Հայաստանի հակախորհրդային աջտրոց-

[306] Նույն տեղում, գ. 12318, թ. 64-68, 71

կիստական ազգայնամոլական կազմակերպության անդամ է, որը նպատակ է դրել տապալել Խորհրդային իշխանությունը, Հայաստանն անջատել ԽՍՀ Միությունից և վերականգնել կապիտալիզմը:

3. Լինելով հակախորհրդային կազմակերպության ակտիվ անդամ, Հայկական ԽՍՀ դատախազությունում ստեղծել է հակահեղափոխական «հնչակյան» խումբ և քայքայիչ աշխատանք է վարում, ծածկում է վնասարարությունները և վնասարարական կազմակերպության մասնակիցներին...

Առաջադրված մեղադրանքներում իրեն մեղավոր չի ճանաչել...»[307]:

Իհարկե գործում նշված են բազմաթիվ «վկայություններ», որ, իբր թե, նա իսկապես զբաղվել է նման գործունեությամբ և դրանք բավարարել են համարվել հանրապետության ճանաչված մարդկանցից մեկին՝ Պ. Թորոսյանին 1938 թ. հուլիսի 20-ին տեղի ունեցած ԽՍՀՄ Գերագույն դատարանի Զինվորական կոլեգիայի դատական նիստի կողմից գնդակահարության դատավճիռ կայացնելու համար:

Կարծում ենք, որ ի նկատի ունենալով վերջին հանգամանքը և հիշելով, թե ինչպիսի անմարդկային ձևերով էին տարվում 1937-ի հարցաքննությունները ու կազմվում դրանց արձանագրությունները, հետաքրքիր կլինի ծանոթանալ ՀԽՍՀ-ի նախկին դատախազի 1938 թ. հունիսի 11-ի հարցաքննության արձանագրության որոշ հատվածների հետ, որոնք, բավականին տեղեկություններ են պարունակում այդ ժամանակաշրջանում կատարվող իրադարձությունների մասին: Հարկ է նշել, որ հարցաքննությունը տեղի է ունեցել 1938-ին, երբ արդեն չկային Ա. Խանջյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը և այնտեղ նշված շատ գործիչներ, որոնք հասարակությանը հանիրավի ներկայացվել էին որպես «ժողովրդի թշնամիներ»:

Նախկին դատախազը պատմում է, որ ինքը բարեխղճությամբ կատարել է իր ծառայողական պարտքը և արդյունքների մասին զեկուցել Կենտկոմի ղեկավարներ Խանջյանին, Ակոպովին և Ամատունուն, սակայն վերջիններս թույլ չեն տվել ձերբակալելու մեղավորներին, իսկ այդ տարիներին ԽՍՀՄ դատախազության հրաման կար, որ արգելվում էր ձերբակալել գլխավոր հաշվապահներին, առանց Կենտկոմի թույլտվության:

---

[307] Նույն տեղում, ԿԳՖ, գ. 6840, թ. 151-153. նրա մասին մանրամասն տես Ս. Հ. Սարգսյան, Պետիկ Թորոսյան (Քաղաքական կենսագրության), Եր., 1990

Չնայած այս բացատրությանը՝ Պ. Թորոսյանին շարունակում են մեղադրել փաստեր կոծկելու մեջ, քանի որ Հայաստանի շինարարության ոչ պլանային ծախսերի համար հանված միջոցների «վատնումը» քննիչների կողմից որակավորվում էր ոչ թե որպես քրեական հանցագործություն, այլ որպես «բացահայտ հակահեղափոխական բնույթի հանցագործություն, որն ուղղված էր Խորհրդային կառավարության դեմ»[308]:

Հասկանալի է, որ խոսքը գնում էր այն մասին, որ նախորդ տարիների հանրապետության ղեկավարներ Ա. Խանջյանը և Ս. Տեր-Գաբրիելյանը, առանց համաձայնեցնելու կենտրոնի հետ, Հայաստանում կատարել էին շինարարական աշխատանքներ, որը դուր չէր եկել, հավանաբար, առաջին հերթին Անդրկովկասի ղեկավարությանը դրանից բխող հետևանքներով: Մասնավորապես այն, որ այդ երկու ճանաչված քաղաքական գործիչները հետմահու հայտարարվել էին «ազգայնամոլներ» և «հակահեղափոխականներ»: Բնական էր նաև այն, որ հանրապետության դատախազը տեղյակ և մասնակից էր նրանց հայրենանվեր գործունեությանը, ուստի դաժան 1937-ին կանչվեց «պատասխանատվության»:

Ինչպես տեսնում ենք, հանրապետության օրենքների գլխավոր պահապանը և գիտակը ևս ի զորու չէր դիմադրելու 30-ական թվականների անօրինականությունների հեղեղին:

1937 թ. Պ. Թորոսյանին ՀԽՍՀ դատախազի պաշտոնում փոխարինում և մինչև 1939 թ. աշխատում է ՆԳԺԿ մարմինների երկարամյա աշխատակից, մինչ այդ 1934-1937 թթ. ՀԽՍՀ ՆԳԺԿ ժողկոմի տեղակալ Արամ Հարությունյանը:

Դեռևս հնարավոր չէ ճշտել Ա. Հարությունյանի վերջնական ճակատագիրը: Հայտնի է, որ նա 1939-ից մինչև 1941-1945 թթ. աշխատել է Հայաստանի և Ադրբեջանի ժողտնտեսության մեջ, 1941 թ. կրկին ծառայել ՆԳԺԿ-ի հատուկ բաժիններում, ապա 1946 թ. զորացրվել, իսկ 1947 թ. ծառայել Հայաստանի ՆԳՆ համակարգում մինչև 1951 թ.:

Ճակատագրի բերումով, թե ինչ-ինչ պատճառներով Պ. Թորոսյանին 1937-ին փոխարինած Ա. Հարությունյանը չի ենթարկվել որևէ դատական պատասխանատվության, այն դեպքում, երբ հայտնի է, որ նա, լինելով ՀԽՍՀ դատախազ, 1937 թ. հոկտեմբերի 1-ից մինչև

---

308 ՀՀ ԱԱՆԱ. ԿԳՖ. գ. 6840, թ. 58-59

1937թ. հոկտեմբերի 31-ը, 1937 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1938 թ. մարտի 25-ը եղել է ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի եռյակի, 1938 թ. հոկտեմբերի 4-ից մինչև 1938 թ. հոկտեմբերի 21-ը՝ Հատուկ եռյակի անդամ, որոնց նիստերի ընթացքում՝ առաջին շրջանում քննարկվել է 831 մարդու գործ, որոնցից գնդակահարության են դատապարտվել 660-ը, այլ պատժաչափերի՝ 171-ը, երկրորդում՝ 6333 մարդու գործ, որոնցից գնդակահարվել են 3639-ը, այլ պատժաչափեր են ստացել 2694-ը և երրորդում՝ 319-ը մարդու գործ, որոնցից 95-ը գնդակահարվել են, 224-ը ստացել են այլ պատժաչափեր:

Ավելորդ չէ նշել, որ դատապարտվածների մեծամասնությունը հետագա տարիներին արդարացվել է: Հայտնի է միայն, որ 1954թ. հոկտեմբերի 22-ին Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն որոշում է կայացրել պաշտոնից հանել Հայկ. ԽՍՀ Գերագույն դատարանի անդամ Ա. Հարությունյանին՝ հանրապետության դատախազ և ՆԳԺԿ եռյակի անդամ լինելու ժամանակ պատժիչ քաղաքականության մեջ կուսակցական գծից շեղվելու համար, և գործը հանձնել Կենտկոմին կից վերահսկողության հանձնաժողովին՝ անհրաժեշտ գտնելով նրան հանել ԽՍՀՄ ՆԽ կից ՊԱԿ-ի թոշակառուների ապահովությունից[309]:

Քանի որ մեր նյութերը Ա. Հարությունյանի գործունեության մասին դեռևս ամբողջական չեն, ուստի բավարարվենք վերոհիշյալ փաստերով:

Անկասկած, այդ տարիների գործերից կարելի է առանձնացնել նաև իրավագիտության մեջ ճանաչում ունեցող, ՀԽՍՀ առաջին սահմանադրության կազմող, դատապաշտպանների կոլեգիայի անդամ, երկարամյա դասախոսական աշխատանք կատարած Գրիգորի Չուբարյանի գործը: Վերջինս ուսանելի է նաև այն առումով, որ նա, լինելով իրավագիտության խոշոր մասնագետ, չի ընդունում իրեն առաջադրած և ոչ մի մեղադրանք, ու փորձում է ամեն կերպ հասնել իրավական արդարության: Դա, ցավոք, չի օգնում նրան, քանի որ ձերբակալվելով 1937 թ. հունիսին «հակահեղափոխական, դաշնակցական խմբի» չորս այլ անդամների հետ, Գ. Չուբարյանը սկզբում՝ 1940 թ. դատապարտվում է 8 տարի ազատազրկման, ապա 1949 թվականին կրկին աքսորվում է նույն մեղադրանքներով[310]:

---

[309] Տես նույն տեղը, Ա 2674

[310] Նույն տեղում, ԿԳՖ, գ. 1893, հ. 3., թ. 131-146

Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (ՆԳԺԿ) մարմիններն իրենց առանձնահատուկ, ծանր բաժինն ունեն 1930-ական թվականներին ԽՍՀՄ-ում մեծ ծավալներ ընդունած բռնությունների իրագործման մեջ: Թերևս, այդ դժնի տարիների պատմությունն ամբողջական չի լինի. եթե ամենայն անաչառությամբ չուսումնասիրվի և չներկայացվի այդ մարմինների դերը և նշանակությունը՝ կատարված անմարդկային չարագործություններում: Սակայն, հարկ է ճշգրտել խորհրդային երկրի բոլոր ինստիտուտների պես կուսակցական հրահանգներով անշեղորեն ղեկավարվող ՆԳԺԿ-ի տեղը և դերը տեղի ունեցած իրադարձություններում: Հիշեցնենք, որ անգամ 1938 թ. նոյեմբերի 17-ի ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ ԺԿԽ-ի որոշման մեջ կա մի հետաքրքիր «ինքնախոստովանություն», թե այդ տարիներին օրինապահ մարմինների գործառնությամբ էին զբաղվում թե կուսակցական, թե խորհրդային և այլ մարմիններ, ինչը հակասում էր անգամ տվյալ ժամանակի օրենքներին[311]:

Ինչպես հայտնի է, Խորհրդային Հայաստանի հատուկ ծառայությունը մինչև 1936 թ. ենթարկվում էր նաև Անդրֆեդերացիայի համապատասխան մարմիններին, որի կենտրոնը Թբիլիսիում էր:

Այստեղից հասկանալի է, որ ՀԽՍՀ ԱՀ-ն՝ 1926 թ. պետական քաղվարչությունը (ՊՔՎ), իսկ 1934 թ. ՆԳԺԿ վերանվանված մարմինը, բացի կուսակցական հրահանգներից, առաջնորդվում և գործում էր Կենտրոնից և Թբիլիսիից եկած հրահանգներով ու այն օրենսդրական դաշտում, որը ստեղծվեց ԽՍՀՄ-ում տվյալ մարմինների համար: Այդ իրավիճակը սկզբունքորեն չփոխվեց նաև 1936 թ. Անդրֆեդերացիայի լուծարումից հետո, քանի որ ՀԽՍՀ ՆԳԺԿ-ն, հետագայում այլ անվանումներ կրող մարմինը փաստորեն ԽՍՀՄ համապատասխան մարմնի ստորադաս օղակն էր: Ուստի, ավելորդ չէր լինի ներկայացնել ընդհանուր բնույթ կրող մի քանի օրենսդրական իրավունքներ, որոնք տրված էին այդ մարմիններին 30-ական թվականներին:

Նպատակ չհետապնդելով ներկայացնելու ՆԳԺԿ մարմինների պատմությունը, նշենք, որ 1934 թ. հուլիսի 10-ին ԽՍՀՄ ՆԳԺԿ-ին կից ստեղծվեց հատուկ խորհրդակցություն, որին իրավունք տրվեց մինչև 5 տարի ժամկետով աքսորել, վտարել, ուղղիչ-աշխատանքային ճամբարներ ուղարկել այն մարդկանց, ովքեր վտանգավոր էին

[311] ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 1, ց. 18, գ. 18, թ. 2

ճանաչվում հասարակայնության համար: Այնուհետև, 1936 թվականին, դրանք փոխարինվում են եռյակներով, որոնց կազմի մեջ էին մտնում ՆԳԺԿ տեղական մարմնի ղեկավարը (նախագահ), նրա տեղակալը և դատախազը: Նրանց իրավունք էր տրվում կայացնելու և ի կատար ածելու ցանկացած որոշում, ընդհուպ՝ գնդակահարությունը:

1937 թ. աշնանից մինչև լիկվիդացումը՝ 1938 թ. դեկտեմբեր տեղական եռյակները գլխավորում էին հանրապետությունների և երկրամասերի Կ(բ)Կ առաջին քարտուղարները, իրենց կազմում ունենալով ՆԳԺԿ և դատախազության ղեկավարներին:

1937 թ. նույնպիսի իրավունքներ են տրվում, այսպես կոչված, երկյակին, այն է՝ Հատուկ հանձնաժողովին, որի մեջ էին երկրի գլխավոր դատախազ Վիշինսկին և ՆԳԺԿի ղեկավար Եժովը:

Ավելացնենք, որ ցանկացած երկրի հատուկ ծառայությունների գործառնությունը (հետախուզություն, հակահետախուզություն և այլն) ստանձնելուց բացի Խորհրդային երկրում ՆԳԺԿ-ներում ստեղծվել և գործում էին Հատուկ քաղաքական բաժիններ, որոնց առջև խնդիր էր դրված պայքարելու նախկին հակախորհրդային քաղաքական կուսակցությունների և խմբերի, ազգայնամոլների, եկեղեցականների, աղանդավորների և ահաբեկիչների դեմ: Կարծում ենք, որ ավելորդ չէ բացատրել, թե մենիշխանության գնացող, ճանապարհից դաժանորեն իր քաղաքական հակառակորդներին վերացնող Ստալինի և նեղ կուսակցական վերնախավի համար ինչպիսի դեր ունեին ՆԳԺԿ մարմինները, և ինչպիսի ողբերգության հասցրեց «կուսակցության սուր և վահան» անվանած այդ մարմնի օգտագործումը ժողովրդի դեմ՝ 30-ական թվականներին: Հարկ է նշել նաև ԽՍՀՄ օրենսդրական ոլորտում եղած այն անթույլատրելի բացը, որը դատական և ոչ դատական մարմիններին իրավունք էր վերապահում ապացուցված համարել կասկածյալի մեղքը, եթե նա խոստովանում է այն: Եվ դա այն հանգամանքներում, երբ ՆԳԺԿ ներքին կարգադրությամբ թույլատրելի էր կտտանքների կիրառումը՝ մեղադրյալների նկատմամբ:

ԽՍՀՄ-ում «մեծ ահաբեկչության» իրավական հիմնավորումներն ամբողջացնելու նպատակով հիշեցնենք, որ 1934 թ. դեկտեմբերի 1-ին ԽՍՀՄ ԿԳԿ-ն ընդունել էր որոշում «Խորհրդային հանրապետությունների գործող քրեական-պրոցեսուալ կոդեքսներում փո-

փոխություններ մտցնելու մասին», որտեղ, մասնավորապես, հետևյալ նորամուծություններն էին կատարվել Խորհրդային իշխանության աշխատողների դեմ ահաբեկչական կազմակերպությունների և ահաբեկչական ակտերի գործերը հետաքննելիս.

«1. Այդ գործերի հետաքննությունը ավարտել 10 օրից ոչ ուշ ժամկետում:

2. Մեղադրական եզրակացությունները մեղադրյալներին հանձնել դատարանում գործը լսելուց մեկ օր առաջ:

3. Գործը լսել առանց կողմերի ներկայության:

4. Չթույլատրել դատավճիռների բողոքարկումները, ինչպես նաև ներման նպատակով հայցերի ընդունումը:

5. Պատժի առավելագույն չափի դատավճիռն ի կատար ածել դատավճիռը կայացնելուց անմիջապես հետո»:

1937 թ. սեպտեմբերին նման որոշում է կայացվում նաև հակահեղափոխական վնասարարության և դիվերսիաների գործերը հետաքննելու համար[312]:

ԽՍՀՄ-ում 20-ական թվականների կեսերից ստեղծված քաղաքական պատկերի վրա, երբ կուսակցական առաջնորդն անխնա ժողովրդի թշնամի էր անվանում իր ընդդիմախոսներին, երբ 30-ական թվականներին հասարակայնությանն էր պարտադրվում սոցիալիզմի հաղթանակի շրջանում «դասակարգային պայքարի սրման» անհիմն թեզը և այլ նման կարգախոսներ, ըստ էության, հասարակական, քաղաքական և պետական բոլոր մարմիններին պարտադրվում էր համընդհանուր գործելաոճ, որի իրագործման համար, բնականաբար, գտնվում էին նաև համապատասխանորեն ցածր բարոյական կերպարի տեր, աթոռապաշտ, քծնող, հլու-հնազանդ մարդիկ՝ կուսակցության վերնախավում, ինչպես նաև ՆԳԺԿ մարմիններում՝ հանձինս նրա մեկը մյուսին փոխարինած ղեկավարների՝ Յագոդայի, Եժովի և Բերիայի, որոնցից առաջին երկուսը 30-ականներին զոհ գնացին նաև իրենց ձեռքով ստեղծված բռնությունների մեքենային, իսկ վերջինս արժանիորեն պատժվեց 1953 թվականին: Ստալինյան բռնություններին զոհ գնացին նաև 14 հազար ՆԳԺԿ աշխատակիցներ, որոնցից էին ճանաչված չեկիստներ Ա. Արտուզովը. Յա. Բերզինը, Ի. Վորոնցովը, Մ. Լացիսը, Յա. Պետերսը և շատ ուրիշներ:

---

[312] Они не молчали, Сост. А. В. Афанасьев, М., 1991, էջ. 216

Ինչպես արդեն նշել ենք, ըստ ՀՀ ԱԱՆ արխիվի ԿԳԲ տվյալների, 1930-1938 թթ. հանրապետությունում բռնադատվեց 14 հազար 904 մարդ, ընդ որում, 1936-1938 թթ.՝ 8835 մարդ, որոնցից 4531-ը գնդակահարվել են:

Նույն տվյալների համաձայն, 1930-1938 թթ. բռնադատվել են ՀԽՍՀ ՆԳԺԿ 41 աշխատակիցներ, որոնցից գնդակահարվել են 9-ը, քննության ընթացքում մահացել է 1-ը, 10 տարի ազատազրկման են ենթարկվել 3-ը և այլն: Սակայն սա ամբողջական թվաքանակը չէ, քանի որ այնտեղ գրեթե չեն ընդգրկված 1938 թ. սեպտեմբերից հետո պատժի ենթարկված ՆԳԺԿ այն աշխատակիցները, ովքեր օրենքների խախտումներ էին թույլ տվել նախորդ տարիներին: Նրանց մեջ էին ՀԽՍՀ ՆԳԺԿ ժողկոմներ Խ. Մուղդուսին, Վ. Խվորոստյանը, տեղակալ Ի. Գևորկովը, բաժնի ու բաժանմունքների մի շարք պետեր և նրանց տեղակալներ, որոնց (անկախ նրանից՝ արժանի էին, թե՝ ոչ) նույնպես դատապարտում էին օրենքների խախտումներով, այսինքն՝ կրկին տեղի էին ունենում բռնություններ: Եվ պատահական չէ, որ 1950-ական թվականներին, 30-ականների բռնությունների զոհերի գործերը վերանայելիս, արդարացվում էին նաև որոշ ՆԳԺԿ-ի նախկին աշխատակիցներ:

Հարկ է հիշատակել նաև, որ ՆԳԺԿ-ի համակարգում էին նաև 1930 թ.-ից Բանվորա-գյուղացիական միլիցիայի վարչության վերանվանված և ՄՊՔՎ-ի ենթակայության տակ դրված հաստատության աշխատակիցները, որոնցից, օրինակ, ՆԳԺ կոմիսարի տեղակալ, նշված վարչության պետ Դուլգարովը և նրա տեղակալ Բաբաջանովը և ուրիշներ, ևս բռնադատվել են, իսկ 50-ականներին՝ արդարացվել:

Ուշադրություն է գրավում մի որոշակի օրինաչափություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1924-ից մինչև 1940 թթ. Հայաստանի ԱՀ-ՊՔՎ-ՆԳԺԿ-ի բոլոր ղեկավարները (բացառությամբ 1935 թ. Թբիլիսիում ավտովթարից զոհված Ա. Աբուլյանի, որն այդ մարմինը ղեկավարել է 1930-1934 թթ.), Ս. Մելիք-Օսիպովը, Ս. Մարգարյանը, Հ. Պետրոսյանը, Ս. Օթյանը, Խ. Մուղդուսին և Վ. Խվորոստյանը բռնադատվել են այդ և հետագա տարիներին:

Նրանք բոլորը մեղադրվել են հակախորհրդային աջ-տրոցկիստական, ազգայնամոլական կազմակերպության անդամ լինելու մեջ. դա 30-ական թվականներին ՆԳԺԿ-ում ձևակերպվող հիմնա-

կան մեղադրանքն էր: Հասկանալի է, որ այդ մարմնի ղեկավարները, որպես կանոն, քաղաքական կյանքի ակտիվ մասնակիցներ էին և չէին կարող խուսափել 1936 թ. ամռանից Հայաստանում սկսած հասարակական-քաղաքական գործիչների, մտավորականության, արվեստի ու գրականության ճանաչված ներկայացուցիչների նկատմամբ կիրառված բռնություններից: Սակայն, հարկ է նշել, որ 1936-1938 թթ. ՆԳԺԿ-ի բռնությունները ղեկավարող Խ. Մուղդուսին և Վ. Խվորոստյանը (ազգությամբ ռուս է, ծնվել և մինչև 1938 թ. սեպտեմբերն աշխատել է Ղազախստանում), բացի վերոհիշատակած մեղադրանքներից պատասխանատվության են ենթարկվում նաև այդ տարիներին թույլ տված օրինախախտումների համար:

Տվյալ ժամանակահատվածում ՀԽՍՀ ՆԳԺԿ մարմինների գործելաոճը ուսումնասիրելու առումով խիստ կարևորվում են 1934-1937 թթ. այդ գերատեսչության ղեկավար Խ. Մուղդուսու և նրա տեղակալ Ի. Գևորկովի գործերի քննությունը:

Խաչիկ Մուղդուսին (Աստվածատրյան) ծնվել էր Նախիջևանում, ապա կյանքի ծանր պայմաններից ելնելով, քաղաքացիական կռիվների ժամանակ հայտնվել Ռուսաստանում, այնուհետև Հայաստանում, որտեղ 1921 թ. սկսել է աշխատել ԱՀ-ի համակարգում մինչև 1937 թ. սեպտեմբերը[313]:

Խնդիր չունենալով նկարագրելու 20-ական թվականների վերջին Հայաստանի ներքաղաքական կյանքում ընթացող պայքարի մանրամասները, նշենք, որ դրա հետևանքով ՄՊՔՎ-ում բաժնի պետ աշխատող Մուղդուսին, որը այդ համակարգի ներսում ևս տեղի ունեցող խմբակային հակամարտությունների ժամանակ պաշտպանում էր ժողկոմ Մելիք Օսիպովին՝ ՀԿ(բ)Կ ղեկավարության փոփոխությունից, ՆԳԺԿ ղեկավարին պաշտոնից հանելուց հետո, 1928 թ. տեղափոխվում է Թբիլիսի: Այնտեղ, մինչև 1931 թ. աշխատում է Անդրֆեդերացիայի ՄՊՔՎ-ում՝ որպես հատուկ բաժնի պետ: Մեր կարծիքով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Խ. Մուղդուսու կենսագրության այս հատվածի վրա, քանի որ այդ ժամանակահատվածում Անդրֆեդերացիայի ՆԳԺԿ մարմնի ղեկավարն էր ոչ այլ ոք, քան ինքը՝ տխրահռչակ Լ. Բերիան: Դժվար չէ կռահել, թե ինչ դպրոց է անցել Խ. Մուղդուսին իր անմիջական ղեկավարի մոտ և ինչպիսի նպատակներով է 1931 թ. ուղարկվել Հայաստան և նշա-

[313] Մանրամասն տես «Առերեսում», թ. 9, 1994

նակվել ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի ղեկավարի տեղակալ: Հատկանշական է, որ նրա նշանակմանը դեմ է եղել ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Ա. Խանջյանը, ինչը խոստովանել է թե ինքը՝ Խ. Մուղդուսին, թե նրա տեղակալ Ի. Գևորկովը, որը 1937 թ. սեպտեմբերի 21-ի հարցաքննության ժամանակ ուղղակի նշում է. «ՀԿ(բ)Կ Կենտկոմը սկզբում չհամաձայնվեց Մուղդուսուն ՊՔՎ-ի տեղակալի պաշտոնին նշանակելու հետ»[314]:

Սակայն, թե ինչ պատճառներով՝ կարելի է միայն ենթադրել. Լ. Բերիայի մոտ «մասնագիտական» ուսուցում անցած Խ. Մուղդուսին, այնուամենայնիվ, նշանակվում է վերոհիշյալ պաշտոնին: Արդեն հայտնի է, որ իր քարտուղարության շրջանում Ա. Խանջյանը, ըստ կարելիության, դիմագրավում էր Կենտրոնի և հատկապես ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի, որի ղեկավարն էր դարձել նույն ինքը՝ Լ. Բերիան, ճնշումներին: Բերված փաստը ևս վկայում է Ա. Խանջյանի՝ նման դիրքորոշման մասին, և պատահական չէր 1936 թ. հուլիսի 9ին նրա «ինքնասպանությունը», իրականում՝ սպանությունը Լ. Բերիայի աշխատասենյակում, ինչն իշխանությունների կողմից հռչակվեց որպես դավաճանություն[315]:

Հայաստանում, ինչպես արդեն ներկայացրեցինք, ստալինյան բռնությունների ամենամեծ ալիքը բարձրացավ Խ. Մուղդուսու պաշտոնավարության վերջին շրջանում՝ 1936 թ. մայիս-1937 թ. սեպտեմբեր: Հասկանալով, որ նման, ըստ էության, քաղաքական քայլի պատասխանատվությունը չի կարելի բարդել մեկ մարդու վրա, եթե նա ԽՍՀՄ իրական տերը՝ Ստալինը չէ, չի կարելի նաև թերագնահատել այն տխուր փաստը, որ Ստալինի վերնախավային շրջապատը և տեղական իշխանիկները՝ հանձինս ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Լ. Բերիայի, ՀԿ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար Ա. Ամատունու և վերջիններիս անմիջական շրջապատը (այդ թվում և Խ. Մուղդուսին) իրենց ոչ երկրորդական դերն են ունեցել ստալինյան բռնությունների սանձազերծման և իրագործման անմարդկային գործընթացում: Քաղաքական պատվերն, իհարկե, տրվում էր Կենտրոնից, սակայն իրագործողներ էին հարկավոր տեղերում, և այդ մարդկանց մեջ էր նաև ՀԽՍՀ-ի ՆԳԺԿ կոմիսար Խ.

---

[314] ՀՀ ԱԱՆԱ, ԿԳԲ, գ. 10950, թ. 124

[315] Մանրամասն տե՛ս «Ազգ», 10 հուլիսի 1996, "Время", 3 июля, 1996, «Նժար», 2 հոկտեմբերի 1996

Մուղդուսին: Վերջինս, 1937 թ. օգոստոսից ի պաշտոնե, ՀԽՍՀ ՆԳԺԿ Եռյակի ղեկավարն էր, որի մեջ էին մտնում իր տեղակալը՝ Ի. Գևորկովը և Հայաստանի գլխավոր դատախազը: Որպես կանոն, եռյակի նիստերին մասնակցել են վերջինիս պաշտոնակատար Քալանթար Քալանթարյանը կամ տեղակալը՝ Միքայելյանը, Հայաստանի Գերագույն դատարանի հատուկ կոլեգիայի նախագահ Սարգիս Տեր-Նակալովը[316]: Թե ինչ եղանակներով էին կատարվում այդ դժնի տարիներին քննությունները, որոնց անմիջական ղեկավարը և մասնակիցն էր Խ. Մուղդուսին կանդրադառնանք ստորև, սակայն անհրաժեշտ է հիշատակել, որ 1937 թ. սեպտեմբերին Մոսկվայից ուղարկված Ա. Միկոյանի և Գ. Մալենկովի, ինչպես նաև Լ. Բերիայի մասնակցությամբ տեղի է ունենում ՀԿ(բ)Կ Կենտկոմի արտահերթ պլենում, որտեղ արդեն քննադատվում են 1936 հուլիս - 1937 թթ. սեպտեմբեր ժամանակահատվածում Հայաստանի ղեկավարներ Ա. Ամատունին, Ստ. Ակոպովը, Խ. Մուղդուսին և մյուսները «աջ-տրոցկիստական, ազգայնամոլական» կազմակերպության անդամներ լինելու համար: Նրանցից մի քանիսը, ձերբակալվում են հենց պլենումի նիստերի դահլիճում: Դա պատահական չէր, քանի որ վերոհիշատակած կուսակցության ճանաչված գործիչների հետ Ստալինը Հայաստան էր ուղարկել նաև ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի հատուկ քննչական խումբ Մ. Լիտվինի գլխավորությամբ, ում անձամբ կարգադրել էր «կարգ ու կանոն հաստատել» Հայաստանում: Այդ խմբի գործունեությանը ևս կանդրադառնանք ստորև, քանի որ նրանց ձեռքերով Ստալինը, փաստորեն, ազատվում էր իր իսկ հրահանգներով ոճիրներ իրագործողներից ու վկաներից Հայաստանում:

1937 թ. սեպտեմբերի 14-ին ձերբակալված Խ. Մուղդուսին, քաջատեղյակ լինելով գործընկերների աշխատաոճին, իսկույն «խոստովանում է» իր մեղքերը, որ ներքաշվել է «հակախորհրդային ազգայնամոլական կազմակերպության մեջ ՀԿ(բ)Կ ԿԿ նախկին քարտուղար, դավաճան Խանջյանի կողմից»[317]:

Կարծում ենք հարկ չէ մանրամասն ներկայացնել Խ. Մուղդուսու «ինքնախոստովանությունները», որոնց բովանդակությունը բխում էր վերը բերված օրինակից: Սակայն, անհրաժեշտ է հիշատակել, որ չնայած նրա առաջին իսկ պահից որդեգրած՝ ամեն մեղ-

---

[316] Տես ՀՀ ԱԱՆԱ, ԿԳՖ, գ. 8997, հ. 3, թ. 24

[317] Նույն տեղում, գ. 10953, հ. 1, թ. 14

քը իր վրա վերցնելու գծին, Մոսկվայից ժամանած քննիչներն ու անձամբ Բերիան, այնուամենայնիվ, խոշտանգում և ծեծում էին Խ. Մուղդուսուն: Այսպես, նրա գործի հետաքննության մասնակից, ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի աշխատակից, Լիտվինի խմբի անդամ Գր. Արսենովիչը 1955 թ. ապրիլին ԽՍՀՄ գլխավոր զինվորական դատախազությունում պատմում է.

«...Այո, 1937 թ. սեպտեմբերին ես իսկապես Լիտվինի բրիգադի կազմում մեկնել եմ Հայաստան... իսկույն ձերբակալվեց ՆԳ ժողկոմ Մուղդուսին, նրա տեղակալ Գևորկովը... Ամատունու, Գուլոյանի, Մուղդուսու հարցաքննություններին ներկա էին Բերիան և Լիտվինը... նրանց ծեծում էին, դա ճիշտ է, ես լսում էի նրանց ճիչերն ու տնքոցները: Ձերբակալվածներին տանում էին Բերիայի սենյակը: Դեռ Մոսկվայից ես հիշում եմ, որ Բերիան անձամբ ինձ ցուցում էր տալիս կիսամահու աստիճան ծեծել ձերբակալվածներին»[318]:

Խ. Մուղդուսին ԽՍՀՄ ՆԳԺԿ հանձնաժողովի, ԽՍՀՄ դատախազի և ԽՍՀՄ գերագույն զինվորական դատարանի կողմից 1937 թ. նոյեմբերի 22-ին հատուկ կարգով դատապարտվում է գնդակահարության[319]:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք գտնում մեջբերել հատված 1958 թ. հոկտեմբերի 31-ին Մոսկվայում զինվորական դատախազության կազմած եզրակացությունից, որը, մեր կարծիքով, գրեթե ամբողջական պատկերացում է տալիս 1936-37 թթ. Խ. Մուղդուսու գործունեության մասին:

«...Այսպիսով, Մուղդուսու նկատմամբ մեղադրանքն այն մասին, թե նա մասնակցել է հակախորհրդային կազմակերպության գործունեությանը, պետք է համարել ոչ հիմնավորված:

Դրանով հանդերձ, ստուգման ընթացքում հաստատվել է, որ Մուղդուսին լինելով Հայկական ԽՍՀ ներքին գործերի ժողկոմիսար, իր գործունեության մեջ թույլ է տվել սոցիալիստական օրինականության կոպիտ խախտումներ, կամայականություններ, խորհրդային ազնիվ քաղաքացիների ձերբակալման և նրանց ծանր պետական հանցագործություններում մեղադրելու մեջ:

Հայկական ԽՍՀ Նախարարների Խորհրդին կից ՊԱԿ-ում եղած 1936-1937 թվականների նյութերից երևում է, որ Մուղդուսու ներքին

[318] Նույն տեղում, գ. 5407, հ. 2, թ. 330
[319] Նույն տեղում, գ. 10953, հ. 2, թ. 449

գործերի ժողկոմի պաշտոնավարության ժամանակ ձերբակալվել է ղեկավար կուսակցական, խորհրդային աշխատակիցների, գիտության և մշակույթի գործիչների մեծ խումբ, այդ թվում՝ Հայաստանի Կենտգործկոմի նախագահ Գ. Ս. Հանեսօղլյանը, Վրաստանում Հայաստանի ժողկոմխորհի նախագահի ներկայացուցիչ Ն. Գ. Ղազարյանը, Հայաստանի Կենտգործկոմի քարտուղար Ռ. Պ. Դաշտոյանը... և ուրիշներ, որոնց գործերի ստուգումը ցույց է տվել, որ նրանք անհիմն են մեղադրվել հակահեղափոխական գործունեության մեջ և 1954-1958 թվականներին վերականգնվել են:

Պարզվել է նույնպես, որ 1937 թ. օգոստոսի 11-ից մինչև սեպտեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում Հայկական ԽՍՀ ՆԳԺԿ Եռյակը Մուղդուսու ղեկավարությամբ նայել է քննչական գործեր 354 մարդու վրա, որոնցից ՊԱՉ (պատժի առավելագույն չափի-Ա. Մ.) դատապարտվել են 304 մարդ և տարբեր պատժաչափեր են ստացել 50 մարդ: Վերոհիշյալ խմբից՝ ներկա դրությամբ արդարացվել են 34 մարդ...»[320]:

Արդեն հիշատակել ենք, որ 1937 թ. սեպտեմբերին Հայաստան ուղարկված կուսակցական և քննչական խմբերին հրահանգավորված էր «կարգ ու կանոն» հաստատել հանրապետությունում, ավելին՝ քննչական խմբի ղեկավար Լիտվինին Ստալինն անձամբ ասել էր, թե ինքը չի հավատում ՀԽՍՀ ժողկոմխորհի նախկին նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի ինքնասպանության փաստին և հատուկ ուշադրություն է դարձրել նրա մահվան հանգամանքները պարզելու անհրաժեշտությանը:

Ինչպես պարզվում է մեր ուսումնասիրություններից, այդ ողբերգական իրադարձության (և ոչ միայն այդ) հիմնական մասնակիցներն են եղել ՀԽՍՀ ՆԳ ժողկոմի տեղակալ Իվ. Գևորկովը և 4-րդ բաժնի պետի տեղակալ Ե. Նիկողոսյանը (Նիկողոսովը), ովքեր Մուղդուսու հսկողությամբ անմիջականորեն վարել են Ս. Տեր-Գաբրիելյանի գործը:

Խ. Մուղդուսուն, ինչպես և նրա ենթականեր Իվ. Գևորկովին ու Ե. Նիկողոսյանին, մեղադրում են ՆԳԺԿ-ում իբրև գործող հակահեղափոխական կազմակերպության անդամ լինելու մեջ, որի անդամ էր «եղել» նաև Ս. Տեր-Գաբրիելյանը: Ուշագրավ է, թե ինչպես է պատճառաբանում վերջինիս ձերբակալությունը Ե. Նիկողոսյանը.

---

[320] Նույն տեղում, գ. 10953, հ. 2, թ. 451

«Մեզ մոտ բավականին մեծ քանակությամբ փաստաթղթեր էին հավաքվել Տեր-Գաբրիելյանի վրա: Բացի այդ, նա անցնում էր Ռիկովի մերկացուցիչ արձանագրություններով և, վերջապես, նրա վրա դուրս էին եկել Թբիլիսիում: Իմ կարծիքով, նրա ձերբակալությունը չէր կարելի ձգձգել, այլապես մենք վտանգի կենթարկվեինք, քանի որ նրան կարող էին ձերբակալել Մոսկվայում կամ էլ փոխանցել Թբիլիսի, իսկ այդ դեպքում Մուղդուսին, հետևաբար նաև մենք, կընկնենք հարվածի տակ»[321]:

Գևորկովի և Նիկողոսյանի հարցաքննությունների արձանագրություններում աչքի է ընկնում այն, որ Ս. Տեր-Գաբրիելյանի սպանության առնչությամբ երկուսն էլ խոստովանել են, թե Մուղդուսու ցուցումներով, 1937 թ. օգոստոսի 21-ին, հերթական հարցաքննության ժամանակ, իրենք 3-րդ հարկի պատուհանից ցած են նետել Ս. Տեր-Գաբրիելյանին: Համընկնում են կատարվածի մանրամասները, ինչպես նաև գործերում առկա են հարակից հաստատումներ[322]:

Ի. Գևորկովը և Ե. Նիկողոսյանը 1937 թ. նոյեմբերին հատուկ կարգով դատապարտվել են գնդակահարության, որն ի կատար է ածվել 1938 թ. փետրվարի 3-ին:

1956 թ. Ս. Տեր-Գաբրիելյանի մահվան հանգամանքները ճշտելու նպատակով հարցաքննված վկաներ Գաբրիելյանը և Օրդուխանյանը նշում են, որ քննության ժամանակ Նիկողոսյանին դաժանորեն ծեծել են, որ նա իրենց ասել է, թե ստիպված է եղել կեղծ ցուցմունք տալ այն մասին, որ Գևորկովի հետ սպանել են Ս. Տեր-Գաբրիելյանին, իսկ իրականում վերջինս ինքն է ցած նետվել պատուհանից:

Ավելորդ չէ հիշեցնել, որ կան բազմաթիվ վկայություններ այն մասին, թե ինչպես էին Ի. Գևորկովը և Ե. Նիկողոսյանը տանջում իրենց մոտ տարված «ժողովրդի թշնամիներին» (Ն. Ստեփանյանին, Ա. Բակունցին, Ար. Երզնկյանին, Ե. Չուբարին և շատ ուրիշների), իսկ Ի. Գևորկովի քարտուղարուհի Մ. Ավակովան նշում է, որ Ս. Տեր-Գաբրիելյանի հարցաքննության ժամանակ ինքը լսում էր ձերբակալվածի լացի ձայնը:

Ինչպես արդեն նշել ենք, այժմ սկզբունքային նշանակություն

---

[321] Նույն տեղում, գ. 10953, հ. 1, թ. 70

[322] Տես նույն տեղը, գ.գ. 10950, 10951, 10953

չունի՝ Ս. Տեր-Գաբրիելյանին ցած են նետել պատուհանից քննիչները. թե՞ ինքն է դուրս նետվել, քանի որ երկու դեպքում էլ դա տեղի է ունեցել քննիչների անմարդկային վերաբերմունքի պատճառով և կարելի է գնահատել որպես սպանություն:

Ի. Գևորկովի և Ե. Նիկողոսյանի գործերի լրացուցիչ ստուգումը ցույց է տվել, որ նրանք ոչ մի հակահեղափոխական կազմակերպության անդամ չեն եղել, բայց նրանք չարդարացվեցին, քանի որ բազմաթիվ վկաների ցուցմունքների համաձայն «լինելով ՀԽՍՀ ՆԳԺԿ մարմինների ղեկավար աշխատակիցներ, թույլ են տվել սոցիալիստական օրինականության հանցավոր խախտումներ, խորհրդային քաղաքացիների զանգվածային ձերբակալություններ և քննչական գործերի կեղծումներ»[323]:

ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի նախկին աշխատակիցների «խոստովանություններից» հետևյալ տպավորությունն է ստեղծվում ՆԳԺԿ-ում, իբրև թե, Մուղդուսու գլխավորությամբ գործող «հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական խմբի» մասին: Նախ, նրա կազմում, բացի Մուղդուսուց, Գևորկովից և Նիկողոսյանից նշվում են ժողկոմի օգնական Պանյանի, 4-րդ բաժնի պետ Կոստիկյանի, Լենինականի ՆԳԺԿ շրջանային բաժնի պետ Լ. Մարգարյանի, միլիցիայի վարչության պետ Դուլգարովի, 1-ին բաժնի 1-ին բաժանմունքի պետ Ա. Մարգարյանի, 3-րդ բաժնի պետ Վ. Չիթունու անունները (գրեթե բոլորն էլ հատուկ կարգով գնդակահարվեցին)[324]: Ճիշտ է, նրանցից մի քանիսը (Դուլգարով, Չիթունի) հետագայում արդարացվեցին, սակայն այդ խմբում չնշված շատ այլ աշխատակիցներ (Ռուդնիկ, Բաբայան, Ինաեկյան, Ռ. Հարությունյան, Կոնդակով, Սարուխանով և այլն), որոնց ներկայացվում էին նույն մեղադրանքները հետագա տարիներին չարդարացվեցին: Եվ դա տրամաբանական էր և օրինաչափ. քանի որ նշված աշխատակիցները, կամա թե ակամա, կուսակցական, պետական և այլ կազմակերպությունների անդամների ու աշխատակիցների հետ, իրագործել էին 1936-37 թթ. Հայաստանի քաղաքացիների և հայ ժողովրդի ընտրանու մի մասի նկատմամբ զանգվածային բռնությունները: Ընդ որում, այդ դժնի քաղաքական պատվերի հիմնական կատարողները եղել են ՆԳԺԿ մարմինների աշխատակիցները:

---

[323] Նույն տեղում, գ. 10950, թ. 137, գ. 1095, թ. 127

[324] Նույն տեղում, գ. 2825, թ. 18

Այսպես, ՀԽՍՀ ՆԳԺԿ ՊԱՎ-ի 3-րդ բաժանմունքի պետ Գ. Ռուդնիկը արդարացիորեն մեղադրվում է այն բանում, որ, չարաշահելով իր պաշտոնական դիրքը, սկսած 1934 թ. մինչև իր ձերբակալությունը՝ 1939 թ. ապրիլը, կատարել է ՆԳԺԿ մարմինները վարկաբեկող, կուսակցական-խորհրդային կադրերին ջարդող հանցագործություններ: Ուշադրություն դարձնենք, որ Գ. Ռուդնիկն ընդունել է, որ ինքը և ենթակաները ձերբակալվածների նկատմամբ իրոք կիրառել են քննության անթույլատրելի միջոցներ, սակայն, չի ընդունում անօրինական ձերբակալելու մեղադրանքը:

Գ. Ռուդնիկի բաժանմունքի աշխատակիցների կողմից ձերբակալված 60 հոգի ազատ էին արձակվել՝ մեղադրանքի անապացուցելի լինելու պատճառով[325]:

Ավելի կոնկրետ օրինակներ է բերում . Ռուդնիկի նախկին աշխատակից 1954 թ. որպես վկա հարցաքննված Ե. Չմշկյանը, որը պատմում է, թե ինչպես էր բաժանմունքի պետը հարցաքննում Հայաստանի ճանաչված էներգետիկներից մեկին՝ Հ. Տեր-Աստվածատուրովին: Մասնավորապես, անձամբ ծեծում էր, օրերով կանգնած պահում պատի տակ, ստիպում «խոստովանել» մեղքերը, նա անընդհատ ժխտում էր դրանք և երբ իմանում է, որ Տեր-Աստվածատուրովին գնդակահարության չեն դատապարտել, պնդում է վերանայել գործը և հասնում այն բանին, որ անմեղ մարդուն գնդակահարում են[326]:

1938 թ. հուլիսի 16-ին գնդակահարված ՆԳԺԿ Լենինականի քաղաքային բաժնի պետի օգնական Խ. Բաբայանը ևս չի արդարացվել, քանի որ ՆԳԺԿ ՊԱՎ-ի մի շարք նախկին աշխատակիցների՝ Աբուլյանի, Իլյինի, Կոնդակովի, Խվորոստյանի, Շիգլիկի, Սարուխանովի հետ թույլ են տվել սոցիալիստական օրինականության խախտումներ, ձերբակալել անմեղ քաղաքացիների և այլն[327]:

ՆԳԺԿ-ի այդ տարիների աշխատակից Ա. Ինաեկյանը 1954 թվականին պատմում էր, որ 1937-1939 թթ. ընդհուպ մինչև 1941 թվականը մեղադրյալների նկատմամբ թույլատրվում էին, այսպես կոչված, «ֆիզիկական բռնությունների մեթոդները», այսինքն՝ ձերբակալվածների ծեծը, կեղծ ցուցմունքների կորզումը, հարցաքն-

[325] Նույն տեղում, թ. 96
[326] Նույն տեղում, թ. 99
[327]Նույն տեղում, գ. 10212, թ. 242

նությունների արձանագրությունների կազմումը փաստերի աղավաղումով, հանցագործություններ կատարողների մեջ «խոստովանությունների» ժամանակ իրենց ուզած մարդկանց անունները մտցնելը և այլն[328]:

Ձերբակալվածների նկատմամբ բռնությունների կիրառման օրինակները, ցավոք, բազում են և դրանց թվարկումը որևէ էական նշանակություն չունի արդեն փաստացի հաստատված այդ իրողությունը ներկայացնելու առումով: Ուղղակի թվարկենք մի քանի ճանաչված մարդկանց, ովքեր անմարդկային խոշտանգումների հետևանքով մահացան բանտում. ՀՕԿ-ի առաջին նախագահ Ար. Երզնկյան, ՀԿ(բ)Կ ԿԿ կուսկոլեգիայի քարտուղար Ա. Գալոյան, Հայկական դիվիզիայի հրամանատար Հ. Աթոյան և շատ ուրիշներ[329]:

Ֆիզիկական բռնություններ են կիրառվել 1936-1938 թթ. ձերբակալված գրեթե բոլոր մարդկանց նկատմամբ (Ն. Ստեփանյան, Ա. Բակունց, Վ. Ալազան, Գ. Մահարի, Գ. Հանեսօղլյան, Ա.Հովհաննիսյան, Ե. Չուբար, Դր. Տեր-Սիմոնյան և այլոք)[330]:

Միլիցիայի աշխատակիցներից մի քանիսը ևս դարձան 30-ականի բռնությունների զոհ:

Այդ ժամանակներում ձերբակալվածների թվում էր նաև ՆԳ ժողկոմի տեղակալ, միլիցիայի վարչության պետ Ալ. Դուլգարովը, ում ևս մեղադրում են «1937 թ. սեպտեմբերին ՆԳԺԿ մարմինների կողմից Հայաստանում բացահայտված և վերացված հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնամոլական կազմակերպության» անդամ լինելու մեջ, որն իբր Ա. Խանջյանի ու Ս. Տեր-Գաբրիելյանի մահից հետո ղեկավարում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ամատունին:

Վերը նկարագրած մեթոդներով հարցաքննություններից հետո, 1939 թ. սեպտեմբերին, Ալ. Դուլգարովը դատապարտվում է 10 տարի ազատազրկման: Երկարատև ծանր դեգերումներից հետո 1956 թ. հունվարին, ՀԽՍՀ Գերագույն դատարանը վերանայում է Ալ. Դուլգարովի գործը և այն կարճում «հանցակազմի բացակայության պատճառով»[331]:

---

[328] Նույն տեղում, գ. 2825, թ. 102

[329] Տես նույն տեղը, գ.գ. 908, 1214-2536

[330] Տես Վ. Ալազան. Տառապանքի ուղիներով (Հուշեր). Եր, 1990. Դ. Գասպարյան. Փակ դռների գաղտնիքը. Եր, 1994 և այլն

[331] ՀՀ ԱԱՆԱ. ԿԳԲ, գ. 1912, թ. 222-223

Նույնպիսի մեղադրանքով ձերբակալվում է նաև ՆԳԺԿ-ի Բանվորա-գյուղացիական միլիցիայի վարչության (ԲԳՄՎ) քաղբաժնի պետ Վ. Բաբաջանովը, ում այդ պաշտոնին էին նշանակել Ալ. Դուլգարովի խնդրանքով: Հասկանալի է, որ միայն վերջին հանգամանքն այն տարիներին բավական էր, որպեսզի Վ. Բաբաջանյանի նկատմամբ գործ հարուցվեր, և նա 1938 թ. հունիսին դատապարտվում է 5 տարի ազատազրկման:

1957 թ. մարտին Վ. Բաբաջանյանը ևս արդարացվում է՝ իր գործողություններում հանցակազմի բացակայության պատճառով[332]:

Ավելացնենք, որ բռնությունների այդ վայրիվերումից զերծ չմնացին նաև ԲԳՄՎ-ի պետի տեղակալ Ստ. Խաչատրյանը, ԲԳՄՎ-ի Քրեական հետախուզության բաժնի պետ Հ. Մելիքովը, ավագ տեսուչ Հ. Գևորգյանը և ուրիշներ[333]: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, 1930-ականին վերջնականապես ձևավորված ստալինյան մենատիրության, անձի պաշտամունքի պայմաններում «պողպատյա» առաջնորդի քաղաքական ձեռագրում հստակվում է բոլոր բռնապետներին հատուկ մի տրամաբանություն: Նա համապատասխան բռնությունների կամպանիա անցկացնելուց հետո, որպես կանոն, վերացնում էր նաև իրեն անկեղծորեն նվիրված և բռնությունները իրագործած անձանց՝ ժողովրդին «մատուցելով» այդ արարքները կատարած «սլաքավարներին», միևնույն ժամանակ վերացնելով անցանկալի վկաներին:

Այդ տրամաբանությամբ, նա՝ որպես ժողովրդի թշնամիների, վերացրեց ԽՍՀՄ-ի ՆԳԺԿ-ի երկու ղեկավարներին Յագոդային և Եժովին: Հավանաբար, նրա օրոք նույն բախտին էր արժանանալու այդ պաշտոնում նրանց փոխարինած Բերիան, սակայն Ստալինի մահը մի կարճ ժամանակով հետաձգեց արժանի պատիժը:

Ստալինին փոխարինած ԽՍՀՄ առաջնորդները, այնուամենայնիվ, ժողովրդի թշնամի և լրտես հայտարարեցին նաև Բերիային ու գնդակահարեցին:

Նույն պատճառներով վերացվեցին ամբողջ դաժանությամբ բռնություններ իրագործած, համեմատաբար ավելի ցածր պաշտոնյաներ: Այսպես, ասպարեզից հանվեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկա-

---

[332] Նույն տեղում, գ. 3753, թ. 256

[333] Նույն տեղում, թ. 54-76

վարներ Ա. Ամատունին, Ստ. Ակոպովը, Խ. Մուղդուսին և ուրիշներ: Վերացվեցին Խ. Մուղդուսու ղեկավարությամբ գործած համակարգի բազմաթիվ աշխատակիցներ (Ի. Գևորկով, Բ. Կոստիկյան, Ե. Նիկողոսյան և ուրիշներ):

Այդ ճակատագրից չխուսափեցին նաև 1937թ. սեպտեմբերին Լիտվինի գլխավորությամբ Հայաստան ուղարկված ՆԳԺԿ քննչական խմբի անդամները՝ Լենինգրադի մարզի ՆԳԺԿ ՊԱՎ-ի 3-րդ բաժնի պետ Լ. Այլտմանը, 4-րդ բաժնի պետ Կ. Գեյմանը, ՈՒԽՍՀ ՆԳԺԿ 2-րդ բաժնի պետ, ժողկոմի օգնական Մ. Յախոնտովը, ԽՍՀՄ ՆԳԺԿ ՊՔՎ-ի ավագ օպերլիազոր Գր. Արսենովիչը և վերջապես ինքը քննչական խմբի ղեկավար Մ. Լիտվինը[334]: Վերջինս ՆԳԺԿ մարմինների հին աշխատակիցներ, Եժովի աջ ձեռքը, որը 1936 թ. վերջերից լինելով ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի կադրերի բաժնի պետը հպարտանում էր նրանով, որ ինքը «մաքրել է 14 հազար չեկիստների»[335]: «Բարձր» ծառայությունների համար նա 1937 թ. Հայաստանում ընտրվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավոր: 1937 թ. մայիսից մինչև 1938 թ. նոյեմբերը ղեկավարում էր ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի Լենինգրադի մարզի վարչությունը, որի ժամանակ, միայն 1937 թ. հունիս-հուլիս ամիսներին, ձերբակալվում են 6,5 հազար «ժողովրդի թշնամիներ»: 1938 թ. նոյեմբերին, երբ ակնհայտ էր, որ Եժովի օրերը հաշված են, Մ. Լիտվինը ետ է կանչվում Մոսկվա, որտեղ ինքնասպան է լինում: Նրան, հետմահու մեղադրում են «հակախորհրդային կազմակերպությանն» անդամակցելու մեջ:

1939 թ. ԽՍՀՄ Գերագույն դատարանի կողմից գնդակահարության արժանացած Լ. Այլտմանի և Կ. Գեյմանի դատավճռում նշված էր, որ նրանք 1937 թվականից եղել են ՆԳԺԿ մարմիններում գործող հակախորհրդային, ահաբեկչական, դավադրական կազմակերպության անդամներ, որի մեջ նրանց ներգրավել է Լիտվինը: Նրանք տեղյակ էին «կազմակերպության» ահաբեկչական պայքարի միջոցների մասին, որը ուղղվում էր ՀամԿ(բ)Կ և խորհրդային իշխանության ղեկավարության դեմ: Այնուհետև կարդում ենք հետևյալ «ցնցող բացահայտումը». «Կազմակերպության հանձնարարությամբ Այլտմանը և Գեյմանը կոպտորեն ու լկտիորեն խեղաթյուրում էին խորհրդային պատժիչ քաղաքականությունը, ձերբակալելով բացարձա-

[334] Նույն տեղում, գ. 8997, հ.2, թ.129, հ.3, թ. 191-195, գ.5407, հ.2, թթ. 129-130, 327-330

[335] Տես К. А. Заленский, Империя Сталина, Биографический словарь, М., 2000, էջ 278

փարների առողջ մրցակցությունը, խոսքի և մամուլի ազատությունը: Բնականաբար. խիստ կարևոր է համապատասխան իրավական դաշտի ստեղծումը և դրա իրագործումը: Հանրապետությունում պետք է իշխի օրենքը և ոչ թե պաշտոնյան:

Այս ամենի հանրագումարում կարևորվում է առողջ բարոյա-հոգեբանական մթնոլորտի ձևավորումը, որը պետք է դառնա պետության առաջնային խնդիրներից մեկը: Ազգի միասնության գաղափարը վերացական հասկացողություն չէ: Պետականորեն մշակված, իրականալի և առավել մեծ զանգվածների համար ցանկալի գաղափարներն ու նպատակներն ի վիճակի են համախմբել ազգի առողջ հատվածին, ժողովրդին դիմակայուն դարձնել արտաքին և ներքին ոչ ցանկալի, ճնշումներին, բացառել քաղաքական անգիջում հակամարտությունները, որի ողբերգական արտահայտություններից են քաղաքական բռնաճնշումները:

Պատմությունից պարտավոր ենք դասեր առնել, որպեսզի բացառվեն քաղաքական և այլ բնույթի բռնությունները մեր կյանքից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հասարակական-քաղաքական իրավիճակը ՆԷՊ-ի պայմաններում (1921-1929) 14

ա. ԽՍՀՄ-ում ընթացող հասարակական-քաղաքական գործընթացները. միակուսակցական համակարգի հաստատումը. զանգվածային բռնաճնշումների առաջին դրսևորումները Հայաստանում 14

բ. Ոչ կոմունիստական կուսակցությունների վերացումը 45

գ. Խորհրդային իշխանություն - եկեղեցի հարաբերությունները 67

դ. ՀԽՍՀ ԱՀ-ՊՔՎ-ՄՊՔՎ-ն բռնաճնշումների իրագործման միջոց 81

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Քաղաքական իրադրությունը և բռնաճնշումներն ամենատիրության պայմաններում (1930-1940) 100

ա. Ստալինի միահեծան ղեկավարության հաստատումը. բռնաճնշումները ԽՍՀՄ-ում և Հայաստանում՝ համատարած կոլեկտիվացման տարիների (1929-1935) 100

բ. Քաղաքական բռնաճնշումները 1936-1939 թթ. 116

գ. Իրավապահ մարմինները և բռնաճնշումները 154

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱՓԱՍՏԱՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐՔԵՐԸ, ՈՐՈՆՔ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԱՐՄԱՆ ԱՄՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՈՎ

1. Ա.Մանուկյան, Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգեւորականները 1930-1938 թթ. (ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի), Եր. 1997, 284 էջ

2. Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Եր., 1999, 264 էջ

3. Ա. Մանուկյան, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Եր., 2002, 192 էջ

4. Արման Ամրիկյան, Կենտրոն. Հույժ գաղտնի, Եր., 1996, 176 էջ

5. Արման Ամրիկյան, Անմեկնելի են Աստծո ճանապարհները, Եր., 1998, 308 էջ

6. Արման Ամրիկյան, Դոկտոր, դուք հետախո՞ւյզ եք, Եր., 2000, 286 էջ

Հ 500 դր-Ղ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԻԲԵԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1920-1940 թթ.

АРМЕНАК САРИБЕКОВИЧ МАНУКЯН

ПОЛИТИЧЕСКАЯ ЖИЗНЬ В АРМЕНИИ

1920-1940 гг.

Հանձնված է շարվածքի 21.03.2002: Ստորագրված է տպագրության 20.04.2002: 12 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 160 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ

ԳԱԱՀ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0183626

ЦЕНА
А II
86886